Էջմիածին

Ամ 146

ՊԱ-976

Պաշտօնական ամսագիր
Հայրապետական աթոռոյ
Ս. Էջմիածնի



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

1. Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Ջ.-ի Կոնդակը՝— Ամերիկահայ թեմի ինքնանջատյալ հատվածի Հայ եկեղեցու գիրկը դառնալու մասին 3
2. Մայր Աթոռ 6
3. Հոգևոր ճեմարանի սաների էջ 10
4. Հայրապետական գնահատանք Գալուստյան կտակին համար և հանդիսությունք Սան Ֆրանսիսկոյի մեջ 13
5. Հայաստանյայց եկեղեցին Սփյուռքի մեջ 16
6. Հայրենադարձության ուղիով 23
7. Հայրենի հարազատ հողի վրա 24
8. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂՐԻՄԵՑԻ.— Երուսաղեմի տաճարի կործանումը 70 թվականին 31
9. ՃԵՄԱՐԱՆՑԻ.— Հովսեփ Արղության 35
10. Մ. ՏԵՐ-ԳԱՆԻԵԼՅԱՆ.— Բաղդասար մետրոպոլիտ 49
11. Դ. ԼԵՎՈՆՅԱՆ.— Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը . 55
12. ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Իմ հուշերից— Ստեփանոս Նազարյանց . 67
13. Օտարները հայերի և Հայաստանի մասին 77
14. Սովետական Հայաստանում 80
15. Գաղութահայ կյանք 90
16. Արձագանքներ 93

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԼԻՊԻԼԻՍ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԽՄԲԵԳՐՈՒԹԵՆ ՀԵՏՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ.

ԷՋՄԻԱԾԻՆ, „ԷՋՄԻԱԾԻՆ" ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magasine „Etchmiadzin", Armenia, USSR

Պատվեր № 445

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչ. № 2 տպարան, Երևան

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ, ՀԱՐԱՋԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայաստանեայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցին ոչ միայն հոգեւոր-կրոնական հաստատություն է, այլ և միաժամանակ ազգային-հայրենական: Ազգային-կրոնական այս երկակի բնության ներդաշնակ միասնության մեջն է բարոյական հմայքն ու պատմական խորհուրդը յուսավորչաձիմն ազգապահ Հայ Եկեղեցու, որի անարատության և վեհիրավության համար դարեր շարունակ հալածվել, մարտնչել և մարտիրոսացել է բազմաչարչար Հայ ժողովուրդը:

Բայց մեր Ազգի անօրինակ ողբերգության և դառն փորձության օրերին եղել են նաև հոգով թույլեր, որոնք, սակայն, անկարող լինելով տոկալ դառնագույն տառապանքներին, անագորույն վտանգից ազատվելու սին ակնկալություններով, օտարի ոստայնած դավադիր թակարդն են ընկել, ազգայնորեն դիմազրկվել և ի վերջո անփառունակ ձուլվել անհարազատ տարրերում և անէացել:

Հայ Ազգային-Եկեղեցական բազմադարյան պատմությանը հայտնի են նաև այլ տխուր դեպքեր, երբ անմեղ ու անխորագետ հարազատներից որոշ հատվածներ, զոհ դառնալով իշխանատենչ ու փառամոլ դեկավարների սադրանաց, ուղղակի թե անուղղակի ընդվզել են Ազգային Եկեղեցու հոգեւոր, նվիրապետական և վարչական միասնության դեմ: Հատվածյալ անմեղներից շատերը հետագայում, զգաստանալով և զղջալով, մայրենի եկեղեցու մեծանոգությունը և ներողամտությունն են հայցել և Հայաստանեայց անհիշաչար ու անհիանախնդիր եկեղեցին, ի տես իր հարազատների զղջման անկեղծության, գրկաբաց է ընդունել նոցա իր նվիրական, սիրառատ գիրկը, առանց ապաշավանքի նվաստացուցիչ գործողությունների: Անմեղի սխալը դիտվել է որպես դժբախտություն և ոչ որպես հանցանք:

Սակայն, երբ նախածին սխալը որդեգրում են շատերը, վարանում ժամանակին ուղղել և տեսական վաղնջականությամբ տարեբայնորեն նվիրագործում, սխալը դառնում է չարիք և վերափոխվում հանցանքի, լայն բանալով դռները անչափական տրամադրությունների, հոռի կրքերի, հանրային խռովությունների, ազգային պառակտումների: Այսօր արդեն հարկադրված ենք զգում դառնացած սրտով և խռովահույզ հոգով հրապարակով արձանագրել, որ Ամերիկահայ թեմի հայադավան հարազատներիս մի պատկառելի հատված, զոհ դառնալով հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը և ընդհանուր բարոյական նկարագիրը մեծապես արատավորող ողբերգական դեպքերի, կեղրոնախույս տրամադրությունների և անհանդուրժելի նախասիրությունների, տարիներ շարունակել է մեղանչել և ցարդ մեղանչում է Հայաստանեայց Ազգային-Առաքելական Սուրբ Եկեղեցու կենսատու միասնականության դեմ: Հայ Ժողովրդի ազգային-եկեղեցական միասնությունը բարոյական մեծա-

գույն գանձ է և հոգևոր երաշխիք ՍՓՅՈՒՌՔԻ ազգահավաքման ու ազգապահության, որի տարաբնակ հայազուրը զուրկ է և՛ սիրելյալ Հայրենիքի կենսատու արևից, հողից ու ջրից, և՛ ազգային գերիշխան Պետության ոգեշնչող մոգական ույժից: Սոսկ վարչականորեն անջատյալ և հատվածյալ անխորագետ գավակներիս բազմությունը արժանապես չի պատկերացնում, որ ազգային-եկեղեցական միասնությունը ոչ թե մի անշոշափելի վերացականություն է, այլ հոգևոր, նվիրապետական և վարչական կենդանի հաղորդակցություն, մարմնացյալ համայնականություն և ներդաշնակ համերաշխություն: Սակայն երբ հատվածյալ և անջատյալ շարքայիններին բազմությունը դեռ արժանապես չի զգում առաջացած շարիքի մեծությունը, ընդհակառակը ինքնանջատյալների ղեկավար գործիչները հստակորեն գիտակցում են ազգային-եկեղեցական հատվածականության աղետաբերությունը:

«Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին Հյուսիսային Ամերիկայի մեջ տարիներ ի վեր մատնված է անօրինակ տագնապի մը, որու հետևանքով խորունկ պառակտում մը առաջ եկած է Հյուսիսային Ամերիկայի երկու հարյուր հազարանոց հայ գաղութին մեջ: Պառակտում և փոխադարձ ատելություն, որու նմանը քիչ տեսնված է Հայոց Եկեղեցվո պատմության մեջ»— հավաստիացնում են նոքա իրենց պաշտոնագրությամբ:

Ազգային-Եկեղեցական այս մեծ շարքի, հանրային այս խոշոր աղետի գիտակցությունը և այլ ճնարավոր նոր շարքերի նախատեսությունը պետք է զգաստացներ ինքնանջատյալ հատվածին և բարոյապես խթաներ օր-առաջ հոժարակամ եղբայրակցելու Հայաստանյայց Ազգային Առաքելական Ս. Եկեղեցու ազգային-հոգևոր և նվիրական-վարչական օրինապատշաճ միասնության մեջ, մեկ ընդմիշտ վերջ տալով անցյալի դառն հիշողություններին: Որպես նախանձախնդիր հայ ժողովրդի ազգային-կրոնական համերաշխ միասնության վեհագույն գաղափարի անվրար պաշտպանության և հավատարիմ Հայ Եկեղեցու յայնախոհության, համբերատարության և ներողամտության սրբազան ավանդներին Մայր Աթոռը տարիներ շարունակ հրաժարվել է կանոնական վճռահատումներից, նախընտրելով Հայրապետական հորդորն ու հովուական խրատը: Մեր յուսահոգի եղբայրը՝ Ամենայն Հայոց Ազգընտիր Կաթողիկոս Տորեն Ա-ը, որին այնքան վիշտ ու կսկիծ էր պատճառում այս աղետաբեր ազգային-կրոնական պառակտումը, կամենալով ազդակել և փութացնել ամերիկահայ հարազատների տենչալի վերամիացումն ու համերաշխությունը, ազգանվեր ու գիտուն կարգակից հոգևոր եղբոր Տանն Կիլիկիո ներկա Շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա-ին հրեշտակեց, որպես իրավախոհ նվիրակ Մայր Աթոռիս: Զախողանքի մատնվեց նաև այս իմաստուն և ազնիվ նախաձեռնությունը, բարոյական ծանր ցավ, խոր վիշտ պատճառելով հայրենանվեր Մեր երջանկահիշատակ նախորդին:

Հավատարիմ հոգևոր կոչմանս և սուրբ ուխտիս, Հայրապետական անդրանիկ կոնդակովս հայտնագրեցինք և շեշտեցինք Հայաստանյայց Ազգային Առաքելական Ս. Եկեղեցու համապարփակ միասնության արժեքն ու վեհությունը: Իսկ 1946 թվի Մարտի 12-ի թ. 97 կոնդակով հանձնարարեցինք Մեր լիակատար վստահությունը վայելող, շրջահայաց և անկողմնակալ Առաջնորդ Գերապատիվ Տ. Տիրան Եպիսկոպոսին առավելագույնը կատարել պսակազարդելու ամերիկահայ գավակներիս ազգային-կրոնական միասնության, եղբայրական միաձուլման, հոգևոր համերաշխության սուրբ գործը: Մենք խորապես և անվերապահորեն հավատացած էինք, որ, գեթ այս անգամ, արագորեն և հաջողությամբ կպսակվի այս մեծ առաքելությունը: Մեզ մխիթարում և հուսադրում էր այն կարևորագույն փաստը, որ ինքնանջատյալ հատվածի ղեկավարները իսկ այնքան մոայլ գույնով են նկարագրում ազգային-եկեղեցական պառակտման աղետավորությունը և միաժամանակ ա՜յնքան բանգ գնահատում և արժեքավորում համերաշխ միասնության անհրաժեշտությունը, առավել ևս մեր ազգային կյանքի բախտորոշիչ այս տարիներին, երբ ամենուրեք ա՜յնպիսի սրտառուչ բերկրանքով ընդունվեց դարերով տարածյալ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միասնությունը նախամեծար Մայր Աթոռի Ամենայն Հայոց Կաթողիկոսության հետ, երբ ծայր է առել երբեմնի այնքան աղետագույշ Հայ Սփյուռքի հայրենատենչ տարագիրների մեծախորհուրդ և ազգափրկիչ դարձը դեպի Մայր Հայրենիք, ազատ Հայաստան, երբ հանուր մարդկության խղճի դատաստանին է հանձնված և հզորագույնս պետք է պաշտպանվի մեր նվիրական ու ավետյաց երկրի տենչալի ամբողջացման արդար ու սրբազան պահանջը:

Մեր լիազոր նվիրակը՝ բեմի Գերապատիվ Առաջնորդը հայտնաբերել էր ա՜յնքան գովելի եռանդ, տոկունություն, տակտ, շրջահայե-

ցողությունն և իմաստությունն՝ հաջողությամբ ավարտելու Մեր կողմից հանձնարարված պատասխանատու առաքելությունը: Այդ առաքելությունը Մենք չենք համարում ո՛չ ավարտված, ո՛չ էլ ձախողված, սակայն այն ընթանում է ցավագին ընդհատում-հապաղմամբ, որ վտանգում է ազգային-եկեղեցական միասնության հաջող ավարտումը:

Մեծախորհուրդ Հայ Հայրենադարձի, Մայր Հայաստանի նվիրական ամբողջացման համար թափվող ջանքերի, Ազգի և Հայրենիքի սրբազան իրավունքների պաշտպանության այս պատասխանատու տարիներին, առավել քան երբեք, պահանջվում է Հայ Սփյուռքի ազգային համերաշխությունը, եղբայրական կուռ ու անբակտելի միասնությունը: Հայ Ազգի, Հայ Հայրենիքի արդար Դատի պաշտպանության և սրբանվեր իրավունքների հաղթանակի Մեծ գործում կարևոր դեր ունին խաղալու մեր ազգային ուժը, բարոյական նկարագիրը, հոգեկան կորովը, հանրային կամքը և քաղաքական իմաստությունը: Իսկ ազգային այս ներքին ուժի աղբյուրը համազգային միասնությունն է, անբակտելի եղբայրակցությունը, համախոհ և միակամ վարքագիծը: Ամերիկահայ մեծ, առաջավոր բեմի բարեպաշտ, ազգանվեր և հայրենասեր հարազատներիս եղբայրական համերաշխությունը անհրաժեշտ նախապայմանն է Հայ Սփյուռքի ազգային-եկեղեցական միասնական նպատակի հաղթանակի:

Այսօր միանգամ ևս առկոչում ենք ամերիկահայ Մեր հարազատների խղճին և իմաստության.

— Հայ ժողովրդի և Հայ Հայրենիքի բազմադարյան գոյության այս բախտորոշիչ և մեծախորհուրդ պատմաշրջանում հոգեկան առաքինությունը, բարոյական զգաստությունը ունեցեք մեկ ընդմիշտ վանելու ձեր միջից ինքն ու ոխը, փառատենչ նախասիրությունները, հատվածամոլ տրամադրությունները, անխորհուրդ հիշողությունները, տարամերժ հիշեցումները, փոխադարձ անվստահությունը, կեղրոնախույս հուի վարքագիծը, միով բանիվ, թոթափեցեք ձեր ոտներից փոշին պառակտման, անմիաբանության, խռովության: Ունկնդրեցեք և հետևեցեք դարավոր, փորձված ու ճանաչված իմաստության—«Զուգություն է մայր բարյաց, անզուգություն ծնող չարյաց»:

Այսօր ավելի քան երբեք պետք է հիշի հայ մարդը և այն հիշեցնի յուրայիններին հայրենասեր մեծ բանաստեղծի հետևյալ հոգեմայլ հրավերն ու պատգամը.—

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրկավ էինք զատուած,
Բախտին ամեն ոխ չարանենգ,
Ի մի համբույր ցրուին ի բաց:

Ազգային համերաշխության և եղբայրության այս նվիրական երգի զմայլիչ արձագանքը նոր ուժ, նոր շունչ կներշնչի ձեր ալեհեր Հայրապետի հոգուն, որ խռովահույզ է այսօր ի տես իր հարազատ զավակաց պառակտման, անմիաբանության:

Նոր տարու առթիվ այս է Մեր իղձը մեր Ազգի և Հայրենիքի համար, որ հավատացած ենք՝ թե իղձն է նաև համայն Հայ Հոգևորականության և Հայ ժողովրդի:

Ողջ լերուք, զորացյալ շնորհք Ս. Հոգվույն և հավետ օրհնյալ ի Տյառնէ. Ամեն:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՏՈՒԱԻ ԿՈՆԴԱԿՍ Ի 1-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ
1949 ՓՐԿՉԱԿԵԱՆ ԱՄԻ ԵՒ Ի ՏՈՄԱՐԻՍ ԹՎՈՑ
Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ամանորի առթիվ հունվարի 1-ին Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։

Ս. Պատարագին ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ը։

Պատարագիչն էր Տ. Կարապետ Եպիսկոպոսը, որը և ավուր պատշաճի քարոզ խոսեց։

Մայր Տաճարը լիքն էր աղոթողների բազմությամբ, որոնց մեջ նաև բազմաթիվ հայրենադարձ եղբայրներ ու քույրեր։

Ս. Պատարագից հետո կատարվեց Հայրապետական գոհաբանական մաղթանք։ Այնուհետև Միաբանության անդամները և ժողովուրդը Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համբուրելով և Ամանորը շնորհավորելով, արժանացան Նորա հայրական օրհնությանը։

Ս. Պատարագի մատուցմանը մասնակցում էր Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը։

Ս. Պատարագից հետո Վեհարանում ընդունելություն-հյուրասիրություն տեղի ունեցավ, որին ներկա էին Մայր Աթոռի Միաբանության անդամները, Հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմը՝ տեսչի գլխավորությամբ և շատ հյուրեր։ Ներկաները Ամանորի առթիվ իրենց շնորհավորանքը մատուցելով, Վեհափառ Հայրապետին մաղթեցին արևշատություն և երկար կյանք՝ ի փառս Հայ Եկեղեցվո։ Ընդունելություն-հյուրասիրությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի հայրական օրհնություններով։

***

Հունվարի 5-ին, Ծրագալույցի երեկոյան, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։

Մայր Տաճարում Ս. Պատարագին ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ը։

Պատարագիչն էր Տ. Սահակ Ծայրագույն վարդապետը, որը և ավուր պատշաճի քարոզ խոսեց։

Ս. Պատարագի մատուցմանը մասնակցում էր Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը։

***

Ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ հունվարի 6-ին, Ս. Մեսրոպյան տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց և տեղի ունեցավ Ջրօրհնյաց հանդեսի արարողությունը Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոսի հանդիսադրությամբ։

Ս. Պատարագին և Ջրօրհնյաց հանդեսի արարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Օրվա պատարագիչն էր Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոսը, որը և ավուր պատշաճի քարոզեց։

Ս. Պատարագի ժամանակ երգում էր Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը։

***

Ամանորի և Ս. Մեսրոպյան տոների առթիվ Վեհափառ Հայրապետի անունով շնորհավորական բազմաթիվ հեռագրեր են ստացվել, որոնց թվում Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ից, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ամենապատիվ Ալեքսիից, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիվ Կալիստրատից, Երուսաղեմի Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ից, Կ. Պոլսի Պատրիարքական Տեղապահ Տ. Գեվորգ Արքեպիսկոպոս Արսլանյանից, Բուլղարական Եկեղեցու Ս. Սինոդից, ՍՍՌ Միության և արտասահմանյան թեմերի թեմական առաջնորդներից, թեմական խորհուրդներից և հավատացյալներից։

Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ը հեռագրում է.—

«Նոր տարվա առթիվ ընդունեցեք Մեր ամենալավագույն ցանկությունները»։

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Ամենապատիվ Պատրիարք Ալեքսին չի մոռանում իր հեռագրում վերհիշելու Մոսկվայում տեղի ունեցած հանդիպումը.—

«Փոխադարձաբար ջերմագինս ողջունելով Ձերդ Վեհափառությանը, սրտանց ցանկանում եմ Ձեզ, Միաբանությանը և հավատացյալ հոտին աստուածային բաղում շնորհներ։ Նոր տարվա շեմքին առանձնահատուկ զգացմունքով եմ վերհիշում մեր հանդիպումը Մոսկվայում»։

Ջերմ ու սրտառուչ զգացմունքով է գրված Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիվ Կալիստրատի ողջույնի հետևյալ գիրը.—

«Ձերդ Վեհափառություն, Սրբազնագույն Պետ, Ամենաողորմած Հովվապետ և հայրերի Հայր,

Ողջունելով Ձեզ Ամանորի և Աստուածհայտնության մեծ տոների առթիվ, աղոթում ենք Դավթի քաղաքում ծնված և Հորդանանի ջրերում մկրտված Աշխարհի Փրկչին, որպեսզի Նա Ձերդ Սրբությանը, Ձեր աջակիցներին և աստուածապարգև հոտին բարեպաշտության ու խաղաղության մեջ պահի և պարպի շարության ու թշնամության՝ երկնքում կուտակվող փոթորկաբեր ամպերը, Ճշմարտության Արեգակի ճառագայթներով դրանք իր ողորմածության բարեբեր անձրևի փոխարկելով։ Թող նա շարիք սերմանող մարդկանց ապառաժ սրտերը բարեբեր հողի փոխարկի, որպեսզի այնտեղ տեղ գտնեն Երկնային խաղաղությունը և Բարյացակամությունը։

Եղիցի, Աստուած, եղիցի»։

Բուլղարական Եկեղեցու Ս. Սինոդը Ամանորի և Աստուածհայտնության տոների առթիվ հղած ողջույնի դրության մեջ գրում է.—

«Ձերդ Երանություն,

Ամենասիրելի եղբայր ի Տեր,

Գտնվելով Ս. Մննդյան և Ամանորի լուսաբեր տոների նախօրեին, արդեն մեր լսելիքին են հասնում հրաշալի հրեշտակային փառաբանության ձայները.—

«Փառք ի բարձունս Աստուծոյ
և յերկիր խաղաղութիւն,
ի մարդիկ հաճութիւն»։

Այս հրեշտակային ավետիսը ուրախությամբ է լեցնում մեր սրտերը և մենք աճապարում ենք մեր այս ընդհանուր ուրախությունը բաժանած լինել Ձեզ հետ, եղբայրաբար ողջունելով Ձեզ Բուլղարական ուղղափառ Եկեղեցու Սրբազնագույն Սինոդի անունից։ Աստուածային Մանուկից աղոթքներով հայցում ենք, որ նա Ձեզ անձամբ պարգևի ամուր առողջություն, իսկ ձեր աստուածասեր հոգևորականությանը և բարեպաշտ ժողովրդին—խաղաղություն, բախտավորություն և ամեն բարիք։

Հաստատ հույսով, որ Նոր տարում Տերը կամրապնդի այնքան ցանկալի խաղաղությունը երկրի վրա և բարյացակամությունը մարդկանց միջև, ջանադիր կերպով աղոթում ենք Փրկչին, որ նա է՛լ ավելի հաստատ դարձնի մեր փրկիչ ուղղափառ հավատը և Քրիստոնեական Ճշմարտության հաղթանակը»։

***

Ամանորի և Ս. Մննդյան տոների առթիվ Վեհափառ Հայրապետը հաճեց շնորհավորական հեռագրեր հղել Տանն Կիլիկիո Շնորհաշատ Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ին, Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Ամենապատիվ Ալեքսիին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիվ Կալիստրատին, Երուսաղեմի Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ին, Կ. Պոլսի Պատրիարքական Տեղապահ Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանին և բոլոր թեմական առաջնորդներին։

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարքին հղած հեռագրում Վեհափառ Հայրապետը գրում է.—

«Մեր անունից անձամբ և Էջմիածնի Միաբանության անունից սրտագին ողջույններ ենք հղում Ձեզ—Նոր տարվա և Ս. Մննդյան տոների առթիվ։ Աղոթում ենք Ամենաբարձրյալին Ռուսաց ուղղափառ Եկեղեցու ու նրա Պետի բարօրության և ժողովուրդների խաղաղության պաշտպան Ռուս մեծ ժողովրդի ծաղկման համար»։

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքին հղված հեռագրում ասված է.—

«Մեր անունից անձամբ և Էջմիածնի Միաբանության անունից սրտագին ողջույններ ենք հղում Ձեզ—Նոր տարվա և Ս. Մննդյան տոների առթիվ։ Եղբայրական վրաց ժողովրդին ու Վրացական Եկեղեցուն ցանկանում ենք բարօրություն ու ծաղկում»։

***

Հունվարի 21-ին, Հոգևոր ճեմարանի դահլիճում կայացավ սգո-հանդիսավոր նիստ՝ նվիրված սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինի մահվան 25-րդ տարեդարձին։

Վ. Ի. Լենինի կյանքի ու գործունեության մասին զեկուցեց դաստատու Խ. Նազարյանը։

***

Փետրվարի 24-ին, Ս. Վարդանանց զորավարացն և 1036 վկայիցն տոնի օրը, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Պատարագիչն էր Տ. Սահակ ծայրագույն վարդապետը, որը և ավուր պատշաճի քարոզ խոսեց։

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ հոգեհանգիստ կատարվեց խնկելի նահատակների հիշատակին։

***

Հունվարի 14-ին Մայր Աթոռից Թբիլիսի մեկնեց Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոսը։

***

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Մայր Աթոռի միաբան Տ. Սահակ ծայրագույն վարդապետը հունվարի 14-ին մեկնեց Ռոստով՝ Ս. Մենդյան և Ջրօրհնյաց տոների (հին տոմարով) արարողություններին մասնակցելու համար։ Տոներից հետո Տ. Սահակ ծայրագույն վարդապետը Ռոստովից մեկնեց Մոսկվա և այնտեղից Մայր Աթոռ վերադարձավ փետրվարի 17-ին։

***

Հոգևոր ճեմարանում, Ամանորի առթիվ, դեկտեմբերի 31-ին երեկոյան ժամը 7-ին տեղի ունեցավ ճոխ գրական-գեղարվեստական երեկո։

Երեկոյին ներկա էին Մայր Աթոռի Միաբանության անդամները, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և Մայր Աթոռի աշխատակիցները։

Երեկոն բացվեց Հայկական Հիմնով, որը շնորհալի կերպով կատարեց ճեմարանի երգեցիկ խումբը։ Բացման հակիրճ խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանը, որից հետո Ամանորին նվիրված իրենց սեփական բանաստեղծությունները կարդացին ճեմարանի դասախոս Ա. Գ. Մինասյանը, ճեմարանի սաներ Ի. Մարտիրյանը (Ա լսարան), Գ. Գրիգորյանը (Գ դասարան), իսկ Փ. Այնթափյանը (Ա լսարան) կարդաց իր գրած ուղերձը՝ նվիրված Վեհափառ Հայրապետին։ Մի շարք սաներ հանդես եկան օրվան պատշաճ բանաստեղծությունների արտասանությամբ։

Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը կատարեց հայրենասիրական ու ժողովրդական մի շարք երգեր։ Ճեմարանի դասախոս Կ. Շիրինյանը և սարկավագ Ստ. Տեր-Ստեփանյանը հանդես եկան մենակներով («Միրանի ծառ» և «Անտունի»)։ Բ դասարանի սան Հ. Խանչյանը, երգչուհի Վ. Կոնատյանը և երգիչ Ն. Հակոբյանը իրենց ելույթները նվիրեցին Սայաթ-Նովայի և Կոմիտասի երգերի կատարմանը։ Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վեհափառ Հայրապետի անձնական քարտուղար Հ. Ագոպյանը նույնպես իր ելույթը նվիրեց Սայաթ-Նովայի երգերի կատարմանը։ Ա լսարանի սաներ Մ. Շահինյանը և Մ. Ղազարյանը երաժշտական հատընտիր կտորներ նվագեցին թառի, քյամանչայի և ջութակի վրա։ Երեկոյին մեծ փայլ տվեց նաև արևելյան երաժշտական գործիքների (թառ, քյամանչա, դափ) վրա նվագող եռյակը։

Երեկոյի գեղարվեստական ղեկավարն էր երաժշտագետ Դ. Ղազարյանը։

Երեկոյից հետո ընթրիք-ինչույք էր կազմակերպված, որին մասնակցում էին Մայր Աթոռի Միաբանության անդամները, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և Մայր Աթոռի աշխատակիցները։

***

Հունվարի 6-ին, Ս. Մենդյան և Աստուածհայտնության տոնի առթիվ Հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմը արժանացավ Վեհափառ Հայրապետի ընդունելությանը և իր շնորհավորանքները մատուցեց Վեհին։

Այնուհետև Հոգևոր ճեմարանի ուսուցիչները արժանացան ալեզարդ Հայրապետի բարեմաղթություններին ու հյուրասիրությանը։

***

Փետրվարի 24-ին, Հոգևոր ճեմարանի տոնականորեն զարդարված դահլիճում հավաքվել էին ճեմարանի դասախոսները, սաները, Մայր Աթոռի Միաբանության անդամները, Մայր Աթոռի աշխատակիցները և բազմաթիվ հյուրեր։

Դահլիճում հավաքվածները ջերմորեն դիմավորեցին միաբանների ուղեկցությամբ դահլիճ մտնող Վեհափառ Հայրապետին։

Վարդանանց դյուցազուն հերոսների անմեռ հիշատակին նվիրված երեկոն բացեց Հոգևոր ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանը։

Տեսչի ներածական հակիրճ խոսքից հետո ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ճեմարանի Հայոց պատմության դասախոս, պատմաբան Ա. Շահնազարյանը, որի բովանդակալից զեկուցումը լսվեց լարված հետաքրքրությամբ։

Եզրափակելով իր զեկուցումը, պատմաբան Ա. Շահնազարյանն ասաց.

— Դարեր են անցել, բայց հայ ժողովրդի

անմեռ հերոսների անունները մոռացության չեն տրվել, հերոսներ, որ իրենց սխրագործություններով հայրենասիրության սքանչելի օրինակներ տվին և հետնորդ սերունդներին կտակեցին— սիրել, անհուն սիրով նվիրվել հայրենիքին և ոչինչ չխնայել հարազատ հայրենիքի ազատության ու անկախության պաշտպանության համար։

Այնուհետև իրենց զեկուցումների ընթերցմամբ հանդես եկան ճեմարանի սաներ Գուրգեն Մուրադյանը (Ա. լսարան) և Ռուբեն Մարտիրոսյանը (Ա լսարան)։

«Վարդանանց պատերազմը և հայ ժողովուրդը» թեմայով զեկուցման վերջում Ռուբեն Մարտիրոսյանը ասաց.

— Հայ ժողովրդի զավակները իրենց նախնիներից ժառանգել են հայրենիքի հանդեպ տածվող անշեջ սիրո զգացումը, որը մեր օրերում, երբ բազմաչարչար հայ ժողովրդի դարավոր երազները լուսապայծառ իրականության են փոխվել, դարձել է ավելի ջերմ, ավելի հոգեպարար։

Հայրենական Մեծ Պատերազմը ցույց տրվեց, որ հայ ժողովրդի զավակները դիտեն անհուն կերպով սիրել իրենց Մեծ Հայրենիքը ու իրենց կյանքը չխնայել հայրենիքի պաշտպանության համար։ Այժմ, երբ իմպերիալիստական ռազմամոլները, զբաղված են նոր պատերազմ հրահրելով մեր լուսաշող ու խաղաղասեր հայրենիքի դեմ, մենք, Վարդանի հետնորդներս, բարձրաձայն ասում ենք համաշխարհային նոր սպանդի կազմակերպիչներին.— Մի՛ մոռացեք մոտիկ անցյալը, հիշեցնե՛ք միշտ հիտլերյան ագրեսորների ստացած դասը և լավ իմացեք, որ եթե հարկ լինի, սովետական արևով ջերմացած հայ ժողովրդի զավակները չեն խնայի իրենց ուժերը և խաղաղասեր սովետական եղբայրական բոլոր ժողովուրդների հետ միասին ձեռք ձեռքի տված հողմացրիվ կանեն ձեզ։

Բուռն ծափահարությունների արժանացան Ռ. Մարտիրոսյանի այս խոսքերը։

Ջափազանց ճոխ էր երեկոյի գրական բաժինը։ Իրենց ինքնուրույն ստեղծագործություններով հանդես եկան ճեմարանի սաները։ Գ դասարանի սաներ Արամ Քեչյանը և Վարդան Արզունյանը ներկայացրին իրենց գրած բանաստեղծությունները՝ նվիրված Վարդանանց հերոսներին։ Կատարվեցին մենակներգներ և խմբական երգեր։ Հաջող էր ճեմարանի երգեցիկ խմբի ելույթը, ճեմարանի դասախոս, վաստակավոր ուսուցիչ, երաժշտագետ Դ. Ղազարյանի ղեկավարությամբ։

Երեկոն փակվեց Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոսի հուզիչ ելույթով։ Վեհափառ Հայրապետի անունից ջերմ շնորհակալություն հայտնելով ճեմարանի ուսուցչական կազմին և ողջունելով սաներին, իրենց հաջողությունների համար, Տ. Կարապետ Եպիսկոպոսը հաջողություն մաղթեց ուսուցչական կազմին ու սաներին՝ իրենց հետագա աշխատանքների բնագավառում։

Երեկոն անցավ շքեղ իրադրության մեջ, Վեհափառ Հայրապետը, Միաբանության անդամները և հյուրերը բարձր տրամադրությամբ ու դոհ սրտով թողեցին դահլիճը։

Հոգևոր ճեմարանի վարչության նախաձեռնությամբ երեկոյից հետո ճոխ թեյասեղան էր կազմակերպված։

ԱՄԱՆՈՐԻ ՈՒՂԵՐՁ

Վեհափառ Տեր,

Նոր տարվա ու նոր կյանքի արշալույսի բռնկման այս խորհրդավոր պահին մենք բոլորս, մեծ ու փոքր, թե՛ սրտաբաց ողջունում ենք մուտքը Նոր տարվա և թե՛ մի հետաքրքրաշարժ ու խորազնին հայացք նետում մեզ-

Փայլակ Այնթափյան

նից քայլ առ քայլ հեռացող ու անվերադարձ հավերժի գիրկը սուզվող հին տարվա վրա։ Մահացող տարին մենք չենք դիտում որպես լոկ ապարդյուն մի ակնթարթ և երախտագիտությամբ ենք բաժանվում նրանից, որովհետև այդ տարում ունեցել ենք զգալի նվաճումներ։ Մեզնից ընդմիշտ մեկնող տարում մենք ձեռք ենք բերել անհրաժեշտ փորձառություն՝ գալիք տարում մեր միտքն ու քայլերը անվրեպ դեպի կետնպատակ ուղղելու համար։

Ձերդ Վեհափառության հայրական հոգատարության, անսահման գուրգուրանքի և ամենօրյա ղեկավարության շնորհիվ Հոգևոր ճեմարանի սաներս այնքան ենք հառաջադիմել ուսման բնագավառում, որ այսօր կարող ենք բաց ճակատով վերջին մնաս բարյավն ասել հավետ անհետացող տարվան և վստահ ու աներկմիտ ոտք կոխել Նոր տարվա շեմքին։

Մեր ապագա կոչման վեհությունը գիտակցելով մենք ջանք չենք խնայել ու չենք խնայի մեր վրա դրած բոլոր հույսերն արդարացնելու համար։ Նորի զարթոնքի այս պահին խոստանում ենք լարել բոլոր ուժերը մեր կետնպատակին հասնելու համար։

Վեհափառ Տեր, Ձեր կորովի, եկեղեցաշեն ու հայրենասիրտ անձը մենք մեզ համար ընտրել ենք որպես մտատիպար և այս հանդամանքը մեզ պարտավորեցնում է աշխա-

տել, աշխատել անխոնջ ու անդադար։ Մենք խորապես գիտակցում ու զգում ենք մեր վրա հառված հայացքների ջերմությունը, մեր նկատմամբ եղած մտասևեռումները, սպասելիքներն ու ակնկալությունները՝ տեսնելու մեզ արդեն մեր կոչման դագաթնակետին հասած, մեր նվաճումների դեզի կատարը բարձրացած։ Մենք շատ թանգ ենք գնահատում մեր սիրելի ազգի կողմից մեզ համար արվող զոհողությունները և լի ենք վճռականությամբ՝ արդարացնելու նրա սպասելիքները. մեր սրբազան պարտականությունն է ազգի ու հայրենիքի համար արժանավոր զավակներ լինել և մեր ողջ ուժերն ու կարողությունները ի սպաս դնել նրա բարօրության ու երջանկության։

Վեհափառ Տեր, հանձինս Ձեզ, Հոգևոր ճեմարանի սաներս ունենք մի ազնվիսի քաջակորով պաշտպան, որին ապավինելով կարող ենք անվարան կերպով ձգտել մեր կետնպատակին, որ Ձեր էլ, մեր էլ մեծագույն իղձն է հանդիսանում։

Ամանորի այս խորհրդավոր պահին հանդիսավոր խոսք ենք տալիս Նոր տարում մեր աշխատանքները ավելի բեղմնավոր դարձնել և նորանոր հաջողություններ արձանագրել։

Վեհափառ Տեր, Ամանորի այս խորախորհուրդ պահին, Հոգևոր ճեմարանի սաներս, Ձեր սիրասուն ու երջանիկ զավակները, մեր հոգու խորունկ ծալքերից, անհոն սիրով ու երախտագիտությամբ մեր մաղթանքներն ենք բերում՝ ցանկանալով Ձեզ երկար ու բարօր կյանք, արևշատություն և մշտատև առողջություն ի փառս Հայ Եկեղեցու, Հայ Հայրենիքի ու Հայ Ազգի։

Շնորհավոր Նոր տարի։

ՓԱՅԼԱԿ ԱՅՆԹԱՓՅԱՆ
(Ա դասարանի սան)

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Գ դասարանի սան)

Գրիգոր Գրիգորյան

ՆՈՐ ՏԱՐԻ

Ողջույն քե՛զ, հազա՛ր ողջույն.
Մեր Նոր տարի կենսաբեր.
Այսօր բազում սրտեր խնդուն,
Քեզ են սպասում անհամբեր։

Իղձերով, հույսերով հոր
Քեզ է սպասում ամեն մարդ,
Որպեսզի մուտքդ փառավոր
Ողջունի ուրախ, զվարթ։

Դե՛ն, բացվի՛ր առավոտ սիրուն,
Դու կենսափթիթ Նոր տարվա,
Սովետական մեր ծաղկուն
Արարատ աշխարհի վրա։

ՀՈՐ ՆԱՄԱԿԸ ՈՐԴՈՒՆ

Ստորև զետեղում ենք մի հատված Առամել Քեչյանի, 1948 թ. նոյեմբերի 12-ին, գրած նամակից, որը հասցեագրված է իր որդի, Հոգևոր հեմարանի սան, Արամ Քեչյանին.

ԽՄԲ.

12 նոյեմբեր 1948 թ. Պուքրեշ

Սիրելի Արամ.

Երկար և սրտահատնում սպասումե ետք, այսօր մեծ ուրախությամբ ստացա հոկտ. 12 թվակիր կարոտալի նամակդ։ Այդ ուրախությունը քանի մը պատճառներով զգացի, որոնք պարզաբանել քեզ համար օգտակար կնկատիմ, ուստի մտիկ ըրե։

Ուրախացա, որովհետև լսեցի ճեմարան ընդունվիլդ, որ նախադուռն է ապագայիդ։ Էջմիածինը դարերով հայ մտքին ու հոգիին

Արամ Քեչյան

ներշնչարանն եղած է և ներկայիս ալ, իբր այդ, այն կշարունակե իր երկնառաք դերը, նույն կորովով ու նույն թափով, որուն աշակերտիլդ ինձ կներշնչե հավատք, որ պիտի կարենաս անոր մեջ մշակել միտքդ, կրանալ ու կոփել նկարագիրդ ու ազնվացնել հոգիդ։

Ուրախացա, որովհետև լույսի այս օճախին մեջ դուն պատեհություն պիտի ունենաս հմտանալու մայրենի լեզվիդ հետ նաև ոտաերենի, և անոնց գրականության զմայլելի նրբություններուն, այսպիսով հետևելով հորդ, կատարելության հասցնելով անոր սկսածը. եթե հայ գրչի ու մտքի անդաստանին մեջ ես չկարողացա արժեքավոր անուն մը թողուլ, ապահովաբար դուն կհաջողիս, սիրելի զավակս։

Հասարակության ծառայել և բարի հիշատակ ձգել, քու մեջ փոքրուց նշմարված ձգտումներ են։ Դուն այդ բանեն թելադրված նախընտրեցիր Սովետական Հայրենիքիդ կրթական հաստատությունները ու ես ալ քու ապագայիդ սիրուն հանձն առի զավկես բաժնվելու զրկանքն ու կարոտը, ուստի ջանա կուրծք տալ ամեն դժվարությանց և հասնիլ նպատակիդ։

Սիրելի Արամ, նպատակս է քեզ հասկցնել, որ ճեմարան ընդունվիլդ մեծ բախտավորություն է մեզ համար, որովհետև հոն է, որ պիտի արժեցնես կարողություններդ, որովհետև ես քու մեջ ավելի ուժեղ կգտնեմ հորդ ասպարեզին հետևելու ընդունակությունները և այդ ընդունակությունները արժեցնող տրամաբանական լավագույն վայրն է Էջմիածնի ճեմարանը։

Կհուսամ շուտով սիրելի պիտի դառնաս թե՛ ուսուցիչներուդ և թե՛ ընկերներուդ։ Քեզ կթելադրեմ հարաբերվիլ Գ դասարանի սաներեն Քաջիկ Գևորգյանի, Ռուբեն Մարտիրոսյանի և մանավանդ Հրանտ Վարուժյանի հետ, որոնց գրչին պտուղները համտեսած եմ «Էջմիածին» հանդեսի մեջ և հեռուեն սիրած ու համակրած եմ իրենց՝ հավատալով, որ եթե դեմքը հայելին է սրտին, գրչին ալ կպատկերացնե հոգին մարդուն։ Սրտով ու հոգիով հարուստ ու գեղեցիկ այդ երրորդության հետ կարժե որ մտերմանաս. իմ սիրո և համակրանքի ողջույններս տար անոնց։

Կարոտի համբույրներով նամակիդ սպասող հայրդ՝

Ա. ՔԵՉՅԱՆ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՆԱՀԱՏԱՆՔ ԴԱԼՈՒՍՏՅԱՆ ԿՏԱԿԻՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՔ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԵՋ

ան Ֆրանսիսկոյի Հայաստանյայց Ս. Հովհաննես եկեղեցվո հիմնադիրներեն բարերար Սամվել Գալուստյանի նվիրած ազգապատկան հողը, նվիրատվին նախաձեռնությամբ, վաճառվեցավ զուտ երեսունչորս հազար դոլարի։

1947 թ. դեկտ. 15-ի ծխական ժողովին մեջ բարերարին առաջարկությամբ կազմվեցավ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ ԿՏԱԿԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆ-ը, որուն ի պաշտոնե կանդամակցին եկեղեցվո հովիվը, հոգաբարձության ատենապետը և նվիրատուն կամ իր ներկայացուցիչը, իսկ մյուս անդամներն են— Տիարք Ճան Ավագյան՝ ատենապետ, Պ. Սարաֆյան՝ ատենադպիր, Մ. Աթիկյան՝ փոխ-գանձապահ, Հ. Մանոյան հաշվագետ, և Ս. Վարդան՝ օրենսգետ։

Տեր և Տիկին Գալուստյան կտակը անձեռնմխելի հիմնադրամ մըն է, որուն եկամուտը տարուե տարի կհատուցվի Սան Ֆրանսիսկոյի Հայաստանյայց Եկեղեցվո, որքան ատեն որ ան գոյություն ունենա ընդ իշխանությամբ Ամենայն Հայոց Հայրապետի։ Իսկ եթե, Տեր մի արասցե, Սան Ֆրանսիսկոյի մեջ՝ Հայոց եկեղեցին գոյութենե դադրի, Ամենայն Հայոց Հայրապետը, կամ փոխանորդ Սուրբ Օծություն Երուսաղեմի Հայոց Ամեն. Պատրիարքը, իրավունք ունի ձեռք դնելու Գալուստյան կտակին վրա և տոկոսներն օգտագործելու Հայ Եկեղեցականության բարձրագույն ուսուցումին, և կամ ծիսական ու աստուածաբանական գիրքերու հրատարակության համար ի հիշատակ Տեր և Տիկին Գալուստյաններու։

Ս. Հովհաննես եկեղեցվո ծխական ժողովը, ընդ նախագահությամբ Տ. Զգոն ծայրագույն վարդապետի, իր վերոհիշյալ նիստին մեջ 116 ձայներու միաձայնությամբ հաստատելով կտակին ակնարկված տրամադրությունները, իբր գնահատանք տվավ նաև հետևյալ որոշումը.

«Ի գնահատություն Ս. Հովհաննես եկեղեցվույս հիմնադիրներեն և գործոն անդամներեն Տեր և Տիկին Սամվել և Ռոզ Գալուստյաններու այս մեծ նվիրատվության, ծխական ժողովս կորոշե, որ այսուհետև ամեն տարի Ս. Հովհաննես Ավետարանչի տոնին առթիվ հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվի հարևշատություն և ի հաջողություն բարեպաշտ Գալուստյան ընտանիքի ողջ անդամներուն, և հոգեհանգիստ կատարվի անոնց հանգուցյալներուն համար, կանխօրոք լինելիք ծանուցմամբ»։

Եկեղեցվո հովիվը, Տ. Զգոն ծայրագույն վարդապետ, առանձինն առանձինն տեղեկագիրներ մատույց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Երուսաղեմի Ս. Պատրիարքին և Կալիֆորնիո Առաջնորդարանը, ի մասին Ս. Հովհաննես եկեղեցվո ստացության, ներկա վիճակին և Գալուստյան կտակին, ներփակելով համապատասխան պաշտոնաթուղթերը։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսը, շերմորեն գնահատելով կատարած աշխատանքը և Գալուստյաններու արած կտակը, բարեհաճեցավ 1948 թ. մայիս 15 թվակիր նկարազարդ սրբատառ Կոնդակով օրհնել բարերար Գալուստյանն ու իր բոլոր աշակիցները։ Նորին Ս. Օծությունը այս առթիվ Տիար Ս. Գալուստյանին շնորհել է Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ Ա ԿԱՐԳԻ ՈՍԿԵԷ ԱՌԱՄԱՆԴԱԶԱՐԴ ՇՔԱՆՇԱՆ։ Վեհափառը Կոնդակում ի մեջ այլոց գրում է.

«Արդ՝ ի նկատի առնելով Ձեր գովելի բարեգործությունը, շերմեռանդ կրոնասիրությունն ու ազգասիրությունը, Մեր այս Հայրապետական Կոնդակով շնորհում ենք Ձեզ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ Ա ԿԱՐԳԻ ոսկե առամանդազարդ շքանշան և ի սրտե օրհնում ենք Ձեզ և Ձեր գերդաստանը՝ մաղթելով Տիրոջը պարգևել Ձեզ երկար տարիներ, բարեբաստիկ կյանք և կատարյալ հաջողություն Ձեր բարի գործերին, հօգուտ ազգի, հայ մարդու Սրբություն-Սրբոց Միածնաէջ Ս. Տաճարիս և Մայր Հայրենիքիս»։

Օգոստոսի 29-ին, ի տոնին Գյուտի Գոտվո Ս. Աստուածածնա հանդիսությամբ պատարագեց Գեր. Տ. Զգոն ծայրագույն վարդապետը։ Ս. Սեղանին սպասարկեցին Արժ. Տ. Կարապետ ավագ քհն. Գալֆայան և Անտոն սրկդ. Ջերազյան։ Դպրաց դասում մասնակցեցան նաև սիրված մեներգիչներ Տիկին Մերի Տոնապետյան, Տիար Ճան Օճաքյան և օրիորդ Լուսի Արմաղանյան, որ վերջերս առաջնության պատիվին հետ շահեցավ երկու հազար դոլար պարգև, «Կալիֆորնիոս» խոստումնալից երգիչներու մրցահանդեսին մեջ։

Ս. Սեղանը զարդարված էր ծաղկեպսակով մը, որուն իբր շրջանակ փայլ կոտար երկոտասան ոսկեգույն աշտանակներու վրա պար բռնող խորհրդավոր լուսապսակը։

Հավարտ Ս. Պատարագի կատարվեցավ մաղթանք վասն Մայր Աթոռոյ և Հայրապետի Ազգիս Հայոց, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի։ Հրաշափառ և Ուրախ յեր շարականներու երգեցողությամբ սրբատառ Կոնդակը վերամբարձ թափորով շրջագայվեցավ ժողովուրդին մեջ։ Ավագ սեղանին առջև պատարագիչ Հայր Սուրբը խրնկարկությամբ և համբույրով առավ Կոնդակը, կարդաց և համբույրով հանձնեց բարեբար Ս. Գալուստյանին, որ շապիկով և բրոնիչով երկյուղածությամբ կանգնած էր բեմին առջևը։ Երգվեցավ Էջ Միածինն ի Հոր շարականը։ Ժողովուրդը նույնպես հոտընկայս պատկառանքով հաղորդ եղավ մեր Սրբազան Հայրապետի օրհնություններուն։ Եղեմի հովիվ Տ. Կարապետ ավագ քահանան սրտեռանդն քարոզեց Ս. Էջմիածնա Հոգեվոր ճեմարանին կոչման, դերին, կարիքներուն և անոր օգնելու մեր պարտավորության մասին։ Հոգիդ Աստուած, աղբյուր շնորհաց մաղթանքը երգված միջոցին մասնավոր պնակ դարձվեցավ հօգուտ Մայր Աթոռոյ։

Խուռներամ ժողովուրդը բարեբարին շարժմխիթարվեցավ և գոհունակությամբ լեցվեցավ։ Բոլոր հավատացյալներն ուրախ եղան Հայրապետական այս բարձր գնահատանքին և անոր համապատասխան վեհաշուք հանդիսությանց համար։ Վստահ ենք թե ներկաներն անոնց հոգեպարար ազդեցության տակ երկար ատեն քաղցր վերհիշումներ պիտի ունենան և պիտի մղվին աստուածահաճո գործեր կատարելու Հայաստանյայց Եկեղեցվո ծիրին մեջ, Գալուստյանի և Սան Ֆրանսիսկոյի հայության պես արժանանալու համար մեր Սրբազնագույն Հայրապետի հանուն Աստուծո շնորհած օրհնանքին։

Եկեղեցական արարողություններեն անմիջապես հետո շքեղ ճաշկերույթ մը տրվեցավ ի պատիվ Տեր և Տիկին Գալուստյաններու և ի նպաստ Ս. Էջմիածնա։

Պատվո սեղանի շուրջն էին մեր չորս եկեղեցականները, Գալուստյան ընտանիքը, եկեղեցվո պաշտոնական մարմիններու ներկայացուցիչները և Պատ. Գարթոզյան։

Նախագահ Հոր օրհնությամբ սկսավ սեղանը։ Ճաշին վերջավորության բազմությունը համախումբ ոտքի վրա երգեց Էջ Միածինն շարականը։ Սեղանապետ Տիար Ա. Պերպերպաշյան, որ ատենապետն է Հոգաբարձության, ողջույնի խոսքեր ուղղեց Գալուստյաններու և համայնքին, ու կարդաց յոթը տարի առաջ Ս. Հովհաննես եկեղեցվո սկզբնավորման հանդիսություններեն գլխավորին նկարագրությունը։

Գեր. Տ. Զգոն ծայրագույն վարդապետ ներկայացնելով Գալուստյանք և իրենց գործը, հանգամանորեն բացատրեց առիթն ու իմաստը Հայրապետական բարձր գնահատանքին, և հանուն Ն. Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի Ս. Լուսավորչի շքանշանը համբույրով դրավ բարեպաշտ Ս. Գալուստյանի կուրծքին, ծափերու տարափի մը մեջ, որուն հաջորդեց ամենուն միասնաբար ոտքի վրա թագավոր երկնավոր երգեցողությունը։ Տիկին Պերճուհի Ճիվերյան ճարտարությամբ արտասանեց Հ. Հովհաննիսյանի Սուրբ Էջմիածին։ Օքլենդի Ս. Վարդան եկեղեցվո հովիվը՝ Տ. Ղևոնդ վարդապետ ըսավ թե՝ հայությունը օտարության մեջ կապրի այնքան ժամանակ, որքան ատեն որ ան չի բաժնվիր Էջմիածնա տեսիլքեն։ Էջմիածինը հայ հավատքին և պատիվին անձնավորումն է։ Արտասահմանի մեջ հայությունը ապրեցավ ու կտևե երբ այդ սուրբ տեսիլքը իբր գաղափար կարձանացնե իր հոգվույն մեջ, և իբր մարմին հայկական տաճարներ կհրաշակերտե օտար աղոթատեղիներու կողքին, և կապահովե անոր սնունդը, որ պատուն է մեր որդիական սիրույն և երախտագիտության։ Գալուստյան այդ իտեալին հավատարիմ լինելով կարժանանա պատիվներու բարձրագույնին։ Լևոն Էհրամճյան, որ այս տարի բազմահազար ուսանողներու կողմե գնահատվեցավ իբր Ճորճ Ուաշինկթըն բարձրագույն վարժարանի լավագույն շրջակահարը, իր շնորհալի քրոջ՝ դաշնակահարուհի օրիորդ Ալիս Էհրամճյանի ընկերակցությամբ, Ուինիպոսքիի Մազուրքայի և Ռանկինի Կովկասյան պարի նվագածությամբ նոր շունչ մը տվավ հանդիսականներուն։ Օրիորդ Աննիկ Պողիկյան

Աստուածածնի տոնին կապակցությամբ արտասանեց Մ. Աճեմյանի «Խաղողը»։ Հայկ Սողոմոնյան հայտնեց ծխական ժողովը խնդակցությունը։ Ճան Ավագյան իմաստալից ուղերձով մը երևան բերավ Ս. Հովհաննես եկեղեցվո կնքահոր իր պաշտոնին մեջ օրինակելի հանդիսանալուն հանգամանքը և երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին, որ արժանավոր գնահատանքով կպատվե մեր եկեղեցվույն, որ ըսել է՝ մեր ամենուս կնքահայրը։ Ցնծալից ուղերձներ ըրին մեր երեսփոխաններեն՝ Տիարք Մ. Աթիկյան և Խ. Պրտեյան, Տիկնայք Ա. Էկինյան, Ն. Ներսեսյան և Հ. Միրիկյան, նաև Պատ. Գարթոզյան։ Օրիորդ Ա. Էհրամճյան բուռն ծափերու արժանացավ դաշնակի վրա նվագելով Շուշտարը։ Վահան Ջիթունի, որը ազգային եկեղեցական կարգ-կանոններու հասկացողությամբ այս վիճակի առաջավոր դեմքն է, խնդակցություն հայտնեց այս բերկրարիթ երեկույթին համար, զոր մեր Հոգևոր Տերը պարգևեց մեզ, շնորհիվ Տ. Զգոն ծայրագույն վարդապետի նախաձեռնության։ Մենք առհասարակ վարժված ենք «Գնա մեռիր, եկուր սիրեմ»-ի ծուռ սկզբունքին, բայց այսօրվա պատգամն է՝ «Գնա գործե, Գործովդ ապրե, եկուր սիրեմ, եկուր գովեմ»։ Կենտրոնակությամբ լեցուն արտահայտվեցավ Դոկտ. Ա. Մալայան, որ բախտավոր փեսան է Ս. Գալուստյանի և նոր եկած ու հաստատված է հոս՝ Զվիցերիայեն։ Վարդն ու Տուլ-տուլը ապրումով երգեց բարերարին նորապսակ դուստրը՝ Տիկին Տայանա Ա. Մալայան, դաշնակի ընկերակցությամբ մեր միշտ փնտռվող տաղանդներեն Տիկ. Մերիեն Կ. Դորյանի։

Նախագահ Հայրը կարդաց բազմաթիվ հեռագիրներ, որոնցմե կհիշենք նախկին Տեղապահ Տ. Հովսեփ Եպիսկոպոսինը, Ֆրբեզնոյի Ս. Երրորդություն և Ս. Պողոս եկեղեցիներու Արժ. հովիվներուն և հոգաբարձությանց, ինչպես նաև Լոս-Անճելըսի հեռագիրները, Մեյճր Դոկտ. Վահան Ճըսկալյանի և գրագետ Վահե Հայկի նամակները և Տեղապահ Տ. Վարդան Եպիսկոպոսի խընդակցական գիրը։ Արժ. Տ. Կարապետ ավագ քհն. Գալֆայան, որ հատկապես եկած էր հանուն Տեղապահ Սրբազանի և Կեդրոն. Վարչության, խնդակցեցավ մեր համայնքին; շնորհավորեց Գալուստյանները և Լուսավորչա Կանթեղին բախտը կապեց Ս. Էջմիածնա Հոգևոր ճեմարանին, որ այնքան շերմ սիրով վերաբացավ մեր Վեհափառ Հայրապետը։ Եթե մեր նվերներով սնուցանենք և զորացնենք դայն, ճեմարանեն հասնող մեր ապագա եկեղեցականները, Աստուծո ողորմությամբ, կհասնեն Հայաստանյայց Եկեղեցո անհովիվ մնացող եկեղեցիներուն, որոնց թիվը շատ է դժբախտաբար։

Բարերար Ս. Գալուստյան գրավոր ուղերձով մը իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին, որուն «կոնդակին շնորհված թվականին, Ն. Ս. Օծության օրհնությամբ, Աստուծո ողորմությունով, բոժիշկները հաջողեցան շիտակ ախտաճանաչում Դատարել կյանքիս սպառնացող հիվանդության. և ահա դարձած եմ կյանքին»։ Նա հարգանքով հիշեց նաև այս սուրբ գործին մեջ իրը հանգանակիչ իրեն աջակից եղող անձերուն անունները, և խնդրեց Պատ. Հոգաբարձությունեն, որ այս օրվան հանդիսությունները առթիվ կատարված բոլոր ծախսերուն հաշիվները իրեն տրվին և ամբողջ եկամուտը հատկացվի Ս. Էջմիածնա։ Հանդիսականք որոտընդոստ ծափերով ընդունեցան այս ազնվական ժեստը, որուն դեղեցկությունը ավելի պայծառ է անոնց համար, որ գիտեն թե Գալուստյան ավելին ևս ընելու հոժարություն հայտնած է առ որանկ է։ Տիկ. Ռոզ Գալուստյան, որ արժանավոր դուստրն է իր բարեգործություններով և անգլերեն գրած պատմվածքներով համբավավոր Տայանա Աբգարի, որ Կարմիր Խաչին մատուցած իր ծառայությանց համար արժանացած էր կայսերական գնահատանքի ու վարձատրության, շնորհակալություն հայտնեց համայնքին լրության, որուն համագործակցության և սիրո պտուղն է զոր կվայելենք այսօր։ Ա. Պերպերպաշյան հանուն Պատ. Հոգաբարձության սիրուն ծաղկեփունջ մը նվիրեց Տիկ. Գալուստյանին և իր գծած էջմիածնի գեղեցիկ մեկ նկարը նվիրեց բարերարին, ի հիշատակ այս օրվան։

Նախագահ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ արտասանեց փակման խոսքը։ Հանդիսականք համախումբ երգեցին Հայր մեր։ Հովիվին պահպանիչով իրենց երջանիկ վախճանին հասան հանդիսությունները, որոնց պատճառած հոգեկան հաճույքը ամենուն մոռցնել տվավ ժամերու սլացքը։ Հանդիսություններ, որոնք արտացոլումն եղան շնորհի, սիրո, բարեպաշտական նվիրումի, երախտագիտության և գնահատանքի, որուն արժանի ընծայեց ինքզինքն Ս. Հովհաննես Եկեղեցվո հոտը, որ միասնաբար խմբված է մեր լուսո Մոր Հովանիին տակ և զորավիգ կլինի անոր ու կզորանա անով։

ԴՊԻՐ

4 սեպտ. 1948 թ.

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ

Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ԿՅՈՒՐԵՂ Բ-Ի ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ս. Էջմիածնի Մայր Աթոռում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով, ստացվել են Երուսաղեմի Ամենապատիվ Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ի 1948 թ. մարտ 12, հունիս 13 և հոկտեմբեր 19 թվակիր նամակները, որոնցից բաղվածաբար որոշ տեղեկություններ են բերում արաբա-հրեական պատերազմի հետևանքով պաղեստինահայ աղետյալների և Երուսաղեմի Ս. Տեղյաց կրած կորուստների ու վնասների մասին: Սույն երեք նամակները համարյա միաժամանակ են ստացվել:

ԵՄԲ.

ՆԱՄԱԿ Ա

Վեհափառ Հոգևոր Տեր,

Պաղեստինի ներկա քաղաքական տագնապը իր համատարած աղետներով և արհավիրքներով պաշարած է նաև Ս. Աթոռս իր միաբանությամբ, իր թեմերով, իր կրոնական և կրթական բոլոր հաստատություններով և արժեքներով։

Անողոք ու կատաղի պայքարը, կեդրոնացած ըլլալով քաղաքներու և անոնց արվարձաններու մեջ, ծանրապես ազդած է մեր ժողովուրդի բոլոր խավերուն, խորտակելով անոնց ապրուստի բոլոր միջոցները։ Անոնցմե շատեր դժոխային մեքենաներու և ռումբերու և մեծ ու փոքր հրաձիգներու սարսափներեն խուճապահար լքած են իրենց տուներն ու խանութները և շարժական բոլոր ստացվածքները և իրենց զավակներով միայն ապաստանած են մեր կրոնական հաստատությանց պարիսպներեն ներս՝ իրենց կյանքը փրկելու համար։ Բացի նյութական կորուստներե ունեցած ենք անձի կորուստներ, որոնցմե 15-ը միայն մեզի հայտնված է ցարդ։ Անգամ մը ևս Ս. Հակոբյանց Վանքը, իր ներքին և արտաքին թաղերով, Հրեշտակապետ, Բեթղեհեմի, Ռամլեի և Հոպպեի վանքերը ու Հայֆայի ժամատունը լեցված են ամեն կարգի ապաստանյալներով, հավասարապես վտանգված և հուսալքված։

Սուրբ Աթոռույս նյութական վնասները և դրամական ծանր պատասխանատվությունները արդեն իսկ մեծ համեմատություններու հասած են։

Ռեքս սինեման, Երուսաղեմի արտաքին քաղաքամիջի մեր լավագույն շենքերեն մին, կործանած է բոլորովին։ Այրված են մեր Մեծ Պանդոկի ներքևի յոթն խանութները։ Պանդոկը, որ մեր եկամուտի մեծագույն աղբյուրներեն մին էր, պարապ է և կարելիություն չկա վարձու տալու ներկա պայմաններուն մեջ։

Մեր պարապ շենքերն ու խանութները ապահովելու համար կստիպվինք կառուցանել առժամյա պատեր։ Վանքի բոլոր բնակելի թաղերը լեցված ըլլալով, նորեկ աղետյալները պատսպարելու համար պիտի ստիպվինք կառուցանել առժամյա բնակարաններ։

Ասոնց կարգին և անուղղակիորեն իբրև հետևանք երկրի ներքին տագնապին և վարչական դրության կազմալուծման, տարվույս սկիզբը ունեցանք մի շատ ցավալի աղետ մը։ Գեթսեմանի ձորին մեջ գտնվող Ս. Աս-

տուածածնա Գերեզմանի հնադարյան եկեղեցին, որուն արտաքին գավիթը և մուտքի մեծ դուռը դեռ մի քանի ամիս առաջ վերահաստատած էինք իրենց նախկին շքեղության մեջ—Հունաց Պատրիարքարանի հետ համագործակցաբար—հունվարի 5-ի գիշերը հանկարծական տեղատարափ անձրևներու հեղեղներով լեցվեցավ։ Խորտակվեցան նրա մուտքն ու գավթի պատը և ինչ որ կգտնվեր ներսը, եկեղեցվո մեջ, ջրամուն եղավ մինչև առաստաղը բարձրացող ջուրին մեջ (եկեղեցին գետնափոր ըլլալով). Ս. Կույսի Գերեզմանի դամբարանը և անոր առջև մեր Հեթում թագավորի կոչված պատարագամատույց Ս. Սեղանը, Հունաց և մեր մյուս բոլոր պատարագամատույց սեղանները, բոլոր իկոնները, յուշաներկ պատկերները, կանթեղները, ջահերը, պահարանները՝ իրենց պարունակած եկեղեցական զգեստներով, ամբողջը ոչնչացան և ավերակի վերածվեցան։ Նյութական վնասը մի քանի հազար ոսկիներու կհասնի։

Ասոնք բոլորը սակայն անխափան և անմիջապես պետք է վերահաստատվին այդ մի քանի հազար ոսկի ծախքով, որուն ճիշտ կեսը մենք պետք է վճարենք, ինչ որ ալ ըլլա։ Եկեղեցին մի քանի դարերե ի վեր միայն մեր և Հունաց սեփական եղած է, երկու պատրիարքներու կողմե կնքված համաձայնությամբ մը։ Գավթի խորտակված պատը մերն է և անմիջապես կառուցանելի մոտ հազար ոսկվո ծախքով։

Այս ստիպողական ու անհրաժեշտ ծախքերու շարանը մեր նվազած եկամուտներուն առջև ցույց կուտա Ձեր Վեհափառության մեր տնտեսության վրա դալիք դժվարությունները։ Մեր վրա պիտի ծանրանա՛ նաև 100 հոգինոց միաբանության հոգատարությունը, ինչպես նաև երեքեն չորս հազար դժբախտ ժողովուրդի հոգատարությունը դժնդակ պայմաններու տակ։

Պաղեստինահայությունը, թվով մոտ 12.000, անցյալ երեսուն տարիներու ընթացքին օրինակելի և նախանձելի եղած է իր ազգասիրության և հայրենասիրության մեջ։ Ազգային ընդհանուր և մասնակի հանգանակություններու մեջ միշտ իր մասնակցությունը բերած է առավելագույն զոհաբերությամբ։ Ներկա դժբախտ պարագաներու տակ իսկ այդ ոգիին շնորհիվ կրցած ենք կատարել ներքին հանդանակություն մը, որուն արդյունքը, մոտ հազար ոսկի, պիտի հատկացվի կարոտելոց անհրաժեշտ պարենի հայթայթման։ Կարոտելոց հոգատարության համար կազմած ենք 15 աշխարհականներե և 6 հոգևորականներե բաղկացած առժամյա խնամատարական Մարմին մը մեր նախագահության տակ։ Մարմինը պիտի ունենա իր Վարչական Վերին Համարառու ժողովը, բաղկացած երեք հոգևորականներե և երեք աշխարհականներե. հետո երեք Գործադիր Հանձնախումբեր—Առողջապահական, Կարգապահական և Պարենավորման՝ բաղկացած մեկ մեկ հոգևորական և հաջորդաբար երեք, չորս և հինգ աշխարհական անդամներե։

Արցունքներով գրեցինք մեր այս բոթաբեր նամակը և Ձեր Վեհափառությունը արցունքներով պիտի կարդաք զայն։ Բայց վստահ ենք, թե արժանընդունակ աղոթքներով և Ձեր բարձր հովանավորությամբ, մենք և մեր Միաբանությունը մեր ժողովուրդով միասին պիտի վերագտնենք մեր բնականոն կյանքն ու աշխատությունը, փառավորելու զԱստուած և ծառայելու մեր Ս. Եկեղեցիին և Ազգին՝ նորոգված ուժերով։

Հավատարմական սիրով և ամենախորին հարգանաց հավաստյոք մատչելով ի համբույր Ձեր Վեհափառության շնորհաձիր Սուրբ Աջույն,

Մնամք խոնարհ Աղոթակից և տրուպ ծառա Տյառն

ԿՅՈՒՐԵՂ Բ
ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՆԱՄԱԿ Բ

Վեհափառ Հոգևոր Տեր,

Ի շարունակություն մեր 12 մարտ, 1948, թվակիր նամակին, պատիվ ունինք Ձեր Վեհափառության ներկայացնելու հետևյալ տեղեկությունները՝ մեր և մեր Միաբանության ու ժողովուրդի կրած դառն կորուստներու և փորձառություններու մասին։

Բացի նախորդ ամիսներու ընթացքին Պաղեստինի զանազան մասերու և Երուսաղեմի մեջ մեր ունեցած 15 տնձի կորուստներեն, մայիս 15-են ասդին մեր Վանքի շրջապատին մեջ և քովերը ունեցանք 111 հայ վիրավորյալներ— Վանքի վրա նետված ռումբերեն և հրաձիգներու գնդակներեն։ Անոնցմե 10-ը վախճանեցան անմիջապես և մի քանի [illegible] հետո։

Շնորհիվ ձեռք առնված ապահովության

ПА-926

միջոցներուն և խնամատարական Մարմնի ու Միաբանության միահամուռ աշխատանքներուն մեր վնասները սահմանափակվեցան։ Առանց ասոնց, նկատի ունենալով ռմբակոծության և հրդեհներու սաստկությունը, շատ ավելի ծանր պիտի ըլլային վնասները։

Մինչ Պարենավորման Հանձնախումբը հազարավոր ժողովուրդի սնունդի մատակարարման դժվարին աշխատանքը կկատարեր և կարգապահական Հանձնախումբը ընդհանուր ապահովության վրա կհսկեր, Դարմանատան պաշտոնյաները տասնյակ վիրավորյալներ մեկ անգամեն կխնամեին։ Մայիս 14-են մինչև հունիս 7 տևող կռիվներու ընթացքին 166 վիրավորյալներ ընդունված են Դարմանատունը— շատերու մարմինը ռումբի կրտորներով պատռված— և խնամված են զգուշությամբ ու հիվանդանոց ղրկված հիմնական վիրաբուժական գործողությանց և խնամքի համար։

Մեր եկեղեցիներուն և շենքերուն հասած վնասներն են հետևյալները.

Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարի հյուսիս-արևելյան անկյան եզերքին դպած է ռումբ մը և թափած երեսի քարերը՝ մեկ մետր երկարության վրա։ Ուրիշ ռումբ մը Ս. Էջմիածին մատուռի տանյաց հարավ-արևելյան եզերքին դպած է և անկե չորս մետր տեղ փլցուցած, թափելով տակի և շրջակայքի հողի շերտերը։ Ռումբը տանիքի եզերքի երկաթյա վանդակին դպած է և վանդակն ալ ուժգնորեն ճեղքելով հետը տարած է տանիքին եզերքի քարերը։ Մատուռի ներսեն հայտնի չէ այս ամենը, տակի կամարն ալ չէ ազդված։

Հրեշտակապետաց եկեղեցին, ինչպես նաև Ս. Թեոդորոսի, չեն վնասված բարեբախտաբար։ Վնասված են Հրեշտակապետաց եկեղեցվո շրջապատի սենյակները և Տեսչարանը։ Մանր կերպով վնասված է Հին Աբեղաթաղի տանյաց տանդուխքը իր շրջակայքով. ճեղքված են կամարներն ու պատերը մի քանի քառակուսի մետր տարածության վրա։ Այս մասը ընդարձակ նորոգության պետք ունի։ Ռումբեր ինկած են Վանուց արտաքին մուտքի առջև և վնասած են դիմացի չորս կըրպակները և անոնց առջևի սալահատակը։ Մեծ բակին մեջ ինկած ռումբերը վնասած են Դիվան առաջնորդող ոլորուն քարյա սանդուխքը և անոր երկու կողմի երեք սենյակները։ Ուխտավորաց թաղերուն մեջ ինկած ռումբերը փլցուցած են տանյաց եզերքները և ծանրապես վնասված է Ատանա թաղը ամբողջությամբ, քովի փոզոցին մեջ պայթած ականի ցնցումեն։ Անոր պատերուն և սենյակներուն մեջ լայն ճեղքեր բացված են։ Նոր Աբեղաթաղի մեջ ինկած մի քանի ռումբերեն թեթև կերպով վնասված է թաղի արևմտյան թևի տանիքի եզերքը. ըրամբարներու առջև, մեկ ու կես մետր երկարության վրա։ Բակի քարյա սանդուխքը և սենյակները, ինչպես նաև Ատանա թաղը, ընդարձակ նորոգության պետք կներկայացնեն։

Ս. Աթոռույս Կյուպենկյան Մատենադարանի բակին մեջ ինկած ռումբերեն մեկը վնասած է Մատենադարանի մուտքի աջակողմյան առաջին պատուհանը և վրայի քարե շրջանակի մեկ փոքր մասը։ Տանիքի նոտևի մասն ալ կրած է փոքր վերք մը։ Ժառանգավորաց Վարժարանի մեջ խորտակված է մեծ սրահի մուտքի մարմարիոնյա փոքր վանդակը և դեպի արևելք նայող աջակողմյան դասարանի արտաքին պատին մեկ մասը։

Ս. Թարգմանչաց Վարժարանը մի քանի տեղեն խոցված է ռումբերեն, բայց փլուզում չէ ունեցած։

Սաստիկ կերպով վնասված են Հայոց թալի վանքապատկան շենքերեն շատերը։ Բոլորովին կործանած է այն շենքը, որ մի քանի տարիներե ի վեր կծառայեր իբրև ակոմբ Երուսաղեմի Բարեսիրաց Միության։ Թալանված, այրված ու քանդված են տասներեք տոմները և տասը կրպակները։ Անոնց նորոգության և վերահաստատության համար մեծ գումարներու պետք պիտի ունենանք։

Ս. Փրկչա Վանքին մեջ փլած է արտաքին շրջապատի մեկ մասը. կողոպտված են եկեղեցին ու վանքը։

Նոր քաղաքամասին մեջ մեր ունեցած շենքերեն ծանրապես վնասված է Մեծ Պանդոկը— ռումբերը քանդած են անոր առջևի սենյակներեն երկուքը։

Երուսաղեմի հին և նոր քաղաքամասի ռմբակոծումը ընդհանուր և անխնա ըլլալով, վնասներն ու կորուստներն ալ ընդհանուր և անսահման են։ Հին Քաղաքի Հրեից թաղը կործանած է ամբողջությամբ։ Մանր կերպով վնասված է Սիոնի Գերմանական եկեղեցին իր բոլոր մասերով. կործանած է նույն տեղվույն Անգլիացվոց դպրոցի մեկ մասը։ Վնասված են Ասորվոց Ս. Մարկոս եկեղեցվո շուրջի տունները. ռմբակոծված է Ս. Հարությունը. ռումբերեն մեկը, 1,25 մետր, ինկած է մեր Ս. Լուսավորչի տանիքին վրա և չէ պայթած։ Վնասած է միայն գմբեթի քովի սալահատակի մեկ փոքր մասը։ Ուրիշ փոքր ռումբ մը դպած է Ս. Գերեզմանի բոլորակի մեծ գմբեթին և փոքր ծակ մը բացած է անոր արտաքին կեղևին մեջ, բայց չէ կրցած ծակել ներքևի կեղևը, այնպես որ ներսեն

հայանի չէ։ Ռումբեր ինկած են նաև Հունաց Պատրիարքարանի և Վանքի մեջ՝ փոքր վնասներ պատճառելով։

Երեք ռումբեր ինկած են հայ կաթոլիկներու եկեղեցիին վրա և շուրջը. եկեղեցիին հոտի վերնատան տանիքը և սնոր ներքևի առաստաղը վնասված են քիչ մը, մյուս ռումբերը եկեղեցվո բակերուն մեջ պայթած են և մեկ երկու հոգի վիրավորած։

Մանր կերպով վնասված են Ֆրանսացվոց Նոթր Տամի հսկա շենքը և քովի հիվանդանոցը, ինչպես նաև անոր դիմացի Մայրապետաց վանքն ու եկեղեցին։ Քանի մը ռումբեր ինկած են նաև Անգլիացվոց Ս. Գևորգ եկեղեցվո վրա և շուրջ։ Երկու հատը ծակած են եկեղեցվո առաստաղը և ներս թափանցելով պայթած ու խորտակած են ազնիվ քարերե կառուցված ամբիոնը, քովի մեծ երգեհոնը և փայտյա բոլոր վանդակներն ու քանդակները, աթոռները և այլն, անգործածելի դարձնելով եկեղեցին։ Մյուս ռումբերեն չախչախված է մեկ ինքնաշարժ և նրնջարանի մը կահկարասիները։

Ռումբեր ինկած են նաև Հին քաղաքամիջի Լատինաց Պատրիարքարանի և շրջակայից վրա, նույնպես Ֆրանչիսկյան վանքի և անոր շրջակա շենքերու վրա, անձի և շենքի վընասներ պատճառելով։ Մի քանի ռումբեր հասած են նաև Սողոմոնի Տաճարի բակը և պայթած Մզկիթին քովերը։ Նոր քաղաքամիջի վնասված եկեղեցիներու շարքին մեջ կգտնվի նաև Հապեշաց Բոլորշի եկեղեցին— ռումբը ծակած է գմբեթը և եկեղեցվո մեջ պայթելով վնասած է ներսի պատերն ու սեղանը։ Այսպես Բեթղեհեմի ճամբուն վրա գտնվող Հոնաց Ս. Եղիայի հնադարյան վանքեն սկսյալ մինչև Հրեից համալսարանն ու հիվանդանոցները ռմբակոծված և հրացանաղարկ եղած են առանց բացառության, ավերներ ու կյանքի կորուստներ պատճառելով ամեն տեղ։

Հունաց Ամենապատիվ Ս. Պատրիարք Հայրը Ս. Հարության ռմբակոծումի առթիվ հեռագիր տված է Միացյալ Ազգերու Ապահովության Ժողովին։ Նույնը ըրած ենք մենք, հիշելով նաև ռմբակոծումը քրիստոնեական եկեղեցիներու, վանքերու, կուսանոցներու և այլ կրթական և բարեսիրական հաստատություններու։ Լատիններն ալ իրենց կարգին հեռագրած են, ներկայացնելով ցանկը բոլոր այն քրիստոնեական եկեղեցիներուն և հաստատություններուն, որոնք կրակված և վընասված են Հրեից պինվորներու կողմե։ Այս հեռագիրներին առաջ, մայիսի 16, 17, 18-ին, երբ ռմբակոծումները սկսած են մեր շուրջ, մենք անձամբ և ուղղակի հեռախոսի միջոցավ բոլոր ներկայացուցիչք հետևյալներուն— «Թրուա Քոմիսիոն»-ի անդամներուն, Միջազգային Կարմիր Խաչի Պաղեստինի պետին, տեղվույս Արաբական Ազգային Ժողովի անդամներուն, Հրեից Ընդհանուր Գործակալության պետերուն, Երուսաղեմի ոստիկանության պետերուն և քաղաքիս զանազան հոգևոր իշխանությանց և անձերուն, խնդրելով որ արգելք հանդիսանան Ս. Տեղյաց և եկեղեցյաց ռմբակոծումին։ Նույնը ըրին մեր կողմե մեր Միաբանության հոգեշնորհ անդամներեն մի քանին երբ կտրվեցան մեր Խաղի հեռախոսի թելերը և անջատվեցանք քաղաքի մյուս մասերեն։ Այս բոլոր ջանքերը ոչ մեկ բարերար արդյունք ունեցան և մենք մեր ժողովուրդով Աստուծո ապավինեցանք, բազմապատկելով մեր ինքնապաշտպանության ջանքերը։

Ս. Հարության մեջ և Ս. Բեթղեհեմի մեջ մեր հոգևոր պաշտամունքներն ու պարտականությունները շարունակված են ու կշարունակվին ըստ առաջնույն։ Հունաց և մեր փոխադարձ համաձայնությամբ Ս. Աստուածածնա Գերեզմանի եկեղեցվո ամենօրյա Ս. Պատարագները դադրած են առժամաբար, մինչև որ պատարագամատույց Ս. Սեղանները պատրաստվին։

Ս. Հակոբյանց Մայր Տաճարի ամենօրյա պաշտամունքները, որոնք դադրած էին մայիս 17-են հետո, վերսկսած են արդեն։ Համբարձման տոնը, փոխանակ Համբարձման լեռան Համբարձման եկեղեցվո մեջ կատարելու, Ս. Հակոբի մեջ կատարեցինք. նույնը պիտի ընենք կերևի Հոգեգալուստի տոնին առթիվ, քանի որ Ս. Փրկիչ երթալը անկարելի է առ այժմ։

Ժառանգավորաց սանները իրենց տեղը վերադարձած են, Հրեշտակապետաց վանքը մաքրված է և հետզհետե իր բնականոն վիճակին վերածվելու վրա։ Այս բոլորը շնորհիվ այն զինադադարին, որ երկուստեք համաձայնությամբ կնքված է։

Կխնդրենք Ձեր Վեհափառութենեն, որ աղոթեք Ս. Երկրի խաղաղության համար, որպեսզի մեր սիրելի ժողովուրդը, ուրիշներու

հետ, վերադառնե իր բնականոն կյանքը և դարմանե իր վնասները։

Հավատարմական սիրով և ամենախորին հարգանաց հավաստյոք մատչելով ի համբույր Ձեր Վեհափառության շնորհաձիր Սուրբ Աջույն,

Մնամք խոնարհ Աղոթակից և տրուպ ծառա Տյառն

ԿՅՈՒՐԵՂ Բ
ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՆԱՄԱԿ Գ

Վեհափառ Հոգևոր Տեր,

Ի շարունակություն մեր 12 մարտ և 13 հունիս 1948 թվակիր տեղեկագիրներուն, Ձեր Վեհափառության կներկայացնենք հետևյալ տեղեկությունները՝ մեր ներկա կացության մասին։

Հունիսի ընթացքին մինչև հուլիսի առաջին շաբաթը ՄԱԿ-ի միջնորդությամբ Պաղեստինի կռիվներու թափը չափով մը սահմանափակվեցավ զինադադարի մը կնքումով։ Այդ միջոցին մեր ժողովուրդի մեկ մասը Անդր-Հորդանան մեկնեցավ, մասամբ ապահովության և մասամբ ալ ապրուստի միջոցներ գտնելու հույսերով։ Անդր-Հորդանանեն ավելի հեռուները չկրցին երթալ, մյուս երկիրներու դրած արգելքներուն պատճառավ։ Լիբանանի, Սուրիո և Եգիպտոսի մեջ գտնվող պաղեստինցի գաղթականները առավելապես Հոպպեի և Հայֆայի շրջաններեն են և մեծ զանգվածով ստիպվեցան գաղթել տարբեր առաջին օրերուն, երբ դեռ արգելքներ չէին դրված։

Զինադադարը պատեհություն տվավ մեզ իրագործելու ինչ որ կարելի չէր եղած նախապես։ Գործնական միջոցներ կիրարկվեցան հավանական համաճարակներու դեմ ընդհանուր հականեխումով. ապահովվեցավ խմելու և մաքրության ջուրի պաշարը։ Մայիսեն ի վեր Երուսաղեմի քաղաքապետարանի ջուրը կտրված ըլլալով ջուրի հարցը մեր ամենեն մտահոգիչ հարցերեն մին էր և է։ Ռումբերու դեմ պաշտպանվելու համար ժողովուրդի բնակած սենյակներուն և նրբանցքներուն առջև ավազապարկի պատեր կանգնել տվինք, տեղ տեղ ալ աղյուսե պատեր։ Ավելի քան 15 հազար պարկ գործածած ենք այս առթիվ միայն։ Այս և նման անհրաժեշտ կանխազգուշությունները հետ ժողովուրդի պարենը ապահովվեցավ մինչև հոկտեմբերի վերջը։

Զինադադարը վերջանալուն պես հուլիսի սկզբները վերստին սկիզբ առին մեր մահաբեր տառապանքները։ Հուլիս 10-ին մեծ մորթը մը ինկավ Վանքի թաղերեն միույն վրա, ծանրապես վիրավորեց երկու կիներ և թեթև կերպով հինգ ուրիշ ազգայիններ։ Ջախջախվեցավ այդ թաղի տանիքի վրա դրված ջրամբարը և բակին մեջ կառուցված խոհանոցներեն երեքը՝ իրենց բովանդակությամբ։

Հաջորդ օրը մորթերներ ինկան Հայոց թաղին մեջ և վնասեցին մի քանի տուներ։ Գիշերը զարհուրելի ականներու պայթումները կոտրտեցին Վանքի դուռներեն և պատուհաններեն շատերը՝ իրենց ապակիներով միասին։ Կարելի է ըսել թե մեր Վանքի և ամբողջ թաղի մեջ պատուհանի ողջ ապակի չէ մնացած. վերջետեղումն ալ, որ քանիցս եղած է, անօգուտ դարձած է։ Ապակիի տեղ կգործածվին թիթեղ և տախտակ։

Հուլիս 15-ի գիշերը օդային ռմբակոծություն ունեցանք որպեսզի Երուսաղեմ լրիվ ճաշակած ըլլար պատերազմի ամեն դառնություն և սարսափ։ Ռումբերեն մին Տաճարի բակին մեջ ինկած է, ուրիշ մը Ս. Հարության բակին մեջ, մեկ հատն ալ մեր Մատենադարանի առջև, ջախջախելով անոր ճակատի բոլոր փեղկերը։ Իսկ հաջորդ օրը Երուսաղեմ վայելեց իր աննախընթացը — 500-են ավելի մորթերներու զարհուրելի տեղատարափ մը։ Բացի անձի կորուստներեն և բազմաթիվ վիրավորյալներեն մեծ վնասներու ենթարկվեցան եկեղեցիները, վանքերն ու տուները։ Մեր վանքի և թաղի տուներուն մեջ մի քանի սենյակներ ծակվեցան։ Շնորհիվ այն ապահովության միջոցներուն, որոնք կիրարկվեցան փորձառու ձեռքերով, մենք ունեցանք միայն հինգ վիրավորյալներ։

Այս մեծ աղետեն հետո, կերևի ազդու միջամտությամբ մը, ռմբակոծությունը դադրեցավ պահ մը։ Մեզի համար շատ կարճ տևեց այդ պահը, որովհետև սեպտեմբեր 12-ին,

կիրակի օր, արցունքի և սուգի մեծ օր մը եղավ Երուսաղեմի հայության համար. կեսօրեն առաջ մեր առավոտյան պաշտամունքի և Ս. Պատարագի միջոցին երկու մեծ մորթրներ ինկան մեր Վանքի արտաքին մուտքի առջև և ուխտավորաց թաղին մեջ և մի քանի հատ ալ Ս. Հարությունն ճամբուն վրա և զոհ գացին 6 հայեր ու վերավորվեցան 30 ուրիշներ (այր ու կին) և մի քանի օտարներ։ Վանքի թաղերն ու Ս. Հակոբի կամարները ամբողջ օր կթնդային ծնողներու և աղգականներու լաց ու կոծեն. կարտասվեին բոլորը, վասնզի ոչ մեկ տեսն 6 դագաղներ չէին շարված Ս. Հակոբի մեջ այնքան սրբատաճմլիկ պարագաներու տակ։ Այդ դագաղներու հետ մեր Վանքի հինավուրց նկուղներուն մեջ թաղեցինք զինագուլներու մեր բոլոր հույսերը... Համոզվեցանք թե մեզի համար ամեն օր և ամեն գիշեր մահվան սպառնալիքները կախված են Ս. Քաղաքին վրա։

Մեր տագնապի երկրորդ շրջանը ավելցուց մեր ժողովուրդի կարոտյալներու թիվը և անոնց հոգատարության ծանրությունը։ Բացարձակ գործազրկություն—առևտրի չգոյություն, բացի ուտելյաց, որ տեղացիներու մենաշնորհն է։ Երկրեն դուրս երթալու դժվարություններ և անկարելիություն. ասոնք, միացած ուրիշ պայմաններու հետ, մեր նախկին ինքնաբավ ժողովուրդը չքավորության մեջ նետած է և շուտով միայն Երուսաղեմի մեջ ամեն օր ավելի քան 2500 հոգի կերակրելու ծանր պատասխանատվության առջև պիտի գտնվինք ի բաց առյալ պատրաստարելու և հագցնելու պարտականություններեն։

Մեր առջև ունինք ձմեռային եղանակը իր բացառիկ պահանջներով, երբ արդեն սպառած են մեր ստացած նպաստի գումարները։

Գալով Ս. Աթոռույս, անցյալ մարտ ամիսեն ի վեր անոր եկամուտները, որոնք մեծ մասամբ շենքերու և խանութներու վարձքերեն կգոյանային, բոլորովին դադրած են։ Այդ շենքերն ու խանութները մեծ մասամբ արտաքին նոր քաղաքամասի մեջ կգտնվին և հրեա վարձակալներու հանձնված։ Մայիսեն ի վեր անոնցմե կտրված ըլլալով, ծանոթ պատճառներով, անոնցմե ոչինչ կրցած ենք գանձել։ Նույնը եղած է Հին Քաղաքի խանութներու և տուներու վարձքերու մասին, թեև արաբ վարձակալներու ձեռք, սակայն տիրող տնտեսական կացության պատճառավ գործերը դադրած ու խանութները գոց, անկարելի եղած է գանձել ոևէ գումար։ Տարվույս առաջին ամիսներուն ինչ որ ունեինք դրամատանց մեջ, իբրև պատրաստի գումար, հատկացված է կառավարական, կալվածական և քաղաքապետարանի տրոց (մի քանի հազար ոսկի) մեր հին պարտուց և տոկոսներուն, ընթացիկ և բացառիկ ծախուց և այս կերպով սպառած են մեր ծախուց բոլոր միջոցները։

Պարտք ընելը մեզի համար մահացու մեղք նկատած ըլլալով չենք մոտեցած անոր։

Այս կացության առջև էր, որ Ձեր Վեհափառության ուղղեցինք մեր 19 սեպտեմբեր 1948 թվակիր հեռագիրը՝ խնդրելով Ձեր բարձր հանձնարարությունը Մայր Աթոռի Սփյուռքի Թեմական Առաջնորդներուն և Աղգային Մարմիններուն, որպեսզի իրենց կարելին ընեն նյութական օժանդակություն հասցնելու Ս. Աթոռիս և մեր դժբախտ ժողովուրդին։

Լիահույս ենք թե Ձեր Վեհափառությունը իր պաշտելի սիրտը պիտի շնորհե մեր օգնության գործին ալ, ինչ որ անսահմանորեն երախտապարտ պիտի կացուցանե մեզ և մեր Միաբանությունն և ժողովուրդը, Ձեր սիրելի զավակները։

Հավատարմական սիրով և ամենախորին հարգանաց հավաստյոք մատչելով ի համբույր Ձեր Վեհափառության շնորհաձիր Ս. Աջուն,

Մնամք խոնարհ Աղոթակից և տրուպ ծառա Տյառն

ԿՅՈՒՐԵՂ Ռ

ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ

Ն. Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վեհափառ Տեր,

1944-ին այցելեցի Եթովպիո մեր գաղութը և ամբողջ չորս ամիս ապրեցա մեր ժողովուրդին հետ։ Այցելեցի հայաշատ կեդրոնները, կատարեցի օծումը Ս. Գևորգ եկեղեցվո՝ շինված քարերարությամբը ողբացյալ Միհրան Մուրատյանի. դարձյալ կատարեցի օծումը Տիրե-Տավայի մատուռին, պատարագեցի և քարոզեցի, նախագահեցի զանազան հանդիսությանց և խոսեցա միշտ նպատակ ունենալով վառ պահել մեր ժողովուրդին մեջ սերը դեպի իր եկեղեցին, իր հայրենիքը և իր մայրենի լեզուն։

Կազմակերպեցի և կատարեցի, ըստ Ազգային Սահմանադրության, Գաղութային Ժողովի ընտրությունը, վերջ դրի տարակարծությանց և հակառակությանց, գաղութը դրի խաղաղության ճամբուն մեջ։ Երեք անգամ պատիվն ունեցա ընդունվելու Ն. Վ. Հայրե Սելասե կայսեր կողմե, որ, պատասխանելով իմ հրավերին, անձամբ ներկա եղավ Ս. Գևորգ եկեղեցվո օծման արարողության և անձամբ պատասխանեց եկեղեցվո մեջ իմ Ն. Վեհափառության հասցեին խոսած ուղերձիս։

Վեհափառ Տեր, չորս ամսվա արդյունավետ աշխատանքե մը վերջ խաղաղ խղճմտանքով վերադարձա Եգիպտոս։

Այս տարի հուլիս 1-ին ալ մեկնեցա Իտալիա, ուր մնացի ամբողջ երկուք ու կես ամիս։ Այցելեցի շատ քաղաքներ, տեսա մեր ցիր ու ցան ժողովուրդը ամենուրեք։ Առավելապես եղա Միլան, ուր մեր ազգայնոց թիվը կհասնի 250-ի։

Վերացման խաչի տոնին պատարագեցի և քարոզեցի, մկրտեցի, պսակեցի և հոգևորապես մխիթարեցի տեղվույն փոքրաթիվ մեր գաղութը։

Վեհափառ Տեր, ցավալի վիճակ մը կա մեր գաղութներե ներս, Իտալիան ատոնցմե մեկն է. ժողովուրդը անտեր, անհոգիվ ու անառաջնորդ, զուրկ հոգևոր մխիթարությենե, զուրկ ազգային ապրումներե, զուրկ եկեղեցի, չունինք դպրոց, հավատքը թարած, լեզուն կորսվելու վտանգին մեջ, սերը շիջած դեպի Ազգն ու Հայրենիքը, իր դախտին ձգված ժողովուրդ։

Օգտվելով այս դժբախտ կացութենեն օտար եկեղեցվո ներկայացուցիչները վատաբար և առանց խղճահարելու կսողոսկին մեր ժողովուրդի շարքերեն ներս՝ անոնց հոգիները «փրկելու» և օտար եկեղեցվո անդամներ դարձնելու համար։ Ու այս ընթացքով կնը-վազի հետզհետե թիվը մեր ժողովուրդին և մանավանդ ավելցնենք, որ օտար ամուսնությունները ևս կնպաստեն այս մարդորսական աշխատանքին՝ աղգեն և եկեղեցիեն հեռացնելով իր հարազատ զավակները։ Զարիք մըն է ասիկա, որուն առջև պետք է անպայման պատվար և պատնեշ բարձրացնել։

Այս չարիքի խափանարար միջոցներեն մին և կարևորը պիտի ըլլար հաստատել հոգևոր շրջուն հովվություն, օրինակ Իտալիո համար կեդրոն ունենալով Միլան, ուրկե հոգևոր հովիվը հաճախ այցելե այն քաղաքները, ուր բնակություն հաստատած են մեր եկեղեցվո զավակները, հոգ չէ թիվով շատ քիչ։

Համոզված եմ, որ այս ձևով չարիքը եթե ոչ խափանած, գեթ հեռացուցած կըլլանք մենե. համոզված կըսեմ, Վեհափառ Տեր, վասնզի թե՛ յԵթովպիա և թե՛ յԻտալիա իմ կարճ ժամանակ բնակությունս անօրինակ խանդավառության և հոգևոր արթնության պատճառ դարձավ մեր շատ սիրելի ժողովուրդին համար։

Իտալիո մեր գաղութը տարին մեկ երկու անգամ հազիվ կընդունի այցելությունը հոգևոր պաշտոնեի մը։ Պետք է ավելցնեմ, որ մեր պարզուկ քահանաները չեն կրնար բավարարել այլևս մեր ժողովուրդը, որ կուզե լսել իր հոգևոր պաշտոնյան, սորվիլ իր հոգևոր պաշտոնյայեն և առաջնորդվիլ իր հոգևոր պաշտոնյային միջոցավ ու այս ամենը մեր պարզուկ քահանաները ի վիճակի չեն ընելու։ Անհրաժեշտ է, որ երիտասարդ և պատրաստված վարդապետներ ստանձնեն այս գործը ծիծաղելի չըլլալու և իրենց պաշտոնն ալ օգտակարապես ի կիր արկանելու համար։

Արտավազդ Սրբազան, նստած ի Փարիզ, ի վիճակի չէ հասնելու ամենուրեք, երբ մանավանդ չունի իրեն օգնական երիտասարդ և պատրաստված եկեղեցականներ, վարդապետներ։

Այս հույժ կարևոր պարագան հանձնելով Վեհափառ Հայրապետիդ բարեհաճ նկատառման,

Մնամ հավատարմական զգացումներով և որդիական խոնարհությամբ

Առաջնորդ Հայոց Եգիպտոսի ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

19 հոկտեմբեր 1948 թ. Գահիրե

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՈՎ

ԱՄՆ-Ի 8 ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՀԱՅԵՐԻ ԽՄԲԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԲԱԹՈՒՄԻ

ԲԱԹՈՒՄԻ, 22 փետրվարի.— Փետրվարի 21-ին, ռումինական «Արդեալ» նավով, Նյու-Յորքից Բաթումի ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգներից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձող հայերի մի խումբ, հիմնականում բանվորներ— մետաղագործներ, փականագործներ, մեխանիկներ, էլեկտրիկներ, ինչպես և արհեստավորներ։

Բաթումիի նավահանգստում ջերմ հանդիպում տեղի ունեցավ ժամանածների հետ։ Դժվար է նկարագրել ժամանածների երջանկությունը։ Քարավանի ղեկավար Փրեդ Ասլանյանը, նրանց բոլորի զգացմունքներն արտահայտելով, ասաց.

— Այս օրը իմ կյանքի ամենաերջանիկ օրն է։ Ես թեկուզ և ծնվել եմ Ամերիկայում, ուր իմ ծնողները գաղթել էին Թուրքիայից դեռևս սույն դարի սկզբին, բայց վաղուց երազում էի տեղափոխվել Սովետական Հայաստան, որտեղ մեր ժողովուրդը ազատագրվել է կապիտալիստական ստրկությունից և իր նոր կյանքն է կառուցում։ Երբ հայրենիք դառնալու հնարավորություն ստեղծվեց, ես առաջիններից մեկը եղա, որ ցանկություն հայտնեցի վերադառնալու Սովետական Հայաստան, որպեսզի զգամ ազատ աշխատանքի երջանկությունը և դաստիարակեմ իմ երեխաներին սոցիալիստական Հայրենիքի արժանավոր քաղաքացիներ լինելու համար։ Անհուն շնորհակալություն մեծ Ստալինին, որ հնարավորություն տվեց մեզ մեր հայրենիքը գտնելու։

Կարճատև հանգստից հետո ժամանած հայրենադարձները Բաթումիից կուղևորվեն Սովետական Հայաստան։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ԽՄԲԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ

Փետրվարի 25-ին հատուկ գնացքով Բաթումիից Երևան ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգներից հայրենիք վերադարձող հայերի խումբը։ Կայարանում նորեկներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից վերաբնակեցման վարչության և Երևանի Քաղաքային Սովետի ներկայացուցիչները, ինչպես նաև եկվորների հարազատներն ու ազգականները։

Նույն օրը հայրենադարձները տեղավորվեցին նրանց համար նախօրոք պատրաստված բնակարաններում։

ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱՋԱՏ ՀՈՂԻ ՎՐԱ*)

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՈՐԻՍ.— Շրջանում սկսված է բնակարանային շինարարություն հայրենադարձ հայերի համար։ Շրջանային կենտրոնում հայրենադարձների մի քանի ընտանիքներ ստացան երկհարկանի, լուսավոր բնակարաններ։

Շուտով շահագործման կհանձնվեն նաև մյուս բնակարանները։

***

ՂԱՓԱՆ.— Օխչի-չայ գետի ձախ ափին սպիտակին են տալիս այն գեղեցիկ շենքերը, որ կառուցել է Հանգվարշությունը և հունվարի վերջերին տրամադրել արտադրության մեջ աշխատող հայրենադարձներին։ Քառասուն սենյակներից բաղկացած այդ շենքերն ունեն բոլոր հարմարությունները։

Նոր բնակարաններում տեղավորված հայրենադարձները իրենց բնակարանների շրջակայքից ստանում են 500—1000 քառակուսի մետր հողամաս։

Հանգվարշությունը հայրենադարձների համար այս տարի կառուցելու է ևս 16 բնակարան։

***

ՍԻՍԻԱՆ.— Շրջանի գյուղերում կառուցվում են բնակարաններ հայրենադարձ հայերի համար։

Վերջերս Սառնակունք, Նորավան, Բորիսովկա և շրջանի այլ գյուղերում հայրենադարձների շատ ընտանիքներ երկհարկանի շենքերում ստացել են լուսավոր բնակարաններ։

ՎԱՐԿ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի կոմունալ բանկը այս տարվա ընթացքում անհատական բնակարանային շինարարության համար ռեսպուբլիկայի աշխատավորությանը բաց է թողնելու 130 միլիոն ռուբլու երկարատև վարկ։ Այդ գումարով կառուցվելու է ավելի քան հինգ հազար բնակելի տուն։

Հայրենադարձ հայերի երկու հազար ընտանիք վարկավորվելու են 30-հազարական ռուբլով։

***

Հայաստանի Գյուղբանկը անցյալ տարում բնակարանային շինարարության նպատակով հայրենադարձներին բաց է թողել 13 միլիոն 116 հազար ռուբլու երկարատև վարկ։

Վերոհիշյալ նպատակի համար Գյուղբանկը հայրենադարձներին երկարատև վարկեր է տրամադրելու նաև այս տարի։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՈՒՆԵՎՈՐ ԿՅԱՆՔԸ

ԲԵՐԻԱ.— 1947 թվին Հունաստանից Սովետական Հայաստան վերադարձած Հակոբ Ենոքյանի և Արշակ Անտոնյանի ընտանիքները մշտական բնակություն հաստատեցին Նոր Կողբ գյուղում։ Շուտով նրանք ընդունվեցին կոլխոզի մեջ։ Ենոքյանը սկզբում աշխատում էր իբրև շարքային կոլխոզնիկ, իսկ հետո առաջ քաշվեց որպես բրիգադիր։ Անցյալ տարի նա վաստակեց 618 աշխատաօր, որի դիմաց ստացավ 25 հազար ռուբլի դրամ, 1200 կիլոգրամ խաղող, հազար կիլոգրամ հացահատիկ, մեծ քանակությամբ յուղ, պանիր, մեղր, խմիչք և գյուղատնտեսական այլ մթերքներ։

---

*) Սույն խորագրի տակ դետեղվող նյութերը քաղված են Հայաստանի Հեռագրական Գործակալության հաղորդագրություններից և սովետական մամուլից։

Արշակ Անտոնյանը վաստակել է 462 աշխատանքային օր և ստացել է ավելի քան 17 հազար ռուբլի դրամ, 800 կիլոգրամ խաղող, հացահատիկ և այլ մթերքներ։

Առատ բերք են ստացել նաև մյուս հայրենադարձները, որոնք իրենց երջանիկ և ուրախ են զգում, սեփական, նորակառույց բնակարաններում։

ՆՈՐ ԴՊՐՈՑ

Կիրովականի «Դմո Ջալա» ավանում շատ շենքեր են կառուցվել, որոնցում բնակվում են արտասահմանից հայրենիք վերադարձած հայերը։ Կիրովականի ժողովրդական կրթության բաժինը այդ ավանում հունվարի 1-ից դպրոց է բաց արել, որտեղ սովորում է 130 երեխա։ Դպրոցը ապահովված է որակյալ դասատվական կազմով և անհրաժեշտ սարքավորումով։

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄԵԾ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Փետրվարի 18-ին տեղի ունեցավ աշխատավորների դեպուտատների Երևանի Քաղաքային Սովետի երկրորդ գումարման 4-րդ սեսիան։

Սեսիան քննության առավ Երևանում բնակվող հայրենադարձ հայերի համար կառուցված նոր թաղամասերի բարեկարգման խնդիրները և կազմակերպական հարցեր։

Առաջին հարցի առթիվ սեսիան լսեց աշխատավորների դեպուտատների Երևանի Քաղաքային Սովետի գործկոմի նախագահ, դեպուտատ Ե. Վարդանյանի զեկուցումը։

— Բոլշևիկների մեծ պարտիայի, կառավարության և անձամբ ժողովուրդների մեծահանճար առաջնորդ ընկեր Ստալինի հոգատարության շնորհիվ,— ասում է Ե. Վարդանյանը,— արտասահմանից հայրենիք վերադարձած հայերի համար ստեղծվել են երջանիկ կյանքի և ստեղծագործական աշխատանքի բոլոր պայմանները։

Վերջին երկու տարվա ընթացքում բարեկարգման խոշոր աշխատանք է կատարվել մայրաքաղաքի նորակառույց թաղամասերում, որտեղ ապրում են մեծ թվով հայրենադարձ հայեր։ Մայրաքաղաքում և նրա նորակառույց թաղամասերում պետության միջոցներով պատրաստված նոր բնակելի տներում տեղավորված են հազարավոր հայրենադարձ ընտանիքներ։ Բազմաթիվ տնտեսությունների տրամադրված են հողամասեր և ավելի քան 185 միլիոն ռուբլու վարկ՝ ոչհատական բնակարանային շինարարության համար։ Իրենց տների կառուցումն ավարտել են արդեն շատ հայրենադարձներ, իսկ մնացածները կավարտեն այս տարի։

Լուրջ ուշադրություն է դարձված հայրենադարձներին աշխատանքի տեղավորելու գործին։ Երևանում հայրենադարձները համապատասխան աշխատանքի են տեղավորված արդյունաբերական ձեռնարկություններում ու հիմնարկներում։ Զեյթուն, Արաբկիր, Նոր Արեշ թաղամասերում, Կիրովի անվան գործարանի բանվորական ավանում և այլ վայրերում բացվել է 7 դպրոց։ Սովորող հայրենադարձ երեխաների թիվը հասնում է ավելի քան 4200-ի։ Շատ երիտասարդներ ընդգրկված են բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Զգալի աշխատանք է կատարված կոմունալ շինարարության գծով։ Նոր թաղամասերին էլեկտրական լույս տալու համար կառուցված է 16 տրանսֆորմատորային կայան, անց են կացված մի քանի հազար գրծամետր բարձր և ցածր լարման էլեկտրահաղորդման գծեր։ Արաբկիր և Զեյթուն թաղամասերը քաղաքի կենտրոնի հետ կապված են ավտոբուսային երթևեկությամբ։

Նորակառույց թաղամասերում ստեղծված են առողջապահական հիմնարկություններ, որտեղ աշխատում են մի քանի տասնյակ բժիշկներ։ 1948 թվին մանկամսուրներ են բացվել Նոր Արեշում և Զեյթունում։

Այնուհետև զեկուցողը նշում է, որ ընկեր Ստալինի անմիջական ցուցումներով 1949 թվին խոշոր աշխատանք է տարվելու հայրենադարձ հայերի համար ստեղծված նոր թաղամասերի բարեկարգման ուղղությամբ։ Դրամական խոշոր հատկացումներ են արվում Զեյթունի, Արաբկիրի, Նոր Արեշի, Սարի թաղի, Նորքի, Կիրովի անվան գործարանի բանվորական ավանի շրջակայքում և այլ թաղամասերում կոմունալ շինարարության ու բարեկարգման աշխատանքները ծավալելու համար։ Այդ վայրերում կառուցվելու են բնակելի նոր տներ, բաղնիքներ, պոլիկլինիկաների, դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, կինո-թատրոնների շենքեր, ինչպես նաև ֆիզկուլտ հրապարակներ ու լողարաններ։ Ռադիոֆիկացման են ենթարկվելու թաղամասերը, անց են կացվելու հեռախոսագծեր, բարեկարգվելու են ճանապարհները, բարելավվելու է տրանսպորտային երթևեկությունը, ընդարձակվելու է ջրմուղի և ոռոգման առուների ցանցը։ Մեծ աշ-

խատանք է ծավալվելու կանաչազարդման ու ծառատնկման ուղղությամբ։

Զեկուցման վերջում Ե. Վարդանյանը ցանկություն հայտնեց, որպեսզի մայրաքաղաքի բնակիչները, և հատկապես հայրենադարձ հայերը, իրենց ակտիվ մասնակցությամբ ապահովեն 1949 թվի շինարարական ծրագրերի կենսագործումը։

Զեկուցումից հետո քննարկվող հարցի շուրջը բացվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին շատ դեպուտատներ։

Դեպուտատ Գ. Ղարագյոզյանը պատմեց այն մասին, որ Սարի թաղում ապրում են մեծաթիվ հայրենադարձներ, որոնք պետության օգնությամբ իրենց համար բնակելի նոր տներ են կառուցել։ Նա նշեց նաև, թե թաղամասի բարեկարգման ուղղությամբ ինչպիսի աշխատանքներ են տարվելու ընթացիկ տարում։

Դեպուտատ Գ. Հակոբյանը խոսեց այն ջերմ հոգատարության մասին, որով շրջապատված են Ստալինյան ռայոնում ապրող ու աշխատող հայրենադարձները։ Նա նշեց, թե ինչպիսի խոշոր աշխատանք է կատարվելու ընթացիկ տարում ռայոնի թաղամասերը բարեկարգելու ուղղությամբ։

Շինարարական արտելի նախագահի տեղակալ հայրենադարձ Գ. Էտիեդզյանը պատմեց այն խոշոր աշխատանքի մասին, որ տարվել է 1948 թվին, Նորքի սարալանջին նոր կառուցվող ավանի շինարարության ու բարեկարգման ուղղությամբ։ Ընթացիկ տարում այս ավանի հայրենադարձ բնակիչները պետական վարկավորման միջոցով նոր բնակարաններ են կառուցելու և ավանի բնակիչների թիվը զգալիորեն աճելու է։

Հայրենադարձ դեպուտատ Զ. Այվազյանը վստահացրեց սեսիային, որ ընթացիկ տարում Նոր Արեշի բնակիչները ոչ մի ջանք չեն խնայի ակտիվորեն մասնակցելու թաղամասի շինարարության ու բարեկարգման բոլոր աշխատանքներին։

Հայրենադարձ դեպուտատ Հ. Դեվեջյանը խոսեց այն մասին, թե ինչպես կարճ ժամանակում Նոր Արեշում, Արաբկիրում, Զեյթունում ու այլ թաղամասերում կազմակերպվել են նոր գրադարաններ, որոնք մեկ տարվա ընթացքում հայրենադարձ հայերին ընթերցանության համար բաց են թողել 35 հազար կտոր գիրք։ Այդ գրադարաններում հաճախակի կազմակերպվել են գրական, գիտական ու քաղաքական մատչելի և հետաքրքիր զրույցներ, զեկուցումներ, դասախոսություններ։

Դեպուտատների ելույթներից հետո սեսիան քննարկված հարցի առթիվ համապատասխան որոշում ընդունեց։

Սեսիան բուռն ծափահարությունների տակ ողջույնի նամակ ընդունեց՝ ուղղված ժողովուրդների սիրելի առաջնորդ և ուսուցիչ, հայ ժողովրդի լավագույն բարեկամ մեծ Ստալինին։

***

Զեյթունի բնակիչները բուռն խանդավառությամբ ընդունեցին Երևանի Քաղաքային Սովետի սեսիայի որոշումը հայրենադարձների համար կառուցված թաղամասերի բարեկարգման այս տարվա աշխատանքների մասին։

Տեղի ունեցած բազմամարդ ժողովում Երևանի Քաղաքային Սովետի սեսիայի որոշման մասին հաղորդեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ, հայրենադարձ բժիշկ Գ. Մանուշակյանը։

Այս տարի խոշոր աշխատանքներ են կատարվելու Զեյթունի բարեկարգման ուղղությամբ։ Կառուցվելու է դեպի ավանը տանող խճուղային ճանապարհը, բարեկարգվելու են երկու հիմնական փողոցները, ընդարձակվելու է ջրմուղի և ոռոգման ցանցը, ավարտվելու է դպրոցի և բաղնիքի շինարարությունը, կառուցվելու են պոլիկլինիկայի և ակումբի նոր շենքեր, սպորտ հրապարակ, ավազան-լողարան։ Մեծ աշխատանք է տարվելու ավանի կանաչապատման և ռադիոֆիկացման գծով։ Ընդարձակվելու է էլեկտրական լուսավորության ցանցը։ Անց է կացվելու հեռախոս։

Ժողովում ելույթ ունեցան հայրենադարձներ Հակոբ Պողոսյանը, Ստեփան Հովհաննիսյանը, Գաբրիել Ղազյանը, Հարությունն Նահապետյանը, Ավետիս Պետրիկյանը և ուրիշներ, որոնք արտահայտեցին իրենց խորին երախտագիտությունն ու գնորհակալությունը ժողովուրդների մեծ առաջնորդ սիրելի Ստալինին, որի անմիջական ցուցումով ձեռնարկվում է ավանների բարեկարգման գործը. նրանք հայտնեցին նաև իրենց պատրաստակամությունը ոչ մի ջանք չխնայել ընթացիկ տարում նախատեսված բարեկարգման աշխատանքները հաջողությամբ իրագործելու համար։

***

Մեծ խանդավառությամբ անցավ Սարի թաղի բնակիչների ժողովը, որին ներկա էին ավելի քան 300 սովետական նոր քաղաքացիներ։

Հաղորդելով Երևանի Քաղաքային Սովետի սեսիայի արդյունքների մասին, Քաղսովետի դեպուտատ, հայրենադարձ Ժ. Սիմոնյանը ասաց.

— Սովետական կառավարությունը և անձամբ մեծ Ստալինը մեծ հոգատարություն են ցույց տալիս մեր սոցիալիստական պե-

ության նոր քաղաքացիներիս նկատմամբ, այս մասին են վկայում նորաստեղծ ավաններն ու թաղամասերը, որտեղ մենք ապրում ենք։

Այս տարի մեր ավանի շինարարության ու բարեկարգման աշխատանքները ծավալվելու են ավելի մեծ չափով։ Բացի նոր տներից, այստեղ կառուցվելու են բաղնիք, դպրոցի շենք և կուլտուր-կենցաղային սպասարկման մի շարք օբեկտներ։

Այնուհետև ելույթ է ունենում Իրանից վերադարձած Արշակ Ալավերդյանը։

— Ես ուրախությամբ պատրաստ եմ իմ ամբողջ ազատ ժամանակը,— ասում է նա,—նվիրել մեր ավանի բարեկարգմանը։ Մենք այն կդարձնենք մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաքի ծաղկուն, կուլտուրական անկյուններից մեկը։ Անձնազոհ աշխատանքով մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում պարտիային, սովետական կառավարությանը և մեր սիրելի հայր ու բարեկամ ընկեր Ստալինին, այն մեծ հոգատարության համար, որ ցույց է տրվում մեզ։

***

Փետրվարի 21-ին, բուռն ոգևորության պայմաններում, տեղի ունեցավ Նորքի հայրենադարձ հայերի բազմամարդ ժողովը։

Նորքի նոր թաղամասի լիազոր, հայրենադարձ Գ. Դեյրեմենջյանը ժողովականներին հաղորդեց աշխատավորների դեպուտատների Երևանի Քաղաքային Սովետի վերջին սեսիայի արդյունքների մասին։

Գ. Դեյրեմենջյանի այն հայտարարությունը, որ ժողովուրդների սիրելի առաջնորդ, հայ ժողովրդի ազատարար մեծ Ստալինի անմիջական ցուցումով այս տարի շինարարական ու բարեկարգման խոշոր աշխատանք է տարվելու հայրենադարձ հայերի համար կառուցված նոր թաղամասերում, ամբողջ ժողովականների կողմից ընդունվում է բուռն ոգևորությամբ ու խանդավառ բացականչություններով։

— Մեր թաղամասում այս տարի բացվելու են գեղեցիկ փողոցներ,— ասում է նա,— պետական միջոցներով կառուցվելու են դպրոցի, մանկապարտեզի, ակումբի, ամբուլատորիայի, բաղնիքի շենքեր, հայրենադարձները կառուցելու են ավելի քան 300 տուն։ Մեծ չափով ընդարձակվելու է էլեկտրալուսավորության, ջրմուղի և ոռոգման ջրի ցանցը։ Գարնանը թաղամասում տնկվելու է ավելի քան 10 հազար պտղատու ծառ։

Հայրենադարձ Գ. Գարամելյանը ժողովում հանդես գալով ասաց.

— Մենք խորին գոհունակությամբ և երախտագիտության զգացմունքով լսեցինք մեր մայրաքաղաք Երևանի նոր թաղամասերի բարեկարգման ուղղությամբ այս տարի իրականացվող խոշոր ձեռնարկումների մասին։ Հայրենադարձ հայերս, ոգեշնչված սովետական կառավարության և անձամբ մեծ Ստալինի ջերմ հոգատարությամբ, այսուհետև է՛լ ավելի մեծ ակտիվությամբ կըմասնակցենք մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաքի բարեկարգման գործին։

— Կեցցե՛ մեր հարազատ հայր մեծ Ստալինը։

Ժողովականները ոտքի են կանգնում և բուռն օվացիա սարքում ի պատիվ սիրելի առաջնորդի։

Ժողովը կոչ արեց թաղամասի ամբողջ բընակչությանը ակտիվ կերպով մասնակցել բարեկարգման աշխատանքներին և սոցիալիստական մրցության հրավիրեց Զեյթուն թաղամասի բնակիչներին։

***

Հայրենադարձ հայերի համար կառուցված նոր թաղամասերը բարեկարգելու մասին աշխատավորների դեպուտատների Երևանի Քաղաքային Սովետի սեսիայի որոշումը մեծ ոգևորություն առաջ բերեց Երևանի Արաբկիր ավանի ամբողջ բնակչության մեջ։

Փետրվարի 21-ին գումարված ժողովում ելույթ ունենալով, ավանի բնակիչ, հայրենադարձ ուսուցիչ Թորոս Լուսինյանը ասաց.

— Հայը Ստալինի անմիջական ցուցումներով է՛լ ավելի է զարգանալու ու բարեկարգվելու մեր ռեսպուբլիկան, նրա մայրաքաղաքը, հատկապես նոր ավանները, որտեղ մեծ մասամբ բնակվում են հայրենադարձ հայերը։ Պետությունը խոշոր գումարներ է հատկացրել այդ նպատակների համար։ 1949 թվին մեծ աշխատանքներ են տարվելու նաև մեր ավանում՝ Արաբկիրում։ Բարեկարգվելու և ծառազարդվելու են փողոցները, մայթերը, կառուցվելու են ակումբ, բաղնիք, հիվանդանոց, դպրոցներ, կինո-թատրոն և այլ կուլտուրական հաստատություններ։ Այս մեծ աշխատանքն իրականացնելու խնդրում խոշոր անելիքներ ունենք մենք՝ Արաբկիր ավանի բնակիչներս։ Խելացի օգտագործելով պետության կողմից այդ նպատակին հատկացված միջոցները, մենք պետք է այդ ծրագիրն իրագործենք մեր անմիջական, եռանդուն ու նվիրված աշխատանքով և մեր անհուն շնորհակալությունն ու սերը հայտնենք մեծ առաջնորդ սիրելի Ստալինին—դեպի հայ ժողովուրդն ու հայրենադարձներն ունեցած ջերմ հոգատարության համար։

Լեփ-լեցուն դահլիճը հոտնկայս երկարատև օվացիա է սարքում ի պատիվ ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի։

Զայն է խնդրում Արաբկիր ավանի առաջին բնակիչներից Միհրան Մնջյանը։

— Մենք կանենք ամեն ինչ,— ասում է նա,— որ կախված է մեզանից, իրագործելու համար մեր ավանի 1949 թվի բարեկարգման ծրագիրը։

Ելույթներ ունեցան նաև հայրենադարձներ Ս. Նազարյանը, Հ. Մանուկյանը, Ռ. Վեմյանը, Մելիք Եփրեմյանը և ուրիշներ։

Ժողովականները կոչ արին ավանի բնակիչներին ակտիվ մասնակցել բարեկարգման գործին ու մրցության հրավիրեցին Զեյթունի ու Նորքի բնակչությանը։

***

Երևան քաղաքի Սպանդարյան ռայոնի նորակառույց թաղամասերում ապրող հայրենադարձների բազմամարդ ժողովում քննարկվեց նորակառույց թաղամասերի բարեկարգման հարցը։ Զեկուցումով հանդես եկավ Քաղաքային Սովետի դեպուտատ, հայրենադարձ Վահան Դագեսյանը։

— Սովետական կառավարությունն ու ընկեր Ստալինը մեծ հոգատարություն են ցույց տալիս հայրենադարձների նկատմամբ։ Այս տարի մեր հարազատ սովետական կառավարությունը խոշոր միջոցներ է բաց թողել հայրենադարձների ավանները բարեկարգելու համար։

Նա պատմեց նաև Բաղրամյանի, Հաղթանակի և Սայաթ-Նովայի թաղամասերի բարեկարգման ուղղությամբ Երևանի Քաղաքային Սովետի ձեռնարկումների մասին։

Ժողովում խանդավառ ելույթներ ունեցան բազմաթիվ հայրենադարձներ, որոնք բոլորն էլ երախտագիտական սրտաբուխ խոսքեր ուղղեցին ընկեր Ստալինին, սովետական հարազատ պետությանը և բոլշևիկների մեծ պարտիային։

***

Կիրովի անվան գործարանի բանվորական ավանի ակումբում տեղի ունեցավ հայրենադարձ հայերի ժողովը, որին մասնակցում էին 600 մարդ։

Ժողովականները մեծ հետաքրքրությամբ լսեցին Սիրիայից հայրենիք վերադարձած, աշխատավորների դեպուտատների Ստալինյան ռայսովետի դեպուտատ Զաքար Այվազյանի հաղորդումը՝ Երևանի Քաղաքային Սովետի չորրորդ սեսիայում քննարկված հարցի —հայրենադարձների ավաններում 1949 թվի ընթացքում բարեկարգման մեծ աշխատանքներ կատարելու մասին։

-- Բոլշևիկների պարտիայի և անձամբ ընկեր Ստալինի հայրական հոգատարության շնորհիվ,— ասում է Զ. Այվազյանը,— այս տարի մեծ գումարներ են հատկացվելու հայրենադարձների ավանների բարեկարգման և հետագա շինարարության համար։

Այնուհետև խոսք է վերցնում Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքից հայրենիք եկած Հարությունն Փիլիպոսյանը։

— Տասնյակ տարիներ ապրած լինելով օտարության մեջ,— ասում է նա,— ես չեմ տեսել կամ լսել, որ կապիտալիստական որևէ պետություն հոգ տանի աշխատավորների բարեկեցության մասին։ Այդ բանը մենք տեսանք միայն սովետական երկրում, մեր աշխատավորների պետության կողմից։ Հայրական հոգատարության համար մենք կրկին ու կրկին մեր խորը երախտագիտության ու շնորհակալության խոսքն ենք ուղղում հայ ժողովրդի ազատարար մեծ Ստալինին։ Այս հանդիսավոր ժողովին մենք խոսք ենք տալիս շինարարական ողջ աշխատանքներին ակտիվորեն մասնակցել և ջանք չխնայել նախատեսված բոլոր կառուցումները ժամկետից շուտ և բարձր որակով ավարտելու համար։

Ապա ելույթ են ունենում Փոքր տուրբինների գործարանի ստախանովական վարպետ Հ. Դեղեյանը և Կիրովի անվան դպրոցի ուսուցիչ Հ. Պախանյանը, որոնց առաջարկությամբ ժողովը որոշեց մրցության մեջ մտնել Նոր Արեշ ավանում բնակվող հայրենադարձների հետ, ավանների բարեկարգման ակտիվորեն մասնակցելու համար։

***

Ջտեսնված ոգևորության և խանդավառության մթնոլորտում անցավ Նոր Արեշի աշխատավորների ժողովը։

Զեկուցումով հանդես եկավ Երևանի Քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի անդամ հայրենադարձ Հրանտ Դեվեջյանը։

Զեկուցողը խոսելով 1949 թվին Նոր Արեշի բարեկարգման համար նախատեսված ձեռնարկումների մասին, ասաց.

— Ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի անսպառ հոգածության, բոլշևիկների փառապանծ պարտիայի և սովետական հարազատ կառավարության գուրգուրանքի շնորհիվ, հայրենադարձների համար, հայրենիք գալու առաջին իսկ օրից, ստեղծվեցին ստեղծագործ աշխատանքի, առաջադիմության և կուլտուր-կենցաղային լավագույն պայմաններ։

Մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի անմիջական ցուցումներով, 1949 թվին խոշոր աշխատանք է տարվելու հայրենադարձ հայերի համար ստեղծված նոր թաղամասերի և ավանների բարեկարգման ուղղությամբ։

Միայն Նոր Արեշում այս տարի բացվելու է երկու խոշոր բարեկարգ փողոց, կառուցվելու են կլինիկայի, դպրոցի, մանկապարտեզի, կինո-թատրոնի շենքեր, սպորտ հրապարակ և լողարան։ Լիովին ավարտվելու է է-

լեկտրալուսավորության և ջրամատակարարման ցանցի շինարարությունը։

Զեկուցողը կոչ՝ արեց ավանի բոլոր բնակիչներին լծվելու Նոր Արեշի բարեկարգման գործին և պատվով կատարելու ընկեր Ստալինի ցուցումները։

Ժողովականները խանդավառ օվացիա են սարքում ընկեր Ստալինի պատվին։

Ժողովում ելույթ ունեցան Սրբուհի Մուշեղյանը, Մինաս Վեյիսյանը, Մարգար Քեպապշյանը և Սահակ Ավագյանը։ Բոլորն էլ ավանի բնակչության անունից իրենց անսահման երախտապարտությունը հայտնեցին ընկեր Ստալինին և խոստացան ամեն կերպ նպաստելու նախատեսված կառուցումների և բարեկարգման ծրագրի հաջող ավարտմանը։

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՎԵՏԻ ՍԵՍԻԱՆ

Աշխատավորների դեպուտատների Լենինականի Քաղաքային Սովետի 7-րդ սեսիան լսեց Քաղսովետի գործադիր կոմիտեի նախագահ Ս. Վարդանյանի զեկուցումը հայրենադարձ հայերով բնակեցված նոր թաղամասերի բարեկարգման մասին։

— Շատ հայրենադարձ հայեր են ապրում Լենինականում,— ասում է զեկուցողը։ — Նրանց ապրելու և աշխատելու համար ստեղծվել են բոլոր պայմանները։ Վերջին երկու տարում Քաղաքային Սովետի գործկոմը կառուցել և հայրենադարձներին է հանձնել մոտ տասը հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Հայրենադարձների համար բազմաթիվ բնակարաններ են կառուցել Տեքստիլ կոմբինատը, Վ. Մ. Մոլոտովի անվան Մանվածքային ֆաբրիկան, Մսի կոմբինատը և արտադրական այլ ձեռնարկություններ։ Լայն ծավալ է ստացել անհատական բնակարանային շինարարությունը։ Հայրենադարձները ստացել են 17 միլիոն 200 հազար ռուբլու վարկ և անհրաժեշտ օգնություն շինանյութերով։ Նրանցից շատերն արդեն ապրում են իրենց կառուցած սեփական բնակարաններում։ Նոր կառուցված երեք թաղամասերում գործում են դպրոցներ, մանկապարտեզներ, մանկամսուրներ, բուժկայաններ, խանութներ, կուլտկենցաղային սպասարկման հաստատություններ։

— Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, — շարունակում է զեկուցողը,—Սովետական կառավարությունը նոր, խոշոր միջոցներ է տրամադրել հայրենադարձներով բնակեցված նոր թաղամասերն ու ավանները բարեկարգելու համար։ Մեր քաղաքի նոր թաղամասերում կառուցվելու են դպրոցների, ակումբների, պոլիկլինիկաների, հիվանդանոցների շենքեր, ընդարձակվելու են էլեկտրական և ռադիոֆիկացման ցանցերը, բարեկարգվելու ու կանաչապատվելու են փողոցներն ու բակերը։

Վերջում Ս. Վարդանյանը դեպուտատների առաջ դնում է քաղաքի բարեկարգման, հատկապես նոր թաղամասերին կուլտուրական տեսք տալու գործում աշխատավորների մասնակցությունն ապահովելու հարցը։

Զեկուցման շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին 12 մարդ։

Դեպուտատ Ա. Համբարձումյանը, հայրենադարձ հայերի անունից շնորհակալություն առաջին խոսքն ուղղելով սիրելի առաջնորդ մեծ Ստալինին, վստահություն հայտնեց, որ բոլոր հայրենադարձները ակտիվորեն կմասնակցեն նոր թաղամասերի բարեկարգմանը։

Նոր թաղամասերին ճարտարապետական, գեղեցիկ տեսք տալու, նախատեսված միջոցները խնայողաբար ծախսելու, բարեկարգման աշխատանքներում բնակչության մասնակցությունն ապահովելու մասին է խոսում քաղաքի ճարտարապետ, դեպուտատ Ռ. Գասպարյանը։

Տեքստիլ կոմբինատի դիրեկտոր Վ. Պողոսյանը սեսիայի մասնակիցներին պատմում է այն աշխատանքների մասին, որոնք մինչև այժմ կատարվել են կոմբինատի հայրենադարձներով բնակեցված ավանում։ Նա խոսում է նաև նոր միջոցառումների մասին։

Ելույթ ունեցան նաև Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ, հայրենադարձ Մ. Կարապետյանը և ուրիշներ։

Քննարկված հարցի մասին կոնկրետ որոշում ընդունվեց։

Սեսիայի մասնակիցները բուռն ծափահարություններով տակ ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված հայ ժողովրդի մեծ բարեկամ, սիրելի առաջնորդ ընկեր Ստալինին։

***

Լենինականի հիմնարկ-ձեռնարկություններում և հայրենադարձների նորակառույց թաղամասերում տեղի ունեցան սովետական նոր քաղաքացիների խանդավառ ժողովներ, որտեղ հաղորդումներ լսվեցին հայրենադարձների համար կառուցված թաղամասերը 1949 թվին բարեկարգելու ձեռնարկումների մասին աշխատավորների դեպուտատների Լենինականի Քաղաքային Սովետի 7-րդ սեսիայի որոշման առթիվ։

Քաղսովետի դեպուտատ, հայրենադարձ Դ. Դեմիրճյանը Տեքստիլ կոմբինատի ձեռնարկություններում աշխատող հայրենադարձների բազմամարդ ժողովում, հաղորդելով Քա-

դաքային Սովետի սեսիայի որոշման մասին, ասաց.

— Սովետական կառավարության և անձամբ սիրելի առաջնորդ մեծ Ստալինի հայրական հոգատարության շնորհիվ աշխարհով մեկ ցրված հայերի մի զգալի մասը վերադարձել է Սովետական Հայաստան և կառուցում է իր ազատ ու երջանիկ կյանքը։ Մեր ավանները բարեկարգելու համար ընկեր Ստալինի նախաձեռնությամբ սովետական կառավարության նոր միջոցառումները հայրենադարձների սրտերը լցնում են անհուն երախտագիտությամբ և պարտավորեցնում են աշխատել ավելի լավ։ Լենինականի Քաղաքային Սովետի սեսիան որոշում է ընդունել 1949 թվին բարեկարգել և ավելի կուլտուրական տեսք տալ մեր թաղամասերին։ Կառուցվելու են դպրոցի, մանկապարտեզի, պոլիկլինիկայի, ակումբի, կինո-թատրոնի, գրադարանի շենքեր։ Մեծ աշխատանք է կատարվելու էլեկտրիֆիկացման և ռադիոֆիկացման ուղղությամբ, բարեկարգվելու և կանաչապատվելու են բակերն ու փողոցները։

Վերջում Դ. Դեմիրճյանը կոչ արեց հայրենադարձներին ակտիվ կերպով մասնակցել այդ ձեռնարկումների իրականացման գործին։

Խանդավառությամբ անցավ նաև երկաթուղային թաղամասում բնակվող հայրենադարձների ժողովը։

Ժողովներում ելույթ ունեցողները բոլոր հայրենադարձների անունից անսահման երախտագիտության առաջին խոսքն ուղղում էին սիրելի առաջնորդ ընկեր Ստալինին, իրենց նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար և խոսք էին տալիս լարել իրենց ամբողջ ուժերը հետպատերազմյան ստալինյան հնգամյակը ժամկետից շուտ կատարելու համար և ակտիվ կերպով մասնակցել իրենց ավանների այս տարվա բարեկարգման աշխատանքներին։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԳՐՈՂՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԵՎ ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

Արտասահմանից հայրենիք վերադարձած մի խումբ երիտասարդ գրողներ, գրող Գ. Սևունցի ղեկավարությամբ, դեկտեմբերին մեկնեցին Մոսկվա ու Լենինգրադ, այդ քաղաքների տեսարժան վայրերի, կուլտուրական ու պատմական արժեքների, նորակառույցների և գործարանների ու ֆաբրիկաների հետ ծանոթանալու համար։ Խմբի կազմի մեջ էին երիտասարդ հայրենադարձ գրողներ Շ. Վարսյանը, Ա. Ալիքյանը, Գ. Քեշիշյանը, Ա. Ավագյանը, Ա. Թերզյանը, Ա. Համբարձումյանը, Գ. Կյուլյանը և Պ. Պարգևը։

Դեկտեմբերի 23-ից մինչև հունվարի 3-ը գրողները եղան Լենինգրադում, ուր այցելեցին Էրմիտաժը, Պուշկինի Տուն-թանգարանը, Լենինգրադի Պաշտպանության թանգարանը, Ս. Մ. Կիրովի թանգարանը, Ռուսական թանգարանը, Պետրոպավլովսկ ամրոցը, Պիոներ-պալատը, «Վինոտիպ» գործարանը։ Այնուհետև նրանք մեկնեցին Պուշկին քաղաքը. այստեղ գրողները դիտեցին այն լիցեյը, ուր սովորել է պատանի Պուշկինը և Ալեքսանդրյան պալատը, ուր նախապատրաստական աշխատանքներ են տարվում այս ամռանը Պուշկինի անվան Համամիութենական թանգարան բացելու համար։

Լենինգրադում, Գրողների տանը, կազմակերպվել է հանդիպում Հայաստանի երիտասարդ գրողների հետ, որը տեղի է ունեցել բարեկամական ջերմ մթնոլորտում։

Լենինգրադում գրողները մասնակցել են կազմակերպված «Հանուն խաղաղության, հանուն դեմոկրատիայի» երեկոյին։

Մոսկվայում երիտասարդ գրողները եղան Լենինի թանգարանում, Ռևոլուցիայի թանգարանում, Տրետյակովյան Պետական պատկերասրահում, Պուշկինի անվան Կերպարվեստի թանգարանում, այցելեցին Լենինի դամբարանը, քաղաքի տեսարժան վայրերը. դիտեցին մետրոյի կայանները։

Արդյունաբերական ձեռնարկներից գրողներն այցելեցին «Տրեխգորնայա մանուֆակտուրա» տեքստիլ ֆաբրիկան, «Կրասնի օկտյաբր» հրուշակեղենի ֆաբրիկան և հացի գործարանը։

Մոսկվայում, Չայկովսկու անվան դահլիճում գրողները ներկա գտնվեցին բուլղարական գրող Քրիստո Բոտևի հոբելյանական երեկոյին, ինչպես և բանաստեղծ Շչիպաչևի ստեղծագործական երեկոյին՝ Գրականագետի կենտրոնական տանը։

Մոսկվայում նրանք ծանոթացան Լ. Ն. Տոլստոյի, Մ. Գորկու, Վ. Մայակովսկու, Ն. Օստրովսկու գրական թանգարանների հետ, այցելեցին Մոսկվայի վերակառուցման թանգարանը, եղան թատրոններում։

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂՐԻՄԵՑԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ 70 ԹՎԱԿԱՆԻՆ

Երբ Հիսուս դուրս էր գալիս տաճարից, աշակերտներից մին նա-սաց նրան.

— Վարդապետ, տես ինչ ընտիր քարերով է շինած և որպիսի նոյա-կապ շինություն է այս տաճարը:

Հիսուս պատասխանեց նրան և ասաց.

Տեսնում ե՞ս այս շինությունը. ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս բոլորը կքանդվի և այստեղ ոչ մի բան քար քարի վրա չի մնա:

(Մարկ. ԺԳ, 1—2)

Երբ Երուսաղեմը զորքերով շրջապատված տեսնեք, իմացեք, որ մոտ է ավերումը...

(Ղուկ. ԻԱ, 20)

Երուսաղեմը ազգերից ոտնակոխ կլինի, մինչև ժամանակի լրանալը:

(Ղուկ. ԻԱ, 24)

Քրիստոսի մարգարեական այս խոսքերը կատարվեցին 70 թվականին (Ք. հ.), երբ հռոմեական կայսր Վեսպասիանոս Ֆլավիոսի հրամանով կայսեր որդին՝ Տիտոսը ավերեց Երուսաղեմը։

I ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱՃԱՐԸ

Հրեաների ամենանվիրական սրբությունը դա Եհովեի*) տունը՝ Երուսաղեմի տաճարն էր**)։

Իսրայելացիները, Եգիպտոսի գերությունից ազատագրվելուց 40 տարի հետո, Հեսու Նավիայի առաջնորդությամբ հարձակումով գրավեցին ու տիրացան Պաղեստինին։

Նրանք անապատից այստեղ բերեցին նաև իրենց Սրբությունը— անփոխ փայտից պատրաստված Ուխտի Տապանակը։

Քանի դեռ իսրայելացիները անապատումն էին, Ուխտի Տապանակն էլ պահում էին մի առանձին վրանում, բայց երբ գրավեցին Քանանը և տեղավորվեցին նրա քաղաքներում, Մովսես մարգարեից ստացած այդ Սրբությունն էլ տեղավորեցին Սելով քաղաքում, մի առանձին շենքում։

Ինչպես անապատի վրանը, այնպես էլ այս շենքը բաժանված էր երեք մասի— Ջոհարան, Սրբություն և Սրբություն Սրբոց։ Սրբություն Սրբոց խորանը ոչ ոք իրավունք չուներ մտնելու, բացի քահանաներից։ Եհովեի անվան ոսկե վահանը կրծքին, քահանայապետը տարին մեկ անգամ մտնում էր Սրբություն Սրբոց խորանը՝ Եհովեի առաջ խնկարկելու համար։

Դավիթ մարգարե թագավորը Երուսաղեմին տիրելուց ու այն իր մայրաքաղաքը դարձնելուց հետո Ուխտի Տապանակն էլ բերեց այստեղ ու տեղավորեց Սիոնի բարձունքի վրա, մի առանձին խորանում։

Դավիթը մտադիր էր իր Աստծու՝ Եհովեի համար մի հոյակապ տաճար կառուցել, սակայն արտաքին ու ներքին պատերազմները

*) Հրեաները իրենց անտեսանելի Աստծուն տալիս էին Եհովե, Եհովա (Էլոհիմ), Ադոնայ անունները։

**) Հրեաները հավատացնում էին, որ տաճարը հանգիստանում է Երուսաղեմի, Երուսաղեմը Քանանի, իսկ Քանանը կամ Եհովեի խոստացած Ավետյաց երկիրն էլ աշխարհի կենտրոնը։

արգելք հանդիսացան նրա այս մտադրության իրագործմանը։

Դավթի որդի Սողոմոն Իմաստուն թագավորին էր վիճակված այդ մեծագործությունը։

Եգիպտոսի գերությունից իսրայելացիների ազատագրվելուց ուղիղ 440 տարի հետո, Սողոմոն թագավորը, իր գահակալության չորրորդ տարում, սկսեց և յոթը տարվա ընթացքում ավարտեց տաճարի շինությունը։

Տաճարը կամարակապ էր և ուներ 60 կանգուն երկարություն, 20 կանգուն լայնություն ու 20 կանգուն էլ բարձրություն։

Տաճարի շուրջը կառուցված էին սյունազարդ, ընդարձակ, ծածկված ու մոզայիկ հատակներով սրահներ*)։ Տաճարի շուրջը գտնվող ընդարձակ տարածությունը շրջապատված էր քարե պարիսպներով, որոնք մի քանի տեղում կամարակապ դարպասներ ունեին։ Տաճարի հիմնական շենքը բաղկացած էր երեք բաժանմունքից՝ Զոհարանից, Սրբությունից և Սրբություն Սրբոցից։

Սրբազան Զոհասեղանը գտնվում էր առաջին բաժանմունքում, մեջտեղը. նրա մոտ գտնվում էր քահանայից լվացարանը՝ ամրացված 12 քարե սյուների վրա։ Սրբությունը կազմում էր տաճարի երկրորդ բաժանմունքը, որը սյունազարդ ու ոսկեպատ էր։ Նրա ամեն մի պատի տակ դրված էին հնգական ոսկե աշտանակներ՝ յոթական կանթեղներով։ Կանթեղները ներկայացնում էին Արևը, Լուսինը, Փայլածուն (Մերկուրին), Աստղիկը (Վեներան), Հրահատը (Մարսը), Լուսնթագը (Յուպիտերը) և Երեւակը (Սատուրնը)։

Երկրորդ բաժանմունքի մեջտեղը դրված էր Առաջավորաց Սեղանը—եղևնափայտից շինած ու ոսկեպատ—իր 12 հացերով—տասներկու կենդանակերպի նշանակությամբ—և ղինու շիշով։

Այստեղ էր և անուշահոտ բուրմունքներով անոթը, որ նշանակում էր թե ամեն ինչ Եհովեից է ու նրա համար է։

Երրորդ բաժանմունքը՝ Սրբություն Սրբոցը երկրորդից բաժանված էր ծիրանագույն վարագույրով։ Այստեղ մշտական կիսախավար էր և միայն տարին մի անգամ, Եհովեի ոսկեպատ վահանը կրծքին, քահանայապետը մուտք էր գործում այստեղ՝ Աստծո անունը տալու և խնկարկելու համար*)։ Ուրիշ սովորական օրերին նրանք Աստծուն անվանում էին Եհովա կամ Ադոնայ։

Այդ օրը բոլոր երկրներում հրեաները իրենց երեսը դարձնում էին Երուսաղեմի տաճարի կողմը և աղոթում իրենց Աստծուն, որ ազատեց նրանց Եգիպտոսի գերությունից և Աբրահամին, Իսահակին ու Հակոբին վերադարձրեց խոստացված Ավետյաց երկիրը։

Սրբություն Սրբոցում տեղավորված էր Ուխտի Տապանակը, որի մեջ գտնվում էին. 1. տասն պատվիրանների քարե տախտակները, 2. մանանայով լի ոսկե սափորը, խնկամանը և 3. Ահարոնի ծաղկյալ գավազանը։

Ուխտի Տապանակի կափարիչի վրա կանգնեցված էին երկու փայտե, ոսկեպատ հրեշտակներ, որոնք խորհրդանշում էին Եհովեից ստացված սրբությունների պահպանումը։

Ուխտի Տապանակի առաջ գտնվում էր «շեթիա» անտաշ քարը՝ գետնից դուրս ցցված։

Սրբություն Սրբոցի պատերը զարդարված էին քերովբեների ու արմավենիների ոսկե զարդանկարներով։

Այս էր Եհովեի բնակարանը։

Տաճարն ուներ նաև ներքնահարկ, որտեղ գտնվում էին ոսկե, արծաթե իրերի և թանկագին զգեստների պահարանն ու դանձարանը։

Տաճարի պատերը ներսի կողմից պատված էին Լիբանանի մայրի ծառից, իսկ հատակը՝ նոճի ծառից պատրաստված տախտակներով, որ Սողոմոնը նվեր էր ստացել Տյուրոսի Քիրամ թագավորից։

Տաճարի կտուրն այնպիսի սուր աշտարակներ ուներ, որ ոչ մի թռչուն չէր կարող նրա վրա թառել կամ կեղտոտել։

Ավանդությունը պատմում է, որ տաճարի շինության ամբողջ ընթացքում նրա վրա աշխատող բանվորներից և ոչ մեկը չի հիվանդացել կամ մեռել։ Ոչ մի գործիք չի մաշվել ու երկաթե գործիք էլ չի գործածվել, այլ շենքի քարերը տաշել են «շամիր» կոչված քարով և կառուցել։

Սակայն, Սողոմոն Իմաստունի կառուցած այս հոյակապ տաճարը բաբելացիների Նաբուգոդոնոսոր (Նաբուկոդոնոսոր-Ոատրա) արքան**) քանդեց, հողին հավասարեցրեց, ոսկե

*) Իսրայելացոց թագավորության վերացումից հետո այս սյունազարդ սրահներից մեկում, Քարե պալատում, գտնվում էին Դերագույն Հոգևոր Խորհուրդը, Դեռրագույն Դատարանը և Ատյանը՝ քահանայապետի նախագահությամբ։

*) Աստուծո անունը գրքերի մեջ գրել և կարդալ մահացու հանցանք էր համարվում և խստիվ արգելված էր։ Բաբելոնի գերության ժամանակ հրեաները մոռացան Աստուծո անունը և գործածում էին Էլոհիմ (Եհովա), որ նշանակում է աստվածներ կամ Ադոնայ՝ Տեր։ Ենթադրում են, որ եղել է Եհովեի։

**) Թագավորեց 604—562 թ. (Ք. ա.)։

ու արծաթե սպասները, որպես ավար, դրավեց և շատ հրեա ընտանիքներ էլ գերի տարավ Բաբելոն։ Ոսկե և արծաթե սպասները արքան նվիրեց Բաբելոնի կռատանը։

Հրեաները Բաբելոնի գերության մեջ մնացին 30 տարի։ Պարսից Կյուրոս (Կուրուշ) թագավորի*) թույլտվությամբ հրեաները 558 թվականին (Ք. ա.) ազատագրվեցին գերությունից և Զորաբաբելի առաջնորդությամբ Երուսաղեմ վերադարձան, իրենց հետ տանելով տաճարի ոսկե ու արծաթե սպասները։ Գերությունից վերադառնալով նրանք անմիջապես ձեռնամուխ եղան նոր տաճարի շինության և Երուսաղեմի պարիսպների նորոգության։ Սակայն, այս նոր տաճարը, առաջինի համեմատությամբ, շատ ավելի հասարակ ու անշուք էր։

Հերովդես Մեծը**), իր թագավորության 11-րդ տարում, վերանորոգեց, զարդարեց ու գեղեցկացրեց այս տաճարի թե՛ արտաքինը և թե՛ ներքինը։ Մի քանի հազար բանվոր էր աշխատում տաճարի վերանորոգության վրա. նրանք ընդարձակեցին Սիոնի բարձունքը և տաճարին հատկացված տարածությունը ու շինեցին աստիճաններով իջնող տերրասներ։ Սիոնի տերրասներով զարդարված բարձունքում բարձր կանգնած, սպիտակ, ոսկեզոծ տաճարը հեռվից մի ձյունազարդ բլուրի էր նմանվում։ Նրա կտուրը զարդարված էր ոսկեզոծ սրածայր ձողերով (աշտարակներով), բակերի ու սրահների հատակները մոզայիկ էին, ներսի սյուները մարմարյա ու ոսկեպատ, պատերը ոսկեպատ, արծաթապատ կամ կորնթոսի պղնձով ծածկված։

Տաճարի ճակատին ամրացված էր հրեաների խորհրդանշանը՝ խաղողի վազ։ Նա ամբողջապես ոսկուց էր։ Հերովդեսը նորոգել տվեց նաև քարե պարիսպները և նրանց կամարակապ դարպասների ճակատին արաբերեն, լատիներեն ու հունարեն լեզուներով գրել տվեց, որ ոչ հրեայի մուտքը տաճարի բակն անգամ արգելվում է։ Տաճար մտնել արգելված էր նաև հրեա բորոտներին, կաղերին, անդամալույծներին, կույրերին, այսահարներին և տեռատես կանանց։

Քարե պարսպից դուրս, տաճարին հատկացված հողամասում, գտնվում էին շուկան ու հրապարակը, որտեղ վաճառում ու գրնում էին զոհի կենդանիներ, անուշաբույր խունկ, ստաշխն, կինամոն և այլն։ Շուկայում կային նաև աղավնեվաճառներ ու հատավաճառներ (դրամ մանրացնողներ)*)։ Տաճարի կառավարչի թույլտվությամբ այդ վաճառականները տաճարի ներսումն էլ էին առևտուր անում։

Հերովդես Մեծը ահագին գումարներ ծախսելով տաճարի վերանորոգության և բարեզարդության վրա, իրավամբ պարծենում էր, որ ինքը կառուցել է Ասիայում, և նույնիսկ ամբողջ աշխարհում, ամենագեղեցիկ շենքը**)։

II ՏԱՃԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմայեցի զորապետ Պոմպեոսը 63 թվին (Ք. ա.) գրավեց Պաղեստինը և հրեաներին հարկատու դարձրեց Հռոմին։ Երկրի քաղաքական-վարչական կառավարությունը նա հանձնեց հռոմայասեր Հերովդեսի թագավորական ցեղին, իսկ կրոնական գործերը՝ Գերագույն Հոգևոր Խորհրդին ու քահանայապետին։

Երկրում կարգ ու խաղաղություն պահպանելու համար հռոմայեցիները Երուսաղեմում, Կափառնայում, Կեսարիայում, Ասկաղոնում և Գազայում պահում էին բերդապահ գնդեր։ Երուսաղեմում նստում էր հռոմայեցի պրոկուրատորը, որը երկիրը կառավարում էր հրեա թագավորների հետ համերաշխ կերպով։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր իշխանությունը տարածել էր ոչ միայն Պաղեստինում, այլ և Բաբելոնում, Եգիպտոսում ու Հռոմում ապրող հրեաների վրա, որոնք ամենայն հնազանդությամբ կատարում էին Խորհրդի բոլոր հրամանները և ենթարկվում նրա գերիշխանությանն։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը բաղկացած էր 70 սինհոդոսականներից, այն է՝ քահանայապետից, գահերեցներից և դատավորներից։

Հրեա ժողովրդի ու տաճարի հոգևոր, ինչպես և քաղաքական, գործերին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս երկու դա-

*) Թագավորեց 558—529 թ. (Ք. ա.)։

**) Թագավորեց 37—4 թ. (Ք. ա.)։

Հերովդես Մեծին հրեաները անվանում էին չարի սկիզբը— սատանա։

*) ...Հիսուս տաճար մտնելով, դուրս արավ տաճարում առ ու ծախս անողներին, հատավաճառների սեղանները ցրեց և աղավնեվաճառների աթոռները կործանեց։ Եվ ոչ ոքի չէր թողնում ոչ մի ման տաճարի միջով անցկացնելու։

(Մարկ. ԺԱ, 15)

**) Հերովդես Մեծ շինարար թագավորը Երուսաղեմում իրեն համար հոյակապ պալատ շինել տվեց սպիտակ քարից։ Նորոգեց Մակաբայեցիների պալատը։ Քաղաքի մեծ փողոցը քարահատակեց և քաղաքից դուրս տանող ճանապարհն էլ ուղղեց ու ընդարձակեց։ Նորոգել տվեց քաղաքի պարիսպներն ու աշտարակները։ Լինելով հրեա թագավոր, նա միշտ էլ բարեկամ մնաց Հռոմին։

սակարգ—սադուկեցիները և փարիսեցիները։ Սադուկեցիները արտաքո Հին Կտակարանից ոչինչ չէին ընդունում, ո՛չ ավանդություն և ո՛չ անգիր օրենք։ Հին Կտակարանը ճանաչված և ընդունված էր որպես հրեական օրենքների աղբյուր և կանոն։ Սադուկեցիները թեև ընդունում էին Հին Կտակարանը, սակայն չէին հավատում ո՛չ հանդերձյալ կյանքին, ո՛չ հարության, ո՛չ հրեշտակների գոյության և ո՛չ էլ հոգու անմահության։ Սադուկեցիները շատ հետևողներ ունեին բարձր և ուսումնական խավերի մեջ։ Նրանք հայտնի էին իբրև լավ վարք ու բարքի տեր մարդիկ և նրանցից էին ընտրվում դատավորները։

Փարիսեցիները ցուցամոլ ու փառասեր էին և վերին աստիճանի օրինապահ։ Նրանք բացի Հին Կտակարանից, այսինքն գրավոր օրենքներից, ընդունում էին նաև անգիր օրենքներն ու ավանդությունները։ Փարիսեցիները վերին աստիճանի ծիսապաշտ էին, առանձին նշանակություն ու կարևորություն էին տալիս լվացմանը, պասին, երկար աղոթելուն, ողորմություն տալուն, անհավատներից և անթլփատներից (հեթանոսներից) հեռու մնալուն, նրանց նկատմամբ զգույշ լինելուն և այլն։ Հավատում էին հանդերձյալ կյանքին, հարությանը, հրեշտակների գոյությանը, հոգու անմահությանը և ճակատագրին։ Փարիսեցիները սադուկեցիների հակապատկերն էին հանդիսանում ոչ միայն դավանած վարդապետությամբ, այլ և բարոյականությամբ։ Փարիսեցիները արտաքուստ մաքուր ու սուրբ էին երևում, որի համար էլ շատ հարգված էին հասարակ ժողովրդի. մանավանդ կանանց, կողմից, բայց ներքուստ գծուծ ու ապականված մարդիկ էին։ Սակայն, նրանք թե՛ տաճարում և թե՛ հոգեվոր ժողովարաններում, օրենք բացատրող խազիդների հետ միասին, ղեկավարող դեր էին խաղում։

Բացի այս երկու ղեկավարող դասակարգերից կային նաև երկրագործներ, արհեստավորներ, ձկնորսներ (Գալիլիայում) և մանր առևտրականներ, որոնք ընդհանուր անունով կոչվում էին ամհարեզներ։

Գերագույն Հոգևոր Իշխանությունը իրենից ներկայացնում էր աստվածպետական կառավարություն և նրա կենտրոնն էր Երուսաղեմի տաճարը։ Թե՛ Պաղեստինում և թե՛ նրանից դուրս ապրող հրեաների համար Գերագույն Հոգևոր Իշխանությունն էր սահմանում թե երբ պետք է համարել նոր տարվա սկիզբը և թե կյանքի ինչպիսի բարոյական սկզբունքներ պետք է որդեգրել։

Քահանայապետից բացի տաճարն ուներ նաև իր կառավարիչը, որը հսկում էր ամենօրյա զոհաբերությանը և կարդացվելիք աղոթքների վրա։ Սա հետևում էր Մովսեսի սահմանած օրենքների անխափան կատարմանը և քահանայապետից հետո Գերագույն Հոգևոր Խորհրդում երկրորդն էր համարվում իր գրաված դիրքով։

(Շարունակելի)

ՃԵՄԱՐԱՆՑԻ

ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆ

Պարսատանայց և Կիլիկյան թագավորությունների անկումով հայ ժողովուրդը զրկվեց պետականությունից և ընկավ օտարների՝ մահմեդական Պարսկաստանի ու Թուրքիայի դաժան լծի տակ։ Դարեր տևեցին հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող անլուր բռնությունները, բայց նա երբեք չհուսալքվեց և իր սրտում միշտ վառ պահեց ազատության, փրկության տենչը, հավատացած որ մի օր վերջ կդնեն անպատմելի տանջանքները։ Ազատության տենչը տիրակալ է դառնում հատկապես XVIII դարում, երբ հայ ժողովուրդը վերջնականապես ու անվերապահորեն այն համոզման է գալիս, որ իր փրկությունը պիտի գա հյուսիսից՝ Ռուսաստանից։ Այս գաղափարով էին տոգորված այն ժամանակվա բոլոր հայերը, սկսած Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսից, Աղվանից Դանձասարի կաթողիկոսից, Ղարաբաղի մելիքներից մինչև վերջին ռամիկը։ Ռուսաստանի օրըստօրե հզորացումը և Անդրկովկասի սահմաններին ընդհուպ մոտենալը թևավորում էր նրանց, նոր հույսեր ներշնչում։

Եթե հայերի բուռն ձգտումն էր պարսկատաճկական բռնակալության լծից օր առաջ ազատագրվել փրկարար Ռուսաստանի ձեռքով, ապա ռուսաց արքունիքն էլ իր հերթին անտարբեր չէր դեպի հայերի այս ձգտումը։ Ռուսաց արքունիքի և հայերի միջև ստեղծվում են սերտ փոխհարաբերություններ, որոնք առանձնապես նշանակալից են դառնում Եկատերինա Բ կայսրուհու օրոք, երբ Ռուսաստանը ծրագրում է մահմեդական լծից ազատագրել Բալկանյան թերակղզու և Անդրկովկասի քրիստոնյա ազգաբնակչությունը։ Հայ-ռուսական հարաբերությունների զարգացման և հայ ազգային ինքնագիտակցության զարթոնքի այս օրերին խոշոր դեր էր վիճակված խաղալ մի անձնավորության, որը հանդիսանում էր հայ ժողովրդի լավագույն իղձերի արտահայտիչն ու թարգմանը։ Այդ անձնավորությունը Հովսեփ Արղությանն էր։

II

Հովսեփ Արղությանը ծնվել է 1743 թվին Սանահինում։ Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի Սանահինի վանքում, իսկ հետո ուսումը շարունակելու համար տեղափոխվել է Էջմիածին, ուր իր բնածին ընդունակություններին շնորհիվ, շուտով արժանացել է նորընտիր Սիմեոն կաթողիկոսի առանձնահատուկ ուշադրության և հոգածության։ Վարդապետության տարիներին իր վրա դրված պարտականությունները ամենայն բարեխղճությամբ կատարելուց հետո Հովսեփ Արղությանը, 26 տարեկան հասակում, Սիմեոն կաթողիկոսի կողմից եպիսկոպոս է ձեռնադրվում, իսկ չորս տարի անց էլ, 30 տարեկան հասակում, նա արդեն արքեպիսկոպոս էր։

Սիմեոն կաթողիկոսը վաղուց սերտ կապեր էր հաստատել ռուսաց արքունիքի հետ, բայց որպեսզի հետագայում համազգային Աթոռի ու համայն հայության հետ կապված խնդիրները բարեհաջող ընթացք ստանային ռուսաց արքունիքում, նա Արղությանին նշանակում է Ռուսաստանի թեմի հայոց առաջնորդ։ Առաջնորդանիստ քաղաքն այդ

ժամանակ Աստրախանն էր, ուր բավարանաչափ հայեր էին բնակվում։

Նոր նշանակված առաջնորդն ուղևորվում է Աստրախան, բայց այնտեղ երկար չի մընում։ Հայտնի Հովհաննես Լազարյանը Արղությանին հրավիրում է իր մոտ Պետերբուրգ և հետզհետե ներգրավում նրան վերնախավերի շրջանակի մեջ։ Լազարյանը Արղությանին ներկայացնում է նաև Եկատերինա Բ կայսրուհուն։ Ահա հենց այս ժամանակից էլ սկսած Արղությանը մշտապես կապվում է ռուսաց արքունիքի հետ, աշխատելով վերջինիս միջոցով դրականորեն լուծել հայ ժողովրդի ազատագրության խնդիրը։

Ռուսաց արքունիքի լիակատար վստահությունը նվաճելու համար Արղությանը սկսում է մեծամեծ ծառայություններ մատուցել նրան։ Նա, Հովհաննես Լազարյանի հորդորմամբ, ջերմ հրավեր է կարդում Ղրիմի հայերին՝ Ռուսաստան գաղթելու և ընդմիշտ ազատվելու մահմեդական խանի լծից։ Գաղթողները բնակություն են հաստատում Դոնի Ռոստովի մոտ—քաղաքացիք նորակերտ Նոր-Նախիջևանում, իսկ գյուղացիք նրա շրջակայքում։ Արղությանի միջնորդությամբ գաղթողները հատուկ արտոնություններ են ձեռք բերում և որոշ ժամանակով ազատվում ամեն տեսակի հարկերից։ Արղությանը Նոր-Նախիջևանում հիմնում է եկեղեցիներ և բաց անում երկու դպրոց՝ Սահականուշյան և Մեսրոպյան։ Նոր-Նախիջևանից ոչ շատ հեռու նա մի վանք է շինում և անունը դնում Ս. Խաչ։ Նոր վանքի հեղինակությունն ու նշանակությունը բարձրացնելու համար Արղությանը նրան կից բաց է անում տպարան ու դպրոց։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքով անդրադառնալ այս տպարանին։

III

Արղությանը, Ռուսաստանում ապրելով և ծանոթանալով այնտեղ օր ավուր ծավալվող տպագրական գործի հետ, մեծ փափագ ուներ լուսավորության տարածման այդ նոր ու զորավոր զենքը ծառայեցնել հայ ժողովրդի մտավոր զարգացմանը։ Նա ծանոթ էր Էջմիածնում Սիմեոն կաթողիկոսի հիմնած տպարանին ու թղթի գործարանին, որոնք պարսից բռնապետության ներքո գտնվելով ավերվեցան—թղթի գործարանն իսպառ, իսկ տպարանը՝ մասամբ։ 1779 թվին Պետերբուրգում նա ծանոթանում է Գրիգոր Խալդարյան անունով մի հայի հետ, որը նոր էր եկել Լոնդոնից։ Խալդարյանը նորջուղայեցի էր և վաճառականությամբ մեծ հարստության տիրանալով, եկել ու բնակություն էր հաստատել Լոնդոնում։ Տեսնելով տպագրական գործի կատարած խոշոր դերը կուլտուրական ազգերի զարթոնքի գործում, նա մտադրվում է տպարան կազմակերպել հայերեն գրքեր տպագրելու համար։ Այս նպատակով, հայերեն տառեր ձուլել տալուց և տպարանական անհրաժեշտ պարագաներ պատրաստելուց հետո, Խալդարյանն ուղևորվում է Պետերբուրգ, ուր և ծանոթություն է հաստատում լուսամիտ ու եռանդուն Արղությանի հետ։ Վերջինս մեծ համակրանքով է վերաբերում Խալդարյանի նախաձեռնությանը և նյութական միջոցներ տրամադրելով հնարավորություն է տալիս նրան մի շարք գրքեր տպագրելու, մեծ մասամբ կրոնական բովանդակությամբ։ Հայոց և ռուսաց լեզուների ուսուցման գործում ռուսահայերին օժանդակած լինելու համար Արղությանի նախաձեռնությամբ այստեղ տպագրվում են երկու գիրք—«Բանալի գիտութեան» և «Շաւիղ լեզուագիտութեան»։

Սակայն այս ձեռնարկություններից տպարանատեր Խալդարյանը ոչ միայն չէր օգտվում, այլ և մեծամեծ վնասներ էր կրում։ Այդ ժամանակ Արղությանը տպարանատիրոջ վնասների մի մասը հատուցելուց հետո տպարանը գնում է և Նոր-Նախիջևան տեղափոխելով հաստատում Ս. Խաչ վանքում։ Հենց այստեղ էլ, Արղությանի ղեկավարությամբ, սկիզբ է դրվում այս տպարանի բեղմնավոր գործունեությանն։ Այստեղ տպագրված գրքերից հիշատակենք հայտնի «Տելեմաքս»-ի թարգմանությունը և «Բժշկարան»-ը։ Վերջինիս հեղինակը նորջուղայեցի մի հայ բժիշկ էր, Քալանթարյան ազգանունով, որը լսելով Արղությանի տպարանի մասին, իր կազմած գիրքը ուղարկել էր այստեղ տպագրելու համար։ Զարմանալի կերպով Արղությանը կարողանում էր մեկենասներ գտնել զանազան գրքեր տպագրելու համար և եթե երկար ժամանակով նա Նոր-Նախիջևանից բացակայած չլիներ, ապա այս տպարանը անշուշտ առավել մեծ գործ կատարած կլիներ։ Հետագայում այս տպարանը փոխադրվում է Աստրախան, բայց այստեղ, Արղությանի հաճախակի բացակայության պատճառով, մի առանձին աչքի ընկնող գործ չի կատարում։

Արղությանի տպագրական գործունեության առընչությամբ կարևոր ենք համարում նշել նաև նրա կատարած մի այլ աշխատանք։ Երկար տարիներ Ռուսաստանում ապ-

բելով Արղությանը նկատում է, որ ռուս հոգևորականությունը կանխակալ կարծիք է կազմել հայերի մասին, նրանց համարելով հերձվածող ու ուղղափառությունից հեռացած։ Այս կարծիքը առաջացել էր հռոմական աղբյուրների շնորհիվ։ Եկեղեցական պատմությունից հայտնի է, թե ինչպես բյուզանդացիք բազմիցս փորձել են հայ ազգային եկեղեցին զրկել իր ինքնուրույնությունից և ենթարկել այն բյուզանդական եկեղեցուն. սակայն իրենց այս նպատակին չհասնելով, նրանք դիմել են զրպարտությունների մեթոդին, ամեն կերպ աշխատելով կասկածի տակ դնել հայ եկեղեցու դավանանքի ուղղափառությունը։ Եվ քանի որ քրիստոնեությունը Ռուսաստան մուտք էր գործել բյուզանդիայից, ապա ռուս հոգևորականությունն էլ ժառանգել էր բյուզանդացիների տեսակետը հայ եկեղեցու և հայերի մասին։ Արղությանը, օգտվելով իր հեղինակավոր դիրքից, աշխատում է վերացնել հայ եկեղեցու մասին եղած թյուր կարծիքը և ցույց տալ, որ հայոց եկեղեցին քրիստոնեական հնագույն եկեղեցիներից մեկն է, որը անաղարտությամբ պահպանում է առաքելական կաթողիկե եկեղեցու դավանանքն ու ծեսերը։ Նա իր երկարատև պաշտոնավարության ընթացքում սերտ հարաբերություն է մշակում ռուս բարձր հոգևորականության հետ և հաճախակի այցելելով ռուսաց եկեղեցիները ներկա լինում պատարագներին. մյուս կողմից էլ հրավեր է կարդում ռուս հոգևորականության ականավոր ներկայացուցիչներին, ինչպես և պալատական բարձր պաշտոնյաներին ու աստիճանավորներին հաճախել հայոց եկեղեցիները և ներկա գտնվել պատարագին, որն ինքը կատարում էր ամենայն հանդիսավորությամբ։ Այսպիսով նա աստիճանաբար եղբայրական սերտ կապեր է հաստատում երկու քույր եկեղեցիների միջև։ Զբավակնանալով սրանով, Արղությանը 1799 թվին Պետերբուրգում ռուսերեն լեզվով հրատարակում է «Исповедание Христианския веры Армянския церкви» խորագիրը կրող գիրքը, որի մեջ տեղ էր գտել հայոց եկեղեցու գավանությունը և պատարագի արարողության թարգմանությունը։ Գրքի նպատակն էր ռուս ընթերցողներին ճշգրիտ գաղափար տալ հայ եկեղեցու մասին։

Այժմ անդրադառնանք Արղությանի գործունեությանը Ղրիմի հայերին գաղթեցնելուց հետո։

IV

Թե վերաբնակների և թե Մոզդոկի ու Ղըզլարի հայության ամբողջ հոգսը իր ուսերի վրա էր առել Արղությանը։ Նրան հաճախակի կարելի էր տեսնել և՛ Նոր-Նախիջևանում, և՛ Աստրախանում, և՛ Մոզդոկում, և՛ Ղըզլարում, և՛ Պետերբուրգում, ու այսպես շարունակ նա ճանապարհորդության մեջ էր գտնվում։ Նա չէր եղել միայն Ղրիմում և ահա առիթ է ստեղծվում այնտեղ ևս երևալու։

Նորանվաճ Ղրիմի կառավարիչ Գրիգորի Պոտյոմկինի խնդրանքով 1787 թվին Եկատերինա Բ կայսրուհին ճանապարհորդություն է կատարում դեպի Ղրիմ։ Այս ուղևորության ընթացքում կայսրուհին պիտի այցելեր նաև Նոր-Նախիջևան, բայց հետո ճանապարհորդության ծրագիրը փոխվում է, և Արղությանը, փոխանակ Նոր-Նախիջևանում կայսրուհուն դիմավորելու ու փառավոր ընդունելություն ցույց տալու, ներկայանում է նրան Կրեմենչուգ քաղաքում։

Այնուհետև Արղությանը ուղևորվում է Ղրիմ՝ այնտեղ մնացած սակավաթիվ հայությանն այցելելու և Ս. Խաչ վանքը տեսնելու նպատակով։ Վանքը կարգի բերելուց և ժողովրդին մխիթարելուց հետո նա Նոր-Նախիջևանի վրայով ուղևորվում է Աստրախան, բայց այստեղ երկար չի մնում, հանգամանքները նրան ստիպում են նորից Պետերբուրգ ուղևորվել։

Հաջորդ, 1788 թվին պատերազմ է ծագում Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Քանի որ պատերազմական գործողությունները տեղի էին ունենում Բեսարաբիայում ու Մոլդավիայում, ուր շատ հայեր էին ապրում, ապա գլխավոր հրամանատար Գրիգորի Պոտյոմկինը նպատակահարմար է գտնում իր մոտ ռազմական հրավիրել Արղությանին։ Բազմաքանակ հայերի ներկայությունը այդ շրջաններում ինքնին խոշոր գրավական էր ռուսական զենքի հաջողության համար, որովհետև հայերը միշտ էլ առանձին սեր են տածել դեպի քրիստոնյա Ռուսաստանը և նրանից ակնկալել իրենց փրկությունը։ Ռազմական ժամանելով Արղությանը ջերմ հորդորներ է կարդում տեղացի հայերին, առաջարկելով ամեն կերպ աջակցել ռուս զորքին և նրա վրա նայել որպես ազատարար հրեշտակի վրա։ Հայ արքեպիսկոպոսի ներկայությունը ռազմականում տվյալ աղբյուր էր հանդիսանում ո՛չ միայն տեղացի հայերի, այլև ռուսաց զորագանակի շարքերում կռվող բազմաթիվ հայ սպաների ու հայ կամավորներից բաղկացած առանձին զորամասի մարտիկների համար։

Պատերազմական գործողությունները ա-

վարտվելու վրա էին, երբ Գրիգորի Պոտյոմկինը Արղությանին առաջարկում է հայերին դաղթեցնել այն քաղաքներից, որոնք հաշտության պայմանագրի համաձայն նորից պիտի վերադարձվեին Թուրքիային։ Եվ Արղությանը իրեն հատուկ ժրաջանությամբ կատարում է այս հանձնարարությունը։ Բայց նրա ցանկությունն էր այս նոր գաղթականների համար մի հայաքաղաք հիմնել և նրանց այնտեղ բնակեցնել։ Բանակցության մեջ մտնելով ռուս կառավարության հետ, Արղությանը այս նպատակի համար մի ընդարձակ հողամաս է ստանում Դնեպր գետի վրա գտնվող Դուբոսարի քաղաքին մոտ և ապա նոր քաղաքի հատակագիծը կազմելով ուղարկում կայսրուհուն՝ ի հաստատություն։ Երբ ստացվում է հաստատված հատակագիծը, Արղությանը 1792 թվին մեծ հանդիսավորությամբ կատարում է քաղաքի հիմնադրումը և ի պատիվ Գրիգոր Լուսավորչի ու Գրիգորի Պոտյոմկինի, որը 1791 թվի աշնանը վախճանվել էր, քաղաքը կոչում է Գրիգորիոպոլ։ Նոր գաղթականության համար կրթված հոգևոր հովիվներ և ուսյալ մարդիկ պատրաստելու նպատակով Արղությանը նրանցից 30 հոգու ուղարկում է Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքը, այնտեղ ուսանելու համար։

Այսպիսով Ռուսաստանի հայոց թեմը գրնալով ընդարձակվում էր. Աստրախանի, Ղզլարի ու Մոզդոկի վրա ավելանում են Նոր-Նախիջևանն, իր շրջակայքի գյուղերով, ամբողջ Ղրիմի թերակղզին և վերջապես նորահիմն Գրիգորիոպոլ քաղաքը։ Պետք է նշել, որ Արղությանին հաջողվում է այս նոր գաղթականության համար ևս կառավարությունից մեծ արտոնություններ ստանալ։

Արղությանի տեսադաշտից դուրս չեն մնում նաև չերքեզների երկրում վաղուց ի վեր բնակություն հաստատած մի բուռն հայերը, որոնք դրսի աշխարհից կտրված լինելու հետևանքով միայն արտաքին ծեսերով ու ավանդություններով էին մնացել հայ քրիստոնյա։ Արղությանը շուտով կապ է հաստատում այս լեռնցի հայերի հետ և հատուկ մարդիկ ուղարկում նրանց մոտ. բայց նրան չի հաջողվում որևէ դրական արդյունքի հանգեցնել իր սկսած գործը, հավանորեն հաղորդակցության դժվարությունների հետևանքով։ Հետագայում, երբ ռուսական իշխանությունը ամրապնդվում է Հյուսիսային Կովկասում, այդ մի բուռն չերքեզահայերը դաղթում են լեռնային Չերքեզիայից ու բնակություն հաստատում մերձակա արգավանդ տափաստանում։ Այդ նրանք էին, որ 1838 թվին, ռուս կառավարության աջակցությամբ, հիմնեցին Արմավիր քաղաքը։

Այստեղ պետք է հիշատակել, որ Արղությանն այդ ժամանակաշրջանում կապեր է հաստատում նաև հեռավոր Ավղանստանի մայրաքաղաք Քաբուլում ապրող հայերի հետ, որոնք զբաղվում էին վաճառականությամբ և արհեստներով։ Սրանք մեծ մասամբ Նոր-Ջուղայից բռնի տեղահանվել ու Քաբուլ էին տեղափոխվել, որպեսզի Ավղանստանում զարկ տան վաճառականության ու արհեստների ծաղկմանը։

V

Ինչպես տեսնում ենք, Արղությանի գործունեությունը Ռուսաստանի հայոց թեմում սկսվում է հայ նոր գաղթականների տեղավորումով և Նոր-Նախիջևան ու Գրիգորիոպոլ քաղաքների հիմնադրումով։ Միաժամանակ մի շարք արտոնություններ ու առանձնաշնորհումներ ձեռք բերելով նա միանգամայն ապահովում է նաև նրանց խաղաղ ու ապահով կյանքը։

Բայց սրանցով չէր սահմանափակվում Արղությանի բազմակողմանի գործունեությունը։ Հանգամանքների դասավորմամբ շուտով Արղությանը գլուխ է կանգնում մի նոր շարժման, որի նպատակն էր Արևելահայաստանում վերականգնել հայկական անկախ իշխանությունը։ Իր ամբողջ եռանդն ու ջանքերը ի սպաս դնելով քսան տարի շարունակ, հռչակավոր Հովհաննես Լազարյանի հետ միասին, նա աշխատել է այդ մեծ ծրագրի իրագործման վրա։ Ուրախության ու վհատության քիչ պահեր չի ապրել նա իր այդ հայրենանվեր գործունեության ընթացքում, բայց հուսալքումը խորթ է եղել նրան և վառ հավատը հարազատ ժողովրդի լուսապայծառ ապագայի նկատմամբ երբեք չի մարել նրա հոգում։ Երբ քսան տարվա տքնաջան աշխատանքը, քաղաքական հանգամանքների անբարենպաստ դասավորման հետևանքով, հաջողությամբ չի պսակվում, ապա այդ ձախորդությունից հարկավ Արղությանն առաջինն էր, որ խորապես խոցվում է։ Մընում է մեզ զարմանալ նրա անսպառ համբերության և դառն վշտին դիմանալու զորեղ կամքի վրա, որ արդյունք էր ապագայի նկատմամբ նրա ունեցած վառ հույսի։

VI

Եկատերինա Բ կայսրուհու օրոք Ռուսաստանը երկու հաջող պատերազմ է մղում Թուրքիայի դեմ։ Իշխան Գրիգորի Պոտյոմկինը դաշնակից Ավստրիայի հետ ծրագրում էր Թուրքիայի իշխանության տակ գտնվող Բալկանյան թերակղզու վրա վերականգնել նախկին մի քանի կործանված թագավորություններ և դրանց թվում առաջին հերթին հունական թագավորությունը, որի մայրաքաղաքը պիտի լիներ Կոնստանտինոպոլիսը, իսկ մզկիթի վերածված Այա-Սոֆիայի տաճարի գմբեթի վրա նորից պիտի փայլեր խաչը։

Պոտյոմկինը նպատակ ուներ մի առանձին թագավորություն էլ հաստատել Լիֆլանդիայում, հավակնություն ունենալով ինքը բազմել այդ նոր թագավորության գահի վրա։

Բայց կար մի այլ կործանված գահ էլ. դա հայկական իշխանության գահն էր, որի վերականգնման համար հանգամանքները սկզբում միանգամայն բարեհաջող են դասավորվում։

Մեր նկարագրած ժամանակաշրջանում Հնդկաստանի ու Եվրոպայի ծովային առևտրական ճանապարհն անապահով էր դարձել Ֆրանսիացիների և անգլիացիների միջև մղվող երկարատև պատերազմների հետևանքով, դրա համար էլ Հնդկաստանից ապրանքները դեպի Եվրոպա սկսեցին ուղղվել նախ ցամաքային ճանապարհով մինչև Կատպից ծովը, ապա այս ծովով մինչև Աստրախան, իսկ այստեղից էլ դարձյալ ցամաքային ճանապարհով մինչև Պետերբուրգ ու նորից ծովով դեպի Եվրոպա։

Ռուսաստանը շուտով նկատում է այս նոր առևտրական ճանապարհի կարևորությունը, բայց այն շահավետ դարձնելու համար անհրաժեշտ էր տիրել ամբողջ Կասպից ծովին ու նրա հարավային ափերին, որպեսզի ապահով լիներ երթևեկությունը։ Պետրոս Մեծի ժամանակ ռուսները մի անգամ արդեն տիրել էին այդ ափերին, որ սակայն նորից վերադարձվել էր Պարսկաստանին նրա հաջորդների օրոք։ Եվ ահա Եկատերինա Բ կայսրուհու օրոք նորից է բարձրանում այդ ափերին տիրելու խնդիրը։ Այս առնչությամբ ռուսաց կառավարությունը միտք է հղանում պարսկական լծի տակից ազատագրել հայերին ու պատմական Հայաստանի հողի վրա հայկական իշխանություն հաստատել ռուսաց պետության հովանավորության ներքո, պայմանով որ հետզհետե ընդարձակվեն նրա սահմանները։ Այդ իշխանության կրիզն արդեն կար հանձինս Խամսայի մելիքությունների կամ Ղարաբաղի հինգ մելիքությունների— Գյուլիստանի, Ջրաբերդի, Դիզակի, Վարանդայի և Խաչենի։ Պատերազմի դեպքում այս մելիքությունները հարևան Սիսիանի ու Զանգեզուրի հայերի հետ միասին կարող էին 10 հազարից ավելի մարտիկ հանել, որ այն ժամանակվա համար պատկառելի թիվ էր։ Ռուսաց կառավարությունը, այն համոզումն ուներ, որ հայերը ոչ միայն կարող են զարկ տալ առևտրական հարաբերությունների զարգացմանը, այլ և որպես հուսալի տարր, Պարսկաստանից գրավվելիք երկրամասերում ի վիճակի կլինեն ապահովելու խաղաղությունն ու անվտանգությունը։

Այսպիսով նախատեսվում էր, որ Ղարաբաղի մելիքությունները սկզբնական շրջանում պետք է հենարան ծառայեին ստեղծվելիք հայկական թագավորության համար, որի սահմանները հետագայում պիտի ընդարձակվեին։ Այդ մելիքությունները սկզբում կարիք կզգային ռուսական զորքերի օժանդակության, իսկ հետո, երբ տեղացի զինվորները ռազմական պատրաստություն ձեռք կբերեին, հնարավոր կլիներ հետզհետե նվազեցնել ռուսական զորքի թիվը։ Պատերազմի դեպքում նորաստեղծ հայկական պետությունը կարող կլիներ 60 հազար զինվոր հանել ազատարար Ռուսաստանին օգնելու համար Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ մղվելիք կռիվներում, քանի որ սկզբից էլ որոշ էր, որ հայկական պետությունը Ռուսաստանի բարեկամներին պետք է ճանաչեր որպես բարեկամ, իսկ թշնամիներին որպես թշնամի։

VII

Ռուսաց կառավարությունը, նախապատրաստվելով Անդրկովկաս արշավելու, 1780 թվին Աստրախան է ուղարկում նշանավոր զորավար Սուվորովին՝ մանրամասն տեղեկություններ հավաքելու համար։ Նախքան Աստրախան ուղևորվելը Սուվորովը Պետերբուրգում մի քանի անգամ տեսակցություն է ունենում Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի հետ, որոնք նրան մանրամասն ու ճշգրիտ տեղեկություններ են հաղորդում թե՛ Պարսկաստանի, այնպես էլ Արևելահայաստանի ու Ղարաբաղի մելիքությունների մասին։

Սուվորովը մոտ երկու տարի Աստրախանում մնալուց և Պարսկաստանի ու Անդրկովկասի մասին բազմաթիվ նյութեր ու տեղե-

կություններ հավաքելուց հետո վերադառնում է Պետերբուրգ։ 1781 թվին Սուվորովին փոխարինում է կոմս Վոյնովիչը, որը մի առանձին կարևոր գործ չի կատարում։

1782 թվին իշխան Գ. Պոտյոմկինը իր ազգական գեներալ Պավել Պոտյոմկինին նշանակում է Հյուսիսային Կովկասի կառավարիչ։ Վերջինս սկսում է բանակցություններ վարել Ղարաբաղի մելիքների հետ՝ հուսադրելով նրանց։ Այդ նույն թվին Էջմիածին է գալիս դոկտոր Հակոբ անունով մեկը, որը Ղուկաս կաթողիկոսին է հանձնում Գ. Պոտյոմկինի ուղարկած նամակն ու ընծաները։ Դոկտոր Հակոբը խորհրդակցություն է ունենում կաթողիկոսի հետ։ Կաթողիկոսը նրան հայտնում է, որ Հովսեփ արքեպիսկոպոսի և Հովհաննես Լազարյանի գործունեությունը միանգամայն համապատասխանում է իր մտադրություններին և որ նրանք իր ներկայացուցիչներն են հանդիսանում ռուսաց արքունիքում։

Հյուսիսային Կովկասի կառավարիչ գեներալ Պ. Պոտյոմկինը, օգտվելով վրաց Հերակլ թագավորի աննախանձելի վիճակից, որը առաջացել էր մի շարք պատերազմների ու ներքին երկպառակությունների հետևանքով, համոզում է նրան մտնել Ռուսաստանի հովանավորության տակ։ Այս առթիվ 1783 թվին Գիորգիևսկ քաղաքում Ռուսաստանի ու Վրաստանի միջև դաշնադրություն է ստորագրվում։ Ռուսաց կառավարության կողմից դաշնադրությունը ստորագրում է Պ. Պոտյոմկինը, իսկ Հերակլի կողմից՝ նրա երկու լիազորները։ Դաշնադրության ստորագրմանը ներկա էր նաև Արղությանը, որը վայելում էր Հերակլի կատարյալ վստահությունը։ Այսպիսով Անդրկովկասի միակ քրիստոնյա պետությունը, ընդունելով Ռուսաստանի հովանավորությունը, փաստորեն դուրս է գալիս Պարսկաստանի գերիշխանության տակից։

Հենց այդ ժամանակներն էլ աշխույժ գրագրություն է սկսվում գեներալ Պ. Պոտյոմկինի, Արղությանի և Ղարաբաղի մելիքների միջև։ Պետք է ասել, որ Արղությանի գործունեության մեջ նշանակալից տեղ է գրավել գրագրությունը, սփյուռքում մի անկյուն չէր մնացել, որտեղ հայեր ապրելիս լինեին և Արղությանը նրանց հետ գրագրության մեջ մտած չլիներ։ Այդ է պատճառը, որ նա միշտ թարմ տեղեկություններ էր ունենում ինչպես Էջմիածնից, Ղարաբաղից, Թիֆլիսից, Պարսկաստանից, Թուրքիայից, հատկապես Կ. Պոլսից, այնպես էլ հեռավոր Հնդկաստանից, Ավզանստանից և այլն։ Առաջին հայ պարբերական «Ազդարար» ամսագրում, որը լույս տեսնել սկսեց 1794 թվին Հնդկաստանի Մադրաս քաղաքում, տպագրվում էին Արղությանի նամակները։ Արղությանը սովորություն է ունեցել իր բոլոր նամակների պատճենները պահելու։ Մեզ հասած նամակների թիվը հասնում է 2000-ի, որոնք զետեղված են երեք գրքի մեջ. մի երկու գիրք էլ կորել են։ Այս ընդարձակ գրագրությունների շնորհիվ Արղությանը կարողանում էր հարուստ նյութեր հավաքել Պարսկաստանում ու Թուրքիայում տիրող դրության մասին։ Եվ ամեն անգամ երբ ռուսաց կառավարությունը Արղությանի օգնությանն էր դիմում, ապա նրանից ստանում էր իրեն հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները ամենաընդարձակ մանրամասնություններով ու պարզաբանումներով հանդերձ։

Երբ իշխան Գ. Պոտյոմկինը Արղությանին խնդրում է մի զեկուցում ներկայացնել Արևելահայաստանի դրության մասին, հատկապես ծանրանալով Ղարաբաղի մելիքների ունեցած զինված ուժերի թվի, ինչպես և Ամենայն Հայոց կաթողիկոսի հեղինակության ու վայելած հարգանքի վրա, ապա նա, իրեն հատուկ եռանդով, ճշտիվ կատարում է հանձնարարությունը։ Միաժամանակ, ռուսաց կառավարության առաջարկության հիման վրա, Արղությանը գրություններ է ուղարկում Ղարաբաղի մելիքներին ու Գանձասարի վանքում նստող Աղվանից Հովհաննես կաթողիկոսին, որը վերին աստիճանի հայրենասեր ու ազատության գործին անհունորեն նվիրված մարդ էր։ Սա իր ամբոնանիստ վանքում մելիքներին ու բարձրաստիճան հոգևորականներին ժողովի հրավիրելով ծանոթացնում է նրանց Արղությանի գրությունների հետ և հորդորում պատրաստ լինել ռուսաց զորքի հետ միանալու և միասին գործելու համար։ Այս ժողովում մելիքները Արղությանին ընտրում են որպես իրենց ներկայացուցիչ ռուսաց արքունիքում և երդվում են կատարել նրա բոլոր առաջարկները։ Այս պատմական ժողովը տեղի է ունենում 1783 թվին։ Զմռռանանք ավելացնելու, որ Ղարաբաղի հետ միացած էր նաև Արաքսի մյուս ափին գտնվող հայաբնակ լեռնային Ղարադաղը։

Իշխան Գ. Պոտյոմկինը, Արղությանի միջոցով ստանալով Ղարաբաղի մելիքների գրությունը, գեներալ Պ. Պոտյոմկինին կարգադրում է շարունակել կապ պահպանել հայ մելիքների հետ, գրավել Դերբենդը, պաշտոնական անել ու ձերբակալել Շուշվա Իբրահիմ խանին, որը անօրինաբար տիրացել է հայ մելիքների ժառանգությանը, Ղարաբաղի ու Ղարադաղի երկրամասերում հաստատել հայկական իշխանություն և այսպիսով պայմաններ ստեղծել, որպեսզի ժամանակի ըն-

Հովսեփ կաթողիկոս Արղուրյան

թացքում ռուսաց բարեկամ ուժեղ մի քրիստոնյա պետություն առաջանա։ «Այսպիսով,— գրում է իշխան Գ. Պոտյոմկինը Եկատերինա Բ կայսրուհուն,— Ասիայում կը-վերականգնվի մի քրիստոնեական պետություն համաձայն Ձեր կայսերական Մեծության խոստումներին, որոնք իմ միջոցով հաղորդված են հայոց մելիքներին»։

Գործերն այսպիսի ընթացք էին ընդունել, երբ Շուշվա Իբրահիմ խանը, քաջատեղյակ լինելով հայերի ու ռուսների միջև վարվող բանակցություններին, անակնկալ կերպով պատգամավոր է ուղարկում գեներալ Պ. Պոտյոմկինի մոտ, վերջինիս հաղորդելու, որ ինքը ընդունում է ռուսաց հպատակությունը։ Այս մասին իրազեկ է դարձվում իշխան Գ. Պոտյոմկինը, որը վերացնում է խանին ձերբակալելու հրամանը և կարգադրում հարմար ոտիթով հեռացնել խանին ու նրա տեղը մի հայ կառավարիչ նշանակել։

Շուշվա խանի այս կեղծ հպատակության մասին Ղարաբաղի մելիքներն անմիջապես հայտնում են Արղությանին և Պ. Պոտյոմկինին, խնդրելով չհավատալ նրան ու խափանել նրա չար դիտավորությունները։

Անդրկովկաս արշավելու համար Աստրախանում երկու տարվա պաշար էր ամբարվել զորքի համար։ Ռուսաց կառավարության կողմից առաջարկ է արվում, որպեսզի էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսները ևս միացյալ ուժերով ռուսաց զորքի համար պահանջվող ամեն տեսակի պաշարներ պատրաստեն։ Այս առաջարկը սիրով ընդունվում է և նույնիսկ Ղուկաս կաթողիկոսի նման մի մարդ, որը միշտ զգույշ քաղաքականություն էր վարում ու չափավորության սահմաններից դուրս չէր գալիս, 1784 թվի սկզբին խանդավառ մի նամակ է ուղղում իշխան Գ. Պոտյոմկինին։ Այդ նամակում, ի միջի այլոց, նա գրում է. «...Քանզի ահա որչափ ժամանակ է, որ հաստատեալ ես ի քեզ ճշմարիտ և զանկեղծ սէր և գութ առ քրիստոսաէջ սուրբ աթոռս և առ տառապակիր ազգս մեր, և օգտասիրաբար հոգաս վասն մեր, և այնքան շանս եդեր մինչև ահա զարդիւնս մաքուր սիրոյդ և մեծի հոգունակութեանդ վերուեցուցեր, զորս սիրելի և հոգևոր որդին մեր Յովսէփ արքեպիսկոպոսն երկարօրէն և պարագայիւք ծանուցանէ մեզ ի թուղթս իւր լիալիր շնորհակալութեամբք և բազում դովաբանութեամբ... Քանզի ահա զքեզ ունիմք անխարդախ բարեկամ և խնամակալ մեզ և առաջի աստուածապսակ և դթասիրտ մեծի կայսրուհւոյն միջնորդ և բարեխօս վասն մեր։ Արդ խնդրեմք ի քումմէ պատուականութենէ, զի որովհետև չունիմք զհամարձակութիւն գրել ինչ առ բարձրագոյն մեծութիւն տիեզերակալ մեծի կայսրուհւոյն, վասն որոյ դու քոյովդ լիագոյն խոհեմութեամբ ի հաստատութենէ մերմէ ի պատեհ ժամու մատուցես առ գերափառութիւն նորին զբանս շնորհակալութեան հանդերձ աստուածային առատաձիր օրհնութեամբ վասն բազմակերպ ողորմութեանց և գթութեանց իւրոց, զորս ունի առ մեզ և առ մերայինս ամենեսեան, և ևս յայտնի կացուցես նմա զյոլովագոյն տենչմունս և զյօժարութիւն մեր առ առաջադրեալ իրականութիւն իւր, որ ի փրկութիւն մեր և մերազնէից, իսկ և զսէր քո կատարեալ և զինամսդ բազմադիմի մի՛ երբէք պակասեցուցես ի մէնջ և յազգէս մերմէ և ի սբբոյ աթոռոյս և ի հոգևոր որդւոյ մերմէ ի Յովսէփայ արքեպիսկոպոսէն, այլ մանաւանդ աճեցուցես և առաւելացուս...»։

Արշավանքը նախատեսվում էր սկսել 1784 թվի ամռանը։ Ավելացնենք այստեղ, որ Գիորգիևսկի դաշնադրության համաձայն, ռուսաց երկու գումարտակ, գնդապետ Բուրնաշովի հրամանատարությամբ, 1783 թ. նոյեմբերին արդեն մտել էր Թիֆլիս։

Գալիս է 1784 թվի ամառը, բայց ռուսաց զորքը Աստրախանից դեռ չի շարժվում։ Մանր օրեր էր ապրում Արղությանը, բայց դեռ շարունակում էր հուսադրել մելիքներին։ Վերջիններս տեսնելով, որ գեներալ Պ. Պոտյոմկինի խոստումը չի կատարվում, նորից դիմում են Արղությանին, խնդրելով շտապեցնել ռուսաց զորքի արշավանքը։ Միաժամանակ նրանք մի պատգամավոր են ուղարկում գեներալ Պ. Պոտյոմկինի մոտ՝ հայտնելու, որ արշավելու համար ժամանակը շատ հարմար է և որ իրենք պատրաստ են հինգ հազար ձիավոր և հետևակ ընտիր զինվորներ միացնել ռուսաց զորքին ու կարճ ժամանակում խորտակել Իբրահիմ խանի զորությունը. իսկ պարենի համար պատգամավորը վստահեցնում է գեներալ Պոտյոմկինին, ասելով որ ռուսաց զորքը ոչ մի նեղություն չի քաշի, քանի որ հայերի մոտ մեծ պաշար կա ամբարված։

Արղությանը Աստրախանից ուղևորվում է Ղզլար՝ գեներալ Պ. Պոտյոմկինի հետ անձամբ տեսնվելու համար, իսկ իշխան Գ. Պոտյոմկինին կամ «հայոց խնամակալին», ինչպես սովորություն ուներ նա կոչելու իշխանին, մի քանի նամակներ է գրում, որոնցից մեկի մեջ, գրված 1784 թ. սեպտեմբերին, ի միջի այլոց կան հետևյալ տողերը. «Նրանց (հայերին) ազատութիւն պատճառեցէք, ձերդ պայծառափայլութիւն, եղէք պատճառ, որ մեծ կայսրուհու սրբազնագոյն պատկերը դրօշմուի Արարատի սրտում իբրև հուշարձան ամբողջ աշխարհի համար և թող անդադար բարբառեն բոլոր ազգերը, թէ սա

և հույների փրկիչը, և փառաբանեն ձեր պայծառափայլութեան անունը յաւիտեանս։

Իշխան Պոտյոմկինը դիմելով Արղությանին ցանկություն է հայտնում, որ հայերի կողմից իր մոտ ուղարկվի Արևելահայաստանի գործերին մոտիկից ծանոթ մի մարդ, իսկ Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսի կողմից էլ պաշտոնական դիմում արվի ռուսաց արքունիքին։ Հանձինս ոմն Ստեփան Դավթյանի գտնվում է մի այդպիսի մարդ, որը ուղևորվում է իշխանի մոտ, իսկ Ղուկաս կաթողիկոսի պես զգույշ հայրապետն էլ կատարում է նշված ցանկությունը։

Ռուսական զորքի առաջխաղացումը զանազան պատճառներով ուշանում է։ Օգտվելով այդ հանգամանքից Անդրկովկասի տեղական խաները նորից գլուխ են բարձրացնում։ Թուրքիան, այդ խաներին իր կողմը գրավելու նպատակով, սկսում է սիրաշահել նրանց։ Միաժամանակ գլուխ են բարձրացնում նաև Կովկասի լեռնականները։ Թիֆլիսում գտնվող ռուսական հրկու գումարտակի դրությունը կրիտիկական է դառնում։

Շուշվա Իբրահիմ խանը իր կուտակած ամբողջ զայրույթը թափում է հայերի գլխին, ինչպես որ ճիշտ գուշակել էին Ղարաբաղի հայ մելիքները։ Խանը մելիքներից երեքին խաբեությամբ իր մոտ կանչելով, երկուսին բանտարկում է, իսկ երրորդին էլ աքսորում Պարսկաստան։ Ապա խանը կողոպտում է Ղարաբաղի պատմական մեծ օջախը՝ Գանձասարի վանքը, իսկ Հովհաննես կաթողիկոսին էլ ձերբակալում, բերում Շուշի, բանտարկում ու վերջում էլ թունավորում։ Այսպիսով երկարատև պատրաստություններից հետո վիժում է հայկական պետություն ստեղծելու ծրագիրը։

VIII

Ի՞նչպես է անդրադառնում այս բոլորը հայրենասեր Հովսեփ Արղությանի վրա։ Նա, իհարկե, խորապես ցավում ու վշտանում է, բայց չի ընկճվում և շարունակում է դարձյալ բանակցություններ վարել թե՛ իշխան Գ. Պոտյոմկինի և թե՛ գեներալ Պ. Պոտյոմկինի հետ և նույնիսկ հանձն է առնում անձամբ Ղարաբաղ գնալ ու տեղում անհրաժեշտ կարգադրություններ անել։

Տարիներ են անցնում. վրա է հասնում 1787 թվականը. ռուսաց հարաբերությունները Թուրքիայի հետ բարդանում են և հանգում պատերազմի։ Բուրնաշովը հրաման է ստանում իր երկու գումարտակով անմիջապես թողնել Թիֆլիսը ու Ռուսաստան վերադառնալ։ Անդրկովկասում ծանր դրություն է ստեղծվում, տեղական արյունռուշտ խանների սանձարձակություններին չափ ու սահման չկար, մանավանդ Ղարաբաղում, որը զրկվել էր իր մելիքներից։ Թեպետ Շուշում բանտարկված երկու մելիքներին հաջողվում է փախչել սկզբում Գանձակ, իսկ հետո Թիֆլիս, բայց ժողովուրդը անպատմելի զրկանքներ էր կրում։

Ցանկանալով մխիթարել ու հուսադրել Վրաստան ապավինած երկու մելիքներին, 1788 թվի փետրվարին Արղությանը նրանց ուղղած նամակում խորհուրդ է տալիս դիմել իշխան Գ. Պոտյոմկինին, «թէ դիտեմք զխնամակալութիւն պայծառափայլութեան ձերոյ զոր յառաջ ունէիք առ մեզ, այնու յուսով և մեք զհետ եկաք կամաց ձերոյ, հաստատելով ճշմարտութեան, որ ողորմած կայսրուհին ի ձեռն խնամակալիդ մերոյ կամեցաւ ժողովել զմեզ ի հեթանոսաց ընդ հովանեաւ խնամոց իւրոց... այժմ թողուլն ձեր. զմեզ ի ձեռաց, կոխան եղաք թշնամեաց, տարագիր ի հայրենեաց և իշխանութեանց և բաժանեալ ի յամենայն ընտանեաց և բարեկամաց իբրև զհաւ փրծեալ ի որսողաց, դիմեալ եմք առ նորին կայսերական բարձրութիւն զանձինս մեր միայն ապրեցուցանելով. իսկ բոլոր քրիստոնէութիւնն, որ ընդ ձեռամբ մերով էր, ի կորուստ մատնելով. վասն որոյ մեծաւ թախանձանօք ի խնամակալութենէ պայծառութեանդ, յիշեա յառաջին այցելութեանդ և այժմուս տառապանքն մեր փոխանակ հանգստութեան և այց սրա մեզ փրկել զայնքան բազմութիւն քրիստոնէից, որք ի նանիր կրեն տառապանս և իզուր արբենան զբաժակ բարկութեան թշնամեացն ձերոց անցանի առ մեզ, եթէ ոչ յառնէք գթութեամբ և ոչ հասանէք մեզ յօգն ի կարճ միջոցի, ոչ թէ մեք միայն, այլ և ազգն մեր և երկիրս Վրաց հանկուցին ի յետին տառապանս, զի որպէս շուրջ եղեալ թշնամիքն միաբանեալ ընդ միմեանս՝ պատրաստին բառնալ ի միջոյ զքրիստոնեայս մեր։

Հովսեփ Արղությանը դեռ սեն բան կորած չէր համարում։ Ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ գտնվելով իշխան Գ. Պոտյոմկինի բանակում, նա շարունակ հայկական պետականության վերականգնման միտքն է արծարծում և այդ ուղղությամբ ծրագրեր կազմում, առաջարկություններ անում։ Նա կազմում է այն դաշնադրության ծրագիրը, որ պիտի կնքվեր Ռուսաստանի և նոր ստեղծվելիք հայկական պետության միջև. այստեղ մանրամասն հիշատակված էր, թե ինչպիսի հարաբերություններ պիտի պահպանվեն երկու պետություն-

ների միջև, որքան պետք է լինի հայոց զորքի թիվը՝ արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար, ինչպես պետք է անարգել առևտուր կատարվի երկու երկրների միջև։ Նախատեսվում էր որ թագավորը հայ կամ ռուս լինի, միայն վերջին դեպքում նա պետք է հայադավանություն ընդուներ։ Ենթադրվում էր մայրաքաղաքը դարձնել Վաղարշապատը։

Դաշնադրության բովանդակությունը արժանանում է իշխան Գ. Պոտյոմկինի հավանությանը, որը, ինչպես մեկ անգամ էլ ասինք, ցանկություն ուներ բազմելու այս նոր ստեղծվելիք պետության գահի վրա, բայց, ինչպես տեսանք, նա 1791 թվին փախճանվեց։

IX

Իշխան Գ. Պոտյոմկինի մահից հետո Եկատերինա Բ կայսրուհու պալատում սկսում է մեծ դեր խաղալ կոմս Պլատոն Զուբովը, որը նույնպես սիրահար էր մեծ ծրագրեր կազմելու, նույնիսկ Հնդկաստան արշավելու։

Բայց Անդրկովկասում մեկը մյուսից ավելի զարհուրելի դեպքեր էին տեղի ունենում. խաների սանձարձակությունները ավելանում է մի նոր աղետ. Իրանի նոր շահ Աղա Մահմադ խանը Անդրկովկաս է արշավում վրաց Հերակլ թագավորին պատժելու համար, որ դուրս էր եկել Պարսկաստանի գերիշխանության տակից ու Գիորգիևսկի դաշնադրությամբ մտել Ռուսաստանի հովանավորության տակ։ Ավելորդ է հիշել այն գազանությունները, որ Աղա Մահմադ խանի զորքերը գործադրում էին ամենուրեք։ Ոչ մի դիմադրության չհանդիպելով, բռնակալը 1795 թվի սեպտեմբերին մտնում է Թիֆլիս ու այն ավերակների կույտի վերածում։ Վերադարձին տասը հազարից ավելի հայ ու վրացի գերիներ է տանում Պարսկաստան, մեծ մասամբ գեղանի աղջիկներ ու պատանիներ։

Թիֆլիսի ավերման ժամանակ Արղությանը գտնվում էր Գրիգորիոպոլում։ Այստեղից նա մի ցավակցական գրություն է գրում Հերակլին և հուսադրում Ռուսաստանից սպասվող մոտալուտ օգնությամբ։ Միևնույն ժամանակ Պլատոն Զուբովի ուշադրությունը հրավիրելով Վրաստանի ու Հայաստանի ողբերգական կացության վրա, Արղությանը իր կողմից առաջարկում է Անդրկովկաս կատարելիք արշավանքը սկսել Դերբենդի ու Բաքվի վրայով։

Այս անգամ ռուսաց արքունիքն ավելի արագ է շարժվում։ Եկատերինա Բ կայսրուհին ընդունելով Արղությանի ծրագիրը և նկատի առնելով նախկինում նրա մատուցած անգնահատելի ծառայություններն ու լավատեղյակությունը Անդրկովկասի գործերին, առաջարկում է ուղեկցել ռուսական բանակին դեպի Անդրկովկաս կատարելիք արշավանքի ընթացքում։ Բանակի հրամանատար է նշանակվում Պլատոն Զուբովի եղբայր Վալերիան Զուբովը, թեպետ Արղությանի ցանկությունն էր Սուվորովին տեսնել արշավող զորքերի գլուխն անցած։ Չնայած իր հիվանդության, Արղությանը ոգևորված այն բանով, որ իր վաղուց փայփայած իղձերը վերջապես պիտի կատարվեն, կայսրուհու առաջարկությունը ստանալուն պես մեկնում է Վ. Զուբովի մոտ, որը նրանից բազմազան տեղեկություններ է ստանում Անդրկովկասի դրության մասին։

Արշավանքը սկսվում է Արղությանի առաջարկած Դերբենդ—Բաքու ուղղությամբ. 1796 թվի ամռանը ռուսները առանց որևէ արգելքի գրավում են Դերբենդն ու Բաքուն։ Դերբենդը գրավելուց հետո Արղությանը ոգևորված մի կոչով դիմում է տեղացի հայերին, հիշեցնելով անցյալում նրանց կրած ծանր ու զարհուրելի տառապանքները մահմեդական իշխողների լծի տակ։ Այս կոչում նա գրում է. «...Այժմ ամենաբարձրյալ Աստվածը լսեց ձեր աղոթքները, չմերժեց ձեր իր բարեբար հովանավորությունը, շարժեց ամենաողորմած կայսրուհու սիրտը՝ ձեր նեղիչների ձեռքից ազատելու և ձեր արտասուքները ցամաքեցնելու համար։ Ընդունելով ձեր իր մայրական հովանու և գայթակղության տակ, նա պիտի պահպանե ձեզ խաղաղության և հանգստության մեջ, ինչպես որ դուք եք ուզում։ Եվ այսպես, չքացավ խավարը, հեռացան ձեր նեղիչները, վերջացան նրանց ուժը և բարբարոսական իշխանությունը քաջ պայծառափայլ կոմս Վալերիան Զուբովի միջոցով, որ մեր ազգի ճշմարիտ բարերարն է, ինչպես դուք այս տեսաք իրապես։ Ուստի շնորհավորում եմ ձեր ազատությունը և շնորհակալություն եմ հայտնում Աստծուն, որ այս բանը տեղի ունեցավ առանց արյունհեղության և կորուստների՝ ձեր կողմից։ Հանձնարարում եմ առհասարակ բոլոր քաղաքացիներին և գյուղացիներին, քահանաներին և աշխարհականներին լինել զգույշ և, մոռացության տալով ձեր կրած բոլոր հարբստահարությունները, անձնվիրաբար վերաբերվել կայսերական գահին և ձեզ ազատող կոմսի հրամաններին։ Քաղաքացինե՛ր, ձեր շանացողություններով ապացուցեք, որ կարող եք լինել արժանավոր քաղաքացիներ, թե պարապում եք արդար վաստակով և երկրագործությամբ. իսկ դուք, որ ունիք քաջ և պատերազմական ոգի, կարող եք ձեր քաջությամբ ապացուցել ձեր հավատարմու-

թյունը և անձնվիրությունը, և այդպիսով արժանանալ կոմսի վստահության, որպեսզի նա, գոհ մնալով ձեր վարմունքից, զեկուցանեն այդ մասին նորին կայսերական մեծությանն։ Եվ այսպես, դուք, որ ամբողջ հայ ազգից առաջինն եք, որ տեսաք փրկությունը և վայելում եք նրան, աշխատեցեք լինել միաբան և գործով ապացուցեք ձեր անձնվիրությունն առաջին հրամանատարին և ձեր հավատարմության գործերը թող օրինակ լինեն մեր ազգի այն անդամների համար, որոնք նմանօրինակ ջերմեռանդությամբ սպասում են ցանկալի փրկության... Եվ գուցե, եթե հաճելի լինի Աստծուն, տեսնեմ իմ որդիներին, և այն Աստվածը, որ փրկել ու ուրախացրել է ձեզ, կփրկի և կուրախացնի մեր ազգի մընացած մասը և այլ ևս ձեզ չի մատնի մեր նեղիչների ձեռքը։ Թող բացվեն ձեզ համար երջանկության դռները և թող Ամենաբարձրյալն ավելի և ավելի ամրացնի ձեր զորավարի բազուկը և ինչպես բացված են Դերբենդի դռները, այնպես էլ բացվեն ձեր Հայաստանի դռները»։

Այնուհետև Շամախու, Նուխու և Ղարաբաղի խանները Արղությանի հորդորանքով, առանց որևէ դիմադրության, անձնատուր են լինում։ Պետք է այստեղ հիշել և այն մեծ ծառայությունը, որ Արղությանը այդ ժամանակ մատուցում է ռուսաց բանակին. Արղությանը իր գրություններով, երբեմն էլ անձամբ, հորդորում էր հայ գյուղացիներին հաց, ուտելիք մատակարարել ռուսաց բանակին։ Ժողովուրդը անտրտունջ լսում էր իր հոգևոր հովվին ու սայլերով պարենամթերք հասցնում ռուսաց բանակին, որի համար զորահրամանատարները ջերմ շնորհակալություն էին հայտնում Արղությանին։

Արղությանի ջանքերի շնորհիվ Գանձակն էլ առանց արյունհեղության հանձնվում է ռուսներին։

Ապա գլխավոր հրամանատարը մի զորաբաժին է առանձնացնում Թիֆլիսի համար. Արղությանը այս զորաբաժնի հետ մտնում է Թիֆլիս, որը մի տարի առաջ ավերվել էր Աղա Մահմադ խանի կողմից։ Բայց հանկարծ մի դեպք ի չիք է դարձնում բոլոր ձեռք բերված հաջողությունները։ 1796 թվի աշնանը Եկատերինա Բ կայսրուհին վախճանվում է, իսկ նրա հաջորդ, նոր կայսր, Պավլի հրամանով Անդրկովկասում գտնված բոլոր ռուս զորքերը շտապ կարգով կանչվում են Հյուսիսային Կովկաս։ Եվ այսպիսով ամբողջ Անդրկովկասը նորից բախտի քմահաճույքին է մատնվում։ Նահանջող ռուս զորքերի հետ Դերբենդի կողմերից Ռուսաստան են գաղթում 500 հայ ընտանիք, որոնք Հյուսիսային Կովկասում հիմնում են Ս. Խաչ քաղաքը։

X

Գանձակից Թիֆլիս անցնելով Արղությանը քաղաքը գտնում է բոլորովին ավերված վիճակում. նա մխիթարում է քաղաքացիներին և որոշ օժանդակություն է ցույց տալիս եկեղեցիները նորոգելու և իրենց կարիքները հոգալու գործում։

Այնուհետև նա ուղևորվում է Պետերբուրգ, ուր տեսնում է քաղաքական իրադրությունը բոլորովին փոխված. այլևս խոսք չէր լսվում հայկական քրիստոնյա պետություն ստեղծելու մասին։ Գանձակ ապավինած և ապա Թիֆլիսում բնակություն հաստատած հայ մելիքները նույնպես հարց չեն բարձրացնում իրենց իշխանությունը Ղարաբաղում նորից վերահաստատելու մասին, այլ աշխատում են ժողովրդին հանել Ղարաբաղից, գաղթեցնել Ռուսաստան ու այնտեղ շարունակել իրենց իշխանությունը։ Մելիքներին հաջողվում է միայն ժողովրդի մի մասին տեղավորել Ղազախում և նրա հարակից շրջաններում։

XI

1797 թվին Աղա Մահմադ խանը նորից արշավանք է կազմակերպում դեպի Անդրկովկաս, ահ ու սարսափի մատնելով քրիստոնյա հայերին ու վրացիներին։ Արղությանը, որ Հովհաննես Լազարյանի շնորհիվ նորից հեղինակություն էր ձեռք բերել Պավել կայսրի արքունիքում, աշխատում է համոզել, որ ռուսաց օժանդակ զորքեր մտցվեն Վրաստան, բայց սկզբում հաջողություն չի ունենում։ Աղա Մահմադ խանը այդ նույն թվին էլ սպանվում է Շուշում, բայց երաշտն ու ժանտախտը սարսափելի ավերումներ են պատճառում երկրին։ Հաջորդ 1798 թվին վախճանվում է վրաց ծերունի Հերակլ թագավորը, որի մահվանից հետո գահաժառանգության համար երկպառակություն է առաջանում վրաց արքունիքում։ Թագավորական գահը ժառանգում է հիվանդոտ Գիորգին, որը նույնպես իր երկրի փրկությունը տեսնում էր միայն Ռուսաստանի օգնության

մեջ, մանավանդ այն բանից հետո, երբ Պարսկաստանի նոր տեր Ֆաթ-Ալի շահի ուղարկած դեսպանները նրանից պահանջում էին ոչնչացնել Գիորգիևսկի դաշնադրությունը և Պարսկաստանին ենթարկվել։ Գիորգին օգնության է կանչում Ռուսաստանին և այս անգամ Պավել կայսրը որոշում է ռուսական զորք մտցնել Վրաստան։ Արղությանը ջանք չէր խնայում արագացնելու այդ օգնությունը և վերջապես միայն 1799 թվի սկզբին ռուսական մի գունդ մտնում է Թիֆլիս։ Մի տարի անց վախճանվում է Գիորգի թագավորը և հենց այդ ժամանակ էլ, 1800 թվի դեկտեմբերին, Վրաստանը միանում է Ռուսաստանին, կազմելով նրա բաղկացուցիչ մասը։

XII

1799 թվի դեկտեմբերի վերջերին Էջմիածնում վախճանվում է Ղուկաս կաթողիկոսը։ Հուղարկավորությունից հետո, ըստ այն ժամանակվա սովորության, Մայր Աթոռի միաբանությունն անմիջապես ժողով է գումարում՝ կաթողիկոսական թեկնածուներ առաջադրելու համար։ Ընտրելիներ են հայտարարվում Կ. Պոլսի Դանիել պատրիարքը և Ռուսաստանի նվիրակ Եփրեմ արքեպիսկոպոսը։ Էջմիածնում պատշաճ գրություն է պատրաստվում Կ. Պոլսի ամիրաների անունով, որի մեջ խնդրվում էր առաջարկված թեկնածուներից մեկին կաթողիկոս ընտրել և նրա հաստատության համար· Թուրքաց կառավարությունից հրովարտակ ստանալ։ Այս գրությունը Դավիթ եպիսկոպոսի միջոցով ուղարկվում է Կ. Պոլիս։

Բայց ի՞նչպես է պատահում, որ Էջմիածնի միաբանությունը կաթողիկոսական թեկնածուների ցանկի մեջ չի մտցնում իր ժամանակի ամենանշանավոր հոգևորականին՝ Հովսեփ արքեպիսկոպոսին։ Մայր Աթոռի միաբանությանը շատ լավ հայտնի էր Արղությանի բեղմնավոր գործունեությունը Ռուսաստանում և նրա մասնակցությունը ռուսների անդրկովկասյան արշավանքներին։ Թուրքաց ու պարսից կառավարություններին և Անդրկովկասի խաներին շատ լավ հայտնի էր Արղությանի անչափ ռուսասիրությունն ու Ռուսաստանին նվիրված լինելը, նրա շահերին ծառայելու պատրաստակամությունը։ Հայ ժողովուրդը համարյա ամբողջությամբ ապրում էր այդ երկու մահմեդական պետությունների տիրապետության տակ։ Արդ ինչ պատիժ կլիներ Մայր Աթոռի միաբանների և ամբողջ հայ ժողովրդի համար, եթե Արղությանի նման մի անձնավորություն կաթողիկոս ընտրվեր ու բազմեր Էջմիածնում, որը գտնվում էր պարսից տիրապետության տակ և անմիջապես ենթարկվում էր Երևանի բռնակալ սարդարին։ Այսպես էր մտածում Էջմիածնի միաբանությունը և այդ պատճառով էլ ընդհանուր ազգի շահերի համար վնասակար համարում Արղությանի կաթողիկոսությունը։ Բազմադարյան դառը փորձը սովորեցրել էր զգույշ քաղաքականություն վարել՝ տիրողների ավելորդ բռնություններից խուսափած լինելու համար։

Սակայն հանգամանքներն այնպես են դասավորվում, որ Մայր Աթոռի միաբանությունը ստիպված է լինում իր կամքին հակառակ ուղղություն վերցնել։ Հենց որ Թիֆլիսում իմանում են Ղուկաս կաթողիկոսի մահվան և Դանիելին ու Եփրեմին ընտրելիների ցուցակի մեջ մտցնելու և այդ առթիվ Կ. Պոլիս առանձին գրություն ուղարկելու մասին, իսկույն տեղի ազդեցիկ հայերը Էջմիածնի միաբանությանը հայտնում են, որ իրենց միակ ընտրելին Արղությանն է։ Գործն ավելի է բարդանում, երբ վրաց Գիորգի թագավորը, Հովսեփ արքեպիսկոպոսի բարեկամն ու կողմնակիցը, կտրուկ կերպով պահանջում է Էջմիածնի միաբանությունից անպատճառ Արղությանին կաթողիկոս ընտրել և իր պահանջին ույժ տված լինելու համար էլ մի շարք սպառնալիքներ է կարդում։ Հովսեփի ընտրությանը կողմնակից էր նաև Թիֆլիսում գտնվող ռուս զորքի հրամանատարը, որը իր այս ցանկության մասին տեղեկացնում է Էջմիածնի միաբանությանը։ Այս բուռն պահանջների առաջ տեղի տալով, միաբանությունը նոր ժողով է գումարում և Եփրեմի փոխարեն առաջադրում Արղությանի թեկնածությունը։ Իսկույն այս մասին նոր գրություն է ուղարկվում սուրհանդակ Դավիթ եպիսկոպոսին, որ շտապ Կ. Պոլիս հասցնի։

XIII

Արղությանը ինքն էլ մեծ փափագ ուներ կաթողիկոս դառնալու։ Հայտնի էր նրա անչափ փառասիրությունը, սակայն, մյուս կողմից էլ կաթողիկոսանալով նա շատ բաներից պիտի հրաժարվեր։ 27 տարի Ռուսաստանում գործելով նա մինչև իսկ արժանացել էր իշխանական տիտղոսի. նա ցանկալի հյուր էր լինչպես Եկատերինա Բ կայսրուհու ու Պավել կայսրի, այնպես էլ արքունի բոլոր մեծամեծների, բարձրաստիճան պալատական-

ների, զորավարների ու այլոց մոտ. շատ մրտելիմ հարաբերության մեջ էր գտնվում ռուս բարձրաստիճան հոգևորականության հետ, ապրում էր իշխանավայել կերպով և հաճախ իր մոտ, որպես հյուր, ընդունում ամենաբարձր անձանց. իշխան Գ. Պատյոմկինը սիրում էր հաճախ այցելել Արղությանին ու նրա հետ միասին ճաշել։ Արղությանի խոսքը ծանրակշիռ նշանակություն ուներ ռուսաց արքունիքում։ Մի խոսքով Արղությանը վայելում էր այն բոլորը, ինչ որ մի բարձրաստիճան անձնավորություն կարող էր ակնկալել կյանքից։

Իսկ ի՞նչ էր սպասում նրան Էջմիածնում, մի աղքատ ու կողոպտված վանք, խեղճ ու ահաբեկված միաբանություն, աղքատության ծայր աստիճանին հասած, խավարի մեջ խարխափող, թշվառ ժողովուրդ, իսկ որ ամենագլխավորն էր, մի բռնակալ ու ընչաքաղց իշխող, հանձինս Երևանի սարդարի, որը բոպեի ազդեցության տակ կարող էր կաթողիկոսին նույնիսկ մահ սպառնալ, ինչպես այդ տեղի ունեցավ մեր նկարագրած ժամանակից մի քանի տարի հետո Դանիել կաթողիկոսի հետ, որը մահմեդական մի տոնի առթիվ ռուսական շքանշանով սարդարին ներկայանալու համար խիստ նկատողություն է ստանում վերջինիս կողմից. սարդարը սպառնում է երկրորդ անգամ նման շքանշանով ներկայանալու դեպքում շքանշանի ժապավենով խեղդել նրան։ Արդ ի՞նչն էր գրավում Արղությանին իր վարած փառավոր կյանքից հետո ըմպել դառնության այս բաժակը։ Միայն փառասիրությամբ չի կարող բացատրվել այս։ Մեզ թվում է, որ նա հանուն ավելի վեհ նպատակների համար էր ձգտում կաթողիկոսության։ 27 տարվա նրա գործունեության առանցքը կազմել է հայ ժողովրդին դարը, անտանելի վիճակից հանելու ջերմ փափագը։ Հանձն առնելով կրել կաթողիկոսական ծանր լուծը, նա մահմեդական իշխողների հետ ունենալիք փոխհարաբերությունների ժամանակ անշուշտ միշտ պետք է հենվեր ռուսաց օգնության վրա, ռուս կառավարության հեղինակավոր ձայնի վրա, որով թերևս հույս ուներ առժամանակ սանձելու Երևանի սարդարին, իր անմիջական իշխանավորին, ինչպես և մյուս մահմեդական իշխողներին, մինչև որ պայմանները բարենպաստ կդասավորվեին Արարատյան աշխարհը ռուսաց զորքի մուտքն արագացնելու համար, որի համար նա տքնել էր տասնյակ տարիներ։ Նա գեռ ծեր չէր, ընդամենը 57 տարեկան էր և կաթողիկոս դառնալով, դեռ շատ բան կարող էր անել այս ուղղությամբ։

XIV

Էջմիածնի միաբանները, լավ ճանաչելով Արղությանի բնավորությունը և երկյուղ կրելով, որ նա ապագայում կարող է իրենց նկատմամբ խստություններ գործադրել առաջին ժողովում կաթողիկոսական թեկնածուների ցանկի մեջ իր անունը չմտցնելու համար, բացատրական նամակներ են ուղղում նրան, որոնք ըստ Օրմանյանի «ամենայն Յովսէփը ընտրութենէն հրաժարելու, քան թէ կաթողիկոսութիւնը ընդունելու կը յորդորեն»։ Այդ նամակներով աշխատում են սարսեցնել Արղությանին, նրա ուշադրությունը հրավիրելով սպասվող վտանգի վրա։ Այս առթիվ Օրմանյանը գրում է. «...դիտել կուտան, թէ ազգն մեր ըստ մեծի մասին է այժմ ընդ գաւազանաւ տէրութեան Օսմանցւոց, և տարաբախտ մասն Հայաստան աշխարհի ընդ խիստ իշխանութեամբ Պարսից»։ Ուստի կ՝ըսեն, «եթէ չունիս կասկած վտանգի առ ամենազնիւ անձն քո, և առ սուրբ տունս, և առ ազգ մեր, հրամայեսցես եկեսցես ի սուրբ աթոռս ի կաթողիկոսութիւն», բայց կ՝եզրակացնեն, որ «եթէ երկիցես ի պատճառացն յիշատակելոց, թէ վտանգ լինիցի շքեղափառ անձինդ, և սրբոյ աթոռոյս, և ազգի մերում, և չը կամիցես գալ, առ այն ոչ կարեմք ձեզ լինել մեղադիրս»։

Արղությանը, անկախ նրանից, որ Էջմիածնի երկրորդ ժողովում արդեն առաջադրվել էր իր թեկնածությունը, ինքն էլ իր հերթին աշխատում էր, որպեսզի Կ. Պոլսի պատրիարքարանում ու ընտրող ամիրաների շրջանում իր օգտին տրամադրություն ստեղծվի. այս նպատակով նա բազմաթիվ նամակներ է գրում և ուղարկում Կ. Պոլիս։ Բացի այդ դիմում է ռուսաց արքունիքի օգնությանը. վերջինս, իր ապագա նպատակների համար անհրաժեշտ համարելով Արղությանի կաթողիկոս ընտրվելը, Կ. Պոլսի իր դեսպանի միջոցով Թուրքաց կառավարությանը տեղեկացնում է, որ ինքը կցանկանար, որպեսզի Կ. Պոլսի հայերը կաթողիկոս ընտրեին Արղությանին։ Սա առաջին դեպքն էր, որ ռուսաց կառավարությունը, միջամտություն էր հանդես բերում կաթողիկոսական ընտրության հարցում։ Թուրքաց կառավարությունը սիրով կատարում է ռուսաց դեսպանի առաջարկը. նա գիտեր թե ինչ ե-

ղանակով կարող է ազդել մայրաքաղաքի հայերի վրա. Արղությանի հակառակորդներից ոմանց բանտարկում, ոմանց աքսորում, իսկ մնացածներին էլ ահաբեկելով հաջողեցնում է նրա ընտրությունը մայրաքաղաքում և իր կողմից էլ հաստատման հրովարտակ է տալիս ռուսաց դեսպանին՝ ընտրյալին հանձնելու համար։

XV

Մնում էր, որ Արղությանը էջմիածին ուղեվորվեր, բայց նա դեռ Պետերբուրգում բավականին ուշանում է։ 1800 թվի օգոստոսին նա հրաժեշտ է տալիս Պավել կայսրին ու մեկնում մայրաքաղաքից։ Ճանապարհին նա կանգ է առնում Մոսկվայում և Նոր-Նախիջևանում ու սեպտեմբերին Աստրախան հասնելով, այստեղ մնում է մոտ երեք ամիս։ Էջմիածնի միաբանները դրում, աղերսում են նրան աճապարել շուտ տեղ հասնել, քանի որ Մայր Աթոռը տասը ամիս շարունակ անտերունչ էր մնացել։

Դեկտեմբերի կեսերին դուրս գալով Աստրախանից, Արղությանը հասնում է Ղզլար և ապա այստեղից, հարյուր կազակի ուղեկցությամբ, Կովկասյան լեռների վրայից անցնելով 1801 թվի փետրվարի 11-ին հասնում է Թիֆլիս, ուր նրան մեծ ու փառահեղ ընդունելություն է ցույց տրվում։

Հաջորդ օրը Թիֆլիս են հասնում էջմիածնից ուղարկված չորս հրավիրակները, որոնք նորընտիր կաթողիկոսին ներկայանալով, նրան հրավիրում են էջմիածին ս. օծումն ընդունելու և Լուսավորչի գահի վրա բազմելու։

Փետրվարի 17-ին Արղությանը մեծ հանդիսավորությամբ պատարագ է մատուցանում Վանքի ավագ եկեղեցում՝ վրաց այրի թագուհու, վրաց իշխանների, վրաց կաթողիկոս Անտոնի (Հերակլի որդին), ռուս հրամանատարների, սպաների, հայ երևելիների ու խուռն բազմության ներկայությամբ։ Պատարագից հետո ընթերցում է Պավել կայսրի հրովարտակը Վրաստանի միացման մասին ու հորդոր կարդում սիրով ապավինել ռուսաց կայսրությանը, որի հովանու տակ բոլորն էլ կարող են ապրել խաղաղ ու ապահով։

Այնուհետև Արղությանը պատրաստվում է էջմիածին ուղևորվել։ Գնալուց առաջ ցանկություն է հայտնում Թիֆլիսի հռչակավոր հանքային ջրերի բաղնիսներից մեկում լողանալու։ Գիորգի թագավորի այրի թագուհին իր արքայական բաղնիսը դնում է նրա տրամադրության տակ։ Արղությանը սովորականից մի քիչ ավելի է մնում բաղնիսում և լողանալուց հետո էլ, հարգելով թագուհու հրավերը, գնում է նրա մոտ թեյ խմելու։ Թագուհուն հրաժեշտ տալուց հետո գնում է իր եղբոր որդու՝ իշխան Սողոմոն Արղությանի տունը, որտեղ և նույն դիշերը հիվանդանում է։ Հիվանդությունը գնալով սաստկանում է և 1801 թվի մարտի 9-ի գիշերը Արղությանը վախճանվում է, նախապես կարգադրություն անելով, որ իր մարմինը տանեն էջմիածին ու իր ուսուցիչ Սիմեոն կաթողիկոսի կողքին թաղեն, որ և հետագայում կատարվում է։

Այսպիսի անակնկալ վախճան է ունենում այն մարդը, որը ջերմ փափագ ուներ հայրապետական գահի վրա բազմելու և, ո՞վ գիտե, Հայ Եկեղեցու գլուխ գտնվելով, ի՞նչ մտադրություններ ու ցանկություններ ուներ նա թե՛ Մայր Աթոռի դիրքն ու պատիվը բարձրացնելու, հեղինակավոր դարձնելու և թե՛ մանավանդ մահմեդական ծանր լծի տակ հեծող թշվառ հայ ժողովրդի վիճակը Ռուսաստանի աջակցությամբ բարվոքելու։

Բայց այն, ինչ որ կատարեց նա, միանգամայն իրավունք է տալիս նրան մեր անցյալի խոշոր գործիչների շարքը դասելու. նրա ամբողջ գործունեությունը մի նպատակ է հետապնդել— հայ ժողովրդի բարօրությունը, իսկ հասարակական ամեն մի անկեղծ հայ գործչի համար սա է ամենակարևորը։

Աղբյուրներ.—
Մ. Օրմանյան.— Ազգապատում։
Լեո.— Հայոց պատմություն, երրորդ հատոր։
Լլ.— Հովսեփ կաթողիկոս Արղությանի։

Մ. ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ

Բոլոր դարերում էլ հայ վանքերը բազմաթիվ անձնվեր եկեղեցականներ են տվել, որոնց թվում իր պատվավոր տեղն է գրավում Հասան-Ջալալյան Բաղդասար մետրոպոլիտը։

Բաղդասար մետրոպոլիտը պատմագիր չէ և ոչ էլ գիտուն-աստվածաբան, նա նույնիսկ բավականաչափ ուսում էլ չի ունեցել. Բաղդասարը իր սկզբնական կրթությունը ստացել է Գանձասարի վանքում, իսկ այնուհետև մի որոշ ժամանակ Թիֆլիսում աշակերտել է Սերովբե Պատկանյանին. այստեղ նա ուսումնասիրել է քերականություն, ճարտասանություն, Ս. Գիրք, կրոն և ահա այս է եղել նրա ամբողջ գիտական պաշարը։ Սակայն դրա փոխարեն Բաղդասարը օժտված է եղել ուրիշ այնպիսի հատկություններով, որ հաճախ պակսում էր շատ ուսումնականների։

Նա ընծին տաղանդի, աննկուն ու անհողդողդ կամքի տեր և նպատակին համառությամբ ձգտող մի անձնավորություն էր։ Հայտնի պատմաբան Լեոն, որ Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմությունը գրելու ժամանակ արխիվային տվյալների հիման վրա մանրակրկիտ կերպով ուսումնասիրել էր այդ դպրոցի հիմնադիր Բաղդասար մետրոպոլիտի կյանքը, նրան անվանում է «նշանաւոր հոգևորական գործիչ», «ինքնուրոյն, համարձակ նմանը չունեցող մի դէմք»*)։

Ի հարկե Հայ Եկեղեցին Բաղդասարի նման, ազգի ու եկեղեցու առաջնորդության նախանձախնդիր հոգևորականներ շատ է ունեցել, բայց դրանց շարքում հետին տեղը չի գրավել նա։

Բաղդասարը ծնվել է 1775 թվին և մինչև իր մետրոպոլիտությունը շատ անցուդարձերի է վկա եղել։ Երբ Ղարաբաղում ծայր է առնում ազատագրական շարժումը և հայերը իրենց հայացքներն ուղղում են դեպի Պետերբուրգ, այնտեղից սպասելով իրենց փրկությունը, Աղվանից կաթողիկոսության աթոռանիստ վայր Գանձասարի վանքն էլ վերածվում է հայերի ազատագրական շարժման հրահրման և ռուսաց արքունիքի հետ բարեկամական հարաբերությունների մշակման կենտրոնի։ Գանձասարի վանքը հանդիսացել է Հասան-Ջալալյանների հայրենի օջախը և Աղվանից կաթողիկոսության գահի վրա բազմել են ժառանգաբար այս նշանավոր տոհմի ներկայացուցիչները։ Հասան-Ջալալյան տոհմը տվել է անվեհեր ու հայրենասեր եկեղեցականներ, որոնք հայ ժողովրդի ազատագրությունը պարսկական-խանական լծից հնարավոր են համարել միայն ու միայն ռուս մեծահոգի ժողովրդի միջոցով և այդ իսկ պատճառով էլ տարիներ շարունակ գաղտնի դիվանագիտական հարաբերությունների մեջ են գտնվել ռուսաց արքունիքի հետ։ Աղվանից կաթողիկոսների ռուսական օրիենտացիայի հետևանքով առաջացած խանական հալածանքների միայն վերջին տարիների դեպքերին է ականատես լինում պատանի Բաղդասարը։

Երիցմանկանց հակաթոռ կաթողիկոս Իսրայելի դավաճանության շնորհիվ Իբրահիմ խանի մարդիկ ձերբակալում են Գանձասարի Հասան-Ջալալյան Հովհաննես կաթողիկոսին, իբրև ռուսների հետ գաղտնի հարաբերության մեջ մտած մեկի, և տանում Շուշի, ուր խանի հրամանով նա բանտ է նետվում։ Այստեղ էլ, դարձյալ խանի հրամանով նրան սպանում են, թույն խմացնելով։

Այսպիսով տասներեքամյա պատանի Բաղդասարը ականատես է լինում իր հորեղբոր, Գանձասարի կաթողիկոսների ականավոր ներկայացուցիչներից մեկի, եղերական մահվանը։

Պարզ է, որ մի այսպիսի քստմնելի եղեռնագործություն չէր կարող ցնցող տպավորություն չթողնել նրա մատաղ սրտի վրա և խորապես զգացնել տալ, թե ինչ է նշանակում պարսկական լուծ, խանական իշխանություն։

Ըստ տրադիցիայի, Հովհաննես կաթողիկոսից հետո, Աղվանից կաթողիկոսության թափուր աթոռի վրա պիտի բազմեր նրա եղբայրը՝ Սարգիս. եպիսկոպոսը։ Սակայն, Իբ-

*) Լէո.— Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Հոգեւոր Թեմական Դպրոցի, էջ 98։

բահիմ խանը, Ղարաբաղի այս հոգեառ իշխանավորը, որ Հասան-Ջալալյանների տոհմի եկեղեցականներին իր անհաշտ թշնամիներն էր համարում, նրանց ռուսասիրության համար, չի դադարեցնում իր հալածանքները Հովհաննես կաթողիկոսի սպանությունից հետո։ Սարգիս եպիսկոպոսը բացառություն կազմել չէր կարող և նա ևս շուտով ճաշակում է խանի հարուցած հալածանքների պտուղը։ Բանն այնտեղ է հասնում, որ Սարգիս եպիսկոպոսը, չկարողանալով այլևս տանել անընդհատ տեղացող հարվածները, Գանձասարի հարստության դեռ ևս չկողոպտված մասը թագցնում է և մի ամպոռ օր, 1791 թվին Գանձակ փախչում, իր հետ տանելով յուրայիններին, որոնց թվում և իր եղբորորդի Բաղդասարին։ Գանձակում այդ ժամանակ իշխում էր Իբրահիմ խանի հակառակորդ Ջավադ խանը։

Փախուստը կազմակերպում է նահատակված Հովհաննես կաթողիկոսի, ինչպես և Սարգսի, քրոջ որդի, Իբրահիմ խանի թաքարդից—Շուշվա բանտից փախած, անվեհեր մելիք Մեժլումը, փախուստի իրագործումը հանձնելով իր քաջ զինակից Թյուլի-Արզումանին։

Հասան-Ջալալյան Մելիք-բեկը ունեցել է ութ որդի. դրանցից մեկը Հովհաննես կաթողիկոսն էր, որին, ինչպես տեսանք, Իբրահիմ խանի հրամանով թունավորեցին արին բանտում. մյուսը՝ Գանձակ ապաստանած Սարգիս եպիսկոպոսն էր, երրորդը՝ գավառաձան Ալլահ-Կուլի-բեկը, որն իր դավաճանության համար արժանի պատիժ կրեց—հայերը կտրեցին նրա գլուխը և մարմինն էլ անհետացրին։ Մնացած հինգ որդիներից երկուսը՝ Ջալալ-բեկն ու Դանիել-բեկը, որը ամենից կրտսերն էր, զոհ գնացին դարձյալ Իբրահիմ խանի դազանությանը։

Գանձակ փախչելուց հետո Սարգիս եպիսկոպոսը միջոցներ է ձեռք առնում Գանձասարում թագցված հարստությունը կորստից ազատելու և այն Գանձակ տեղափոխելու համար։ Ահա հենց այս նպատակն իրագործելու ճանապարհին էլ Ջալալ-բեկը և Բաղդասարի հայր Դանիել-բեկը ընկնում են Իբրահիմ խանի ձեռքը։ Սրանցից Ջալալ-բեկին գլխատում են, իսկ Դանիել-բեկին էլ մի քանի օր բանտում պահելուց հետո հանում և մաս-մաս կտրատում են։

Այսպիսով, դեռ 16 տարեկան հասակում, Բաղդասարը լիովին ճաշակում է պարակական-խանական բռնակալության բոլոր «բարիքները», մինչև մահ չմոռանալով իր դժբախտ հոր սոսկալի վախճանը։

Գանձակ ապաստանած մելիք Մեժլումը և մելիք Աբովը որոշում են Սարգիս եպիսկոպոսին կաթողիկոս օծել տալ, որպեսզի Աղվանից կաթողիկոսական աթոռը թափուր չմնա նախ և երկրորդ կանխվի Իբրահիմ խանի հովանավորությունը վայելող երկու հակաթոռ կաթողիկոսների, Ամարասի վանքում նստող Իսրայելի և Երիցմանկանց վանքում նստող Սիմեոնի, ազդեցության տարածումը Ղարաբաղում։ Այս որոշումն իրագործվում է 1794 թվին Գանձակում։

Կաթողիկոս օծվելուց չորս տարի հետո, 1798 թվին, Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցում Սարգիս կաթողիկոսը իր եղբոր որդի, իր դառնությունների մատնակից ու իրենից անբաժան Բաղդասարին, որն այդ ժամանակ 23 տարեկան երիտասարդ էր սարկավագի աստիճանով, վարդապետ է օծում։

Բաղդասարի Գանձակ ապաստանելուց հետո Ղարաբաղը մեծ փորձություններ է ենթարկվում։ 1795 թվին Աղա Մահմադ խանը 45 հազար զորքով Ղարաբաղ է մտնում և մորեխի նման ամեն ինչ խժռելով ու երկրի հյութը քամելով ապշավում մինչև Թիֆլիս. այստեղ քաղաքը հիմնովին կործանելուց, բնակչությունը սրածության ենթարկելուց հետո նա նորից Պարսկաստան է վերադառնում, իր հետ բազմաթիվ գերիներ տանելով։ Բայց երկու տարի անց ներքինի այս շահի երկրորդ արշավանքն է տեղի ունենում։ 1797 թվին նա գալիս, գրավում է Շուշին և բնակիչներին հատուկ դաժանությամբ ավերածություններ ու խժդժություններ գործում։ Շուշուց նա սպառնալիքներով լի ֆերմանհրովարտակ է ուղարկում վրաց թագավոր Հերակլին, որտեղ ասվում էր.— «Այսպես է մերին մեծության հրամանը Վրաստանի գերագույն վալի Էրակլե խանին։ Թող բարձրանա քո անունը մեր արքայական բարեհաճությամբ։ Այսպես էլ իմացիր, որ ռուսների պարապմունքն ու կյանքը վաճառականություն է, մահուդ առնել-ծախելը. երբեք ոչ ոք չի տեսել, որ նրանք թուր, նիզակ կամ այլ զենք գործածեին։ Նրանք հանդգնել են մեր գրաված երկրի սահմանները մտնել։ Մեր բարձր խելքով վճռել ենք նրանց պատժել ու ոչնչացնել... Մեր այս ֆերմանը քեզ կպարզաբանե, որ մեր արքայական դռները բաց են քո ցանկությունների համար և մեր արքայական ցանկության համաձայն դու պետք է ծառայես մեզ. կամ դու, կամ քո որդիներից մեկը կատարյալ հուսով ու վստահությամբ պետք է գաք մեր արքայական դուռը և մեր բազմաչիսի շնորհներն ստանաք. եթե մերժես մեր հրամանը, թող քո կամքը լինի»*)։

*) Г. Кикодзе.—Ираклий, II, էջ 77։

Այսինքն սպառնում էր կրկնել այն, ինչ որ տեղի էր ունեցել 1795 թվին։

Սակայն Աղա Մահմադ խանի սպառնալիքն անկատար է մնում, որովհետև նա Շուշում սպանվում է իր մարդկանց ձեռքով։

Աղա Մահմադ խանի այս երկրորդ արշավանքը, ավելի քան առաջինը, աղետաբեր հանդիսացավ Ղարաբաղի համար. արշավանքի հետևանքով ժողովուրդը զրկվել էր դաշտային աշխատանքներով զբաղվելու հնարավորությունից. մյուս կողմից էլ դրան ավելացավ 1797-ի երաշտը, որ խանձեց ու չորացրեց ամեն ինչ, իսկ հաջորդ տարում վրա հասավ նաև ժանտախտը։

«60 հազար տուն հայ բնակիչներ ունեցող Ղարաբաղը համարեա թէ դատարկուեցաւ»*) Մայր պռավ դաղթականությունը. դաղթականների մի խոշոր հատված ապաստանեց Վրաստան։ Այնքան մեծ էր Ղարաբաղից Վրաստան գաղթած հայերի թիվը, որ Վրաստանի իշխան Գիորգին միջնորդություն է հարուցում Էջմիածնի կաթողիկոսության առաջ, որպեսզի Սարգիս կաթողիկոսը Վրաստան գաղթած հայերի առաջնորդ նշանակվի։ Ղուկաս կաթողիկոսը սկզբում մերժում է, բայց հետո համաձայնում է մի պայմանով, որ Սարգիսն անձամբ Էջմիածին գնա և հավաստիացնի, որ լիովին ենթարկվելու է Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, որից հետո միայն հնարավոր կլինի նրան հանձնել Վրաստանի հայերի առաջնորդության պաշտոնը։

Սարգիսն ընդունում է այս պայմանը և Բաղդասար վարդապետի հետ ուղևորվում Էջմիածին. այստեղ, Ղուկաս կաթողիկոսի կողմից նա հաստատվում է Հաղբատի վանքի վանահայրության և Վրաստան գաղթած հայերի առաջնորդության պաշտոններում։

Հետագայում, երբ Իբրահիմ խանի սպանության հետևանքով բարեպատեհ պայմաններ են ստեղծվում, Սարգիս կաթողիկոսը, երկար տարիների ակամա բացակայությունից հետո, նորից վերադառնում է Գանձասար։

1815 թվին Էջմիածնի Հոգևոր կառավարությունը Սարգսին հարկադրում է հրաժարվել «Աղվանից կաթողիկոս» տիտղոսից, որից հետո նրան տալիս է արքեպիսկոպոսության աստիճան և նշանակում Գանձասարի մետրոպոլիտ։

Սարգիս մետրոպոլիտին շարունակ զբաղեցնում էր այն միտքը, թե ո՞վ պետք է լինի իր հաջորդը. նրա միակ հույսը երիտասարդ վարդապետ Բաղդասարն էր, որն արդեն ցույց էր տվել, թե ինչպիսի ընդունակությունների տեր է, և ահա Սարգիսը Բաղդասարին Էջմիածին է ուղարկում եպիսկոպոս ձեռնադրվելու համար։

Բաղդասար մետրոպոլիտը մեկնում է Էջմիածին և 1820 թվին Եփրեմ կաթողիկոսի ձեռքով եպիսկոպոս ձեռնադրվում. այնուհետև Գանձասար վերադառնալով մետրոպոլիտության ամբողջ գործը դրեթե ինքն էր վարում, Սարգսի ծերացած լինելու հետևանքով։

Բ

Աղվանից վերջին կաթողիկոս և առաջին մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը մահանում է 1828 թվին։ Նրա մահվանից հետո Գանձասարի մետրոպոլիտության աթոռը երկու տարի թափուր է մնում, մինչև որ Ղարաբաղի մելիքների և ժողովրդի խնդրանքով Էջմիածնի կաթողիկոսը մետրոպոլիտ է կարգում Բաղդասար եպիսկոպոսին։ Ահա հենց այս ժամանակվանից էլ սկսվում է Բաղդասար եպիսկոպոսի եռանդուն գործունեությունը։

Բաղդասար եպիսկոպոսի մետրոպոլիտության ժամանակաշրջանը զուգադիպեց հայ ժողովրդի դարավոր բաղձանքին։ Դեռ Պետրոս Մեծի ժամանակից սկսած հայ ժողովրդի բաղձանքն է եղել ազատագրվել «անօրենների» անարդ լծի տակից և «մեծազոր» ու «ամենաողորմած կայսեր», ռուսաց քրիստոնյա պետության հովանավորությունը վայելել։ Ղարաբաղի ժողովուրդն ու նրա հոգևոր և աշխարհիկ ղեկավարները չանք չեն խնայել հայ ժողովրդի այդ բաղձանքն իրագործելու համար։ Եվ ահա 1826 թվի ռուս-պարսկական պատերազմի հետևանքով հայ ժողովրդի մի ստվար մասը ազատագրվել էր պարսկական բռնակալ լծի տակից. մի շարք խանություններ, դրանց թվում և Ղարաբաղը, վերջնականապես թոթափելով պարսկական դաժան լուծը, մտնել էին մեծ Ռուսաստանի հովանավորության տակ։

Ազատագրական դրոշ պարզած և ռուս մեծահոգի ժողովրդի ջերմ բարեկամ Ղարաբաղի հայության համար ստեղծվել էին խաղաղ ու ապահով աշխատանքի պայմաններ, իսկ եռանդուն ու գործունյա Բաղդասար մետրոպոլիտի համար էլ՝ գործունեության լայն ասպարեզ։

Դեռ նախքան մետրոպոլիտ կարգվելը, տակավին երիտասարդ վարդապետ Բաղդասարը ցույց էր տվել, թե որքան եռանդ ու համառություն կարող է նա ցուցաբերել իր կողմից առաջադրված խնդիրները կենսագործելու ու իր նպատակին հասնելու գործում։ 1808 թվին, Իբրահիմ խանի սպանությունից հետո, Սարգիս կաթողիկոսը իր եղ-

*) Բաֆֆի.— Խամսայի մելիքությունները, 1906 թ., էջ 225։

ռոր որդի Բաղդասար վարդապետին երբ Գանձասար է ուղարկում, անշքացած վանքը կարգի բերելու համար, ապա վերջինս Գանձասար գալով շինարարական մեծ աշխատանք կատարելուց բացի կատաղի պայքար է սկսում զանազան աղաների ու բեկերի դեմ, որոնք հափշտակել էին վանքի հարստությունները։ Բաղդասար վարդապետին հաջողվում է այդ հափշտակիչներից ետ խլել վանքի հարստությունների մի մասը։ Եվ դա դեռ այն ժամանակ, երբ նա սոսկ մի վարդապետ էր. իսկ այժմ, երբ նա մի ամբողջ վիճակի տեր էր, օժտված որոշ իրավունքներով, պարզ է, որ նա ավելի մեծ հնարավորություններ ուներ պաշտպանելու հայ եկեղեցու իրավական ու տնտեսական շահերը, որոնք շարունակ ոտնահարվել էին պարսկական խանական բռնատիրության օրերին։

Ճիշտ որ «Պէտք է մի առանձին բախտ համարել, որ այն ժամանակներում, երբ ռուսները տիրեցին Ղարաբաղին ու Երևանեան նահանգին, էջմիածնում գտնում էր Ներսէսի նման մի եկեղեցական, իսկ Գանձասարի վանքում Բաղդասար մետրոպոլիտը»*)։

Ղարաբաղի խանության վերացումից հետո դեռ մնացել էին խանականության մնացորդները. ժողովուրդը խարխափում էր տգիտության մեջ, զանազան աղաներն ու բեկերը շարունակում էին կեղեքել գյուղացիներին։ Բաղդասար մետրոպոլիտը մտահոգված էր ոչ միայն իր իրավասության տակ գտնվող վանքերի ու եկեղեցիների ինչքը հափշտակիչներից փրկելու, այլ և իր հոգևոր իշխանությանը հանձնված ժողովրդի շահերը պաշտպանելու հոգսերով։

Բաղդասար մետրոպոլիտը խորապես հավատացած էր, որ երկարատև քաղաքական ստրկության հետևանքով ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակից նրան փրկել կարելի է միայն ուսման, կրթության միջոցով։ Նա այն խորը հավատն ուներ, որ կրթությունը, գիտությունը միայն կարող են ճրագի պես լուսավորել ժողովրդի առաջադիմության ուղիները և օգնել նրան իր ծանր կացությունից ելք գտնելու։

Այս խորը հավատով էլ նա ձեռնամուխ եղավ Ղարաբաղում լուսավորության առաջին օջախի հիմնադրմանը։

Գ

1836 թվին հրապարակված Պոլոժենիեով ռուսահայության համար ստեղծվում է վեց թեմ, որոնցից մեկն էր հանդիսանում Ղարաբաղի թեմը, իր մեջ պարունակելով Շաքին ու Թալիշը։ Շուշին դառնում է Ղարաբաղի թեմի հոգևոր կառավարության կենտրոնը, իր կոնսիստորիայով։ Բաղդասար մետրոպոլիտը էջմիածին է կանչվում և հավատարմության երդում տալուց հետո, 1837 թվի հուլիսի 1-ին, կայսերական հրամանով ու Կարբեցի Հովհաննես կաթողիկոսի հաճությամբ, Ղարաբաղի թեմի առաջնորդ հաստատվում։

Եվ «Պոլոժենիէի ստեղծած նոր պայմանների մէջ սկսեց հետզհետէ կազմակերպուել Ռուսաստանի հայոց ազգային կեանքը։ Ղարաբաղի թեմում այդ պայմանների առաջին գործադրողը և հայ կեանքին ուղղութիւն տուողն էր մի նշանաւոր հոգևորական գործիչ—Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանը»*),—գրում է պատմաբան Լեոն։

Երբ Շուշին դարձավ Ղարաբաղի թեմի հոգևոր վարչության կենտրոնը, Բաղդասար մետրոպոլիտն էլ հարկադրված եղավ Գանձասարը թողնել ու Շուշի տեղափոխվել։ Չենք կարծում, որ ուրախությամբ կատարած լիներ այդ տեղափոխությունը։ Գանձասարը հարյուրավոր տարիների ընթացքում Աղվանից կաթողիկոսության աթոռանիստ վայրն էր եղել և վերջին դարում Հասան-Ջալալյանների տոհմին պատկանող մի շարք հայրենասեր կաթողիկոսներ հաջորդաբար բազմել էին նրա գահի վրա։ Գանձասարի վանքը հիմնել էր Բաղդասար մետրոպոլիտի նախահայրը և այստեղ էին մնվել ու մեծացել Հասան-Ջալալյաններից շատերը։ Գանձասարը համարվում էր Հասան-Ջալալյանների հայրենի օջախը և վերջապես Գանձասարում էր մեծացել հենց ինքը, դեռատի պատանի, հետո վարդապետ և ապա եպիսկոպոս Բաղդասար Հասան-Ջալալյանը, իսկ այժմ, որպես մետրոպոլիտ, նա ընդմիշտ պետք է թողներ Գանձասարը, որտեղ այնքան աղմկահույզ ապրումներ էր ունեցել, շինարարական մեծ աշխատանքներ կատարել։

Սակայն Շուշի տեղափոխվելուց հետո էլ նա շարունակում է իր ուշադրությունը կենտրոնում պահել Գանձասարը. այնտեղ և նրանից ոչ այնքան հեռու գտնվող Ս. Հակոբա վանքում վանական կառավարություն է հիմնում, որպեսզի իրենից հետո այդ վանքերը կանգուն մնան և չքվեն։

Շուշի տեղափոխվելով նա կազմակերպչական մեծ ընդունակություններ է հանդես բերում, ցույց տալով, որ ինքը կյանքից կտրված ու ճգնազգաց մի վանական չէ, այլ

*) Բաֆֆի.— Խամսայի մելիքությունները, 1906 թ., էջ 309։

*) Լէօ.— Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Հոգևոր Թեմական Դպրոցի, էջ 98։

ժամանակի պահանջների հետ համընթաց քայլող մի առողջամիտ հոգևորական։ Նա իր առաջ ծառացած էր տեսնում մեծ դժվարություններ, բայց երբեք չէր ընկճվում և հաստատակամ առաջ էր շարժվում դժվարությունների հաղթահարման դժվարին ուղիով։ Այդ ժամանակները Շուշում գրագետ մարդիկ ճրագով պետք էր որոնել և երբ հոգևոր կոնսիստորիայի համար անհրաժեշտ էր ատենադպիր գտնել, մնացել էին տարակուսանքի մեջ ու չգիտեին ումը հրավիրել այդ պաշտոնի համար։ Վերջապես մեծ դժվարություններով, և Բաղդասար մետրոպոլիտի անձնական միջամտությունից հետո միայն, հնարավոր է լինում գավառական դատարանում պաշտոնավարող ոմն Ավետիք Մամիկոնյանին ազատել տալ իր նախկին պաշտոնից ու հրավիրել կոնսիստորիա ատենադպիրի պաշտոնով։ Այս և սրա նման շատ դժվարություններ գոյություն ունեին, բայց դրանք անզոր էին կոտրելու նրա անմկուն կամքը։

Այստեղ պետք է նշել և այն հանգամանքը, որ Բաղդասար մետրոպոլիտը հիվանդոտ մարդ էր. տարիներով նա տառապում էր մաշող հիվանդությունից— հոդացավից. ինչպես անդամալույծի, նրան հատուկ բազկաթոռի վրա էին նստեցնում և եկեղեցական արարողությունների ժամանակ այս ու այն կողմ տանում։ Սակայն, չնայած այս տխուր իրողությանը, նա զարմանալի կորով, անսպառ եռանդ ու աշխատասիրություն էր հանդես բերում, իր անձնական օրինակով վարակելով իրեն շրջապատողներին։ Նա մեծ հեղինակություն էր վայելում և արժանացել էր ժողովրդի խորը հարգանքին։ Ինչպես ռազմի դաշտում միրավորված հրամանատարը չի լքում մարտի դաշտը և արնաքամ լինելով հերոսաբար շարունակում է կատարել իր հրամանատարական պարտականությունները, այդպես էլ գրեթե անդամալույծ մետրոպոլիտը, կամքի ուժով հաղթահարելով իր հիվանդությունը, երբեք չլքեց թեմական առաջնորդի դիրքը և աշխատեց օգտակար լինել ժողովրդին։ Նա մեծ ժողովրդականություն էր վայելում և ժողովուրդը շատ հաճախ էր դիմում նրա միջամտությանը, նույնիսկ այնպիսի վեճերի դեպքում, որոնք դուրս էին գտնվում նրա իրավասության սահմաններից։

Սակայն Բաղդասար մետրոպոլիտի գործունեության գլուխ գործոցը հանդիսանում է թեմական դպրոցի հիմնադրումը։

Ինչպես վերը ասացինք, Բաղդասար մետրոպոլիտը մեծ ուսում չուներ, բայց նա գիտեր, որ ուսումը, գիտությունը որպիսի զորեղ շարժիչ ուժ են հանդիսանում որևէ ժողովրդի հառաջադիմության համար։ Եվ եթե նա իրեն հատուկ համառությամբ պայքարի էր դուրս եկել զանազան աղա ու բեկ հափշտակիչների դեմ, ապա այդ ոչ միայն նրա համար, որ նրանցից ետ խլեր վանքապատկան կալվածքները, այլ և նրա համար, որ այդ կալվածքները նյութական բազա ծառայեցնելով ապագայում մի շարք դպրոցներ հիմներ։

Դեռ նախքան Շուշի տեղափոխվելը Բաղդասարը Գանձասարում դպրոց էր բաց արել, հանձնելով այն «գիտնական»-ի տիտղոս վաստակած Հովսեփ վարդապետին և ուրիշ դասատուների։ Բաղդասարի հիմնադրած այս դպրոցի աշակերտներից շատերը, որոնք բավականաչափ գրագիտություն էին ձեռք բերել, հետագայում քահանաներ ձեռնադրվեցին գյուղերի ու քաղաքի համար և իրենք էլ իրենց հերթին սկսեցին գրագիտությունը տարածել ժողովրդի մեջ։

1837 թվին Գանձասարից Շուշի տեղափոխվելով Բաղդասար մետրոպոլիտը ձեռնարկում է մի ավելի մեծ կուլտուրական օջախի հիմնադրմանը, իր անունը հավերժացնելով Ղարաբաղի պատմության մեջ։ Այդ օջախը 1838 թվին նրա կողմից հիմնադրված հոգևոր թեմական դպրոցն էր, որը Ղարաբաղի լեռնաշխարհի վրա բարձրացված փարոս հանդիսանալով, ավելի քան ութսուն տարի իր լուսավոր ճառագայթներն է ուղղել դեպի Ղարաբաղի բոլոր անկյունները և նրա սահմաններից դուրս շատ հեռուները։ Այդ դպրոցում տասնյակ հազարավոր աշակերտներ են սովորել, որոնցից շատ շատերը այնտեղ ստացած կայծով հետագայում գյուղական մութ խրճիթներին լույս են տվել։

Թե նյութական ինչպիսի սուղ պայմաններում էր Բաղդասար մետրոպոլիտը ձեռնամուխ եղել մի այդպիսի կենտրոնական դպրոցի հիմնադրմանը ամբողջ թեմի համար, այդ երևում է դպրոցի գոյության առաջին տարիների նյութական խիստ ծանր դրությունից։ Բայց Բաղդասար մետրոպոլիտն անդրդվելի էր, նա նահանջել չգիտեր, խորթ էին նրա համար հուսահատությունն ու հոռետեսությունը. նա հանգանակությունների է դիմում, ուսուցիչներից ոմանց, որքան գա հնարավոր էր, համոզում է քիչ ռոճիկով կամ նույնիսկ ձրիապես աշխատելու, իր սեփական միջոցներն է տրամադրում, մի խոսքով ամեն ինչ անում է, որպեսզի իր ստեղծած կրթարանը, ուսման տաճարը կանգուն մնա։

Բաղդասար մետրոպոլիտի կուլտուրական ձեռնարկումները չսահմանափակվեցին դպրոցի հիմնադրումով, նա մտահոգված էր նաև գրադարան, տպարան կազմակերպելու։

Դեռ տարիներ առաջ Բազելից Շուշի էին եկել գերմանացի միսիոնարներ, որոնք քա-

ղաքում տպարան էին բաց արել ու միսիոներական եռանդուն գործունեություն ծավալել։ Սակայն, շատ չանցած միսիոներների հավատորսության հետևանքով քաղաքում մեծ հուզմունք է առաջանում և կառավարությունը որոշում է նրանց հեռացնել Շուշուց։

Ահա այդ ժամանակները Բաղդասար մետրոպոլիտը, շատ լավ ըմբռնած լինելով տպագրական խոսքի կարևորությունը, միսիոներներից գնում է նրանց տպարանը իր բոլոր պարագաներով և թղթի պաշարով։ Տպարանի գնման համար վճարվելիք գումարի մի փոքր մասը միայն նա հավաքում է շուշեցիներից, իսկ մեծ մասը ինքն է վճարում իր սեփական միջոցներից։ Այս տպարանը երբեմն աշխույժ, երբեմն կաղալով գործում էր մինչև վերջ։ Այստեղ տպագրված առաջին գործը հանդիսանում է Շիլլերի «Շիլլիոնի կալանավորը»-ի թարգմանությունը։ Այստեղ է տպագրվել, ի միջի այլոց, նաև Գանձասարի անվանի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից» գիրքը, որտեղ հեղինակը համառոտակի պատմում է իր ժամանակաշրջանում տեղի ունեցած անցուդարձերը։

Բաղդասար մետրոպոլիտը գտնում է, որ գիտություն ձեռք բերելու համար դրադարանը նվազ անհրաժեշտություն չի ներկայացնում. այս նպատակով նա մի զգալի գումար է հատկացնում և Վենետիկի Մխիթարյանների կողմից հրատարակված բոլոր գրքերից մեկական օրինակ բերել տալիս, դպրոցին կից իր կողմից կազմակերպված դրադարանը հարստացնելու համար։

Ապա Գանձասարից, ինչպես և իր իրավասության տակ գտնված վանքերից, հավաքում է բոլոր գրչագիր մատյանները, նպատակ ունենալով հետզհետե դրանք տպագրել իր գնած տպարանում։

Բաղդասար մետրոպոլիտի կատարած կարևորագույն գործերից մեկն էլ այն է, որ նա տարիներ շարունակ խնամքով հավաքել ու կազմել է Ղարաբաղին վերաբերող ֆերմանների ու հրովարտակների մի ստվար հավաքածու, որից մասամբ օգտվել է Բաֆֆին, իր «Խամսայի մելիքութիւնները» գրելիս։

Կուլտուր-կրթական գործունեության զուգընթաց Բաղդասար մետրոպոլիտը զբաղվել է նաև շինարարությամբ։ Երբ նա Գանձասարից Շուշի տեղափոխվեց, թեմական առաջնորդի համար հատուկ շենք գոյություն չուներ և նա ստիպված էր մասնավոր շենքում բնակվել, իսկ կոնսիստորիան էլ տեղավորված էր վարձու սենյակներում։

Այս դրությունը հանդուրժել չէր կարող գործունյա Բաղդասար մետրոպոլիտը, որը ցանկանում էր սեփական պատշաճ առաջնորդարան ունենալ։ Մի որոշ գումար գոյացնելուց հետո նա կառուցում է առաջնորդարանի համար մի բավականաչափ հարմար շենք, այնտեղ տեղափոխելով նաև հոգևոր կոնսիստորիան։ Նա միաժամանակ առաջնորդարանին կպած մի բավականաչափ ընդարձակ հողամաս էլ է ձեռք բերում, նորաբաց թեմական դպրոցի համար առանձին շենք կառուցելու համար։

Մեկ առ մեկ չթվելով Բաղդասար մետրոպոլիտի կատարած բոլոր հանրօգուտ գործերը, այս համառոտ ակնարկով ուզեցինք ցույց տալ, թե ինչպիսի գործունյա, եռանդուն ու խոհուն եկեղեցական է եղել նա, մի եկեղեցական, որ ամենայն իրավամբ կարող է հայ լավագույն եկեղեցականների շարքը դասվել։

Եվ «գուցէ այդ գործունեայ, եռանդուն մարդն աւելի մեծ օգուտներ կը հասցնէր Ղարաբաղին, եթէ մի քանի տարի ևս ապրելու լինէր»*)։— գրում է նրա մասին Բաֆֆին։

Բաղդասար մետրոպոլիտը վախճանվում է 1854 թվի հունիսի 27-ին, խորը ծերության, 80 տարեկան հասակում։

«Սիրուած առաջնորդի մահը մի մեծ դէպք էր ամբողջ Ղարաբաղի համար։ Հայերի վրշտին մասնակցում էին ռուսներն ու թուրքերը։ Պատմում են, որ շուշեցիք, հակառակ կտակի, ուզում էին թաղել հանգուցեալին Շուշի, և եթէ այդ բանը չարին, պատճառն այն էր, որ անհնար եղաւ համաձայնութեան գալ, թէ որ եկեղեցում պէտք է ամփոփուէին նրա ոսկորները։ Ամբողջ քաղաքը դղրդաց այն օրը (յուլիսի 1-ին), երբ սկսուեց յուղարկաւորութիւնը Շուշուց Գանձասար։ Խաչէնի հայ աղգաբնակութիւնը հարիւրաւոր ձիաւորներ էր դուրս բերել դիակն ուղեկցելու համար։ Յուղարկաւորութեան երկար ճանապարհին հայ գիւղերն էին դիմաւորում հանգուցեալին, որ ամեն տեղ, նոյնիսկ գիւղական խրճիթներում յայտնի էր «Մետրոպոլիտ» անունով»**)։

Բաղդասար մետրոպոլիտը թաղվեց Գանձասարի վանքի գավթում, իր հորեղբայրների շիրիմների կողքին։

Շատ ու շատ տարիներ հետո, երբ 1913 թվին Ղարաբաղի թեմական դպրոցի 75-ամյակն էր տոնվում, Կովկասի բոլոր անկյուններից Շուշի հավաքված պատգամավորները ըստ արժանվույն գնահատեցին Բաղդասար մետրոպոլիտի բեղմնավոր, արդյունավետ գործունեությունը, շերմ խոսքերով վեր հանելով ու դրվատելով նրա կատարած փառապանծ ու հավերժահիշատակ գործերը։

*) Բաֆֆի.— Խամսայի մելիքութիւնները, էջ 240։

**) Լէ.— Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Հոգևոր Թեմական Դպրոցի, էջ 177։



Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՏՐԴԱՏ ԱՆԵՑԻՆ ԵՎ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ

Տրդատ Անեցին ապրել է 10-րդ դարում։ Նրա շինարարական գործունեությունը կենտրոնացած է եղել գլխավորապես Շիրակում։ Պատմիչներն առաջին անգամ այդ ճարտարապետին հիշատակում են որպես շինարար՝ Արգինայի եկեղեցիների և կաթողիկոսարանի, ապա Անիի կաթուղիկե կամ Մայր եկեղեցու։ Տրդատին են վերագրում նաև Անիում Գագիկ Ա Թագավորի կանգնեցրած հոյակապ տաճարի, ինչպես նաև Հաղբատի Ս. Նշան եկեղեցու կառուցումները։ Ասողիկի վկայությամբ՝ այդ ճարտարապետն է Կ. Պոլսում վերակառուցել հռչակավոր Ս. Սոֆիայի երկրաշարժից մեծապես վնասված գմբեթը՝ նույն ժամանակներում։ Մենք շատ հավանական ենք համարում, որ Տրդատ Անեցին 90-ական թվականներին խոշոր մասնակցություն ունեցած լինի նաև Անիում Սմբատ Բ. Թագավորի կառուցած պարիսպների շինարարության գործին։ Խոսենք մեր թված այդ կառուցումների մասին իրենց հերթականությամբ, վերստուգության ենթարկելով և կարելվույն չափ պարզելով նրանց թվականները։

Ա. ԱՐԳԻՆԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԸ

Արգինան Արևմտյան Շիրակում, Ախուրյան գետի ափին, մի ժամանակ եղել է մեծ ավան և Անիից առաջ կաթողիկոսանիստ վայր։ Վահան Ա. Սյունեցուն և Ստեփանոս Սևանցուն, նրանց կաթողիկոսության կարճատև տարիներից հետո (968—71), հաջորդում է Խաչիկ Ա. Արշարունին (973—991), որը և իր աթոռակալության առաջին տարիներում Տրդատ Անեցուն վերակառուցել է տալիս կաթողիկոսարանը և նոր կառուցում Ավագ եկեղեցին՝ հանդերձ երեք փոքր եկեղեցիներով։ Ահա պատմիչի վկայությունը.

«Եւ նորոգեաց զտուն կաթողիկոսարանին ի Շիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ... Եւ ի նմին գեօղ շինեաց զսուրբ կաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք հաստահեղոյս արձանօք գմբեթարդ խորան երկնանման հանդերձ ևս երիւք եկեղեցեօք նոյնաձև հրաշատեսակ չքնաղագեղ յօրինուածովք, և զարդարեաց մեծապայծառ, ծիրանածաղիկ, ոսկեթել անկուածովք ի զարդ ոսկւոյ և արծաթոյ և ամենայն զարդու պայծառութեան ջահաբորբոք լուսաւոր ամենեցուն...*)։

Չամչյանը գրում է այսպես. «Ուր (Արգինայում) կանգնեաց եկեղեցի վիմարդեան յօրինուածովք ի ձեռն Տրդատայ ուրումն բազմահանճար ճարտարապետի»**)։

Ի՞նչ է մնացել Արգինայում Տրդատի կառուցած այդ շենքերից, որոնց մասին կարելի լիներ մի խոսք ասել ճարտարապետի ճաշակի և կարողության մասին։ Կաթողիկոսարանից ոչ մի հետք. իսկ չորս եկեղեցիներից մնացել են միայն կաթուղիկեի հյուսիսային (այն էլ ոչ ամբողջովին) և արևմտյան պատերը, ինչպես նաև արևելյան պատի մի մասի մնացորդը։ Վերջինս ահա այդպես էլ լուսանկարված է զանազան անձնավորությունների կողմից, սկսած անցյալ դարի վերջին քառորդից մինչև մեր դարի սկզբները և այդպես էլ տպագրված է ճար-

*) Ասողիկ, Երրորդ հանդէս, Գլ. Թ։

**) Չամչեան, Բ. հ., էջ 862։

տարապետական հուշարձանների մի քանի ալբոմներում և ուսումնասիրական աշխատություններում (Ստրչիգովսկի, Թորամանյան)։ Որքան մեզ հայտնի է, ոչ ոք չի կատարել կաթուղիկեի չափագրությունը, ոչ ոք չի կազմել նրա հատակագիծը, հետևապես շատ դժվար պետք է լինի նրա չափի ու ճարտարապետական կառուցվածքի մասին մի հաստատուն խոսք ասել, բայց որքան կարելի է դատել շենքի մնացորդ պատերից, նա ունեցել է նույն Տրդատի կողմից Անիում ավելի ուշ կառուցված Մայր եկեղեցու քառանկյուն տեսքը, ավելի փոքր ծավալով։ Հետքերից երևում է, որ նա իր չորս անկյուններում ունեցել է ութ խոշոր որմնասյուներ, որոնց միացնող կամարների վրա կանգնած է եղել գմբեթը։ Եթե հյուսիսային՝ պատի վրա դուռ չի երևում, թերևս կարելի է ենթադրել, որ դուռ չի եղել և հարավային կողմից, այլ միայն մի դուռ է ունեցել արևմուտքից։ Լուսամուտներ բավական մեծ չափի եղել են հյուսիսային և հարավային պատերի կենտրոններում և մի փոքր լուսամուտ նույն պատերի աջ և ձախ կողմերում, իսկ արևմտյան կիսականգուն պատի վրա լուսամուտի որևէ հետք չի նկատվում։ Մնում է, որ մեր ճարտարապետները մասնագիտական քննության ենթարկեն այդ, ըստ ամենայնի, հետաքրքրական հուշարձանը։

Արգինայի Կաթուղիկե եկեղեցու հյուսիսային պատը՝ ներսից։

Բ. ԱՆԻԻ ԿԱԹՈՂԻԿԵՆ ԿԱՄ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս հոյակապ շենքը դարեր շարունակ գիտական աշխարհի կողմից ճանաչվել է որպես մայրաքաղաքի նշանավոր շենքերից մեկը։ Եվրոպացի ճանապարհորդները և հայ բանասերներն Անիի ճարտարապետության մասին խոսելիս ամենից ավելի կանգ են առել տրադատաշեն այս հուշարձանի վրա։ Պատմական շրջանում այս եկեղեցում են հանդիսավոր օրերին ներկա եղել Բագրատունի թագավորները և իրենց հայրապետական աթոռը Անիում հաստատած կաթողիկոսները։ Մայր եկեղեցին, որ իր կիսավեր դրությամբ մինչև այսօր էլ Անի այցելողի հիացմունքն է շարժում, գտնվում է քաղաքի կենտրոնական մասում՝ համեմատաբար ավելի մոտ Ախուրյանի ձորին։

Նախ մենք առաջ բերենք այդ շենքի կառուցման պատմությունը, ինչպես որ կա, թվենք նրա ճարտարապետական առանձնահատկությունները, ապա տեսնենք, թե վեր-

ջին ժամանակներում ի՛նչ նոր և տարբեր կարծիքներ են հայտնված Տրդատ Անեցու և նրա այս շենքի մասին, գլխավորապես թվականության տեսակետից։

10-րդ դարու վերջին քառորդին Սմբատ Բ. թագավորը, որը դահ է բարձրանում 977-ին, պատմիչների վկայությամբ, հիմք է դնում Մայր եկեղեցուն, բայց չի կարողանում ավարտել մահվան պատճառով (989-ին)։ Նրան հաջորդող եղբոր՝ Գագիկ Ա-ի կինը, Կատրամիդե թագուհին, շարունակում է եկեղեցու շինարարությունը և հաջողությամբ ավարտում 1001 թվականին։ Ժամանակակից և ականատես պատմագիր Ստեփանոս Տարոնեցին՝ Ասողիկը, Անիում Սմբատի կատարած շինարարությունների մասին խոսելիս, այսպես է գրում.

«Արկանէ հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրդինայ»*)։

Քիչ հետո, Գագիկի մասին խոսելիս, գրում է. «Այլ կին նորա Կատրամիդէ թագուհի քարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր Վասակայ Սիւնեաց իշխանի, շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք գմբեթաւորեալ, խորան երկնանման և զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ, ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց և բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որով ջահանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ»*)։

Ինքը Կատրամիդե թագուհին եկեղեցու հարավային պատին փորագրել է տվել մի ընդարձակ արձանագրություն, որն առաջ կրերենք քիչ հետո։ Մայր եկեղեցին ունի բառանկյունի ձև, արտաքին պատերի 23,64 մետր լայնությամբ և 35,53 մետր երկարությամբ, կանգնած է եռաստիճան սանդխաձև հարթակի վրա, շենքին տալով ավելի մոնումենտալ տեսք։ Դեղնավուն, կարմիր և մոխրագույն տուֆից մաքուր տաշված քարերը շարված են երբեմն իրենց բարձրությամբ, երբեմն և երկարությամբ։ Արևելյան, հյուսիսային և հարավային պատերն իրենց կենտրոնական մասերում ունեն երկուական բավականին բարձր խորշեր (նիշ), որոնք վերջանում են աղեղնաձև քանդակազարդ ծածկույթով։ Եկեղեցու չորս պատերի մակերեսներն էլ զարդարված են արևելյան և արևելյան ոճի վայելչությամբ, բարձրաբերձ կամարօք գմբեթաւորեալ, խորան երկնանման և զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ, ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց և բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որով ջահանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ»*)։

Անի. Կաթուղիկեն կամ Մայր եկեղեցին հարավ-արևելյան կողմից

*) Ասողիկ, Երրորդ հանդէս, Գլ. ԺԱ։

*) Ասողիկ, Երրորդ հանդէս, Գլ. Լ։

մրտյան կողմերում 6-ական, հյուսիսային և հարավային կողմերում 12-ական շքեղ քանդակազարդ խոյակներ ունեցող բարձր, բայց ոչ թեթև, կերոնանման որմնասյուներով և նրանց իրար միացնող որմնակամարներով։ Պատերի շուրջ ֆրոնտոններից ներս են գնում մանր սալաքարերով ծածկված թեք կտուրներ, կենտրոնում ունենալով բազմանկյուն գմբեթը, որը մոտ 850 տարի կանգուն մնալով, կործանվել է անցյալ դարի կեսերին։ Եկեղեցին ունի երեք կամարածածկ դուռ՝ արևմուտքից, հյուսիսից և հարավից. վերջինը եղել է ավելի շքեղ և կոչվել է արքայական դուռ։ Նույն կողմերում, ֆրոնտոնների տակ՝ մի մի կլոր լուսամուտ, նրանցից ցած, դռներից վերև, նույն թվով մեծ լուսամուտներ՝ քառանկյունի և երկարավուն, ապա հնգական նեղ լուսամուտներ՝ հյուսիսային և հարավային պատերին և երկուսը՝ արևմտյան ու շրջանը՝ արևելյան պատերի վրա։ Բոլոր լուսամուտները շրջանակված են շքեղ քանդակներով, իսկ նեղ լուսամուտները, բացի այդ, իրենց գլխին ունեն կիսաշրջան պսակներ։ Անշուշտ, լուսամուտներ ունեցել է և գմբեթը, եթե ոչ իր բոլոր 16 կողմերում, ապա մեջընդմեջ՝ ութ լուսամուտ, ինչպես որ այդ երևում է Տիգրան Հոնենցի եկեղեցու դեռևս կանգուն մնացած գմբեթի վրա։ Եկեղեցին իր արևելյան պատին ունի մի արծվաքանդակ և հարավային պատին՝ արևի ժամացույց, երկաթագիր այբուբենով և գրությամբ։ Այսպիսով, շենքի արտաքինը, իր կառուցվածքի թեթևությամբ, իր շինամասերի գեղեցիկ համաձայնությամբ և դեկորատիվ քանդակների նրբությամբ, թողնում է հմայիչ տպավորություն։

Այժմ մտնենք ներս։ Ի՞նչ հանգիստ վեհություն։ Արտաքինը մի պահ մոռացվում է այն զմայլելի պարզության, միևնույն ժամանակ կառուցվածքի բարդ կոմպոզիցիայի հանդեպ, ինչ որ միանգամից կլանում է դիտողի հայացքը և ինչ որ այնքան վարպետորեն կարողացել է մի ներդաշնակ ամբողջությամբ ցուցադրել հանճարեղ ճարտարապետը։ Չորս ահագին, բայց թեթև սյուն, 3 մետր ստվարությամբ, ռոմբաձև հատակագծով և կեռմանաձև (զիգզագաձև) կողմերով, սլանում են դեպի վեր, իրենց վրա ունենալով նույնքան թեթև ու գեղեցիկ կամարներ։ Այդ կամարների միացման անկյուններից բարձրանում են առաջատները՝ շրջանաձև հիմք կազմելով գմբեթի թմբուկի վրա։ Պատերին կիր եղած կիսասյուները իրենց կամարներով եկեղեցին բաժանում են երեք թևերի (նեֆ), որոնցից կենտրոնականը կրկնակի անգամ լայն է և բարձր, քան հյուսիսային և հարավային կողմերինը։ Արևելյան կողմում եկեղեցու կիսաբոլոր խորանը ներքևից բաժանված է մարդաչափ բարձրությամբ տասը խորշերի. ծայրերի խորշերից դռներ կան, որ բարե սանդուխքներով տանում են դեպի հյուսիսային և հարավային երկհարկանի կամարակապ սենյակները։ Բացի այդ, հարավային վերին սենյակից կա մի նեղ և գաղտնի անցք, որ վեր է տանում դեպի գմբեթի հիմքի մոտ գտնվող փոքրիկ սենյակները։ Եկեղեցու պատերը ներսից էլ պարզ են և ծեփված չունեն, միայն սեղանի աբսիդը ուշ ժամանակներում սպիտակ ծեփված է եղել և պատկերներ նկարված, որոնց հետքերը հազիվ երևում են։

Ո՞րն է տրդատաշեն այս հռչակավոր տաճարի ճարտարապետական արժանիքը և ի՞նչ նորություններ է մտցրել մեծ վարպետն այդ իր կառուցվածքի մեջ։

Տրդատ Անեցին, քաջ ծանոթ լինելով մինչև իր ժամանակը եղած հայ ճարտարապետական լավագույն հուշարձաններին, վերցրել է նրանցից այն, ինչ որ նպատակահարմար է համարել իր նոր ստեղծագործության, նոր կոմպոզիցիայի համար, ավելի մշակել, ավելի նրբացրել է այդ փոխառություններն իր շենքի ծավալին համեմատ և իր կողմից մտցրած նորությունների հետ միաձուլելով ստեղծել է մի գլուխ գործոց։

Ամենից առաջ հատակագծի կազմության մեջ նա շատ լայնացրել է միջին տարածությունն ի հաշիվ, ինչպես քիչ առաջ նշեցինք, և ձախ կողմերի նեֆերի։ Այս գործում նա հետևել է Սերբույքի, Քասաղի, Սղվարդի եկեղեցիներին, բայց որպեսզի իր շենքում այդ նեղ նեֆերի միջև եղած տարածությունները մութ չլինեն, ճարտարապետը հարավային և հյուսիսային պատերին բացել է մեծ լուսամուտներ, որ չունեն վերոհիշյալ եկեղեցիները։ Տրդատի այս շենքի գմբեթակիր չորս մույթերն իրենց բազմանկյունի ձևով հիշեցնում են Մրենի եկեղեցու մույթերը և իրենց բարձրությամբ ու վերջավորությամբ Արուճի որմնասյուները, բայց այստեղ ավելի նրբացած են և բոլորովին խոյակներ չունեն, այլ ունեն միայն կարնիզ, որ հետագայում մենք տեսնում ենք գոթական եկեղեցիների սյուների վրա։ Ապա ավելի ևս ուշադրության արժանի են սյուների վրա բարձրացող կամարները իրենց սլաքաձև կամ, ավելի ճիշտ, ձվաձև (ogive) կազմությամբ, որ չեն ունեցել Հայաստանում նախորդ շենքերը։

Եթե այդպես է, ուրեմն Անիի Մայր եկե-

գեցու մեջ առաջին անգամ հրևացել են գոթական կոչված ճարտարապետական ոճի էլեմենտներ։ Այս հանգամանքը չէր կարող աննկատելի մնալ հայ ճարտարապետությամբ զբաղվող արևմտյան և ռուս գիտնականների կողմից։ Եվ իրոք, մենք տեսնում ենք, որ Քեր Պորտր, Տեքսիե, Շուազի, Լինչ, Ստրչիգովսկի, Բրոնով իրենց աշխատությունների մեջ հիշատակում են այդ մասին։ Քեր Պորտրը Անիի Մայր եկեղեցին համարում է միջնադարյան գերմանական ճարտարապետության սկզբնատիպ։ Տեքսիեն գրում է, որ այն ժամանակներում, երբ կառուցվել է այդ եկեղեցին, Եվրոպայում ամեն տեղ տիրապետում էր ռոմանական ոճը, բայց այդ շենքում մենք տեսնում ենք տիպական գծեր այն ոճի, որը կարելի է գտնել Հարավային Եվրոպայում 18-րդ դարում, այսինքն սրածայր կամարներ և սյուների ծրկյակ զուգակցում։



Անի. Կարուղիկե կամ Մայր եկեղեցու արևելյան աբսիդը՝ ներսից

Լինչը իր «Արմենիա» աշխատության Ա. հատորում գրում է. (մենք բերում ենք ռուսերեն թարգմանությունից).

«Внутренность церкви замечательна с точки зрения истории и архитектуры и может вызвать восторг в любителях искусства. В ней много типично-готических черт и она может служить доказательством восточного происхождения этого стиля. Готический характер внутренности еще подчеркивается высокими заостренными арками, опирающимися на столбы»*).

Ստրչիգովսկին իր «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» աշխատության Ա հատորի մեջ Տրդատ Անեցուն անվանելով պալատական կամ արքունի ճարտարապետ (Hofarchitekt) *գրում է, որ «Անիի կաթուղիկեն կանգնած է հայկական և ռոման-գոթական ճարտարապետության սահմանագլխին»**)։*

Նորից անցնենք եկեղեցու արտաքին կողմին։

Նախ խոսենք նրա արևելյան, հյուսիսային և հարավային պատերին եղած խորշերի (նիշերի) մասին։ Հայկական ճարտարապետության մեջ այդպիսի խորշեր կան դեռ 7-րդ դարի մի քանի եկեղեցիների պատերին։ Սակայն կարևոր է նշել այստեղ մի հանգամանք, որ այսպիսի խորշերը սկզբում ունեցել են շենքի կառուցվածքային պահանջ— այն է, որ երբ այդ շենքը ներսից անկախ մույթեր չուներ, այլ ուներ նրանց դերը կատարող որմնասյուներ, արտաքին պատերի վրա այդ որմնասյուների հետևին ստեղծել են այդ խորշերը՝ քարաշարքի զանգվածությունից խուսափելու համար։ Դրա համար էլ նրանք ավելի լայն են և ոչ գեղեցիկ։ Այսպես են կառուցված, օրինակ, Էջմիածնում Հռիփսիմեի վանքը և Եղվարդում Զորավոր եկեղեցին։ 10-րդ դարում և ավելի ուշ խորշերն արդեն այդպիսի նպատակ չեն ունեցել և կառուցվել են ավելի ևս գեղեցկության համար, ինչպես որ մեր նյութը կազմող Անիի կաթուղիկեի նեղ և դեղեցիկ խորշերը։

Հռիփսիմեի 22 մետր երկարություն ունեցող պատերի վրա խորշերն ունեն 3 մետր լայնություն, մինչդեռ Անիի կաթուղիկեի 61 մետր երկարության պատերի վրա խորշերն ունեն միայն 1,5 մետր լայնություն։

Ի՞նչ է ասում այս մասին Թ. Թորամանյանը։ Նրա կարծիքը, դժբախտաբար, միատեսակ չէ։

1911 թվին լույս տեսած իր «Տեկորի տաճարը» աշխատության մեջ նա գրում է. «Հետ այս տեսությամբ. կասկածելի կը գտնեմ 7-րդ դարում հայոց եկեղեցիներու վրա գտնված խորշերը, համարելով զանոնք 10-րդ դարուն մոտ հավելվածներ, ինչպես Էջմիածնի մոտ Ս. Հռիփսիմեի վանքին խորշերը։ Հռիփսիմեի վանքին հետ միևնույն դարուն մեջ կանգնուած և իրարու այնքան մոտիկ Էջմիածնի կաթուղիկեն և Ս. Գայիանեի վանքը խորշեր չունին, եթե նույն ժամանակ խորշը ընդունված ոճ լիներ, անպայման պետք է որ գոնե Գայիանեի վանքին վրա գտնվեր Հռիփսիմեեն քանի մը տարի հետո՝ իբրև նորոգ հիմնարկուած եկեղեցի»)։*

Բազմահմուտ հեղինակը մի պահ մոռացել է այն կարևոր հանգամանքը, որ իր հիշած եկեղեցիներն իրենց մեջտեղերում ունեն 4-ական մույթեր և նրանց ճարտարապետները պետք չեն ունեցել խորշերի։ Եվ ուրեմն հեղինակի այն կարծիքը, թե 7-րդ դարում եկեղեցիների վրա գտնված խորշերը 10-րդ դարի հավելվածներ են, մենք համարում ենք միանգամայն անընդունելի, քանի որ նրանց խորշերը, ինչպես վերևում ասացինք, զուտ կառուցվածքային նշանակություն ունեն և բխում են նրանց կոնստրուկտիվ պահանջներից։ Այլապես հետին դարերում ինչո՞ւ և ի՞նչ նպատակով պետք է պատերի վրա փորեին այդ ահագին խորշերը, քանի որ 10-րդ դարում այդ եկեղեցու հիմնովին նորոգության մասին ոչ ոքի ոչինչ հայտնի չէ։

Թորամանյանը մի ուրիշ անգամ, ավելի ուշ, նորից այսպիսի խորշերի մասին խոսելիս ուղղում է իր սխալը այսպես.—

«Եռանկյուն խորշերը, որոնք ի հնումն իրենց առանձին պատճառը և կոչումն ունեցած էին շինարարական տեսակետով (ընդգծումը մերն է)... այս վերածնության մեջ (10-րդ դարի) պահանջից անկախ նաև եղել են իբրև զարդ...»**)։

«Նաև եղել են ինչպես զարդ» խոսքերն այստեղ շատ իրավացի են, որովհետև Անիի կաթուղիկեի կառուցման ժամանակվա և ավելի ուշ եկեղեցական շենքեր կան, որոնց նիշերը միայն զարդեր չէին, այլ դարձյալ բխում են վերև մշված ճարտարապետական պահանջներից, ինչպիսին են Մարմաշենը, Շիրակավանը, Հոռոմոսի Ս. Մինասը և Տիգրան Հոնենցի եկեղեցին։

Ինչպիսի՞ գմբեթ է ունեցել այս եկեղեցին

*) Լինչ.— Արմենիա, էջ 476։

**) Ստրչիգովսկի.— Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան, Ա հատոր, էջ 227։

*) Թ. Թորամանյան.— Նյութեր Հայկական հարտարապետության պատմության, էջ 216։

**) Թ. Թորամանյան.— Նյութեր Հայկ. ճարտ. պատմ., էջ 92։

և ի՞նչ ծավալ ընդհանուր շենքի համեմատության տեսակետից։ Այստեղ էլ Տրդատ Անեցին իր մեծ տաղանդը ցուցաբերել է լավագույն կերպով։ Լայն գմբեթ կառուցելու համար նա գործադրել է մի նոր միջոց։ Սակայն ավելի լավ է մենք այստեղ լսենք Թորամանյանին։ Նա գրում է. «Մայր եկեղեցիի գմբեթը կազմված էր մեր ժամանակի արվեստագիտական տեսակետով շատ հետաքրքրական և նորօրինակ ձևով մը։ Որպեսզի գմբեթի հսկա զանգվածի ծանրությունը միմիայն չորս մեծ սյուները իրարու միացնող կամարներու վրա ծանրանա, հարատարապետը, լայնացնելով անոր շրջանակի տրամագիծը, հանգչեցուցեր է ուղղակի չորս մեծ մայր սյուներու կեդրոնին վրա, մինչդեռ մեր սովորական ձևով, չորս մեծ սյուները օժանդակողի դերը պիտի ունենային։ Մայր եկեղեցիի մեջ օժանդակողի դերը մնացեր է թևերը (նեֆ) ծածկող կամարներուն, որոնք ալ նույնպես համեմատաբար ավելի զորեղ են, քան սյուներեն ձգվող կամարները»*)։ Բայց որովհետև չափավորությունը Տրդատի համար մեծագույն օրենք է, նա իր գմբեթն այնքան չի լայնացրել, ինչպես օրինակ 7-րդ դարից ունենք Ս. Հռիփսիմեն, ավելի չափազանց՝ Մաստարայի եկեղեցին, կամ 10-րդ դարում՝ Աղթամարը։ Նրա թմբուկի տրամագիծն ավելի չի, քան պատերի (գետնից մինչև ֆրոնտոնի ծայրը) կես մասը, մինչդեռ նույն բանը մենք տեսնում ենք ամբողջ պատի բարձրությամբ և նույնիսկ ավելի։ Այս է պատճառը, որ Մայր եկեղեցու բուն շենքը՝ կորպուսը ճնշված չի գմբեթի տակ, վերջինս որպես շենքի մի մասը ամբողջի հետ կազմում է մի սքանչելի ներդաշնակություն։

Ահա այս է ամփոփ նկարագիրը Տրդատի Անիում կառուցած այն կաթուղիկե եկեղեցու, որ խոշորագույն տեղ ունի գրված հայ ճարտարապետության պատմության մեջ. որպես գեղարվեստական մի մոնումենտալ ստեղծագործություն, որպես 10-րդ դարի վերածնության մի գլուխ գործոց։ Բայց վերջին տասնամյակներում առաջացել է մի նոր կարծիք այդ շենքի կառուցման ժամանակի մասին, որ իբր իր այդ կերպարանքով ու ոճով նա չի կարող պատկանել 10-րդ դարին, այլ 12—13-րդ դարերին և, իբր եկեղեցու հարավային պատի վրա եղած արձանագրությունը վերաշինության ժամանակ արտագրված է հին շենքերից։ Հարուցված այս խնդիրը վերին աստիճանի լուրջ է, և քանի որ նրա հարուցողները եղել են հեղինակավոր մարդիկ, շատ անհրաժեշտ է, որ զբաղվենք այդ խնդրով։

Բայց այդ մասին մեր խոսքն ասելուց առաջ այստեղ բերենք նույն այդ արձանագրությունը

«Ի ՆՈՒ Հայոց ՄԺԹ թ. Հոռոմոց Բենիամին գրէ
ի ժամանակս ածապատիւ և հոգևոր տեառն Սարգ
սի Հայոց կաթողիկոսի և մեծափառ թագաւ
որութեան Գագկա Հայոց և Վրաց շահանշահի
ես Կատրանիդէ Հայոց թագուհի դուստր Վասակա
Սիմեաց թագաւորի յողորմութիւն Աստուծոյ ապաւ
ինեցա և հրամանաւ առն իմո Գագկա շահանշահի
շինեցի զսուրբ կաթողիկէս զոր էր հիմնադրեալ
մեծին Սմպատա և կանգնեցաք տուն Աստուծոյ նորոգ
և կենդանի ծնունդ հոգևոր արձան մշտ
նջենաւոր զարդարեցի եւ զարդիւք պատուակ
անաւք նուէրք ինձ ի Քրիստոս և զարմից իմ և որդոց
Սմպատայ Աբասա և Աշոտո Հրամայեալ եմ ես տէր
Սարգիս սպասաւորաց եկեղեցոյս յետ ելից բա
ռեպաշտ թագուհոյս զվարդաւարին յիս.
նեակսն միով քառասնիւ կատարել անխափան
մինչև ի գալուստն Քրիստոսի եթէ ոք զարձանագր
եալդ անփոյթ առնէ դատապարտեալ եղիցի ի Քրիստոսէ
վեց ՌՆԼ և Գ ամացն Ադամա ի Ռ և ԲԺ ամի մար
մնանալոյ Աստծոյն բանի ՁԸԺ ամի հաւատալոյ ի Քրիստոս
Հայոց գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ ԲԵՆԷ»**)։

*) Թ. Թորամանյան.— Նյութեր Հայկ. ճարտ. պատմ., էջ 275։

**) Այս արձանագրությունն առաջին անգամ լուսատիպ նմանությամբ տպագրված է Ն. Մառի «ԱՆԻ» մեծածավալ աշխատության մեջ (1934), տախտակ LVI, նկար 206։

Այդ արձանագրությունը զանազան ժամանակներում և զանազան մարդկանց կողմից վերծանված և արտագրված է ոչ ճիշտ։ Ոմանց կողմից (Շահխաթունյան, Էմին, Ալիշան, որոնցից և առնելով Կ. Կոստանյանցն իր «Վիմական Տարեգրում») առաջին տողի ՆԾ-ին (որը 1001 թվականն է) կցել են թվին Հայոցի Թ-ն և, հետևապես, կարդացել են ՆՄԹ (1010). այս սխալը միանդամ ընդմիշտ պետք է ուղղել։

Առաջին տողի վերջում արձանագրող վարպետը փակագիր է գործածել, և վերծանողները, չկարողանալով բաց անել այդ փակագիրը, նրա տեղ դրել են բազմակետեր և անցել։ Այդ փակագրերը վերջին տարիներում բաց է արված մեր բանասիրության կողմից («Անահիտ», 1931 թ., 1—2), որ է՝ Բենիամին գրէ: Արձանագրության վերջում «գրեցաւ... ի ձեռն իմ Բենէ», նույն Բենիամինի անվան հիշատակությունն է կրճատ ձևով։

Վերջին տողերի մեջ եղած թվականներից առաջինը՝ Ադամի թվականը, ոչ ուշադիր վերծանման հետևանքով ընդունել են ՃՆԼԳ, մինչդեռ պարզ կարդացվում է ՎԾՅ ՌՆԼԳ (6433). ուղիղ են կարդացել Բրոսսեն և Էմինը։ Երկրորդը՝ Քրիստոսի թվականի մեջ (Ռ և ԲԺ) վերջին երկու տառերը հակառակ են գրված արձանագրողի կողմից, անշուշտ պետք է լիներ Ռ և ԺԲ, որ է 1012։ Երրորդը՝ Հայոց քրիստոնեության տարիները հաշվում է Չ և Ժ, այսինքն 710 տարի։ Ուրեմն քրիստոնեության մուտքը Հայաստան ընդունել են ոչ թե 301, այլ 302 թվականը (710+302=1012)։

Եզրակացությունն այս է, որ Կատրամիդեի արձանագրությունը գրված է եկեղեցու շինարարությունն ավարտելուց 10—11 տարի հետո. այնտեղ առաջին տողում հիշատակված է այդ ավարտման թվականը (1001), իսկ վերջին տողերում գրության թվականը։

Մենք այս հանգամանքը բացատրում ենք այսպես։ Եկեղեցու բուն շինարարությունն ավարտելուց հետո տարիներ պետք է անցնեին, որ Կատրամիդեն կարողանար, ինչպես ինքն է ասում, զարդարել «զարդիւք պատուականաւք», ապա պատրաստել տային զմբեթի գլխին դրվելիք ահագին արծաթյա խաչը և Հնդկաստանից ստացվեր ներսում կախելու համար բյուրեղյա մեծարժեք ջահը։

Տրդատ Անեցու այս հոյակապ ստեղծագործության մասին, սրա կառուցման թվականի մասին առաջին անգամ կասկած է հայտնել անցյալ դարի 70-ական թվականներին ռուս գիտնական Ն. Կոնդակովը, ապա 90-ական թվականներից այս կողմը Ռուսաստանում այս տեսությունը ավելի զարգացրել են ուրիշ գիտնականներ։

Այժմ մենք մի առ մի թվենք բոլոր պատճառաբանությունները և նրանց յուրաքանչյուրի մասին ասենք մեր խոսքը։

1. Հիմնական ռեստավրացիայի խնդիրը։ Եթե իրոք, եկեղեցին 12—13 դարերում հիմնական ռեստավրացիայի կամ, ավելի լավ է ասել, ռեկոնստրուկցիայի ենթարկված լիներ, ապա այդ վերաշինությունը կատարողները (Զաքարյանների շրջան) մի՞թե շենքի վրա մի տեղ չէին արձանագրի այդ մասին, թեկուզ իրենց անունն անմահացնելու համար, ինչպես որ 1213 թ. միայն սանդուխքները վերանորոգող Տիգրան Հոնենցն ունի իր արձանագրությունը։ Կամ այդ ի՞նչ տեսակի վերանորոգում է, որ շենքի պատերն էլ են նորը շինել ու այդ նոր պատերից մեկի վրա իբր արտագրել են Կատրամիդեի նախկին շենքի վրա եղած արձանագրությունը։ Դա ավելի շուտ կլիներ հին հատակագծի վրա նոր շենք կառուցել, ոչ թե ռեստավրացիա։

2. Վրաց թվականի խնդիրը։ Մենք չկարողացանք հասկանալ, թե ի՞նչ վրացական թվական են տեսել վերև հիշված շատ հարգելի գիտնականները մեզ արդեն ծանոթ արձանագրության մեջ։ Այնտեղ կա ՄԺԹ հոռոմոց թվական, այսինքն բյուզանդական։ Եվ Անիի եկեղեցին միակը չէ, որ ունի այդպիսի թվական, նրանից առաջ և նրանից հետո սովորություն է եղել վիմական արձանագրությունների մեջ երբեմն հիշատակել Բյուզանդիայի ժամանակակից կայսրին իր թվականով։ Այսպիսի հիշատակություններ կան, օրինակ, Արուճի, Մրեանի, Կեչառուքի շենքերի վրա։ Եթե ՄԺԹ-ն նույնիսկ ընդունենք վրաց թվական, Գագիկ Ա-ի օրով, դա անընդունելի չի կարող համարվել, քանի որ նույն արձանագրության մեջ նա ինքը կոչված է «Հայոց և Վրաց շահնշահ»։ Բայց ավելի հետաքրքրականն այստեղ այն հակասությունն է, որ նկատելի է դառնում ուշադիր ընթերցողի համար։ Ո՞րն է այդ աղաղակող հակասությունը. այն, որ եթե Կատրամիդեի արձանագրությունը արտագրված է նույնությամբ, ապա ուրեմն «վրաց» թվականն էլ պատկանում է այն ժամանակին, իսկ եթե ըստ հիշյալ գիտնականների այդպիսի թվական կարող էր Հայաստանում գործածվել միայն 12—13-րդ դարերում, ապա ուրեմն, դուրս է գալիս, որ արձանագրությունն արտագրելիս ավելացրել են այդ թվականը։ Այդ արդեն բոլորովին ընդունելի չէ։

3. Օրնամենտացիայի խնդիրը։ Առարկություն կա, որ Մայր եկեղեցու արտաքին պա-

տերի քանդակաշարքերը, մանավանդ նիշերը պսակող շքեղ զարդաքանդակները իրենց ոճով և բնույթով չեն կարող 10-րդ դարի գործ լինել, նրանք ավելի սաղական են 12—13-րդ դարերին, թեև ասում են, «այդ քանդակների մոտիվների մեջ կան 10—11-րդ դարերի որոշ հետքեր»։

Այժմ մենք համեմատության առնենք Անիի եկեղեցու շինության ժամանակակից և նույնիսկ ավելի վաղ կառուցված մի քանի շենքեր, որոնք գրեթե նույն տեսակի և բնույթի օրնամենտներ ունեն իրենց պատերի նույն տեղերի վրա։

ա. Լուսամուտների գլխին կիսաբոլորակ և երկթև քանդակազարդեր,—տեսնել Արուճի և Թալինի կաթուղիկեների և Պտղնիի եկեղեցու վրա (7-րդ դարի շենքեր), Շիրակավանի եկեղեցին (9-րդ դար) և Աղթամարի Ս. Խաչը (10-րդ դար)։

բ. Քանդակաշարը պսակված խորշեր (նիշեր) մենք ունենք Շիրակավանում, Հոռոմոսում։

գ. Որմնասյուները միացնող զարդաքանդակ կամարներ,— ունենք Արթիկում (7-րդ դար)։

4. Առարկություն կա արտաքին կիսասյուների կամ որմնասյուների բարակ և ձգված լինելու մասին և թե ինչո՞ւ նրանք կենտ-կենտ են և ոչ զույգ-զույգ, ինչպես որ սովորական են եղել իր ժամանակին։ Ինչ վերաբերում է բարակ և երկար լինելուն, դա ճարտարապետի նուրբ ճաշակին պետք է վերագրել, որ հիմք էր դնում մի նոր վերածնության, իսկ ոչ զույգ-զույգ լինելու մասին նկատողությունը ճիշտ կլիներ, եթե այդպիսի որմնասյուները դաղարած լիններ այլուս. մինչդեռ մենք այդպիսի օրինակներ ունենք և հետագա դարերի շենքերում։ Արթիկի եկեղեցու վրա (7-րդ դար) կան և կենտ և զույգ որմնասյուներ, իսկ Մարմաշենի, Ամբերդի, Հովվի (Անիի) եկեղեցիները և Կեչառուքի կաթուղիկեն, որ կառուցված են տրդատաշեն տաճարից հետո, դարձյալ ունեն զույգ որմնասյուներ։

5. Քարերի ավելի կատարյալ տաշվածքը և նրանց գույների խաղը, որ իբր չէր կարող այդպես լինել 10-րդ դարում։ Եթե նույնիսկ ուրիշ օրինակներ չբերենք, բավական է, որ մենք Անիում նայենք նույն 10-րդ դարում Սմբատ Բ-ի կառուցած պարիսպներին, որոնց թե գերազանցորեն մաքուր տաշվածքը և թե քարերի գույների երանգները (նյուանսներ) շատ տարբեր չեն Մայր եկեղեցու քարերի և տաշվածքի երանգավորումներից։

6. Շաղախի ամրությունը: Առարկություններից մեկն էլ այն է, որ 10-րդ դարում չէր կարող այդպիսի ամուր շաղախ գործածվել. այդ ավելի սաղական է հաջորդ դարերին։ Մենք մասնագետ չենք ցեմենտի հատկությունը քիմիապես որոշելու համար։ Թե որքան է այս առարկությունը հիմնավոր, թող պատասխանեն մասնագետները, բայց եթե ամուր ցեմենտ գործածելն սկսվել է միայն 12—13-րդ դարերում, այդ ինչպես է, որ իրենց «թույլ» ցեմենտով գեռևս կանգուն են մեր 7-րդ դարի բազմաթիվ հուշարձանները։

7. Կատրամիդեի արձանագրությունը պալեոգրաֆիկ տեսակետից: Առարկություն կա, որ այդ արձանագրության տառերը իրենց գրաֆիկայով, իրենց ձևով չեն կարող 10-րդ դարի լինել, նրանք, ուրեմն, պատկանում են 12—13-րդ դարերին։ Մեր վիմական արձանագրությունների մեջ յուրաքանչյուր դար իրեն հատուկ և հաստատուն գրության ձևերը չունի. այդ կախված էր արձանագրող վարպետի գեղագիտական ճաշակից և որոշ տառերի մեջ, ինչպիսիք են Շ, Ծ, Ջ, Հ, գծագրական նորություններ մտցնելուց։ Մեծ տարբերություն չունեն, օրինակի համար, 7-րդ դարում Ներսեհ Կամսարականի (Թալին), 11-րդ դարում Հովհաննես Սմբատի (Հոռոմոս) և Վեստ Սարգսի (Խծկոնք) արձանագրությունները Կատրամիդեի արձանագրությունից, տեխնիկայով և իրենց տառերի գրությունների տեսակետից։

Ահա սրանք էին այն առարկությունները, որոնք Անիի Մայր եկեղեցու կառուցման թվականը, ամբողջ երկու դար և ավելի, իբր պետք է շարժեն իր տեղից։

Ի՞նչ կարծիք ունի այս խնդրի մասին հայ ճարտարապետության պատմության հմուտ մասնագետ Թ. Թորամանյանը։ Դժբախտաբար, նա միատեսակ և կայուն կարծիքի չէ։ Մայր եկեղեցու թվականը 2—3 դար շարժող վերևում հիշված հեղինակավոր անձնավորություններից կարծես թե ճնշվելով, Թորամանյանը երերվում է իր խոսքերի մեջ և մի քանի տեղ հակասում է ինքն իրեն։

Իր «Տեկորի տաճարը» աշխատության մեջ (1911 թ.) նա թույլ է տվել իրեն մի խոշոր լապսուս, Անիի կաթուղիկեն համարելով 9-րդ դարու վերջերի կամ 10-րդ դարու սկզբների շենք*)։ Իր մի ուրիշ աշխատության մեջ հեղինակն ընդունում է, որ Անիի կաթուղիկեն շինված է 10-րդ դարի վերջերում կամ 11-րդ դարի սկզբներին**)։

1930—1932 թ. ընթացքում դրած իր մի աշխատության մեջ հեղինակը նույն կաթու-

*) Թ. Թորամանյան.— Նյութեր Հայի. ճարտ. պատմ., էջ 187։

**) Նույնը, էջ 93-94։

ղիկեի կառուցումը վերագրում է 10-րդ դարի կեսին*), իսկ գմբեթը 11-րդ դարի սկզբին**)։

Իր «Ներածություն պատմական հայ ճարտարապետության» խիստ արժեքավոր հոդվածի մեջ Թորամանյանն ընդունում է, որ Անիի կաթուղիկեի ճարտարապետը Տրդատն է***), իսկ մի ուրիշ աշխատության մեջ՝ վերևը դարձյալ նշելով, որ նույն կաթուղիկեն հիմնարկողը Տրդատն է, ներքևում ծանոթության մեջ գրում է. «Համոզվելու շատ պատճառներ կան, որ Մայր եկեղեցին շինված չէ Տրդատի ձեռքով. Արգինայի եկեղեցին և ուրիշ մնացորդները բավական մեծ ապացույցներ կուտան մեզի այս մասին։ Մայր եկեղեցին Տրդատի հատուկ ոճեն դուրս վերածնության նոր շրջան մը բացած է Անիի և շրջակայից մեջ, որմե ետքը շինվող բոլոր շինությունները պարզ հետևողություններ են Մայր եկեղեցիի ոճին»****)։

Ինչպես տեսնում ենք, մեր շատ հարգելի մասնագետն այստեղ իրեն զգում է կախարդական շրջանակի մեջ և չի կարողանում դուրս գալ։ Եթե Մայր եկեղեցին «վերածնության նոր շրջան մը բացած է» ու հետագայում բոլոր շինությունները պարզ հետևողություններ են նրան, ու վերածնությունն, ըստ հեղինակի, սկսվել է 10-րդ դարից, ապա պարզ է, որ կաթուղիկեն էլ կառուցված է նույն այդ դարում և կառուցողն եղել է Տրդատ Անեցին, ինչպես որ վկայում է ժամանակակից և ականատես պատմիչ Ստեփաննոս Ասողիկը։

Ուրեմն, մենք կարծում ենք, միանգամ ընդմիշտ պետք է թողնել Անիի կաթուղիկեի թվականը տեղից շարժելու և մինչև 12—13-րդ դարերը հասցնելու փորձերը, հանգիստ թողնելով հանճարեղ Տրդատ Անեցուն իր փառքի ու մեծության մեջ։ Եվ եթե արևմտյան անվանի մասնագետ գիտնականները, այդ շենքը հիմք ընդունելով, դրանում են. որ «գոթական» կոչված ճարտարապետական ոճը, թեկուզ իր էլեմենտար ձևերով, Եվրոպայից առաջ երևացել է Հայաստանում 10-րդ դարում, իզուր չի՞ մեր հակաճառությունն այդ կարծիքի դեմ։

Շատ ուրախալի է, որ ՍՍՌՄ-ի Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի հրատարակությամբ 1939 թվին լույս տեսած «Архитектура древней Армении» լուսատիպ հրատարակության մեջ Անիի Մայր եկեղեցու լուսանկարի տակ իրավացիորեն գրված է 10—11-րդ դար։

Գ. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆԻՈՒՄ

Իր հատակագծով և եռահարկանի կազմությամբ Զվարթնոցի եկեղեցուն հար և նման այս նշանավոր տաճարի ավերակները, ինչպես հայտնի է, երևան եկան Ն. Մառի ջանքերով 1905 թվականին։ Գագիկ Ա թագավորի կանգնեցրած այս փառահեղ շենքի կառուցումը տևել է 14 տարի. հիմքը դրվել է Մայր եկեղեցու ավարտման տարում և վերջացել 1015 թվականին։ Մենք չենք տալու այս հոյակապ հուշարձանի ճարտարապետական նկարագիրը այն պարզ պատճառով, որ նրա անունը Տրդատ Անեցու հետ կապված լինելու հարցը դեռևս շատ խնդրական է։ Ոչ պատմիչների և ոչ նոր ժամանակների մասնագետների կողմից որևէ հիշատակություն չկար մինչև այժմ, որ Գագկաշեն տաճարի կառուցումը պատկանում է Տրդատ ճարտարապետին։ Ասողիկի պատմության նախավերջին գլխում (Իէ) «Յաղագս շինելոյն Գագկայ արքային ի քաղաքին Անւոյ զեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի» վերնագրի տակ մի քանի տողում խոսվում է այդ տաճարի շինության մասին։ Այդպես էլ կրկնված է պատմիչի այլ ձեռագիր օրինակների ու տպագրությունների մեջ։ Բայց ահա Երևանի Պետ. Մատենադարանում Ասողիկի մի ձեռագիր օրինակում, գրված 1567 թվին, մեր առաջ բերած վերնագրի վերջում ուշադրության է առնվել երեք նոր բառ, այն է «Տրդատ վարդապետ եկեղեցոյն»։ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի հրատարակությամբ լույս տեսած Թ. Թորամանյանի մեծ հատորում առաջին անգամ այս հայտնությունը մի ծանոթության մեջ տպագրելով, կազմողը (Կ. Ղաֆադարյան) գրում է. «Կարծում ենք, որ Տրդատի անունը ձեռագիրն արտագրողը չի ավելացրել, որովհետև դա մի կեղծիք կլիներ, որի նրմանները նա արած պիտի լիներ նաև ձեռագրի այլ մասերում, որ չկա։ Ընդհակառակը, հավանական է, որ այդ անոմը Ասողիկի Պատմության հին օրինակներն ունեցել են, բայց հետագայում ավելորդ համարվելով հանվել է, որովհետև Հայաստանում սովորություն է եղել հիշատակելու ոչ թե

*) Թ. Թորամանյան.— Նյութեր Հայկ. ճարտ. պատմ,. էջ 318։

**) Նույնը, էջ 208։

***) Նույնը, էջ 68։

****) Նույնը, էջ 275։

կառուցող ճարտարապետին, այլ կառուցել տվող իշխանին կամ թագավորին»*)։

Այս տողերը անհավանական չէին կարող լինել, եթե չլիներ այն խոշոր անաքրոնիզմը, որ երևում է Ասողիկի Պատմության վերջին գլուխներում։ Պատմիչն իր պատմությունը վերջացրել է, ինչպես ինքն է գրում, ՆԾԳ թվին, այսինքն 1004-ին, երբ տաճարի հիմնարկեքից անցել էր միայն երեք տարի. այդ ի՞նչպես է, որ նույն պատմիչը նկարագրում է շենքը համարյա թե վերջացրած դռներով, լուսամուտներով, նույնիսկ «սքանչատես տեսլեամբ գմբեթատրեալ», որը կարող էր լինել միայն 1015-ին։ Պարզ է, որ Ասողիկի Պատմության վերջին գլուխները հետագայում ուրիշների կողմից փոփոխության են ենթարկված և, ուրեմն, ավելացված նաև Տրդատի անունը։ Այս պատմիչի ձեռագիր օրինակների մեջ «անհարազատ հավելվածներ» մտած լինելու մասին իր ժամանակին նշել են հմուտ բանասերներ*)։

Թ. Թորամանյանը գրում է հակառակը. «Անիի Ս. Գրիգորը շինող ճարտարապետը, ինչ որ ըլլա պատճառը, միշտ մեղադրելի պիտի մնա իր ունեցած անհնատեսության մեջ, որ ոչ միայն հրաբխային ավազուտ քարերով, այլ և ապառաժի կտորներով խառնված զանգվածով մը ծանրաբեռներ է գմբեթակիր սյուներու կամարները։ Այս պարագան ինձի իրավամբ առիթ կուտա մտածելու, որ Անիի Ս. Գրիգորի ճարտարապետը ոչ միայն մեզ ծանոթ... Անիի Կաթուղիկեն հիմնարկող Տրդատը չէր, այլ միևնույն ժամանակ Կաթուղիկեն կառուցող ճարտարապետին հսկողությանն ալ հեռու էր Ս. Գրիգորը»**)։

Համենայն դեպս այս խնդիրը մենք չենք լուծում այստեղ, այլ թողնում ենք առկախ, մինչև հետագայում հարցն այս կամ այն կերպ պարզող նոր փաստերի երևան գալը։

Դ. ՀԱՂԲԱՏԻ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Միջնադարից մեր օրերը հասած նյութական կուլտուրայի այս հուշարձանը, ինչպես և նրանից ոչ շատ հեռու Սանահնի Ամենափրկիչը, ըստ պատմական վկայությունների, կառուցել է տվել 10-րդ դարի երկրորդ կեսին Աշոտ Գ. թագավորի կինը՝ Խոսրովանույշ թագուհին։ Ոչ առաջինի և ոչ երկրորդի ճարտարապետի մասին որևէ պատմական տեղեկություն չի հանդիպել մեզ, սակայն, հայտնի չէ, թե ինչ աղբյուրից առնելով, Բրոսսե և Գրիմ գիտնականները գրում են, որ Հաղբատի Ս. Խաչ (չնասում Ս. Նշան) եկեղեցու կառուցողը եղել է նույն ինքը Տրդատ ճարտարապետը։ Այս բանը հետագայում կրկնել են Ա. Երիցյանը և Հ. Ստրշիգովսկին։ Եթե իրոք Հաղբատի Մայր տաճարը կառուցել է Տրդատ Անեցին, ապա նա կառուցել է ավելի վաղ, քան Արգինայի և Անիի կաթուղիկեները, այն է 960-ական թվականներին (Ասողիկ)։ Այս հուշարձանը ոճի տեսակետից, իր լայնարձակ և գլանաձև գմբեթով, մեզ թվում է, իր դարով ավելի է խնդրական, քան Տրդատ Անեցուն վերագրվող նախորդ շենքը։

Ե. Կ. ՊՈԼՍԻ Ս. ՍՈՖԻԱՅԻ ԳՄԲԵԹԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Տրդատ Անեցու մասին մեր խոսքը վերջացնենք, տալով նրա ճարտարապետական մի հանճարեղ գործի նկարագիրը հայրենիքից դուրս։

989 թվին, երբ Բյուզանդիայի կայսերական գահի վրա նստած էր Վասիլ Բ Բուլղարասպանը, Կ. Պոլսում տեղի է ունենում ուժեղ երկրաշարժ, որի հետևանքով ճաքում և մեծապես վնասվում է բյուզանդական ճարտարապետության պարծանք, հռչակավոր Այա Սոֆիայի գմբեթը։ Երկրաշարժը պատահում է օգոստոսի 15-ին։ Մինչև հետևյալ 990 թվիը տեղական ճարտարապետները դժվարանում են նորոգության ձեռնամուխ լինել, վերակառուցել 35 մետր տրամագիծ ունեցող այդ ահարկու գմբեթը։ Եվ ահա նույն ժամանակում Կ. Պոլսում գտնվելով Տրդատ Անեցին հանձն է առնում այդ ծանր և խիստ պատասխանատու աշխատանքը և պատվով կատարում, այնպես որ մինչև այսօր էլ գմբեթը մնում է ամուր և անսասան։ Այս վերին աստիճանի կարևոր տեղեկությունը մեզ տալիս է ժամանակակից հայ պատմիչը—Ստեփանոս Տարոնեցին՝ Ասողիկը։ Ամենից առաջ մենք լսենք նրան։

*) Թ. Թորամանյան.— Նյութեր Հայկ. ճարտ. պատմ., էջ 276։

*) Տես «Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ 1885 թ., Ստ. Մալխասյանի հառաջաբանով։

**) Թ. Թորամանյան.— Նյութեր Հայկ. ճարտ. պատմ. էջ 275։

«ի սոյն ամի, որ էր ի Նիզ Թվականին, Նիզակաւոր աստղն կրկին անգամ երևեցաւ... և զկնի սակաւ աւուրց շարժեցաւ աշխարհն Յունաց ահաւոր դղրդմամբ, մինչև կործանել բազում քաղաքաց, գիւղից և գաւառաց... մինչև ի նոյն ինքն ի Թագաւորական քաղաքին Կոստանդինոպոլիս մեծաշուք և բազմապայծառ զարդ հրաշատեսիկ սեան և պատկերաց և եկեղեցեաց մեծամեծաց կործանեալ փլուզանիւր և նոյն ինքն Սոֆիայն, որ կաթողիկէն է, հերձանիւր պատառամամբ վերուստ ի վայր։ Վասն որոյ բազում ջան եղև արհեստաւոր ճարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել։ Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ կաղապարոյ կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելոյ, որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»*)։

Ասողիկի տված այս տեղեկությունն ընդունում են և հաստատում ճարտարապետության պատմությամբ զբաղվող գիտնականները։

Մեր մասնագետներից Թ. Թորամանյանը գրում է.

«Արդ՝ միթե Տրդատ չգերազանցե՞ց Անթեմիուսն ու Իզիտորը, Ս. Սոֆիայի գմբեթին տալով մշտնջենական անսասանություն և պայծառություն քան զառաջինն։ Որ միևնույն ժամանակ հայ ճարտարապետն իր հայրենի երկրի արվեստի դիրքը գրավ առնոր վրա, անուղղակի կերպով կխոստովանեն մեզ ժամանակակից քննող մեծ արվեստագետներն ոմանք։ Կհավատանք, թե գմբեթի կիսագունդի տակ իբրև խարիսխ դրված ցածրիկ թմբուկը վերջին նորոգության ժամանակ ավելացած մաս է, նախկին գմբեթները չունեին այդ թմբուկը, և արդեն գրեթե մինչև 8-րդ դարու վերջն ալ անծանոթ էր այդ ոճը Բյուզանդիոնին, անոր ալ արմատը պետք է Հայաստանի մեջ փնտռել։

Ս. Սոֆիայի ահավոր գմբեթին վերաշինությունը, Տրդատ նախորդ ճարտարապետներեն ավելի գերազանց կատարելությամբ դուրս բերելեն հետո, այլևս ի՞նչ կասկած կմնա, որ անիկա Հայաստանի մեջ ալ կարող էր նույնօրինակ հսկա ծրագիրներ ի կատար ածել, եթե Սմբատներու և Գագիկներու դանձարաններուն մեջ բյուզանդական հարստություն գտնվեր։ Շիրակի փոքրիկ թագավորներու և թագուհիներու համար ի՞նչ օգուտ ուներ գիտնալ, թե Տրդատ մեծագործություններ արտադրելու համար ստեղծված հազվագյուտ հանճար էր, երբ միջոցներ չըպակսեին այդ հանճարին իրականություն տալու. բնականաբար Տրդատի անունն այ անհետ ու անհիշատակ պիտի կորսվեր, եթե դիպվածով չկործանվեր Ս. Սոֆիայի գմբեթը և անոր վերաշինությամբ չանմահանար հայ արվեստագործությունը՝ հանձին Տրդատ ճարտարապետի*)։

Տրդատ ճարտարապետի փառքը, նրա մեծությունը հենց նրա մեջ է, որ նա հանդիսանում է 10-րդ դարի հայ ճարտարապետության վերածնունդի պարագլուխ՝ որպես հանճարեղ արվեստագետ. նա միջնադարում ներկայանում է շինարարության խոշորագույն վարպետներից մեկը, գուցե և ամենից ավելի նշանավորը։

Տրդատ Անեցին—դա հայ ճարտարապետության Գրիգոր Նարեկացին է։

*) Ասողիկ, Գլ. ԻԷ։

*) Թ. Թորամանյան.— Նյութեր Հայկ. ճարտ. պատմ., էջ 74-75։

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Երվանդ Շահազիզ

Որքան հիշում եմ, ես մի հիվանդոտ երեխա էի, հիվանդ ջերմով, ջրջրուկով և փորահարինքով։ Երբ մայրս ինձ լողացնել էր ուզում, ես փախչում էի, բայց նա էլի զոռով բռնում ու լողացնում էր։ Իմ փախչելու պատճառն այն էր, որ նա ինձ լողացնում էր շատ տաք ջրով, իսկ գլխիս ջրջրրիկի վերքերին էլ մի դեղ էր քսում, որը շատ էր ցավեցնում։ Թե այդ ի՞նչ դեղ էր, ես չգիտեի. հետո միայն իմացա, որ անդիկ է եղել. փորահարինքիս էլ ոչ մի դեղ չէր օգնում, իսկ ջերմս, որ մերոնք «դողէրոծք» էին ասում, հետագայում իմացա, որ տենդ է եղել (մալարիա)։ Մորս ասելով, այդ հիվանդություններից ես մի ժամանակ այնպիսի վիճակի եմ հասած եղել, որ երեսս ծածկել ու մի կողմն են դրել, իբրև անհույս։

Ինձ բժշկում էին տնային, պառավական դեղերով, իսկ երբեմն էլ հրավիրում էին հեքիմ Մկրտիչին կամ Հովհաննեսին, որոնք այն ժամանակ Երևանի ամենահայտնի բժիշկներն էին համարվում։ Սրանցից առաջինի, հեքիմ Մկրտիչի, խորհրդով մայրս, ջրփոխության համար, ինձ տարավ Սուրմալու գավառի Բլուր գյուղը*)—մորապապոնցս տունը, որտեղ ես մնացի մի ամառ ու մի ձմեռ և դոմջակոլերի սեր ու կարագով, լիակուրծ կովերի շաքարի պես անուշ կաթ ու մածնով այնքան կազդուրվեցի, որ մայրս հնարավոր համարեց ինձ էլ Մոսկվա ուղարկել, Լազարյան ճեմարանում ուսանելու համար, ուր, հորեղբորս՝ Սմբատ Շահազիզ-

*) Բլուր գյուղը գտնվում է Սուրմալու գավառում, որը առաջ պատկանում էր Ռուսաստանին և միայն 1920 թվին անցավ Թուրքիայի ձեռը։ Այս գյուղի կալվածատերը եղել է մելիք Մինաս Կամսարականը, որը իրեն կոչում էր Արշարունյաց տեր։ Սա մի քանի որդիներ է ունեցել, որոնցից մեկն էր Օհան աղան։ Վերջինս ունեցել է մի արու զավակ՝ Ղազար անունով և մի դուստր՝ Վարդ խաթուն անունով։ Ղազարը մանուկ հասակում վախճանվել է, իսկ Վարդ խաթունը ամուսնացել է երևանաբնակ Նախիջևանցի ունևոր վաճառական Զաքար Բոյախչյանի հետ։ Այս ամուսնությունից էլ ծնվել է մի աղջիկ զավակ՝ Թելլու անունով, որն ամուսնացել է աշտարակցի Հովակիմ աղա Շահազիզ-Կամսարականի հետ։ Ահա հենց այս Հովակիմն իմ հայրն էր, իսկ Թելլուն իմ մայրը։

յանցի պատվերով, արդեն ուղարկել էր ինձնից մեծ երկու եղբայրներիս և ինձ էլ պիտի ուղարկած լիներ, բայց հետաձգել էր հիվանդությանս պատճառով։

Թեև դեռ իսպառ չէի բուժվել, սակայն իմ Մոսկվա գնալը այլևս հետաձգել չէր կարելի, քանի որ տեղս կարող էր ուրիշը գրավել, իսկ տարիքս էլ անցնում էր, ես արդեն 14 տարեկան էի և այնքան էլ գիտություն չունեի, որ քննությամբ համապատասխան դասարան ընդունվեի։

Լազարյան ճեմարանում ինձ քննեցին ու տեսան, որ գիտությունս պակաս է. բայց ներողամիտ գտնվեցին ու նստեցրին առաջին դասարանում, ասելով թե Շահազիզյաններից է, աշխատասիրությամբ կըհասնի իր ընկերներին։ Այո՛, հասա և մինչև անգամ էլ դասարանս փոխեցի, բայց ինչպիսի՜ համառ ու ծանր աշխատանքով...։ 1871—72 ուսումնական տարին էր։

Թեև Մոսկվա գալուց հետո, հենց առաջին տարում էլ իմ բոլոր հիվանդությունները բուժվել էին, բայց անընդհատ ու շատ պարապելուց բոլորովին ուժից ընկել, նվազել էի և կարիք էի զգում մի լավ հանգստանալու, մի հանգամանք, որ հորեղբայրս էլ էր նկատել և մայիսին, տարեվերջի քննություններից հետո, պատվիրեց ուսանող մեծ եղբորս, որպեսզի ինձ իր հետ ամարանոց տանի քաղաքից ոչ շատ հեռու գտնվող Բոգորոդսկ գյուղը ու այնտեղ էլ հսկի իմ առողջությանը։

Այդ գյուղը հանգստանալու համար ուներ բոլոր հարմարությունները,—և՛ մաքուր օդ ու ջուր, և՛ խիտ անտառներ, և՛ գետ՝ լողանալու համար, և՛ առատ կաթնասունդ, և՛ քաղաքի հետ կապող հարմար ճանապարհ (ձիաքարշ)։

Մեր ամարանոցը գտնվում էր գյուղի ծայրին և նրա առաջ փռված էր մի լայնարձակ դաշտ։ Ամարանոցը տեղավորված էր ընդարձակ հողամասի վրա. այս հողամասի փողոցը եզերող մասում շինված էր մի սիրուն ամարանոց, իսկ ներսում, բակում էլ երեք փոքր ամարանոցներ, բաղկացած միջակ մեծության մեկական սենյակներից ու նախասենյակներից։ Շինությունները փայտյա էին, թե՛ բակինները և թե՛ փողոցի վրայինը։ Ես ու եղբայրս ապրում էինք փոքր ամարանոցներից առաջինում։ Հանգիստ ու դուրեկան էր, եթե չլիներ ճպուռների երաժշտությունը, գիշերային պահապանների շխշկացնելը տախտակների վրա և առավոտյան շատ կանուխ ամարանոցների բակերն այցելող բանջարավաճառների և պտղավաճառների զիլ ձայները, որոնց ես սովոր չէի։

Ահա հենց այստեղ էլ ես առաջին անգամ տեսա Ստեփանոս Նազարյանցին, որն իր ընտանիքով ամարանոց էր եկել և տեղավորվել փողոցի վրա շինված սիրուն ամարանոցում։ Նրա ննջարանը և պարապմունքի սենյակները գտնվում էին վերին հարկում, իսկ ընտանիքը տեղավորված էր ցածի հարկի սենյակներում։

Այստեղ Ս. Նազարյանցի կենսագրության վերաբերյալ մի քանի համառոտ տեղեկություններ ենք տալիս, մեր հուշերը ընթերցողների համար ըմբռնելի դարձնելու նպատակով։

Ստեփանոս Նազարյանցը ծնվել է Թիֆլիսում 1812 թվին, խոյից գաղթած Տեր-Եսայի քահանայի ընտանիքում։ Նա իր միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, իսկ բարձրագույնը՝ Դորպատի համալսարանում։ 1844-ին կարգվել է արևելագիտության ադյունկտ Ղազանի կայսերական համալսարանում, որտեղ և ստացել է մագիստրոսի ու դոկտորի գիտական աստիճանները։ 1849 թվին փոխադրվել է Լազարյան ճեմարանը, ուր դասավանդել է պարսկերեն ու արաբերեն լեզուները։ 1869 թվին հրավիրվել է Ներսիսյան դպրոցը՝ տեսչի պաշտոնով. այստեղ նա պաշտոնավարել է միայն երկու ուսումնական տարի, որից հետո վերստին վերադարձել է Լազարյան ճեմարանը։ Սրբ ճեմարանի արևելյան լեզվաց «ալիկեոն կամ մասնագիտական դասարաններ» կոչված բաժինը 1872 թվին վերածվել է արևելյան լեզվաց բարձրագույն դպրոցի, համալսարանական իրավունքներով, Նազարյանցն էլ այդ լիկեոնում դասախոսել է պարսից լեզուն ու գեղագրությունը մինչև իր մահը, որը տեղի է ունեցել 1879 թվի ապրիլի 26-ին։

Հանուրին հայտնի «Հիւսիսափայլ»-ի հիմնադիր ու հրատարակիչ Ստեփանոս Նազարյանցը, իր գործունեությամբ, հանդիսացել է յուր դասընկեր Խաչատուր Աբովյանի լուսավորչական գործի շարունակողն ու զարգացնողը, արժանահիշատակ Միքայել Նալբանդյանի հետ միասին։

Այս համառոտ կենսագրական տեղեկություններից հետո դառնանք մեր հուշերին։

Նազարյանցը ամեն օր ամարանոցից գընում էր քաղաք և ճաշին վերադառնում, իսկ կիրակի և տոն օրերին մնում էր ամարանոցում։ Այդ ժամանակները նա երբեմն դուրս էր գալիս զբոսնելու կամ ամարանոցի ընդարձակ բակում, կամ էլ գնում էր անտառը, գյուղի այն կողմում, որտեղ գտնվում էր երաժշտության ուսուցիչը։ Ես համարյա միշտ հանդիպում էր նրան և կանգնելով պատկառանքով բարևում, գլուխ էի խո-

նարհում։ Մի կիրակի օր էլ, երբ Նազարյանցը զբոսնում էր բակում, ես դարձյալ իմ սովորական բարևը մատուցի նրան. նա մոտեցավ ինձ և հարցուփորձ արեց, թե ո՞վ եմ ես և Ճեմարանի ո՞ր դասարանումն եմ սովորում. երբ ես երևանյան մաքուր բարբառով պատասխանեցի նրա հարցմունքներին ու նա իմացավ, որ Սմբատ Շահազիզյանցի եղբոր որդին եմ, շատ ուրախացավ, ձեռքս բռնեց, իր մոտ քաշեց, գլուխս շոյեց և ճակատս համբուրեց. ապա տեսնելով որ ես արդեն հասած տղա եմ և կարող եմ իր գրքերը կարդալ ու հասկանալ, խոստացավ ինձ կարդալու գրքեր տալ։ Մյուս օրը, առավոտյան նրա աղախինը ինձ համար երկու գիրք բերեց— «Պոզ և Վերգինէ»-ն և «Հանդէս նոր հայախօսութեան»-ի առաջին հատորը. սրանցից առաջինն արդեն ինձ ծանոթ էր, իսկ երկրորդի անունը լսել էի, բայց դեռ չէի կարդացել։

Սկզբում, նրան հեռվից դիտելով, ես այն տպավորությունն էի ստացել, որ նա խիստ ու զայրացկոտ մարդ պետք է լինի, իսկ երբ մոտիկից զննեցի ու խոսեցի հետը, նա իմ աչքին երևաց իր իսկական պատկերով ու կերպարով։ Նա բարձրահասակ, թավ հոնքերով, խիտ ու սև մազերով, դուրեկան ու խոսուն աչքերով, թխագույն դեմքով և կզակի տակը թողած տարօրինակ մորուքով մի համակրելի մարդ էր։

Տարիներ անցան... ես մեծացա, բարձր դասարանները հասա և սկսեցի մեծ սիրով զբաղվել ընթերցանությամբ։ Վեցերորդ դասարանի աշակերտ էի, ընթերցանությունը ինձ համար դարձել էր օրվա կերակուրի նման մի բան, անխտիր կարդում էի ամեն մի գիրք, որը դուրս էր գալիս հայ մամուլի տակից ու ընկնում ձեռքս։ Հատկապես սիրում էի հայ գրականությանը վերաբերող հրատարակությունները, բայց այդպիսիք շատ չէի գտնում, դրա համար էլ մտքումս դրի Նազարյանցին խնդրել իր ռուսերեն գրածները այս մասին։ Ես նրան դարձյալ հաճախ հանդիպում էի— լիկեոնի փոքր դռնից իջնելով մեծ միջանցքը նա իր քայլերն ուղղում էր դեպի գրասենյակ. ես առաջվա նման բարևում էի նրան, բայց նա, ըստ իր սովորության, քայլում էր գլուխը կախ, մտազբաղ, նոթերը կիտած և չէր նայում իր շրջս կողմը։ Նա հավանորեն մոռացել էր ինձ, իսկ ես էլ քաշվում էի անհանգստացնել նրան։ Սակայն, մի օր քաջություն եկավ վրաս, ես մոտեցա նրան, կանգնեցրի ու խնդրեցի ցանկացածս— «Беглый взгляд на историю Гайканской письменности до конца XIII столетия» և «Обозрение истории Гайканской письменности с XIV столетия до новейшего времени» (т. е. до 1840 г.):

Նա կարծես թե քնից արթնացած, գլուխը բարձրացրեց և տեսնելով ինձ իր առջևը կանգնած, հարցրեց.—

— Ի՞նչ ես ուզում։

Ես կրկնեցի գրվածքների անունները և ավելացրի.

— Ստեփանոս Իսայիչ, ներողամիտ եղեք, ես ուզում եմ կարդալ ձեր այդ գործերը, բայց ոչ մի տեղ չեմ գտնում դրանք։

— Հրաշք է,— ասաց նա զարմացած և, ըստ իր սովորության, աչքերը բաց ու խուփ անելով,— այսքան տարի է ես այստեղից անցուդարձ եմ անում ու տակավին ճեմարանի աշակերտներից և ո՛չ մեկն այդպիսի խնդիրքով ինձ չէր դիմել։ Ո՞վ ես դու։

Ես նրան ասացի իմ ով լինելու մասին և հիշեցրի Բոգդրոդսկ ամարանոցը։

— Հա՜, դու Երվանդ Շահազիզյանցն ես, մեծացել ու շատ փոխվել ես, չճանաչեցի։ Գրվածքներս կտամ հորեղբորդ և նա կտա քեզ, ես հաճախ եմ լինում իմ հավատարիմ Սմբատի մոտ։ Ապրի՛ս, զորանա՛ս։ լավ օշախի զավակ ես,— այս ասելով նա սեղմեց իմ ձեռը։

Հենց որ այս տեսան իմ ընկեր աշակերտները, իսկույն ճեմարանում լուր տարածվեց, թե Նազարյանցը սեղմել է Երվանդ Շահազիզյանցի ձեռքը։ Հորեղբայրս ժպտով հանձնելով ինձ խնդրածս գրվածքները, հայտնեց թե Նազարյանցը շատ է հավանել մեր նոր գրական լեզվով իմ խոսելը և հատկապես բառերի մաքուր արտասանելը ու ցանկանում է, որ իր մահից հետո ես հայ լեզուն սովորեցնեմ իր դեռևս ծծկեր երկու երկվորյակ աղջիկներին։

Երբ ես բավականաչափ հասունացել էի, հորեղբայրս պատվիրեց ինձ կիրակի ու տոն օրերին իր մոտ ճաշելու գնալ. այս հանգամանքը բնականաբար նպաստում էր, որպեսզի ես հաճախ հանդիպեի Նազարյանցին, որը նույնպես այդ օրերին հաճախ լինում էր հորեղբորս մոտ ու ճաշում նրա հետ միասին։ «Հիւսիսափայլ»-ի օրերն անցել էին, տաք պայքարը սառել էր, և բոլոր հրատապ խնդիրները լուծվել էին հօգուտ «Հիւսիսափայլ»-ի որդեգրած ու պաշտպանած գաղափարների, բայց դեռ մնում էր ձեռք բերված հաղթանակները ամրապնդելու, զարգացնելու ոչ պակաս դժվարին գործը, որի համար հարկավոր էր նոր բերան, նոր թերթ։

Նազարյանցն ահա այդ ժամանակներն էլ հենց զբաղված էր այդ խնդիրներով. նա մտածում, պատրաստություն էր տեսնում հրատարակելու «Լապտեր Հայաստանի»-ն և

հաճախ այցելելով իր գաղափարակից ու հավատարիմ Սմբատին, խորհրդակցում էր նրա հետ այս մասին։ Այդ օրերին ես նրան տեսնում էի մերթ ուրախ, ծիծաղը դեմքին, մերթ տխուր, հուսահատ և մինչև անգամ մերթ էլ արտասվելիս։

Նստում էինք ճաշելու. թեև հորեղբորս անունը «գաստրոնոմ» էին դրել, բայց իրոք նրա սեղանը շատ պարզ էր և ոչ բազմախորտիկ. նա ուտում էր մի պնակ ջրեղեն, մի պնակ մսեղեն կերակուր ու մի բաժակ էլ լավ գինի էր խմում. նրա պահանջն էր, որ մթերքները միայն թարմ լինեն։ Ճաշին սովորաբար խոսում էր Նազարյանցը, հորեղբայրս միայն պատասխանում էր նրա հարցերին և կամ իր կարծիքն էր հայտնում։ Ես, իհարկե, չէի խառնվում նրանց խոսակցությանը, այլ միայն լուռ լսում էի նրանց ասուլիսը։

Մի անգամ, այդ Նազարյանցի ուրախ օրերից մեկն էր, նա ասում, խոսում, ծիծաղում էր ճաշին. մեկ էլ հանկարծ նստած տեղից բարձրացավ և գինու բաժակը վերցնելով խմեց իմ կենացը ու հարցրեց՝ թե թուրքերեն հասկանո՞ւմ եմ արդյոք. ես պատասխանեցի, որ քիչ-միչ հասկանում եմ և նա թուրքերեն մի ոտանավոր ասաց, որի խոսքերը մինչև օրս էլ միտս է, չեմ մոռացել, որովհետև մանկությանս օրերին էլ լսել էի այդ նույն ոտանավորը իմ մորատատ Վարդ խաթունից։

Արազա սալղրմ թեշդի,
Արազ բուլբնդի, գեշդի.
Արազ, գյալ, իսպաթ էյլա,
Հանսը դյունըմ խոշ գեշդի։

Թարգմանությունը.—

Արազը ձգեցի լվացքակոնքս,
Արազը պղտորվեց, անցավ գնաց.
Արազ, արի ապացույց տուր,
Ո՞ր մի օրս լավ անցավ գնաց։

Ոտանավորը ավարտելուց հետո ձեռքը դրեց իմ ուսին և խոսքը հորեղբորս ուղղելով ավելացրեց.

— Սա՛ էլ մեր ճամբով պիտի գնա և մեր վիճակին տիրանա, սակայն, ես խորին հույս եմ տածում, որ մեր տառապանքն էլ, շուտ թե ուշ, վերջ կունենա։

Մի ուրիշ անգամ էլ ես ներկա գտնվեցի նրանց վիճաբանությանը մեր նոր լեզվի հայցական հոլովի շուրջը։ Նազարյանցը, մեր նոր լեզվի հայցականը համարելով անորոշ և, ըստ ամենայնի դժվար, առաջարկում էր, ուղիղ ու ստույգ գործադրության համար, ընդունել գրաբարի զ-ով հայցականը, ինչպես որ ընդունված է արևմտահայ նոր գրական լեզվի մեջ։ Հորեղբայրս առարկում էր դրան. նրա կարծիքով ոչ մի կամայականություն չպետք է մտցվեր կենդանի լեզվի մեջ, քերականության կանոնների վրա հենվելով, այլ պետք է նոր լեզուն խստիվ պահպանվեր այնպես, ինչպես որ նա կա։ Մեր նոր լեզվում զ-ով հայցական չկա,—ասում էր նա,— և պետք է ուրեմն ղեկավարվել այն օրենքներով, որոնք գոյություն ունին և որոնց մեջ ոչ մի անորոշություն էլ չկա։ Ու այսպես երկար վիճում էին նրանք։

Նազարյանցի տխուր օրերն էին. «Վապտեր Հայաստանի»-ն հրատարակելու առթիվ նրա արած դիմումին բացասական պատասխան էր տրվել։ Նա մոլորված ու շատ վհատած անդադար հարցնում էր.

— Սմբա՛տ, ի՛մ պատվական բարեկամ, ի՞նչ պիտո է առնել, ի՞նչ...։

Նրա այս հարցումին հորեղբայրս մխիթարական մի պատասխան էր տալիս միայն, թե վհատելը փոքրոգություն է. մյուս կողմից նա հուսադրում էր Նազարյանցին, ասելով թե «Հիսիսփայլ»-ը հաստատուն ու անկեղծ շատ բարեկամներ ունենալով հանդերձ, ուներ նաև կատաղի թշնամիներ, որոնց բողոքները անկասկած ազդել են այս անգամ պետական պաշտոնյաների վրա և, ուրեմն, պետք էր սպասել, որ այդ ամենը հնանա, մոռացվի։

— Այո՛, մինչև որ հնանա... Մենք էլ իսպառ կհնանանք,— ասում էր նա, հասկացնել ուզելով, որ ինքը այդ ժամանակ թերևս կենդանի էլ չլինի։

Նազարյանցի երկու հոդվածը, որ նա գրել, պատրաստել էր «Վապտեր Հայաստանի»-ի համար, նրա մահից հետո տպագրվեցին Մոսկվայի «Գրականական և պատմական հանդես»-ի 1888 և 1889 թվերի դրքերում։ Դրանք էլ «Հիսիսփայլ»-ում տպագրվածների բնույթի հոդվածներ էին։ Մենք չենք հիշում, որ դրանցից հետո նա այլևս նոր բան գրած լիներ։ Նա շատ վհատած էր, սրտաբեկ, հուսահատ և հազիվ թե կարողացած լիներ շարունակել իր գրական աշխատանքները։

Նազարյանցը իր այդ ծանր օրերին շարունակում էր դարձյալ հաճախել հորեղբորս մոտ, որտեղ ես առաջվա պես հանդիպում էի նրան։ Մի օր էլ տեսա նրան հորեղբորս տանը արտասվելիս, այո, դառն արտասվելիս. նա հայտնեց, որ իր տանը ընտանեկան գժտություն է պատահել և ինքը չկա-

ողանալով հանդուրժել, թողել է տունը ու ապրում է կահավորված վարձու սենյակում։ Ինչպես հայտնի է, Նազարյանցը ամուսնացել է երկու անգամ, սակայն, երկու ամուսնությունն էլ անհաջող են եղել։ Առաջին անգամ, դեռ իր ուսանողության տարիներին, նա սիրել է մի գերմանուհու և նշանվել։ Դորպատի համալսարանն ավարտելուց հետո Նազարյանցը ուղևորվում է Պետերբուրգ, ուր նրան հաջողվում է աղյունկտ կարգվել Ղազանի կայսերական համալսարանում, բայց նախքան Ղազան մեկնելը նա վերադառնում է Դորպատ, պսակվում իր նշանածի հետ և ապա կնոջ հետ միասին 1844 թվին փոխադրվում Ղազան։

Նազարյանցի այս ամուսնությունը թեև տեղի էր ունեցել սիրո հողի վրա, բայց հետագայում նա տեսել ու համոզվել է, որ կինը, իր կրթությամբ ու սրտի հարազատությամբ, իրեն համապատասխան չէ, որի համար էլ դժգոհել է։ Երբ Նազարյանցի այս կինը հիվանդոտ լինելու հետևանքով շուտով վախճանվում է, նա, առանց խրատված լինելու առաջին ամուսնության անհաջողությունից, շտապում է ամուսնանալ իր տան բոննայի հետ, որը բոլորովին համապատասխան չէր նրան, ո՛չ կրթությամբ և ո՛չ էլ վարք ու բարքով։ Այսպիսով, առանց խորհելու, կապվելով Միննա Եգորովնայի հետ, Նազարյանցը սկիզբ է դնում իր նոր դժբախտության, որից փրկվել նա չէր կարող նույնիսկ տանից փախչելով։

Ծանր էր հորեղբորս վիճակը, ի՞նչպես մխիթարել նրան։ Մեզ անհայտ է, ի՞նչ է արել նա, բայց հայտնի է, որ Նազարյանցը շուտով վերադարձել է իր տունը և տեր կանգնել իր երեխաներին։ Այնուհետև Նազարյանցը և հորեղբայրս այլևս չէին խոսում այս մասին և եթե խոսում էլ էին, համենայն դեպս ոչ իմ ներկայությամբ։

Նազարյանցը շատ աշխատասեր էր. իր հույսը կտրելով մի նոր թերթ հրատարակելու համար արտոնություն ստանալուց, նա իր բոլոր աշխատանքը կենտրոնացնում է լիկեոնում, որտեղ, ինչպես ասացինք, 1872 թվից սկսած նա հանդիսանում էր պարսից լեզվի ու գրականության դասախոսը (գեղագրության հետ միասին)։ Նազարյանցի պատմելով շատ ծանր ու դժվարին աշխատանք է պահանջվել այդ առարկայի ուսուցման գործը նորմալ հոսանի մեջ դնելու համար. չեն եղել ոչ բառարաններ, ոչ քերականության ձեռնարկներ, ոչ ոսկեփորիկներ (քրիստոմատիա) և ոչ էլ գեղագրության օրինակներ. այս ամենին պետք է փոխարիներ միայն և միայն ինքը՝ պրոֆեսորը։ Եթե այս բոլորին ավելացնելու լինենք նաև արաբական տառերի ընթերցանության ու գրության դժվարին յուրահատկությունները, և այն, որ ուսանողները մեծ մասամբ գիմնազիա ավարտած ռուս տղաներ էին, միանգամայն անծանոթ արևելյան լեզուներին ու գրության եղանակներին, ապա հասկանալի կդառնա Նազարյանցի կրած նեղությունները և գործի անմխիթար արդյունքը։ Իր պատմելով, սակայն, այս նեղությունները նա կրել է աշխատանքի առաջին տարիներում և հատկապես առաջին կուրսում, իսկ երբ հետզհետե հիշյալ բացերը վերացվել են. գործը հաջող է ընթացել և ինքն էլ իր աշխատանքից գոհ է մնացել։

Ստեփանոս Նազարյանց

Ուսանողները սիրել ու գնահատել են նրան. նրանք մեծ բավականությամբ են ունկընդրել նրա դասախոսությունները գրականության մասին. նրա ճոխ լեզուն, հռետորական ձևով խոսելը, Շահ-Նամեից հատվածներ արտասանելը գրավել է բոլորին։ Մենք այստեղ ավելորդ չենք համարում մի դեպք մեջ բերել, որ լսել ենք նրա ուսանողներից և որը ցույց է տալիս թե որքան սեր ու հարգանք էր վայելում նա իր ուսանողների շրջանում։ Դեպքը տեղի է ունեցել ա-

ռաջին կուրսում, 30 ուսանողի ներկայությամբ. Նազարյանցը գրատախտակի վրա գեղագրության մի օրինակ գրելու ժամանակ, ըստ իր սովորության ծռմռվել է, աշխատելով՝ ըստ հնարավորության օրինակը գեղեցիկ դուրս բերել, որովհետև նա պիտի ուսանողների գրության համար ընդօրինակելի հանդիսանար։ Նորեկ ուսանողներից մեկը, տեսնելով նրա զվարճալի ծռմռվելը, փրոթկացրել է. այդ ժամանակ նա շուռ գալով դեպի ամբիոնից շրջված ուսանողը, ասել է... «Милостивый государь. Вы дурак»։ Ջուր է մաղվել բոլոր ուսանողների վրա, բայց ոչ ոք բողոքի ծպտուն չի հանել։ Ընդհակառակը, ուսանողները իրենց ընկերոջը ստիպել են, որ գնա և ներողություն խնդրի պրոֆեսորից։ Նազարյանցը ասել է.

— Այո՛, ձեր արածն անքաղաքավարություն էր, բայց ես էլ չպետք է ասեի ձեզ այն խոսքը, ներում եմ, բարեկամ լինենք,— այս ասելով սեղմել է ուսանողի ձեռքը, մի վարմունք, որ է՛լ ավելի է բարձրացրել նրա պատիվը ուսանողների շրջանում։

Մեր աշակերտության օրերին մենք լսել ենք Նազարյանցի մի ճառը և մի դամբանականը։ Ճառի մասին մենք խոսել ենք մեր մի ուրիշ հուշերում, այստեղ միայն կվերհիշենք, որ Լազարյան ճեմարանում, պարսից Նասրեդդին շահի ներկայությամբ, Նազարյանցի պարսկերեն արտասանած ճառը հնչեց որպես մի մեղեդի։ Շահը դժվարանում էր հավատալ, որ խոսողը պարսիկ չէ, այլ հայ է։ Դամբանականը Նազարյանցը խոսեց Մոսկվայի Ս. Խաչ եկեղեցում, իր վաղեմի բարեկամ և մեր էլ կրոնուսույց Տեր-Հարությունի Քյուրքչյանի*) դագաղի վրա։ Նրա հագին ժամաշապիկ կար, նա քարոզ խոսելու սովոր էր դեռ իր աշակերտության օրերից։ Ինչպես հայտնի է, Ներսիսյան դպրոցում սովորություն կար աշակերտներին եկեղեցի ուղարկել, ժամաշապիկ հագած բեմ բարձրանալու և քարոզ խոսելու համար։ Դամբանականի բովանդակության մանրամասնությունը մոռացել եմ, այնքանը միայն լավ հիշում եմ, որ նա մեռյալի հետ այնպես էր խոսում, ինչպես մարդ խոսում է իր առջևը կանգնած կենդանի մարդու հետ. հիշում եմ նրա երեք անգամ կրկնած մնաս բարյավները և հետևյալ խոսքերը.—«Դու, Տեր-Հայր, 20 տարի մոմ վառեցիր, խունկ ծխեցիր այս Ս. Տաճարի մեջ և ինքդ էլ վառվեցար 20 տարի իբրև մոմ ու ծխեցար իբրև խունկ»։

Հիշում ենք նաև լիկեոնի ուսանողների և գիմնազիական դասարանների աշակերտների մասնակցությամբ ճեմարանում տեղի ունեցած մի ներկայացում, որի կազմակերպմանը եռանդագին մասնակցություն ցույց տվեց և Նազարյանցը։ Որոշված էր պարսկերեն, լատիներեն ու հայերեն (գրաբար) լեզուներով մեկական գործողությամբ թատերախաղ ներկայացնել. դրանց կազմակերպումը հանձնարարվել էր— պարսկերենինը՝ Նազարյանցին, լատիներենինը՝ լատին լեզվի ուսուցիչ դանիացի Տորլանգեին, իսկ հայերենինը՝ ավագ աշակերտներին։ Նազարյանցը պարսկերենի համար նյութ էր ընտրել Սաադի Մուսլեհեդդին Շեյխի «Գյուլիստանը», Տորլանգեն՝ «Պլավտը», իսկ աշակերտները՝ Հակոբ Կարինյանի «Վարդանանց պատերազմը», որի ձեռագիր տեքստը այդ ժամանակ գտնվում էր ավագ աշակերտ Խալաթյանցի մոտ։

Ընդհանուր փորձը, որ տեղի ունեցավ ճեմարանի վերատեսուչ Ն. Դ. Դելյանովի և տեսուչ Գ. Ե. Քանանյանի ներկայությամբ, ցույց տվեց ձեռնարկած գործի հաջողությունը։ Ներկայացմանը ներկա էր ընտիր հասարակություն— լիկեոնի պրոֆեսորական կազմը, գիմնազիական դասարանների ուսուցչական կազմը, համալսարանի ռեկտորը, քաղաքի պաշտոնական անձինք և այլն։ Այս ներկայացման ու նրա հաջողության մասին գրվեցին նույնիսկ լրագրերում*)։ Բայց ներկայացման ունեցած հաջողությունը ամենից շատ ուրախություն էր պատճառել Նազարյանցին, որը խաղարկությանը մասնակցող ուսանողների հետ միասին ասում, խոսում ու զվարճանում էր։ Ես նկատեցի, որ նրա վարմունքը ուսանողների հետ, ըստ սմենայնի, ընտանեկան ու հայրական էր։ Մի բան էլ ինձ զարմացրեց, այդ այն էր, որ նա Տորլանգեի հետ խոսում էր լատիներեն։

Նազարյանցը արտաքուստ առողջակազմ էր երևում և այնքան էլ ծեր չէր։ Նրա ծննդյան թվականը թեև համարվում է 1812-ը,

*) Քյուրքչյան Տեր-Հարությունը Նոր-Նախիջևանի էր և Ալամդարյանի աշակերտ։ Մահից հետո, մի կարճ ժամանակով, սա ճեմարանում մեր կրոնուսույցն էր. թեև մի առանձին գիտության տեր չէր, բայց հմուտ էր եկեղեցական կանոններին և պատարագելու առանձնահատուկ շնորհք ուներ, որի համար էլ վայելում էր Մոսկվայի հայ գաղութի հարգանքը։ Միքայել Սալանթյանը, ծերության հետևանքով իր պաշտոններից հրաժարվելուց հետո, մի առժամանակ ապրել է վերջինիս տանը ու նրա մոտ էլ թողել իր թղթերը։

*) Այս ներկայացմանը մասնակցողների նկարները կախված էին ճեմարանի հյուրասենյակում, բայց թե հետագայում ինչ եղան, մեզ հայտնի չէ։

բայց դա ստույգ չէ։ Նորիրս հայտնաբերվել է մի վավերական, որից պարզվում է, որ նա ծնվել է ոչ թե 1812 թվին, այլ 1814-ին։ Համենայն դեպս, լինի նա ծնված 1812 կամ 1814 թվին, արտաքուստ զառամյալ չէր երևվում։ Ճիշտ է, վերջին տարիները նրա գըլխով անցածները որոշ չափով ազդել էին նրա հոգեկան ու մարմնական կացության վրա և նա է՛լ առաջվա Նազարյանցը չէր, բայց դեռ տակավին զվարթ ասում, խոսում, դատում էր և եռանդով գործում լիկեոնում։

1879 թվի ապրիլի 24-ին հորեղբայրս այցելության էր գնացել հիվանդ Նազարյանցին, որը նրան հայտնել էր «թե մի փոքր մրսել է, բավականին սաստիկ հազում է և չորս օր է, որ տանից դուրս չի եկել»։ Հորեղբայրս երեք ժամ նստել էր հիվանդի կողքին ու զրուցել հետը. նրա հիվանդությունը շրջապատողներին այնքան էլ վտանգավոր չի թվացել, քանի որ նա առողջ դատում ու խոսում է եղել։ Ինչպես հետո նրա տանեցիք հաղորդել են հորեղբորս, ապրիլի 25-ին, երբ հայ բարեկամներից ոչ ոք էլ չի եղել նրա մոտ, երեկոյան ժամը 10—11-ին թոքերի բորբոքումը սաստկացել է ու գիշերվա ժամը չորսին էլ վրա է հասել մահվան տագնապը և դեռ արշալույսը չծագած նա ավանդել է հոգին։

Ապրիլի 26-ին տարածվեց անակնկալ բոթաբեր լուրը և ամենքի վրա էլ ծանր, ճնշող տպավորություն թողեց. բոթը հասավ նաև ճեմարան և ինչ ասել կուզի, որ այստեղ նույնպիսի, գուցե և ավելի, ծանր տպավորություն թողեց։ Ես ութերորդ դասարանի աշակերտ էի և պատրաստվում էի ավարտման քննություններին. ընկերներիս ցանկությամբ վազեցի հորեղբորս մոտ ու վերը հիշված կրճատ տեղեկությունները բերի։

Մահվան լուրը առաջին հերթին և շատ կանուխ տանից հաղորդել էին եկեղեցու երեցփոխ և հանգուցյալի վաղեմի ու մտերիմ բարեկամ Մելքոն Փանյանին*), որը իսկույն գնացել ու հոգացել էր ամեն հարկավորը։ Դագաղը բերվել ու դրվել էր եկեղեցում. ամենքը գնում էին Նազարյանցին դագաղում տեսնելու։ Ես էլ ընկերներիս հետ գնացի. եկեղեցում շատ մարդ չկար, դագաղը դրված էր եկեղեցու մեջտեղը ու կիսով չափ ծածկված մետաքսյա ազնիվ կտորով. գլխավերևը դրված էր մի մեծ, բարձր մոմակալ, վառած կերոնով ու փոքր մոմերով։ Մեզ, աշակերտներիս տեսնելով Փանյանը ուռած ու արտասվալից աչքերով ընդառաջ եկավ ու ասաց.— «Եկեք, տեսեք մեր խեղճ, մեր բարի Նազարյանցին, նա սիրում էր ձեզ, աշակերտներիդ»։ Ես կանգնած, երկար դիտում էի. Նազարյանցի դեմքը զայրացկոտ էր և նոթերը կլոտած. նրա դեմքին ես նշմարում էի իր անտեր մնացած սիրասուն զավակների հոգսի նշանները։

Մյուս օրը թաղեցին Նազարյանցին, բայց չգիտեմ տեղի հայ հասարակության թե՞ իր ծախքով, միայն հիշում եմ, որ թաղումը կատարվեց շատ շքեղ հանդիսավորությամբ։ Պատարագին դագաղը ծածկված էր ծաղիկներով և եկեղեցին լիքն էր երկսեռ բազմությամբ. այդտեղ էին ճեմարանի աշակերտները, ուսանողները, ուսուցիչները, պրոֆեսորները, Մոսկվայի հայ գաղութը, ինչպես նաև գերմանացիներ, իրենց պաստորի հետ միասին։ Դամբանական ճառեր խոսվեցին, խոսեց նաև պաստորը։ Դագաղը եկեղեցուց դուրս հանեցին ուսանողները և փոխեփոխ իրենց ուսերի վրա տարան մինչև քաղաքի ծայրը ու նոր հետո միայն դրին դիակառքի վրա։ Ճանապարհին դագաղը երեք տեղ «հանգիստ» դրեցին և առաջինը ճեմարանի մուտքի մոտ։ Ճեմարանի երկու աշակերտ դագաղի առջևից տանում էին հանգուցյալի ստացած շքանշանները, փոքրիկ բարձերի վրա ամրացված։ Թաղումը կատարվեց «Վանկա» կոչված հայոց գերեզմանատանը. գերեզմանը փորված էր եկեղեցուց ոչ հեռու, հանգուցյալի ավագ որդի Ֆրիդրիկոսի գերեզմանի կողքին, որի դագաղի վրա ինքը հայրն էր դամբանական խոսել եկեղեցում։ Դագաղը գերեզման իջեցնելուց հետո նրա անդրանիկ բարեկամ Փանյանը մի բուռ հող ձգեց վրան, որից հետո ամրացրին կափարիչն ու հողով ծածկեցին և ապա վերջին դամբանականը խոսեցին գերեզմանի վրա։

Օրը երեկոյանում էր. հուղարկավորների բազմությունը հետզհետե ցրվեց և շուտով համարյա թե մենակ մնացինք մենք, ճեմարանի վերջին դասարանի աշակերտներս։ Մենք էլ շուտով քաղաք պիտի դառնայինք, բայց վերադառնալուց առաջ ցանկացանք մեր ուղածի պես հարգանք մատուցել նրա թարմ շիրիմին. ուստի շրջապատեցինք գերեզմանը ու արտասանեցինք նրա այն ոտանավորը, որ գրել էր իր հակառակորդների դեմ և որ մենք սովորել ու անգիր գիտեինք։ Ապա շոքելով համբուրեցինք գերեզմանը և տխուր ու տրտում վերադարձանք։

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել նրա այդ ոտանավորը.

*) Նազարյանցի մահվանից հետո նրա թղթերը մնացել են երեցփոխ Մելքոն Փանյանի մոտ։

Մի՛ վախեցիր, քաջ նավարկու, հառաջ խաղա՛,
Քանի որ քո առաջնորդն է ճշմարտությունն,
Ծովածայրերից, մրրիկներից երկյուղ չկա:

Թո՛ղ կատաղին գազան դարձած տարերք բոլոր,
Թո՛ղ մի ոռպե ծածկեն աչքիցդ լույս հորիզոն,
Օվկիանում քեզ այդ բանը չէ անսովոր:

Դու կողմնացույց ձեռնում բռնած իբրև երագ,
Քաջ գիտակից թե ո՛ւր կամիս գնացքդ ուղղել,
Ալիք ու ծով ճեղքի՛ր, անցի՛ր դեպի նպատակ:

Այո՛, նախանձ, տգիտություն, հոգիք վատթար,
Քո համարձակ թռիչք փակել բույլ, անկարող,
Գործ դրեցին յուրյանց արժան ամեն հնար:

Երևեցան շար Հուդաներ, պիղծ մատնությունք,
Բայց անօգուտ. ճշմարտությամբ զրահավորին
Չեն բավական դժոխքի բոլոր զինուտրությունք:

Հաջորդ օրը, վաղ իրիկնապահին, գնացի հորեղբորս մոտ. նա աչքիս չէր երևացել ոչ եկեղեցում, և ոչ էլ գերեզմանատանը։ Նա սգավոր նստած էր տանը և միայն իր դասաժամերին ճեմարան էր հաճախում։ Հնչակը քաշեցի, դուռը բաց արեց հորեղբայրս ինքը ու տեսնելով որ ես եմ, քաղցրությամբ ասաց.—

— Հա, դո՞ւ ես, ներս արի,— ապա ավելացրեց,—է՞հ, պատմիր ի՞նչ եղավ ու ի՞նչպես եղավ։

Ես պատմեցի նրան այն ամենը, ինչ տեսել էի ու լսել, նրանից չթաքցնելով նաև աշակերտներիս արածը։

— Ապրի՛ք, լավ եք արել,—ասաց նա,— չեմ հիշում, թե ո՞ր դասարանումն է եղել, որ ես խոսել եմ նրա այդ ոտանավորի մասին։ Թեև դա բանաստեղծական կայծ ու ոտանավորից պահանջվող կանոնավորությունը չունի, բայց լիակատար է իր բովանդակության ճշմարտացիության տեսակետից։

Այո, իհարկե, մեռնիլը բնության օրենք է, մենք էլ ամենքս պիտի մեռնինք, բայց և այնպես Նազարյանցի պես սիրված անձի այսպիսի անակնկալ վերանալը մեր միջից, գժվար տանելի է։ Դու գիտե՞ս, որ նա իմ ուսուցիչն է եղել, բայց ի՞նչ եմ ասում, դու, իհարկե, այդ բոլորը գիտես...։

Հորեղբայրս ապա ինձ սեղանատուն հրավիրեց թեյ խմելու, այն սեղանատունը, ուր այնքան հաճախ հանդիպում ու տեսնում էի ես Նազարյանցին... նստեցինք թեյ խմելու և նա շարունակեց իր խոսքը.

— Նազարյանցը միամիտ էր, մաքուր իբրև աղավնի, գիտուն, խորախորհուրդ իբրև մի լուրջ իմաստասեր, հասարակաց օգուտը ճանաչող, սիրող սիրտ ուներ և գթառատ հայր էր իր զավակների համար... ի՞նչ էի ուզում այլևս ասել, հա՛, չմոռանաս, ե՛րվանդ, կատարել նրա ցանկությունը՝ իր մանուկներին հայերեն խոսել սովորեցնելու։

Այդ մի ծանր պարտականություն էր, որ հանգուցյալը դրել էր իմ վրա և ես չէի մոռացել ու մտածում էի անել, ինչ որ կարող էի։

Ժամանակ անցավ... ես ավարտեցի միջնակարգ ուսման դասընթացը, հայրենիք մեկնեցի մորս տեսության համար ու նորից վերադառնալով՝ ուսանող դրվեցի արևելյան լեզվաց Լազարյան լիկեոնի։ Հասկանալի է, որ Նազարյանցի մահվան առաջին տարում ես հնարավորություն չունեցա կատարելու իմ վրա դրված պարտականությունը, քանի որ թե՛ ես ազատ ժամանակ չունեի բոլորովին և թե՛ մանուկները տակավին դեռահաս էին. սակայն, նրա մահվան երկրորդ տարում, երբ ես երկրորդ կուրսի ուսանող էի, արի այն ամենը, ինչ հնարավոր էր։

Տեղեկանալով որ Նազարյանցի ընտանիքը ամառները դարձյալ փոխադրվում է Բոգդրոդակ գյուղը ու ապրում նույն ամարանոցում, ես էլ քննություններս վերջացնելուց հետո տեղափոխվեցի այնտեղ և համարյա թե երեք ամսվա իմ ազատ ժամանակս նվիրեցի նրա երեխաներին հայերեն սովորեցնելու գործին։ Առավոտյան ժամը տասին գնում էի և մինչև ժամը 1—2-ը գրել-կարդալ սովորեցնում Էմմանվելին, Ժոզեֆինային ու Ստեփանիային. այնուհետև հանդըստանալու ու ճաշարան գնալու համար տուն էի վերադառնում։ Իրիկնապահին վերստին գնում էի և, Միրզա Ջաֆարի հետ միասին, երեխաներին զբոսանքի տանում ոտոնդի կողմերը, որպեսզի նրանց հետ զրուցելով կարողանամ գործնականորեն ընտելացնել հայերեն խոսելուն։

Միրզա Ջաֆարը, դեռ Նազարյանցի կեն-

դանության օրոք, Պարսկաստանից փախչելով եկել էր Երևան, ընդունել քրիստոնեություն և սեփականել իր կնքահոր՝ Տեր-Զաքարյանի ազգանունը։ Ապա Երևանից անցել էր Թիֆլիս, հետո էլ Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքը և այդտեղից էլ վերջնականապես Մոսկվա ու ապավինել Նազարյանցին։ Մարդասեր ու գթառատ Նազարյանցը ընդունել, պահել էր նրան. իսկ հետո էլ քննելով ու տեսնելով, որ նա պարսից կրթության տեր երիտասարդ է և կարող է պիտանի լինել լիկեոնին, այս նկատառումով էլ միջնորդել ու տեղավորել էր նրան լիկեոնում՝ պարսից լեզվի պրակտիկանտի պաշտոնով, մի պաշտոն, որ պարսկաստանցի ասորի Միրզա Սոլոմոնից հետո թափուր էր մնացել։

Ամառվա երեք ամիսներին ամեն օր հանդուցյալի տունն այցելելով ու զննական հայացքով դիտելով ընտանիքի ապրուստը, ուրիշն ունեցա մոտիկից ծանոթանալու այդ ընտանիքի տնտեսականին ու բարոյականին։ Ապրուստը համեստ էր, բայց ոչ աղքատիկ, ինչպես ասում է Վրթանես Փափազյանն իր Հայ գրականության պատմության մեջ. տանտիկնոջ վարքն ու բարքը պախարակելի էր և հանգուցյալ Նազարյանցը, ըստ ամենայնի, իրավունք է ունեցել դժգոհելու։

Տանտիկին Միննա Եգորովնան արդեն հասակն առած կին էր, երեխաների մայր. նրա տանը համարյա ամեն օր կարելի էր հանդիպել մի դատարկապորտ գերմանացու, որը տան մեջ իրեն պահում էր, որպես տանտեր։ Ինքը Միննա Եգորովնան տգետ էր, բայց ճգնում էր ցույց տալ, որ ինքը ամեն բան գիտի, ամեն բանից հասկանում է. նա նախանձով էր վերաբերում իր երեխաների դաստիարակչուհի Վարվառեին, որը մի սիրուն, պարկեշտ ու կրթված ռուս օրիորդ էր. վերջինս քանիցս ինձ գանգատվել էր տանտիկնոջ անտեղի նախանձոտության առթիվ։

Վրա հասավ օգոստոսը. ես ստիպված եղա ընդհատել իմ պարապմունքը երեխաների հետ և քաղաք վերադառնալ ու իմ գործին անցնել. երեխաներն արդեն սկսել էին հայերեն թոթովել և եթե մի երեք ամիս էլ անընդհատ այդպես շարունակվեին պարապմունքները, ապա նրանք ի վիճակի կլինեին ոչ միայն թոթովելու, այլ և խոսելու։ Բայց ես այլևս ազատ ժամանակ չգտա և երեխաներն էլ անուսուցիչ մնալով ու տանն էլ հայերեն մի բառ չլսելով, կարճ ժամանակում մոռացան իրենց սովորածները։ Այսպիսով ես ակամա պարտական մնացի Նազարյանցին, որ չկարողացա կատարել նրա նվիրական ցանկությունը, մի պարտականություն, որ մինչև օրս էլ մտքիցս չի գնում։

Ժամանակ անցավ... ես ավարտեցի բարձրագույն ուսման դասընթացը ու հայրենիք վերադարձա. այստեղ ուզում էի պաշտոն գտնել, բայց չհաջողվեց և ստիպված եղա վերստին օտարություն դիմել— ընդունեցի լիկեոնի նախկին ուսանող, հմուտ մանկավարժ, Նոր-Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմական նորաբաց դպրանոցի տեսուչ հանգուցյալ Առաքել Բահաթրյանի հրավերը և ուսուցչի պաշտոնով Նոր-Նախիջևան փոխադրվեցի։

Հիշում եմ, ուշ աշնան մի քամոտ օր էր. անակնկալ կերպով ինձ այցելության եկավ Նազարյանցի կրտսեր դուստրը, իմ աշակերտուհի Ստեֆանիան։ Ի՞նչ խոսք, ես շատ ուրախացա։ Հարց ու փորձ— ո՞ր խաչից, ո՞ր տեղից-ո՞ր տեղ։ Նա պատասխանեց թե Մոսկվայից է գալիս և գնում է Բաքու. Ռոստով հասնելով հիշել էր ինձ ու կամեցել տեսնել. ժամանել էր առավոտյան գնացքով ու պիտի մեկներ երեկոյան գնացքով։ Ձեռքն առնելով, մազերը շոյեցի ու ճակատը համբուրեցի. փոքրիկ, սիրունիկ աղջիկ էր նա, իսկ այժմ մեծացել էր ու ավելի քան սիրունացել. նա նույնիսկ ամուսնացել ու այրիացել էր։

Երկար զրուցեցինք, հիշեցինք Բոգորոդսկ գյուղը, մեր անմեղ զվարճությունները, զբոսանքները, իր ու քրոջ սովորած առաջին հայերեն ոտանավորը, հայրիկի գրածը, որը նա չէր մոռացել.

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար,
Առաջին դու խոսք ականջիս հասած,
Դու սիրո քաղցրիկ առաջին հոդված,
Մանկական լեզվիս բոթովանք տկար,
Հնչո՞ւմ ես իմ մեջ դու միշտ անդադար։

Եվ այլն։

Ճաշեցինք ու տարա նրան ճանապարհ դնելու։

— Դուք,— ասում էր նա,— ինձ մեղադրում եք, որ ես հայերեն չեմ խոսում, հայրիկիս ցանկությունը չեմ կատարում։ Այո, իմ սովորական խոսակցության լեզուն հայերենը չէ... դուք լավ ծանոթ եք մեր ընտանեկան հանգամանքներին, մեր գերմանուհի մոր զավակները կարո՞ղ են հայերեն խոսել. հորս կենդանության օրոք էլ մեր տան լեզուն

հայերենը չի եղել, իսկ հետո նամանավանդ չի եղել ու չէր էլ կարող լինել։

Հա՛, մոռացա ձեզ հաղորդել, որ Ժողեֆիանն էլ ամուսնացել է ինժեներ Փիրումյանի հետ և իր ամուսնու հետ ապրում են Եկատերինոդարում։

Ավարտելով մեր հուշերը Ստեփանոս Նազարյանցի մասին, ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել հորեղբորս գրչի գործը հանդիսացող մի ընտիր ուռանավոր, որ նա գրել է Նազարյանցի մահվան առթիվ, 1879 թվին.

Անձեռագործ դու մանարձան ֆեզ կանգնեցիր
Ո՛չ հողանյութ, որպես երկաթ կամ որձաքար.
Հրգոր գրչով, սուրբ վաստակով ու անձանձիր,
Նուրջ կենդանի և հետ մանուան հանգստացար։

Ահա նոր ազգ և նոր լեզուդ յուր ձիրքենին,
Քո ջրով բուսած, ֆե՛զ է բերում, ո՛վ Ստեփանոս,
Խաղաղ մնա՛, մի՛ վրդովուիր, ֆոնն է դափնին,
Խավարի մեջ լույս մեզ ծագող Պոմեթեոս։

Աշխարհ ծնար և աշխարհիս դարձար մշակ,
Բայց չտեսար այս աշխարհից անդարձություն.
Աշխատավոր մարդկանց բաժին է փշյա պսակ,
Ա՜հ, Բուռնաշյան ոսկրներիդ խաղաղություն։

ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՁԵՌԱԳՐՎԱԾ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Հայոց ժողովուրդը. նոր, այժմյան լեզվի ու մատենագրության վիճակը Ռուսաստանում. համառոտ տեսություն. (քառածալ տետր, 34 երես, ավարտված)։
2. Պատմաբանականք. Հռոմեական եկեղեցական ու նոր ժամանակի քաղաքական բարեկարգությունը։ Քաղված ամերիկացի պատմաբան Դրեպերի գրվածքներից (ութածալ տետր, 42 երես, ավարտված)։
3. Քիմիական նկարագիրք, առօրյա կյանքի մեջ գործադրական նյութերի, թարգմ. (ութածալ տետր, 28 երես, ավարտված)։
4. Իմաստասիրական։ Անձնագիտություն, ներքին աշխարհ. Անձնաճանաչությունը իբրև հայտարար նշան զորության (ութածալ տետր, 16 երես, չավարտված)։
5. Կրիտիկա Գ. Այվազովսկու շարադրության՝ «Մի՛ջակ վարդապետարան ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ», Փարիզ 1858 թ. (ութածալ տետրը, 12 երես, ավարտված և գրաքննչի կողմից տպագրությունը արգելված)։
6. Նոր հայկազյան օրագիր՝ «Լապտեր Հայաստանի» (երկու փոքրածալ թերթ, 5 երես)։
7. Դպրոցական քերականություն ֆրանսիական լեզվի (քառածալ տետր, 40 երես, չավարտված)։
8. Ազգերի արմատը ու նոցա ճյուղավորությունքը (քառածալ տետր, 21 երես, չավարտված)։
9. Պատմություն Հայկազյան դպրության (քառածալ, սրբագրված միայն 55 երես, իսկ բոլոր գործը հասցրած է մինչև IX դարը)։



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՑԵՐԻ ԵՎ ՀԱՑԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀԻՍՈՒՆ ԵՐԵՔ ԵՐԿԻՐՆԵՐԵ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԿՀՈՎԱՆԱՎՈՐԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

«Հայ Դատի ի նպաստ Ամերիկյան Եկեղեցական Հանձնախումբ»-ի առենապետ Վեր. Ռոպերթ Սբրլը, Հյուսիսային Ամերիկայի Հայոց Առաջնորդ Գերշ. Տիրան Եպիսկոպոսի, Ամերիկայի Երիցական Եկեղեցու Ընդհանուր Համաժողովի նախագահ Գր. Ուիլպեր Լա Ռոյի, վերապատվելիներ Սեթ Գրուֆսի, է. էլբենի և վերոհիշյալ Հանձնախմբի քարտուղար Վեր. Եզնիկ Վ. Ազնակյանի հետ միասին, 1948 թ. հուլիս 10-ին ներկայացան Վաշինգտոնի Պետական պաշտոնատունը և 20.000 ամերիկացի բողոքական եկեղեցականների կողմից ստորագրված մի հուշագիր հանձնեցին, որով պահանջվում է թուրքերի կողմից բռնագրավված հայկական հողերի վերադարձը իրենց իսկական տերերին: Ամերիկյան միլիոնավոր հավատացյալների այս 20.000 դեկավարների խիզախ քայլը ցույց է տալիս, որ ամերիկյան ժողովուրդը դատապարտում է Վաշինգտոնի գործարար շրջանների վարած քաղաքականությունը ջարդարար Թուրքիայի նկատմամբ:

Այս առթիվ ստորև բերում ենք Եկեղեցական Հանձնախմբի «Հիսուն երեք երկիրներե եկեղեցականներ կհովանավորեն Հայկական Դատը» խորագիրը կրող հաղորդագրությունը, արտատպելով այն «Լրաբեր» օրաթերթից:

ԽՄԲ.

Քսան հազար Բողոքական Եկեղեցականներու կարգին, որոնք մեր Ներքին Գործոց Նախարարին ուղղված՝ Հայկական Դատին վերաբերյալ «Աղերսագիրը» ստորագրեցին, կային նաև շատեր— մոտավորապես երեք հարյուր հոգի— որոնք կուգային թե՛ դրացի և թե՛ հեռավոր երկիրներե— Գանատա, Ալյասքա, Գոլոմպիա, Կուաթեմալա, Անգլ. Կույանա, Միացյալ Նահանգաց Ջրանցքի Շրջանը, Պրազիլիա, Մեքսիքո, Սանթո Տոմինիկո, Ռիո-Կրանտե-տո-Սուվ, Չիլի, Սալվատոր, Հոնտուրաս, Քուպա, Պահամաս, Ճամեյքա, Թոպակո, Հայթի, Թրինիտատ, Փուերթո Ռիքո, Հաուայի, Փիլիպին կղզիները, Պելճիքա, Ֆրանսա, Անգլիա, Զվիցերիա, Հոլանտա, Ֆինլանտա, Նորվեկիա, Ավստրիա, Գերմանիա, Մարոք, Կեդր. Ափրիկե, Լիպերիա, Սուվանտա, Թանկանիքա, Բոտեզիա, Արեվելյան Թրանսվաալ, Հարավային Ափրիկեի Միություն, Մորիթիուս, Արևմտյան Սամբրսեթ, Սիամ, Բագիստան, Չինաստան, Հընդկաստան, Պիրմա, Նոր Զեյանտա, Նոր Կույանա, Սոմաթրա, Ավստրալիա, Ինտոնեզիա, Ֆրանսական Քամերուն: Աղերսագիրը ստորագրողներեն մեծ մասը ամերիկացի միսիոնարներ են, որոնք կզբաղվեն եկեղեցական գործերով, ինչպես և դաստիարակչական, բժշկական և ճարտարարվեստական առաքելությամբ: Անոնցմե ոմանք տեղացիներ են, որոնք սերտ հարաբերության մեջ են իրենց երկրին ամերիկյան միսիոնարներուն հետ: Անոնցմե կարևորագույններեն և ամենեն ուշագրավներեն կարելի է հիշել հետևյալները.—

Rev. Siegfried Kumpel—Head of the Theological Department of the Seminary at the Colegio Adventista Brasileiro, at Sao Paulo, Brazil.

Rev. Harry B. Lundquist—Missionary in Latin America since 1918.

Dr. Edward G. Seel—President, Polytechic Institute of Puerto Rico, San German, P. R.

Vesy Rev. H. V. Beekman, D. D.—Dean of the American Cathedral in Paris, France.

Rev. Sultan Ahmed—Seventh Day Adventist Church, Karachi, Pakistan.

Rev. Chad Benedict Israel,—Assam Training Schoo., Jainta Hills Shillong, Assam, India.

Rev. Joseph Su-Hsing,—S. D. A. College, China Training Institute, Chiao-Tour-Djeng Station, Nanking-Shanghai Railway Line, China.

U. Saw U. S. D. A. Mission, Thonze, Lower Burma.

Rev. R. O. Waleau—Director of Missions—Advent Zendingsgenootschap in Neth, Indies, Amboina, Neth. E. Indies.

Ամերիկայի զանազան Բողոքական Եկեղեցիներու այս զարգացած, անձնվեր ու բարձրը իտեալներով օժտված առաջնորդներեն յուրաքանչյուրը ազդեցիկ առաքյալ մըն է Հայկական Դատին, այն երկրին մեջ, ուր կծառայեր։

Եկեղեցական Հանձնախումբի «Աղերսագիրը» ստորագրած ժամանակ անոնցմե ոմանց ըրած խորհրդածութիւնները շատ լուսաբանիչ են։ Նշանակելի է անոնց ներկայացուցած հարանվանութիւններու զանազանութիւնը։ Ահա քանի մը օրինակ.—

Վեր. Ուեյն Վ. Էլիրթ, Պենտեկոստյան Սրբության Եկեղեցի, Վանքուվրը, Քանատա.— «Երջանիկ եմ, որ այս աղերսագիրը ներկայացվելուն կրնամ սատարել»։

Տոքթ. Մրրլ Բ. Էսթեպրուքս, Միացյալ Մկրտչական, Նյու Պրընզուիք, Քանատա.— «Սրտանց համաձայն եմ այս շարժումին»։

Վեր. Ս. Մ. Ֆարնեյ, Օնդարիո, Քանատա.— «Այժմ հանգստյան կոչված, կհայտարարե թե երբ ինքը հովիվ էր Կրենտ Ռեփիտզի Ս. Պետրոս Եկեղեցվո, շատ հայեր անդամ էին այդ եկեղեցվոյ»։

Վեր. Հեննինկ Լ. Հասսել, Լուտերական, Սասքաչևան, Քանատա.— «Ուրախ և երախտապարտ եմ անունս ավելցնելու այս աղերսագրին, գեղեցիկ ծրագիր մը՝ օգնության ձեռք երկարելու համար»։

Վեր. Տեյվիտ Բ. Ճանսըն, Բարի Հովուի Եկեղեցի (Սովետնպորկյան), Օնդարիո, Քանատա.— «Հայ ժողովուրդին եղած անիրավությունը անվիճելի է, սակայն կվախնամ որ ավելի կնճռոտություն հառաջ գա նոր բաժանումի մը առթիվ։ Այսուհանդերձ կըզգամ թե անոնց պարագան պետք է նկատի առնվի»։

Վեր. Տոքթ. Չարլս Հենրի Ֆիլիփս, Նախագահ Այպերթայի Սուրբ Դրոց Քալեճի.— «Թեև օտարական մըն եմ Միացյալ Նահանգներու կառավարության համար, և սակայն երջանիկ-եմ այս ընկերակցության պատկանելու»։

Վեր. Հաուըրտ Լիբսքոմպ Ռիչըրտսըն, Քրիստոսի Եկեղեցի, Օնդարիո, Քանատա.— «Շատ ուրախ եմ, որ այս արժեքավոր և օգնության արժանի ժողովրդին դատը ձեռք առած եք։ Ուրախ եմ անունս ավելցնելու»։

Վեր. Ս. Ի. Լ. Ուոլս, Ազատ Մեթոդական Եկեղեցվո, Օնդարիո.— «Շատ սիրով պիտի հովանավորեմ այսպիսի առաջարկ մը։ Ի՞նչ ձևով կրնա Քանատա, իբր ազգ մը, սատարել այս շարժումին»։

Վեր. Էմիլ Օ. Ուոքըր, Նորվեկիական Լուտերական Եկեղեցվո ի Քանատա.— «Սըրտագին համաձայն եմ Հայկական Դատին ի նպաստ այս աղերսագրին։ Թող մեր Տերը օրհնե և օգնե հայերուն»։

Վեր. Ֆրետ Հ. Ուակնըր, Շաբաթապահ Եկեղեցվո, Ալասքա.— «Ձեր Դատը արժանի է նկատողության, հաջողություն կմաղթեմ ձեզի»։

Վեր. Տոքթ. Լորիթթ Սրապիոն, Սբ. Ղուկաս, Սբ. Մարիամ և Սբ. Անդրեաս, Քուպա.— «Հայկական Դատը կհամարեմ շատ արդար»։

Վեր. Սեքոնտինո Էլպա, Սբ. Հովհաննու Երիցական Եկեղեցվո, Քուեպրատիլաս, Փուերթոթ Ռիքո.— «500-ե ավելի անձեր մեր քաղաքին մեջ համակիր են այս աղերսագրին»։

Վեր. Ֆելիքս Էնքարնասիոն Ռամոս, Մեթոդական Եկեղեցվո, Քոմեռիո, Փուերթոթ Ռիքո.— «Եթե 10.000 ստորագրություն ունենայի, սիրով ամենքն ալ պիտի տայի այս Դատին ի նպաստ»։

Վեր. Սալվատոր Վելեզ, Փուերթոթ Ռիքոյի Միացյալ Ավետարանական Եկեղեցվո.— «Այս աղերսագիրը կստորագրեմ, որովհետև Հայկական Դատը նման է Փուերթոթ Ռիքոյի դատին։ Մենք եղբայրներ ենք արտաքին միջամտութենե տառապող։ Մեր դատն ալ Միացյալ Ազգերու առջև է, և մենք կցանկանանք ունենալ իրավունքը որոշելու մեր քաղաքական ապագան մեր ինքնասահմանումով։ Կհուսանք թե Ամերիկայի եկեղեցականները մեզի կողմնակից պիտի ըլլան»։

Վեր. Ատոլֆ Ռ. Մեյրը, Մեր Փրկիչը, Լուտերական Եկեղեցվո, Հոնոլուլու, Հաուայի.— «Աստուած օրհնե ձեր ջանքերը»։

Վեր. Արթըր Հ. Ռիչըրտսըն, Պրենթ Դպրոցեն (Episkoposական), Պակինո, Ֆիլիփյան կղզիք.— «Ասիկա ինծի կթվի ըլլալ խոստում մը, որ պետք է իրագործվի Միացյալ Ազգերու կողմեն»։

Վեր. Տեն Շերմըն Հարրիս, Շաբաթապահ-

յան Եկեղեցի, Մակբուր, Հնդկաստան.— «Հարյուրին հարյուր համակիր եմ կրոնական և քաղաքական ազատության, թե՛ Միացյալ Նահանգներու մեջ և թե՛ անկե դուրս»։

Վեր. Ուանկ Վու Ֆեյ, Լիաո-ո միսիոն, Շենյանկ, Չինաստան.— «Շատ ցավեցա այս աղերսագիրը կարդալով։ Համակիր եմ հայերու Դատին»։

Վեր. Ուոլթըր Տոհերթի, Կրեյ Մաունթ, Նոր Զելանտա.— «Անկեղծորեն կհուսամ, որ այն նպատակը զոր այնքան փափաքով կհետապրնդեք, երկնային առաջնորդությամբ իրականանա»։

Վեր. Պեռնարտ Էտուին Հետֆիլտ, Վիքթորիա, Ավստրալիա.— «Բոլորովին համակիր եմ ձեզի։ Կցավիմ հայերուն համար։ Հաջողություն կմաղթեմ»։

Վեր. Տիոնիզիո Ա. Տե Լառա, Նոր Երուսաղեմ եկեղեցվո, Հավանա, Քուպա.—«Հայ ժողովուրդին Դատը կնկատեմ արդարացի»։

Վեր. Նտի Տանիել, Ատվենթիստներու Միսիոնարություն, Մրպալմայո, Ֆրանսական Քամերուն.— «Շատ ուրախ եմ։ Շնորհակալ եմ ձեր ղրկած լուրերուն համար։ Ձեր գործերը մեծ հաջողություն կգտնեն հոս Քամերունի մեջ։ Ձեր գեղեցիկ խոսքերը հոգևոր սնունդ են մեզի համար։ Մեր եղբայրները շատ շնորհակալ են ձեզմե և կխնդրեն որ շարունակեք ղրկել մեզի այս գեղեցիկ գրությունները ֆրանսերենով, որովհետև այդ լեզուն ծանոթ է հոս, մեր անդամներուն։ Ողջույններ անոնց, որոնք մեզ կհիշեն հավատքով։ Աստուծո օրհնությունը ձեր վրա ըլլա»։

Վեր. Ճոեյ Մովսես Խան, Լահոր, Հնդկաստան.— «Ձայնս կուտամ Հայաստանի ի նպաստ Ամերիկայի Եկեղեցական Հանձնախումբին»։

Վեր. Ա. Բ. Սաուրուել, Հերալտթըն, Արևմըտյան Ավստրալիա.— «Ինծի համար մեծ հաճույք է ընդառաջ երթալ ձեր բաղձանքին, ստորագրելով այս աղերսագիրը ի նպաստ հայ ժողովրդին և անոնց հողամասին իրենց վերադարձվելուն ըստ Վիլսընյան Հայաստանի սահմաններուն։

Ծանոթ ըլլալով այս ժողովուրդին պատմության և անոնց քրիստոնեական ազնիվ կեցվածքին, Աստուծո պատվիրանքներուն հանդեպ, ինչպես նաև իրենց հավատքին ի Քրիստոս, հակառակ դառն հալածանքներու, մեծապես կգնահատեմ այս ոգին, որ կրտրվի ինծի՝ անոնց օգնելու համար։ Մաղթենք որ Աստուած տա անոնց, ինչպես և մյուս բոլոր քրիստոնյաներուն, ազատությունը պաշտելու զԱստուած իրենց խղճին համեմատ և համաձայն Աստուծո պատվիրանքներուն և Քրիստոսի Վարդապետության։ Թող Աստուած օրհնե ձեզ այս ուղղությամբ ձեր կատարած ջանքերուն համար»։

***

Հայ Դատի ի նպաստ Ամերիկյան Եկեղեցական Հանձնախումբը կհրճվի տեսնելով արդյունքը իր աշխատությանց, որոնք կձգտին շահագրգռել Միացյալ Նահանգներու բողոքական կղերը ի նպաստ Հայկական Դատին, այս արդյունքներեն մին ըլլալով բարեկամներու հոծ թիվը, զոր կրցավ շահիլ աշխարհի ամեն կողմը 50-ե ավելի երկիրներու մեջ, ինչպես կտեսնվի վերևի հաղորդումներեն։

(«Լրաբեր» հոկտ. 7, 1948 թ.)



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՇՊԱՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ կառավարության կողմից մի շարք միջոցառումներ նշվեցին ռեսպուբլիկայի պատմական այն հուշարձանների վերականգնման ու պահպանման նկատմամբ, որոնք առնչություն ունեն հայ ժողովրդի և Սովետական Միության եղբայրական ռեսպուբլիկաների ժողովուրդների կյանքում ու մշակույթի ասպարեզում տեղի ունեցած կարևորագույն անցքերի հետ։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի ռեսպուբլիկական կոմիտեում ստեղծվել է թանգարանների և պատմական հուշարձանների պահպանման բաժին։

ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՊԱՏՃԵՆՆԵՐ

Հայկական Պետական պատկերասրահին կից աշխատանքներ են տարվում հին հայկական ձեռագրերի առանձին մանրանկարների, տիտղոսաթերթերի և այլն պատճենները հանելու ուղղությամբ։

Այդ ձեռագրերի (XI—XVI դար) մանրանկարները, որոնք աչքի են ընկնում իրենց նրբությամբ ու գեղությամբ, հանդիսանում են հայ հնագույն նկարիչների արվեստի փայլուն նմուշներ։ Պատրաստվում է այդ մանրանկարների պատճենների ալբոմը, որը տպագրվելու է Լենինգրադում՝ Դրամ կտրելու տանը։ Ալբոմը գունավոր է լինելու։

Մանրանկարների պատճենահանման վրա աշխատել են երիտասարդ նկարիչներ Վ. Բաղդասարյանը, Ն. Խանդադյանը, Գ. Խաչատրյանը, Փ. Գրիգորյանը և Գ. Խանաղյանը, արվեստի վաստակավոր գործիչ Լ. Դուրնովայի ղեկավարությամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Լենինգրադի ճարտարապետ, նկարիչ և ՍՍՌՄ Գեղարվեստից ակադեմիայի Ի. Ե. Բեպինի անվան ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի դեկան Ա. Կ. Բարությշևը երկար տարիներ ուսումնասիրում է հայ ժողովրդի ճարտարապետությունը։

Հայկական ՍՍՌ-ում կատարած իր շրջագայության ընթացքում ճարտարապետ Ա. Բարությշևը շատ նյութեր է հավաքել։ Ներկայումս նա ավարտել է նկարների մի ամբողջ շարք, որոնք պատկերում են Հայաստանի հնագույն հուշարձանները, Զվարթնոցի ավերակները, մեր դարաշրջանի II դարի սկզբի տաճարը Գառնիում, Օձունի ու Հաղբատի հուշարձանները, Աշտարակի կամուրջները և այլն։

Այդ նկարները շուտով հրատարակվելու են, կազմելով հեղինակի ինքնավիմագիրների ալբոմ։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Հնագիտական թանգարաններ են կազմակերպվել Հայաստանում— Գառնիի, Գեղարդի և Սևանի ճարտարապետական հուշարձաններին կից։ Այդ թանգարաններում ժողովված են նյութական կուլտուրայի իրեր և հնագիտական քարտեզներ։ Կազմված է յուրաքանչյուր հուշարձանի ժամանակագրությունը։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Դեկտեմբերի 2-ին, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի շենքում, տեղի ունեցավ ակադեմիկոս Հ. Մանանդյանի մեծարումը՝ նրա 75-ամյակի կապակցությամբ։

Հասարակական գիտությունների բաժանմունքի այդ հոբելյանին նվիրված նիստը ներածական հակիրճ խոսքով բացեց ակադեմիկոս-քարտուղար Գ. Ղափանցյանը։ Նա համառոտ կերպով բնութագրեց գիտնականի անցած ուղին։ Ունենալով լայն կրթություն և խոր ու բազմակողմանի դիտելիքներ, Հ. Մանանդյանը եղել է Երևանի Պետական համալսարանի առաջին ռեկտորը։ Մեր ռեսպուբլիկայի ականավոր գիտնականներից շատերը նրա աշակերտներն են։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի կյանքի ու գիտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի հին և միջնադարյան պատմության սեկտորի վարիչ Ս. Երեմյանը։

— Սովետական պատմագիտության խոշոր ներկայացուցիչ, պատկառելի գիտնական Հակոբ Համազասպի Մանանդյանի անունը, որի ծննդյան 75-ամյակը մենք այսօր նշում ենք,— ասաց Ս. Երեմյանը,— լայնորեն հայտնի է մեր երկրին։ Հին և միջնադարյան Հայաստանի սոցիալական ու տնտեսական կյանքի ուսումնասիրությանը նվիրված մի շարք կապիտալ հետազոտությունների հեղինակ Հ. Մանանդյանը հանդիսանում է ականավոր հայագետ-պատմաբան և ֆիլոլոգ։ Իր գիտական գործունեությունը սկսելով 1897 թվին, երբ լույս տեսավ նրա առաջին աշխատությունը, նա հետագայում հրապարակել է մի շարք արժեքավոր հետազոտություններ, որոնց մեջ իրեն ցուցաբերել է որպես խոշոր ֆիլոլոգ։ Սակայն գոյության միջոցների մշտական հոգը այն ժամանակ նրան խանգարում էր ամբողջովին նվիրվելու գիտական աշխատանքի։

Միայն Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո Հ. Մանանդյանը բոլոր հնարավորությունները ստանում է խորացված ստեղծագործական աշխատանքի համար։ Եվ նրա, որպես գիտնական պատմաբանի, հսկայական գործունեությունը արդեն ամբողջովին վերաբերում է սովետական ժամանակաշրջանին։ Նրա առաջին պատմական աշխատությունը հանդիսանում է հայ ժողովրդի պատմության վերաբերյալ դասախոսությունների դասընթացը, որը կարդացվել է Երևանի Պետական համալսարանում 1921 թվին։ Դրանից հետո նա գրում է մի շարք աշխատություններ նվիրված նախարարական Հայաստանի տնտեսական կենցաղի և հասարակարգի հետազոտությանը։ Առանձին մասնագիտական հարցերի վերաբերյալ մի շարք հոդվածներից հետո նա հրապարակում է «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության վերաբերյալ» և ապա հրատարակում է պատմաաշխարհագրական բնույթի մի շարք հետազոտություններ ու զբաղվում է հելլենիստական դարաշրջանի Հայաստանի արձանագրությունների ուսումնասիրությամբ։

Խոր ուսումնասիրության արդյունք հանդիսացավ Հ. Մանանդյանի կապիտալ աշխատությունը՝ «Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին՝ հին ժամանակների համաշխարհային առևտրի կապակցությամբ»։

Նախարարական Հայաստանի հասարակարգի հարցերի վերաբերյալ ամփոփիչ հոդված հանդիսացավ «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» մենագրությունը, որը մի խոշոր ավանդ է սովետական պատմագրության ասպարեզում։

Հայ ժողովրդի պատմության կարևոր շրջաններից մեկի վրա նոր լույս է սփռում Հ. Մանանդյանի կապիտալ աշխատություններից մի ուրիշը՝ «Տիգրան Երկրորդը և Հռոմը» վերնագրով։

Հ. Մանանդյանը նորից վերանայեց և քննադատական մանրազննին վերլուծության ենթարկեց անտիկ հեղինակներից Հայաստանի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները։ Նրա աշխատությունները հնարավորություն տվեցին մի կողմ նետել եվրոպական բուրժուական գիտության մեջ այդ ժամանակաշրջանի մասին իշխող սխալ պատկերացումները։

Հ. Մանանդյանի ծառայությունները սովետական գիտության առաջ բարձր գնահատվեցին սովետական ժողովրդի կողմից։ Ներկայումս Հ. Մանանդյանը հանդիսանում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, մեր ռեսպուբլիկայի գիտության վաստակավոր գործիչ։ Նա պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նախագահության հանձնարարությամբ հոբելյարին ողջունեց Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։ Նշելով Հայաստանի պատմության և ֆիլոլոգիայի ասպարեզում Հ. Մանանդյանի աշխատությունների նշանակությունը, նա հատկապես կանգ առավ այն դերի վրա, որ հոբելյարը խաղացել է որպես ռեսպուբլիկայի երիտասարդ գիտական կադրերի դաստիարակիչ։ Հայաստանի գրեթե բոլոր երիտասարդ պատմաբաններն ու ֆիլոլոգները, որոնք այժմ գիտական մեծ աշխատանք են կատարում, հանդիսանում են նրա աշակերտները։ Բոլոր ներկա եղողների ծափահարության ներքո Վ. Համբարձումյանը Հ. Մանանդյանին ցանկացավ հետագա հաջողություններ նրա արդյունավետ գիտական գործունեության ասպարեզում։

— Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նախագահությունը,— ասում է պրոֆեսոր Ալի-զադեն,— ինձ լիազորել է սրտագին ողջույն հաղորդել Հակոբ Համազասպի Մանանդյանին՝ սովետական պատմագիտության ավագագույն ներկայացուցիչներից մեկին, Կովկասի պատմության ականավոր մասնագետին։

Պրոֆեսոր Ալի-զադեն խոսում է Անդրկովկասի բոլոր ժողովուրդների պատմության համար Մանանդյանի աշխատությունների մեծ նշանակության մասին։

Այնուհետև ողջույնով հանդես եկան Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի կողմից Հ. Ժամկոչյանը, Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի կողմից Բ. Առաքելյանը, Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվի կողմից Վ. Պարսամյանը, Գրականության ինստիտուտի կողմից Հ. Ղանալանյանը, Լեզվի ինստիտուտի կողմից Ս. Ղազարյանը, Երևանի Պատմական թանգարանի կոլեկտիվի կողմից Ա. Շահնազարյանը, Մատենադարանի կոլեկտիվի կողմից Ս. Զոհրաբյանը։

Բանաստեղծ Հովհ. Շիրազը նիստում կարդաց հոբելյարին նվիրած իր բանաստեղծությունը։

Հ. Մանանդյանի անունով հոբելյանի կապակցությամբ ողջույնի հեռագրեր են ստացվել ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի նախագահությունից՝ պրեզիդենտ Վավիլովի ստորագրությամբ, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության և Փիլիսոփայության ինստիտուտից, Արևելագիտության ինստիտուտից, Ուկրաինական, Էստոնական, Լիտվական, Ուզբեկական ՍՍՌ-ների Գիտությունների ակադեմիաների նախագահություններից, Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի գիտական կազմակերպություններից, Սովետական Միության առանձին խոշոր գիտնականներից։

Իր պատասխան խոսքում, որը ջերմորեն ընդունվեց ներկա եղողների կողմից, ակադեմիկոս Հ. Մանանդյանը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր հավաքվել են նրա հոբելյանը նշելու համար։ Նա պատմեց իր հետագա գիտական աշխատանքի պլանների մասին։ Վերջում հոբելյարը ամբողջ դահլիճի բուռն ծափահարությունների ներքո կեցցե բացականչեց ի պատիվ գիտնականների մեծ բարեկամ Ստալինի և սովետական պետության, որոնք ապահովել են աշխարհում ամենաառաջավոր սոցիալիստական գիտության չտեսնված ծաղկումը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԸ

Փետրվարի 18-ին Երևանի գրական հասարակայնությունը նշեց հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 80-ամյակը։

Հայֆիլհարմոնիայի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ նվիրված Հովհաննես Թումանյանին։ Երեկոյին ներկա էին գրողներ, գիտնականներ, արտիստներ, արվեստագետներ, ձեռնարկությունների ստախանովականներ, Սովետական Բանակի սպաներ, ուսանողներ։

Նախագահության սեղանի շուրջն էին Ավ. Իսահակյանը, Հ. Մամիկոնյանը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Ս. Սահակյանը, Վ. Համազասպյանը, գրողներ, բանաստեղծներ։

Երեկոն բաց արեց Հայաստանի Սովետական գրողների միության քարտուղար Հր. Քոչարը.

— Ազգային խոշորագույն բանաստեղծ, խոսքի մեծ վարպետ, ժողովուրդների մեծ բարեկամության համար մարտնչող Հովհաննես Թումանյանի անունը,— ասում է Հր. Քոչարը,— թանգ է սովետական բոլոր մարդկանց համար։ Իր երկերում նա արտահայտել է հայ ժողովրդի լավագույն ձգտումներն ու իղձերը։ Նրա ստեղծագործության ակունքները խորապես ժողովրդական են, դրա համար էլ այնքան հարազատ են մեզ։

Բանաստեղծի կյանքի ու գրական գործունեության մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Մ. Մրկրյանը։

Հովհաննես Թումանյանի մասին իր հիշողությունները պատմեց գրող Ստ. Զորյանը։ Ելույթ ունեցան նաև ժողովրդական ուսուցիչ Ս. Սահակյանը և բանաստեղծ Ն. Զարյանը։

Վերջում տեղի ունեցավ ճոխ համերգ քաղաքի արտիստական լավագույն ուժերի մասնակցությամբ։

Երևանի Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ Հ. Թումանյանի ծննդյան 80-ամյակին նվիրված երեկո։

Հ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Վ. Պարտիզունին։

Թումանյանի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին ժողովրդական ուսուցիչ Սիմակը և գրող Ստ. Զորյանը։

Գրական-գեղարվեստական բաժնում ելույթ ունեցան դերասանուհի Հ. Գարագաշը, վաստակավոր արտիստ Գ. Գաբրիելյանը և թավջութակահար Գ. Ադամյանը։

Սովետական հասարակայնությունը լայն կերպով է նշում հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 80-ամյակը։

Հայաստանի Սովետական գրողների միությունը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտի հետ միասին զեկուցումներ է կազմակերպում նվիրված մեծանուն բանաստեղծի կյանքին ու գործունեությանը։ Հայպետհրատի հրատարակությամբ օրերս լույս կտեսնի Հովհաննես Թումանյանի երկերի ժողովածուի III հատորը. հրատարակության է պատրաստված նաև IV հատորի 1-ին գիրքը։ Մեծ ցուցահանդես է կազմակերպել Ա. Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանը։ Այստեղ ցուցադրված են Հովհաննես Թումանյանի երկերի հայերեն հրատարակությունները, ինչպես նաև այդ երկերի ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ուկրաիներեն, ուզբեկերեն, ՍՍՌՄ մյուս ժողովուրդների լեզուներով և օտար լեզուներով կատարված թարգմանությունները։ Ցուցադրված են գրողի կյանքն ու գործունեությունը պատկերող բազմաթիվ նյութեր, իլյուստրացիաներ և լուսանկարներ։

Թումանյան գյուղի աշխատավորությունը սիրով նշեց իր հայրենակից, հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 80-ամյակը։

Կոլխոզի ակումբում, որը կրում է Թումանյանի անունը, երեկոները շատ մարդիկ են հավաքվում. նրանք մեծ հետաքրքրությամբ են ունկնդրում բանաստեղծի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող զրույցները։ Հովհաննես Թումանյանի հասակակիցներ, ալեհեր կոլխոզնիկներ Ն. Քոչարյանը և Ա. Գոշինյանը համագյուղացիներին պատմում են իրենց հուշերը բանաստեղծի մանկական տարիների մասին և այն մասին թե

Հովհաննես Թումանյան

որքան հոգատար էր նա իր հայրենակիցների նկատմամբ։

Տունը, որտեղ ծնվել է Հ. Թումանյանը և որը ներկայումս թանգարանի է վերածված, բազմաթիվ էքսկուրսանտներ են այցելում։ Տուն-թանգարանը հարստացել է նոր նմուշներով. դրանք բանաստեղծի երկերի նոր հրատարակություններն են՝ հայերեն, ռուսերեն և եղբայրական մյուս ռեսպուբլիկաների ժողովուրդների լեզուներով։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԲՐՈՆԶՅԱ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշմամբ Երևանում դրվելու է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի բրոնզյա հուշարձանը։

Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչությունը հանձնարարել է արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Ս. Ստեփանյանին պատրաստելու հուշարձանը, իսկ ճարտարապետ Գ. Թամանյանը պատրաստելու է պատվանդանը, որը լինելու

է գրանիտից։ Հուշարձանի բարձրությունը, պատվանդանի հետ միասին, կազմելու է մոտ 9 մետր։

Ստեփանյանն արդեն ավարտել է էսքիզը, որը հաստատված է և օրերս կսկսի մեծ ֆիգուրայի քանդակումը։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾ ՆԿԱՐԸ

Ինքնուս վարպետ, ասեղնագործ Փառանձեմ Ավետիսյանը ավարտեց հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ասեղնագործ նկարը։ Այժմ այս աշխատանքը գտնվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչության ժողովրդական ստեղծագործության տանը։

Հանձնաժողովը բարձր գնահատական է տվել շնորհալի վարպետի այս աշխատանքին։

Աբովյանի ասեղնագործ նկարը ցուցադրվելու է ինքնուս վարպետների ռեսպուբլիկական և համամիութենական ցուցահանդեսներում։

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

Լենինգրադում կոնսերվատորիայի փոքր դահլիճում դեկտեմբերի սկզբներին կայացավ հայ երաժշտության երեկո՝ նվիրված Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձին։

Կատարվեցին հայ կոմպոզիտորներ Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, ինչպես և ժամանակակից հեղինակներ Արամ Խաչատրյանի, Լ. Խոջաէյնաթյանի և մյուսների ստեղծագործությունները։

Լենինի քաղաքումն են ստացել իրենց երաժշտական կրթությունը Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի աշակերտ Ա. Սպենդիարյանը, Ռոմանոս Մելիքյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Սարգիս Բարխուդարյանը և ուրիշներ։

Ներկայումս Լենինգրադի կոնսերվատորիայում Հայկական ՍՍՌ-ից սովորում են 16 ուսանող։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԳԾԱՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Դեկտեմբերի սկզբներին Մոսկվայում, Հայկական ՍՍՌ Կուլտուրայի տանը, բացվեց Հայաստանի նկարիչների գծանկարների և նկարների ցուցահանդեսը։ Ցուցահանդեսում ցուցադրված է ՀՍՍՌ կերպարվեստի վարպետների ավելի քան 300 աշխատանք— մեծ մասամբ Երևանի Պետական պատկերասրահի ժողովածուից, ինչպես և նկարիչների նոր երկերը։ Մայրաքաղաքի հասարակայնությունը մեծ հետաքրքրությամբ է դիտում ցուցահանդեսը. առաջին երկու շաբթվա ընթացքում ցուցահանդես են այցելել մոտ 1000 մոսկվացիներ, որոնց թվում նկարիչներ, ճարտարապետներ, հրատարակչությունների և կինոստուդիաների աշխատողներ, դասատուներ, ինժեներներ, նկարչական ինստիտուտների ուսանողներ և այլն։

Այցելուները մեծ հետաքրքրությամբ են դիտում նկարիչներ Է. Իսաբեկյանի և Ա. Ջիլինգարյանի ռազմաճակատային նկարների սերիան։ Այս նկարներում պատկերված են Թամանյան հայկական դիվիզիայի մարտական կյանքը, հայ գվարդիականների սխրագործությունները։

Ընդհանուրի ուշադրությունն են գրավում Ստալինյան մրցանակի լաուրեատ Դ. Նալբանդյանի գործերը— Ի. Վ. Ստալինի պորտրեն, մատիտով գծված, և Վ. Մ. Մոլոտովի ելույթը Մեծ թատրոնում 1947 թվի նոյեմբերի 6-ին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի 30-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստին, բնականից նկարված։ Այցելուները հետաքրքրությամբ են դիտում Հայաստանի ժողովրդական նկարիչ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Մ. Սարյանի գործերից Սունդուկյանի անվան Պետական թատրոնի վարագույրի էսքիզը։

Այցելուները հետաքրքրությամբ են ծանոթանում հայրենադարձ նկարիչ-պեյզաժիստ Հ. Ասատրյանի ստեղծագործության հետ։ Ցուցադրված նկարներում Հ. Ասատրյանը պատկերել է կյանքը Սիրիայում և Սովետական Հայաստանում։

Ցուցահանդեսում ներկայացված են նաև Հայաստանի Պետհրատի կողմից հրատարակված գրքերը, որոնց ձևավորումը կատարել են ռեսպուբլիկայի նկարիչները։ Այս բաժնում այցելուները հետաքրքրությամբ են

դիտում Հայաստանի ժողովրդական նկարիչ Հ. Կոջոյանի գունավոր իլյուստրացիաների էսքիզները՝ կատարված ժամանակակից հայ գրողների գրքերի և հայ գրականության անտալոգիայի (ռուսերեն) համար։

Ուշագրավ են երիտասարդ նկարիչներ Բ. Մեսրոպյանի, Հ. Ռուխիկյանի և մյուսների գործերը, որոնք նվիրված են սոցիալիստական Հայաստանի ծաղկմանը։

Ցուցահանդեսը դիտողներից շատերը այցելուների մատյանում գրանցում են իրենց տպավորությունները, բարձր գնահատելով Հայաստանի նկարիչների ցուցադրած գործերը։

Ամեն օր ավելանում է այդ հետաքրքիր ցուցահանդեսը այցելող մոսկվացիների թիվը։

ՀՈՒՇԱՐՁԱՆ ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

Երևանի Քաղաքային Սովետի գործկոմի որոշմամբ այս տարի Երևանում կառուցվում է Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հուշարձանը։

Հերոսի կիսանդրին, մոտ մեկ մետր բարձրությամբ, ձուլվելու է բրոնզից և դրվելու է հղկված բազալտյա պատվանդանի վրա։ Հուշարձանը կառուցվելու է Ա. Սպենդիարյանի անվան Պետական օպերայի և բալետի թատրոնի պուրակում։

Հուշարձանի գլխավոր ճակատի վրա պատկերվելու են այն շքանշաններն ու մեդալները, որոնցով պարգևատրվել է Ն. Ստեփանյանը, ինչպես և բրոնզե տառերով գրվելու է ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրի բնագիրը հետմահու գվարդիայի փոխ-գնդապետ Նելսոն Ստեփանյանին Սովետական Միության կրկնակի Հերոսի կոչում շնորհելու մասին։

Հուշարձանի ընդհանուր բարձրությունը կազմելու է մոտ չորս մետր։

Հուշարձանի նախագծման հեղինակներն են— արվեստի վաստակավոր գործիչ Ա. Սարգսյանը և ճարտարապետ Գ. Աղաբաբյանը։

ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կենտրոնական գրադարանը կանոնավոր կերպով գրականության փոխանակում է կատարում Սովետական Միության 60 խոշորագույն հիմնարկների հետ, դրանց թվում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հիմնական գրադարանի, Սալթիկով-Շչեդրինի անվան Պետական հանրային գրադարանի, միութենական ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների գրադարանների հետ։

Կենտրոնական գրադարանը այդ հիմնարկներին ուղարկում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակած ամսագրերը, մենագրությունները, հայ գիտնականների աշխատությունները։

Կենտրոնական գրադարանը գրականության պետական ֆոնդի Լենինգրադի ֆիլիալից ստացել է հնագիտության, ճարտարապետության և պատմության վերաբերյալ թանկարժեք գրքերի, ամսագրերի և ալբոմների մի ժողովածու՝ բաղկացած 30 հազար միավորից։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ ԵՎ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով երկարամյա ծառայության և անբասիր աշխատանքի համար Հայկական ՍՍՌ դպրոցների ուսուցիչների մի մեծ խումբ պարգևատրվել է Սովետական Միության շքանշաններով և մեդալներով։

ՍՍՌՄ շքանշաններով և մեդալներով պարգևատրվել են 828 ուսուցիչ։ Դրանցից Լենինի շքանշանով պարգևատրվել են 62, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով 47, «Պատվո նշան» շքանշանով 58, «Աշխատանքային արիության համար» մեդալով 208, «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով 453 ուսուցիչ։

ԵՐԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտի ուսումնական տնտեսությունը, որը գտնվում է Վեդու շրջանում, ունի 51 հեկտար տարբեր տեսակների խաղողի այգի, ավելի քան եր-

կու հազար քառակուսի մետր խաղողի ու խնձորենու, ծիրանի, նշենու, ընկուզենու և այլ պտղատու ծառերի տնկարան, հացահատիկային, բանջարա-բոստանային կուլտուրաների ցանքատարածություն։

Ամեն տարի այստեղ արտադրական գործնական աշխատանքի են գալիս Գյուղատնտեսական ինստիտուտի տարբեր կուրսերի ուսանողները։

Նախատեսված է այս տարի տնտեսության բանջարա-բոստանային կուլտուրաների ցանքատարածությունը ընդարձակել մինչև 15 հեկտար։

ԽԱՂՈՂԻ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում գիտա-հետազոտական աշխատանք է կատարվում ցրտադիմացկուն և սեղանի գինու խաղողի նոր տեսակներ ստանալու ուղղությամբ։ Այդ աշխատանքները կատարվում են խաղողի սերմերը բազմացնելու, նրանցից արժեքավոր փոփոխակներ ընտրելու, հիբրիդիզացիայի և միչուրինյան մեթոդով աճեցնելու միջոցով։

Ստացվել են բարձր բերքատու կարմրահյութ խաղողներ։

Արժեքավոր են № 78 և № 79 հիբրիդները, որոնք ստացվել են «Ծիծապտուկ վարդագույն Երևանի» հիբրիդի փոփոխակը «Վարդագույն Երևանի» ու «Արարատի» տեսակների վրա պատվաստելու և սաճեցնելու միջոցով։

«Ծիծապտուկ սև սաթենի» հիբրիդը «Ոսկեհատի» վրա պատվաստելու միջոցով ստացվել է № 27 փոփոխակը։ Ստացված է նաև ցրտադիմացկուն խաղողի նոր տեսակ։

Խաղողի այդ տեսակները լայն կերպով տարածվելու են ռեսպուբլիկայի այգեգործական շրջանների կոլխոզներում ու սովխոզներում։

„ՀԱՅԱՍՏԱՆ" ՇԱՄՊԱՆ ԳԻՆՈՒ ԿՈՄԲԻՆԱՏ

ՍՍՌ Միության կառավարության որոշմամբ Հայկական ՍՍՌ-ում կազմակերպվել է «Հայաստան» շամպան գինու կոմբինատ, որը մտնում է ՍՍՌՄ Սննդի արդյունաբերության մինիստրության «Գլավվինո» սիստեմի մեջ։

Կոմբինատին է հանձնված չորս սովխոզ—Կիրովի անվան, Նոյեմբերյանի, Հայրոմի ու Կոտայքի, և չորս գինու գործարան—Միկոյանում, Նոյեմբերյանում, Վեդիում և Քանաքեռում։

Կոմբինատը ներկայումս, տնտեսական գործունեության ծավալման համար, եռանդուն նախապատրաստական աշխատանքներ է տանում. կարգի են բերվում արտադրական շենքերը, պատրաստվում են կադրեր։ Շամպան և սեղանի գինիների արտադրությունը հիմնականում կենտրոնացվելու է Քանաքեռի գործարանում. առաջին արտադրանքը սպասվում է մարտի վերջերին։

1949 թվին կոմբինատը պետք է 70 հազար շիշ շամպան գինի առանձնացնի հնացման համար և բաց թողնի 400 հազար շիշ սեղանի թեթև տեսակի գինիներ։

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄ ԱՆՏԱՌԱՏՆԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայկական ՍՍՌ անտառային տնտեսության, գյուղատնտեսության և ջրային տնտեսության մասնագետների բրիգադները փետրվարի սկզբներին մեկնեցին ռեսպուբլիկայի շրջանները անտառատնկման համար հողամասեր առանձնացնելու համար։

Մասնագետների առաջին բրիգադն անտառատնկման համար առանձնացնելու է Արազդայանի տափաստանում 90 հեկտար, իսկ Արտաշատի ու Վեդու շրջաններում 150 հեկտար։ Արտաշատի շրջանում 100 հեկտար տարածությամբ հողամաս է առանձնացվելու տնկարանի համար։

Մասնագետների երկրորդ բրիգադն, որը մեկնել է Աշտարակ-Վոսկեվազ-Աղավնաձոր-Էջմիածին և ապա Հոկտեմբերյանի շրջան ուղղությամբ, անտառատնկման համար առանձնացնելու է 450 հեկտար ընդհանուր տարածությամբ հողամասեր։ Թալինի շրջանում այդ նույն նպատակի համար առանձնացվելու է 150 հեկտար հողամաս։ Էջմիածնի շրջանում նախատեսված է տնկարան կազմակերպել 50 հեկտար տարածության վրա։

Մոտ ժամանակներս Մարտունու, Ախտալի և Ախուրյանի շրջաններն են մեկնելու ևս երկու բրիգադ անտառատնկման համար 800 հեկտար ընդհանուր տարածությամբ հողամասեր առանձնացնելու համար։

Բացի դրանից շրջաններն են մեկնել ևս հինգ բրիգադա՝ բարդի, նշենու և թփատեսակների ոստեր պատրաստելու համար։

Փետրվարի սկզբին ռեսպուբլիկայի շրջաններում արդեն առանձնացվել էր երկու միլիոն ոստ։

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Իջևանի շրջանը էլեկտրիֆիկացման բնագավառում նշանակալից հաջողություններ է ձեռք բերել։ 1948 թվի վերջում լրիվ էլեկտրիֆիկացման էին ենթարկված շրջանի բոլոր գյուղերը, Իջևանի և Սևքարի սղոցարանները, մեքենա-տրակտորային կայանի արհեստանոցը, տեղարդկոմբինատը և շրջանի մի շարք այլ ձեռնարկություններ։

1948 թվին շրջանի կոլխոզները կառուցել են հինգ էլեկտրաղաց և 10 սղոցարան ու դարբնոց։ Իջևանգէսի կապիտալ վերանորոգման համար կազմակերպվել է չորս կիլովատանոց։ Շրջանի կոլխոզնիկները պարտավորություն են ստանձնել գյուղատնտեսական արտադրության կարևորագույն պրոցեսների էլեկտրիֆիկացումն ավարտել 1949 թվի ընթացքում։

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՈՒՄԸ

Դեկտեմբերին շահագործման հանձնվեցին Ստեփանավանի շրջանի Կաթնաղբյուր, Կույբիշևո և Շագարդա գյուղերի միկրոգէսները։ Ավարտվելու մոտ է Ագարակգէսի շինարարությունը։

Ուռուտ, Սվերդլով, Մաքսիմ Գորկի, Լոռիբերդ և Լեջան գյուղերը էլեկտրիֆիկացվել են։

ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆԸ

1948 թվին շրջանում սկսվեց երկու հիդրոէլեկտրակայանների շինարարությունը։ Այգեձոր, Ջինարի, Ղրղի, Վերին Կարմիրաղբյուր, Նորաշեն և Ջորաթան գյուղերի կոլխոզնիկների ուժերով առաջ է տարվում Այգեձորգէսի շինարարությունը։ Կոլխոզնիկները կարճ ժամկետում ավարտել են ԳԷՍ-ի շենքի կառուցումը և խողովակաշարի մոնտաժը։ Գյուղերում կառուցվել են տրանսֆորմատորային ենթակայաններ, էլեկտրահաղորդման գծեր են անցկացվել կոլխոզնիկների տներում։ Այգեձորգէսի շինարարության վրա առանձնապես լավ են աշխատել Այգեձոր և Ղրղի գյուղերի կոլխոզնիկները։

Այգեձորգէսում սարքավորման մոնտաժի աշխատանքներ են տարվում։ ԳԷՍ-ի կառուցողների կոլեկտիվը բոլոր ուժերը լարում է, որպեսզի շուտ շահագործման հանձնի հիդրոէլեկտրակայանը։

Շրջանի Թովուզ, Նավուր և Բերդ գյուղերի կոլխոզնիկները կառուցում են Բերդի ԳԷՍ-ը։ Թովուզի կոլխոզնիկներն արդեն ավարտել են էլեկտրակայանի շենքի շինարարությունը։ Լրիվ պատրաստվել է նաև ջրանցքը։

Այս տարվա սկզբին շրջանի կոլխոզնիկները կսկսեն նաև Ծաղկավանգէսի շինարարությունը, որը էլեկտրաէներգիա կմատակարարի Ջինչին, Հախում, Ծաղկաձոր և Պառավաքար գյուղերին։ Այսպիսով, 1949 թվին շրջանը համատարած էլեկտրիֆիկացման ենթարկված կլինի։

ԿՈՆՍԵՐՎԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Հունվարի 1-ին փորձարկվեց Լենինականի նորակառույց Կոնսերվի գործարանը։

Համաձայն նախագծի գործարանը արտադրելու է մսի կոնսերվ՝ ութը ասորտիմենտով։

ՁԿՆԱԲՈՒԾԱՐԱՆՈՒՄ

ՆՈՐ ԲԱՅԱՁԵՏ.— Ձկնաբուծարանի կոլեկտիվը վերջին տասն ամսվա ընթացքում աճեցրել և Սևանի լիճն է բաց թողել մոտ 32 միլիոն փոքր ձկներ։

Փետրվարի վերջերին Ձկնաբուծարանի կոլեկտիվը բաց թողեց 2 միլիոն 800 հազար փոքր ձուկ, որով գերակատարեց պետական առաջադրանքը։

ՆՈՐ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Երևանի քաղաքային Սովետի գործկոմի նախագծային արվեստանոցում ավարտվում է 1949 թվին մայրաքաղաքում կառուցվելիք շինարարության նախագծերի կազմումը։

Ճարտարապետ Գ. Աղաբաբյանի բրիգադն կազմել է Միկոյանի պողոտայի վրա այս տարի կառուցվելիք բազմահարկ վեց շենքերի նախագծերը։ Նախագծերը կազմելիս ճարտարապետները հաշվի են առել շինարարությունը արագ կատարելու պահանջը։ Հունվարի վերջերին լիովին ավարտվել է Ամիրյան փողոցի վրա կառուցվելիք բնակելի տների էսքիզային և տեխնիկական նախագծերը։ Ճարտարապետ Գ. Թամանյանը պատրաստում է 26 կոմունարների անվան այգու վերափոխման նախագիծը. այգում ստեղծվելու են կուլտուրական հանգստի մի շարք նոր հարմարություններ։

Ճարտարապետ Մ. Գրիգորյանը պատրաստել է մանկական երկաթուղու հանգստի և կուլտուրայի պարկի նախագիծը։

ԱՐԹԻԿՆ ԱՅՍՕՐ

Արթիկը, մինչ սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, հանդիսացել է մի հետամնաց գյուղ։ Այդ ժամանակները նրա ազգաբնակչության միայն երկու տոկոսն է եղել գրագետ։

Սովետական իշխանության տարիներին անճանաչելիորեն կերպարանափոխվել է Արթիկը։ Սքանչելի վարդագույն տուֆից այստեղ կառուցվել են երկհարկ ու եռահարկ բազմաթիվ տներ, երևան են եկել լայն, դեղեցիկ ու ծառազարդ փողոցներ։ Գեղեցիկ շենքեր են կառուցվել անցյալի Արթիկում գոյություն չունեցող թատրոնի, կինոյի, հիվանդանոցի, բուժկայանի, բաղնիքի, հյուրանոցի, մանկապարտեզների ու մանկամարմնիների համար։ 1945 թվից սկսած Արթիկը համարվում է քաղաք և հանդիսանում է շրջանային կենտրոն։ Քաղաքի հրապարակում կանգնեցված է Լենինի հուշարձանը։

Մի տեսարան Արթիկ շրջկենտրոնից

Քաղաքում կառուցվել են գեղեցիկ աղբյուր-հուշարձաններ, իսկ նրա կենտրոնում էլ գտնվում է կուլտուրայի ու հանգստի նորատունկ այգին։

1927 թվին Արթիկի շրջակայքում հայտաբերվեցին տուֆի հանքեր, իսկ մի տարի էլ չանցած սկսվեց այդ սքանչելի շինարարական քարի մեքենայացված հանույթը։ Այսօր անընդհատ դեպի մեր մեծ ու անծայրածիր

հայրենիքի նորակառույցներն են շարժվում վարդագույն տուֆով բարձված փնացքները։ Գերմանական վանդալների կողմից ավերված Դենպրոդէսի վերականգնման համար Արտիկտուֆի հանքագործները յոթ հազար խորանարդ մետր տուֆ հատաքար են բարձել։ Արթիկի տուֆը դարձել է Հայաստանի հիմնական շինանյութը։

Ռեսպուբլիկայի կուլտուրական ու արդյունաբերական քաղաքներից մեկն է դարձել Արթիկը։ Քաղաքի տարրական ու միջնակարգ դպրոցներում այս տարի սովորում է ավելի քան 1500 աշակերտ։ 200 արթիկցիներ սովորում են Երևանի ու Լենինականի բարձրագույն ուսումնական հիմնարկներում։ Արթիկի շրջանում աշխատում են բազմաթիվ ինժեներներ, գյուղատնտեսներ, բժիշկներ, անասնաբույժներ, դասատուներ, դերասաններ։ Ավելի քան 2500 արթիկցիներ պարգևատրվել են Սովետական Միությունի շքանշաններով ու մեդալներով։

Քաղաքում ուժեղ թափով ծավալվել է բընակարանային շինարարությունը։ Անցյալ տարում շահագործման է հանձնվել 150 բընակարան, որոնք տրամադրվել են հայրենադարձ հայերին։ Շահագործման են հանձնվել նաև երեք բազմահարկ բնակելի տներ, ինչպես և շրջանային Սովետի ու մեքենա-տրակտորային կայանի շենքերը։ Անցյալ տարում անհատական բնակարանային շինարարության համար բաց է թողնվել մեկ միլիոն 300 հազար ռուբլու վարկ, իսկ քաղաքի բարեկարգման ու կանաչապատման համար ծախսվել է 120 հազար ռուբլի։*)

---

*) «Սովետական Հայաստանում» բաժնի նյութերը քաղված են Հայաստանի Հեռագրական Գործակալության (ՀՀԳ) հաղորդագրություններից և Սովետական մամուլից։

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՅ ԱՂԵՏՅԱԼՆԵՐՈՒՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պաշտոնաթերթ «Միութիւն»-ը (թ. 238) հաղորդում է.—

Կեդրոնական Վարչական Ժողովը վերջերս 10 հազար տոլարի հատկացում մը ևս ըրավ Երուսաղեմի Ս. Հակոբա վանքը ապաստանած մեր ազգակիցներուն ի նպաստ, անոնց վիճակի մասին Ամենապատիվ Պատրիարք Հոր կողմե հաղորդված նորագույն տեղեկությունները խորհրդակցության առարկա ընելե ետք։ Պաղեստինի տագնապի շրջանին, Միության կողմե Երուսաղեմի մեր Պատրիարքարանին տրամադրված ընդհանուր գումարն է 40 հազար տոլար, որուն 30 հազար տոլարը իբրև զուտ նպաստ հոգուտ աղետյալներու, և 10 հազար տոլարը իբրև կտակային հատկացում կամ նվիրատվություն Ս. Հակոբա վանքին։

ԼՈՒՐԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԷՆ

«Ժողովուրդ» թերթը (թ. 1235) հաղորդում է.—

Երուսաղեմի Ս. Հակոբա վանքի լուսարարապետ Եղիշե վարդապետ Տերտերյան Պեյրութ հասնելով հայտարարած է.—

— Մայիս 14-են մինչև վերջին օրերը վանքին վրա ավելի քան 200 ռումբեր ինկած են։

Բարեբախտաբար 125 սմ երկարություն ունեցող ռումբերեն միայն երկու հատը պայթեցան և այն ալ առանց համապատասխան վնաս պատճառելու վանքին և ժողովուրդին։

Վանքին կարգ մը շենքերուն տանիքներն ու պատերը քանդվեցան և խախտուտ շինությունները վնասվեցան։ Ոչ մեկ պատուհան կամ դուռ անվնաս կմնա։

Պատճառված վնասները կգնահատվին շուրջ քառորդ միլիոն լիրանայան ոսկի։

Հինգ ամիսներե ի վեր կրակ կտեղա քաղաքին վրա։

Միաբանության անդամներեն ոչ ոք կոտլե հեռանալ։ Միայն քանի մը հոգի հեռացան բժշկական հանձնարարությանց հետևանքով։ Միաբանությունը իր հերոսական դիմադրությունը ցույց տվավ նեղ օրերուն. բան մը, որ իր անհերքելի օգուտները ունեցավ։

Պատրիարք Հայրը կմտածե նախակրթարանի բաժանմունքը վերաբանալ, լավ պաշտպանված շենքի մը մեջ։

Հայֆայի մեջ կմնան մոտ 225 անձեր, Յաֆայի մեջ 350։ Պատրիարք Հայրը իր ամբողջ կարելին ըրավ, որ հոգևոր հայր մը ղրկվի անոնց, բայց անկարելի եղավ։ Վարչություններ կազմված են այս երկու քաղաքներուն մեջ, ժողովրդային կարիքներուն գոհացում տալու համար։

Բեթղեհեմի վանքին մեջ ունինք մոտ 200 հոգի, որոնք կկերակրվին վանքեն։

ՄԻՀՐԱՆ ԳԱՐԱԿԵՈՂՅԱՆԻ ՄԱՀԸ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պաշտոնաթերթ «ՅՈՒՇԱՐԱՐ»-ը (թ. 20, 1948 թ.) հաղորդում է.

Միհրան Գարակեոզյան, ազգային բարերարը, որուն Հ. Բ. Ը. Միության Կեդր. Վարչությունը արդեն տարիներ առաջ տված է Բարերար Անդամի տիտղոսը, իր հավիտենական հանգիստը մտավ հոկտ. 7-ին, Նյու-Յորքի մեջ։

Ողբացյալը 1874-ին ծնած էր Պոլսո մեջ։ Բարձրագույն ուսումը ստացած էր Պոլսո մեջ։ 1896-ին եկած էր Ամերիկա և հիմնադիրներեն էր Ա. և Մ. Գարակեոզյան տան։

Հոշարկավորությունը կատարվեցավ հոկտ. 9-ին, Նյու-Յորքի Ս. Խաչ եկեղեցվո մեջ, նախագահությամբ Առաջնորդ Դերշ. Տ. Տիրան Ս. Եպիսկոպոսին և մասնակցությամբ Գերշ. Տ. Տիրայր Ս. Արքեպիսկոպոսին, Հոգշ. Տ. Եղիշե վարդապետին և Արժ.

Տ. Արտեն և Տ. Առնակ քահանաներուն։ Դամբանականներ խոսեցան Տ. Տիրայր և Տ. Տիրան Սրբազանները։

Տ. Տիրայր Սրբազան «եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնավորք և ես հանգուցից զձեզ» բնաբանով խոսեցավ հանգուցյալի կյանքին իսկական արժեքները վերլուծող և սփոփարար դամբանական մը։ Բացատրեց թե Միհրան Գարակեոզյան միայն իր անձին համար չէր որ ապրեցավ, այլ անոնց համար որ տառապած, վշտակրած և օգնության կարոտ էին։ Տպավորիչ կերպով պարզեց, թե ան եղավ ամենուն բարեկամը իր բարեգործությունները տարածելով թե մոտը և թե հեռուն։ Սրբազան դամբանախոսը ավելցուց նաև թե հանգուցյալը իր սրտին մեջ ուներ երկնքի արևը, որուն կենսապարգև ճառագայթներեն կօգտվեին անոնք, որ օժանդակության և մխիթարության պետք ունեին։ Դամբանախոս Սրբազանը հայրական օրհնությամբ մխիթարեց ողբացյալին այրին և դուստրը, եղբայրը՝ Տիար Արշակ Գարակեոզյանը զոր պատշաճապես անվանեց նահապետ և ընտանեկան բոլոր պարագաները և սրտագին ցավակցություն հայտնելով երկնային մխիթարություն մաղթեց։

Առաջնորդ Սրբազան հայրն ալ խոսեցավ գնդեցիկ և խմաստալից դամբանական մը։ Գովեց հանգուցյալին կյանքը՝ ըսելով թե ազնիվ ազգի մը մեծ զավակն էր ան, որ գրնաց միանալու այն հոգիներուն, որոնք զԱստուած սիրած և մարդկության ծառայած են։ Ան հայրենասեր և եկեղեցասեր մեծ դեմք մը եղած էր, ան ամենուն օգնեց և ծառայեց։ Ակնարկելով հանգուցյալին Բարեգործականի մատուցած ծառայությանց, Սրբազանը հարեց թե ան ծառայեց հայոց մեծագույն Ընկերության և առանց անոր ծառայության Հ. Բ. Ը. Միությունը Ամերիկայի մեջ պիտի չըլլար այն, ինչ որ է այսօր։ Առաջնորդ Տ. Տիրան Սրբազան ևս իր խոր ցավակցությունը հայտնեց ողբացյալին ընտանեկան բոլոր պարագաներուն անոնց հայցելով երկնային մխիթարություն։

Հ. Բ. Ը. Միությունը կսգա իր մեկ մեծ Վաստակավորին, Գանձապահին և Բարերար Անդամին մահը։

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի։

ՀԱՅԵՐԸ ԻՐԱՔԻ ՄԵՋ

«Ժողովուրդ» թերթը (թ. 1195) հաղորդում է.—

Իրաքի հայ գաղութը կբաղկանա շուրջ 15 հազար հոգիե՝ մեծ մասամբ հաստատված մասնավորապես Պաղտատի, և ապա Մոսուլի, Պասրայի, Քերքուքի և Սին-էտ Տըպպանի մեջ։ Բացի քանի մը աշքառու հողատերերե, մեծահարուստներե, առևտրականներե, իրաքահայ գաղութին ժողովուրդը ընդհանրապես արհեստավոր դասակարգին կպատկանի։

Իրաքի գաղութը ներկայիս առաջնորդ չունի։ Վերջին անգամ այդ պաշտոնը հոն կվարեր Դամասկոսի թեմի այժմու առաջնորդ Գերշ. Տ. Ռուբեն Ս. Արքեպիսկոպոս Մանասյան։ Իբրև Առաջնորդական Տեղապահ, այժմ կպաշտոնավարե Տեր Գրիգոր քահանան։ Իրաքի նման հայաշատ գաղութի մը մեջ կան միայն երկու քահանաներ։

Հայաստանյայց Եկեղեցվո թեմը Պաղտատի մեջ երկու ու Պասրայի և Մոսուլի մեջ մեյմեկ սեփական եկեղեցիներ ունի։ Ասկե զատ, կան նաև հայ կաթոլիկներ և փոքր թիվով բողոքականներ։

Ինչպես Սուրիա, Լիբանան և այլուր, Իրաքի հայ գաղութն ալ Պաղտատի մեջ ունի իր Քաղաքական և Գավառական ժողովները, որոնց հսկողության տակ կա նաև Ուսումնական խորհուրդը։ Ազգային իշխանության անմիջական հովանավորության տակ կգտնվին Թարգմանչաց և Սվաճյան երկսեռ վարժարանները, երկուքն ալ օժտված իրենց սեփական շենքերով, որոնց աշակերտության թիվը կհասնի շուրջ 1000-ի։ Ասոնցմե զատ, արվարձաններու մեջ կան նաև Սըլեխ և Նորաշեն վարժարանները, շուրջ 400 աշակերտներով, որոնք կմատակարարվին տեղական նպաստներով և միջոցներով։ Ընդհանուր առմամբ այս կրթարաններուն ուսումնական մակարդակը նախանձելի չէ։ Հակառակ գաղութին քիչ թե շատ բարեկեցիկ ըլլալուն, վարժարանները հազիվ նախակրթարանի մը մակարդակին կհասնին։

Իրաքի հայաշատ բոլոր կեդրոններուն մեջ գոյություն ունին ազգային կազմակերպություններ և միություններ։ Անոնցմե գլխավորագույնը Հ. Բ. Ը. Միությունը, մասնաճյուղեր ունի բոլոր քաղաքներուն մեջ՝ շուրջ 600 անդամներով։ Պաղտատի և Քերքուքի մեջ մասնավորաբար ան ունի իր տուները, ուր պարբերաբար հանդիսություններ, դասախոսություններ, ներկայացումներ և ուրիշ ձեռնարկներ կկատարվին ազգային կյանքը վառ պահելու համար։ Իրաքի Հ. Բ. Ը. Միությունը վերջերս Պաղեստինի կարոտյալներուն և աղետյալներուն ի նպաստ հանդեսներ կազմակերպեց Պաղտատի և Քերքուքի մեջ։ Պաղտատի հանդեսեն զուտ հասույթ գոյացավ շուրջ 900 տինար, իսկ Քերքուքի պարահանդեսեն գոյացավ 80 տինար։ Երկու գումարներն ալ ամբողջությամբ փոխանցվեցան Պաղեստինի Օգնության Կոմիտեին։

ՈՐՔԱՆ ՀԱՅԵՐ ՄՆԱՑԵՐ ԵՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ ՆԵՐԳԱՂԹԵՆ ԵՏՔ

«Կռունկ» շաբաթաթերթը (թ. 1511) հաղորդում է.—

Սելանիկի մեջ մնացեր է 1500—1600 հայ,

Քավալայի մեջ 180,

Սերեզ և Տրամա քաղաքներուն մեջ մնացեր են միայն հինգ հայ ընտանիք, 18 հոգի,

Թրակիո երեք կեդրոններուն՝ Քսանթիի, Քոմոթինի և Ալեքսանդրուպոլսո մեջ միայն 600,

Պելեպոնեսի հայկական երկու կեդրոնները՝ Փաթրաս և Քալամաթաուր, ուր 120 հայ ընտանիքներ կբնակեին, գրեթե դատարկված են, միայն Փաթրասի մեջ մնացած են 22 ընտանիք, ընդամենը 70 հոգի,

Կորնթոսի մեջ մնացեր է յոթը ընտանիք, 30 հոգի։

Հոնիական կղզիներու մեջ հայերու թիվը կհաշվվի 40,

Եգեական մեջ 80,

Կրետեի մեջ 100,

Իրաքլիոնի մեջ 130։

Հայերեն բոլորովին դատարկված են գրեթե Թեսալիո, Եպիրոսի, Մակեդոնիո և Պելեպոնեսի գյուղերը։ Թեսալիո կեդրոններեն միայն Լարիսայի մեջ մնացեր են ութը հայ ընտանիք 55 անձ և Վոլոյի մեջ 3 ընտանիք 12 անձ։

ԱՆԱՏՈԼՈՒԻ ՀԱՅՈՑ ԹԻՎԸ

«Կռունկ» շաբաթաթերթը (թ. 1513) հաղորդում է.—

Կեսարացի Տ. Հայկազուն քահանայի պատրաստած վիճակագրության մը համեմատ ներկայիս Անատոլուի մեջ ցրված հայերը բաժնված են հետևյալ կերպով.—

Կեսարիա 3.000 անձ,

Սեբաստիա 2.925,

Արաբկիր 2.250,

Եոզղատ 1.525,

Տիգրանակերտ 1.005,

Խարբերդ 750,

Մեզրե 700,

Մարզուան 580,

Այնթափ և Քիլիս 507,

Օրտու 200,

Գոնիա 100,

Թոքատ 42,

Չորում 41,

Ամասիա 500,

Մալաթիա 500,

Գումարը 14.625

Անատոլուի մնացյալ մասերուն մեջ գտնըվող հայերու թիվը, ըստ Տեր Հայկազունի, կհասնի 5.000 անձի։

ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ

«Հայ մամուլ» շաբաթաթերթը (թ. 156) հաղորդում է.—

Ինդոնեզիայի հայերուն թիվը 400-ը չանցնիր, որոնցմե 300-ը կբնակին Սուրապայա, 50-ը՝ Պաթավիա և 50-ը՝ Մաքասար։

Հայերը հոն երկու եկեղեցիներ ունին, մեկը Սուրապայայի և մյուսը Պաթավիո մեջ։

«Էտկարը» տարին, որ կից է Սուրապայայի եկեղեցիին, կծառայե միանգամայն թե հավաքույթներու, թե՛ ներկայացումներու և թե՛ երգահանդեսներու։ Այդ քաղաքին հայերը ունին իրենց հատուկ թատերախումբը և սբորի քլուպ մը։ Պատերազմե առաջ ունեին իրենց մասնավոր պարասրահը։ Ազգային կյանքը կշարունակվի և ժամանակ առ ժամանակ տեղի կունենան թատերական ներկայացումներ և հանդեսներ։

Սուրապայան այդ տեղերու հայության ընկերային կեդրոնն է, բայց հայ համայնքին խորհուրդը Պատավիա կգտնվի։ Այդ խորհուրդն է, որ կմատակարարե ազգային եկամուտները և իրեն ենթարկված կմնան Սուրապայայի և Մաքասարի կոմիտեները։

ՍԱՆ ՓԱՎԼՈՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԿՈՒՆԵՆԱ ՍԵՓԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ

«Պայքար» թերթը (թ. 12016) հաղորդում է.—

Սան Փավլոյի հայ համայնքի ջանքերով շինված է վարժարան մը «Դուրյան» անունով և անցյալ մարտեն սկսյալ դասավանդությունները տեղի կունենան դպրոցի նոր շենքին մեջ։

Մյուս կողմե հալեպահայ հայրենակից մը Պ. Ճորճ Ռըզգալլա ձեռնարկած է եկեղեցիի մը շինության հայ գաղութին համար։

Եկեղեցիի շինությունը պիտի ավարտվի շուտով և օծումը պիտի կատարե Հարավային Ամերիկայի թեմին Առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատրյանը։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ Թեհրանի «Վերածնունդ» թերթի 1948 թվի սեպտեմբերի 26-ի համարի առաջին էջում զետեղված է Վեհափառ Հայրապետի լուսանկարը և «Անվանակոչության տոնը Ն. Վ. Տ. Տ. Գևորգ Զ Շինարար Կաթողիկոսի» խորագիրը կրող հոդվածը: Ստորև բերում ենք այդ հոդվածից մի հատված.

«Երեկ, շաբաթ, 25 սեպտեմբեր, անվանակոչության տոնն էր Նորին Վեհափառություն Տ. Տ. Գևորգ Զ Շինարար Կաթողիկոսի։

Հայ ներկա իրականության կրոնական ամենակարկառուն և անձնվեր դեմքն է Գևորգ Զ Շինարար Կաթողիկոսը, որն ամենաեռանդագին աշխատանքով, անձնվիրությամբ, իմաստավորությամբ, հայրենասիրությամբ ու խոհունությամբ վարում է Սովետական Հայաստանում գտնվող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բոլոր գործերը, որոնք հայ ժողովրդի հավատքի պահպանության, լեզվի, մշակույթի ու իրավունքների ամբողջականությունն են ներկայացրել անցյալում, իսկ այսօր վերածնված ու վերակենդանացած Սովետական Հայաստանում բաժանվում են արդեն երկուսի— հոգևոր և քաղաքական։ Սակայն, ուրախ ենք արձանագրելու, որ Գևորգ Զ, բարձր մտավորականության տեր, գիտակից հայրենասեր և ազգանվեր անձ, շատ խոհունորեն իր ուժն ու կարողությունը շաղկապել է... էլ ավելի զարկ տալու համար Մայր երկրի արագաթռիչ վերելքին, հայրենադարձի նվիրական գործին, սփյուռքի հայ ժողովրդի միասնական կապին և ամենակարևորը՝ Հայ ժողովրդի անժխտելի իրավական պահանջի՝ նրա վիլայեթների վերադարձման ու Մայր Հայրենիքին կցվելու արդար դատին։

Թե՛ Մայր Հայրենիքի և թե՛ սփյուռքի հավատացյալ, ազգասեր ու գիտակից հայությունը հավատքով ու համոզումով սերտորեն կապված է Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռին, վերածնվող Սովետական Հայաստանին, իր խոհուն ու ազգասեր Շինարար Կաթողիկոս Գևորգ Զ-ին, որի անվանակոչության տոնը ջերմագին շնորհավորելով, մաղթում է նրա գործերի կատարյալ հաջողությունն ու իրականացումը, որով Հայ ժողովուրդը պիտի երջանկանա իր իրավունքների վերականգնումով, իր հայրենադարձի հաղթանակով ու իր Հայրենիքի է՛լ ավելի բարգավաճելով, հառաջադիմելով ու ծավալվելով։

Սրտանց մաղթում ենք մեր կորովի ու սիրեցյալ Վեհափառին երկար կյանք ու հարատևություն, վայելելու համար իր ժրաջան և հայրենանվեր գործունեության արգասիքները։

Ֆիլադելֆիայում հրատարակվող «Կռունկ» շաբաթաթերթի 1948 թ. օգոստոսի 27-ի համարի առաջին էջում զետեղված է Վեհափառ Հայրապետի լուսանկարը և ամբողջությամբ արտատպված Ամենայն Հայոց Հայրապետի «Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հոգևոր դասին, սրբազան եղբարց ի Քրիստոս» խորագիրը կրող նամակը, որը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի 1947 թ. նոյեմբեր—դեկտեմբեր համարում: Շաբաթաթերթի այդ նույն էջում զետեղված է նաև Ս. Էջմիածնի Մայր Տաճարի լուսանկարը, ինչպես և բարեբար Հայկ Գավուրճյանի լուսանկարը: Այս լուսանկարների տակ զետեղված են Ռումինահայ թեմի Առաջնորդ Տ. Վազգեն Ծ. Վարդապետի, Սովետական Հայաստանից վերադառնալուց հետո, Բուխարեստի Հայոց եկեղեցու թեմից արած հաղորդումները Ս. Էջմիածնի ու Հոգևոր ճեմարանի մասին և Հոգևոր ճեմարանի Ա լսարանի սան Փայլակ Այնթափյանի 19 ապրիլ 1948 թվակիր երախտագիտական նամակը՝ ուղղված բարեբար Հայկ Գավուրճյանին:

Այս նույն համարի, «Հայրապետի օրինակով» խորագիրը կրող, խմբագրական հոդվածում շաբաթաթերթը գրում է.—

Այս շաբթու միայն ապահովագրյալ զգային թղթատարով ստացանք հապաղած 1947 նոյեմբեր—դեկտեմբեր թիվը «Էջմիածին» պաշտոնաթերթին, որուն մեջ հրատարակված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Տ. Տ. Գևորգ Զ Հայրապետի նամակը՝ ուղղյալ «Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հոգևոր դասին»։

Ինչպես կերևի, Ն. Ս. Օծության այս նամակին առիթ տվողը անցյալ տարվան գարնան Պոլիս այցելող ամերիկացի լրագրողներեն Ռոյ Հաուըրտի Հայոց մասին ըրած այն վիրավորական և անպատկառ արտահայտությունն է, որն իր ատենին նյութ եղավ գաղութահայ մամուլին մեջ։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին «մեծ վիշտ» է պատճառած Ռոյ Հաուըրտի այդ «արտառոց հայտարարությունը», և իր պաշտոնին ու կոչումին խորապես գիտակից, անձնվեր Կրոնապետն հարազատ թարգմանը կհամդիսանա Ռոյ Հաուըրտի անարգական ակնարկությանն դեմ «իմորին զայրույթ և բողոք» հարուցանող «Հայ Ազգի այնքան արտոտած սրտին», ու ոչ միայն զորավոր կերպով կդատապարտե Ռոյ Հաուըրտները, այլ պատմական անհերքելի փաստերով ու կորովի կերպով ցույց կուտա, թե արդարամիտ և ճշմարտասեր ամերիկացիներ բարեկամ եղած են ստեղծագործ և աշխատասեր Հայուն ու անոր արդար գատին, թե որքան իրավացի է Հայուն հողային պահանջը «չարդարարդ, «ոճրագործ», «հափշտակող» Թուրքեն ու կներկայացնե ամերիկացի հոգևոր դասին «Հայ Ազգի օրինական ու արդար դատը», իրողություններու լույսին տակ, որպես «Ազգընտիր Կրոնապետ Հայաստանյայց Առաքելական Աթոռ Եկեղեցվոյ», քաջաբար պաշտպանելով «Հայ Եկեղեցու և Հայ ժողովրդի սրբազան իրավունքները «զանոնք» անիրավաբար ոտնահարողներուն» դեմ։

Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի պաշտոնաթերթ «Հայաստանեայց Եկեղեցի»-ն ...խմբագրական մը նվիրած էր Հայ դատին համար քսան հազար հոգևորականներու ընտորագրությամբ Ամերիկյան կառավարության մատուցված դիմումին։...

...նամակով մը Ամերիկյան կառավարության ներկայացվելիք խնդրագրի մը պատճենը ղրկած է ամերիկացի հարյուր հազար հոգևորականներու, որոնցմե քսան հազարը ստորագրած են դիմումնագիրը, զոր անոնց անունով մատուցված է Ամերիկյան կառավարության։...

...Վեհափառ Հայրապետին Միացյալ Նահանգաց հոգևորական դասին ուղղված նամակը, որքան ալ հապաղած ըլլա, իր արժեքեն քան մը կորսունցուցած չըլլար, եթե մեր Գերաշնորհ Առաջնորդ Հայրը, Ամերիկահայ Եկեղեցական Համայնքին անունով, թարգմանաբար ղրկե այն հարյուր հազար ամերիկացի հոգևորականներուն, որոնց ղրկված էր Ամերիկայի կառավարության մատուցված խնդրագիրը,— կամ գոնե այն քսան հազար հոգևորականներուն, որոնք ստորագրած էին զայն...

Բոստոնում հրատարակվող «Պայքար» թերթը, 1948 թ. հոկտեմբեր 1-ի համարում, ամբողջությամբ արտատպել է «Էջմիածին» ամսագրի 1948 թ. մարտ—ապրիլ համարի «Մի կարևոր խնդրի շուրջը» խորագրով խմբագրական հոդվածը, իսկ հոկտեմբեր 7-ի համարում էլ արտատպել է Վեհափառ Հայրապետի, ամսագրի այդ նույն համարում լույս տեսած, սրբատառ Կոնդակը՝ ուղղված Պողոս Նուպար Փաշայի որդիներին՝ Ջարեհին և Առաքելին:

Այս առթիվ «Պայքար» թերթը, հոկտեմբեր 1 համարի «Խելացի առաջարկ մը» խորագիրը կրող խմբագրական հոդվածում, գրում է.—

Քիչ անդին ընթերցողները պիտի կարդան խմբագրական մը, որ հրատարակված է Ամենայն Հայոց Կաթողիկոսության «Էջմիածին» հանդեսին մեջ և իրենց պետք է թելադրե շատ մը զգացումներ և խորհրդածություններ։

Չենք գիտեր թե ով գրած է այդ խմբագրականը, բայց անկախ իր գրական իսկական շնորհեն, որ անոր տողերուն մեջ կհայտնվի, այդ խմբագրականը անգերազանցելիորեն կհայտարերե հայ ժողովուրդի հատկությունները...

Եթե մարդիկ հայրենասիրության վկայական պիտի ստանան իրենց գրածներուն համար, «Էջմիածին»-ի հրապարակագիրը անտարակուսելիորեն անունցմե մեկն է, և անոնց առաջիններեն։ Եվ այս հեռավորությենեն հարգանք մը կերթա իրեն։

...մենք պետք ունինք այն ազգային զգացումին, որ մեր գլուխը բարձր բռնե կրթեն-

լով մեր ազգային հատկություններուն, որոնք այնքան խանդավառ, այնքան անկեղծ ջանչով տրված են «Էջմիածին»-ի խմբագրականին մեջ։

Ասիկա առաջին զգացումն է, որ անգամ մըն ալ աշխարհի ամեն կողմը ցրված և Հայաստանի մեջ ապրող հայերը կմիացնե իրարու ինքնավստահությամբ և հպարտությամբ...

Հաջորդ անդրադարձումը պիտի ըլլա, թե Էջմիածին... հիմա վերադարձի ճամբուն մեջ է, դեպի բնականոն կյանք, իր հիմարանով և ամսագրով։ Եվ հայեր, որ միշտ ալ իրենց սրտին մեջ որոշ տեղ ունին Էջմիածնի համար... պիտի ոգևորվին այդ իրողությունով։

Երրորդը պարտականությունն է որ կթելադրվի «Էջմիածին»-ի խմբագրականեն և անգամ մըն ալ կշեշտե թե հոն, Հայաստանին մեջ, սրտերը բոցավառ են հայկականությամբ, լեցված են դառնությամբ Հայաստանի հասած ամեն մեկ անիրավությունին, և կուզեն ձեռքի տակ ունենալ բոլոր վավերաթուղթերը, որ մեկ կողմե պիտի զորացնեն հայ ժողովուրդի ինքնավստահությունը և մյուս կողմե պիտի զորացնեն պահանջը կամ դատապարտությունը այն հզորներուն դեմ, որ բարոյականեն ավելի շոշափելի պարտք մը ունեին այս ժողովուրդին հանդեպ, և թերացան այնքան ողբերգականորեն։

Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, հավատարիմ պատմության մեջ իր ժողովուրդի և իր կատարած դերի պարտադրություններուն, և հավատարիմ զգացումին թե դեպի առաջ պիտի նայինք, կոչ կընե որ Հայաստան ղրկվին այն բոլոր վավերաթուղթերը, որ ցույց կուտան թե այս ժողովուրդը ինչ ըրավ առաջին համաշխարհային պատերազմի նախընթացին և անկե ետք։

Դիմած ու «խնդրած» է որ Հայաստան ղրկվին Պողոս Նուպարի, իբրև ազգային պատվիրակի, դիվանաթուղթերը։ Բնական խնդրանք, որ կրնար նույնիսկ հրամայական պահանջի ձևով դրվիլ, որովհետև ոչ ոք իրավունք ունի անձնական սեփականություն — և նյութականորեն շահագործելի նյութ — նկատելու ազգային պաշտոնական վավերաթուղթերը։ Մինչդեռ Էջմիածնի Գահակալը այնքան զգայուն ու թախանձալից շեշտ կդնե իր խնդրանքին մեջ, որ Նուպարի զավակները Հայաստան ղրկեն ամեն մեկ թուղթի կտոր, որ իրենց հոր հայ-քաղաքական գործունեությունն հետ առնչություն ունի։

Ասիկա մեզի առիթ կուտա որ հիշենք թե մասնավորապես առաջին համաշխարհային պատերազմի օրերուն այս գաղութին ալ ունեցավ իր «արխիվ»-ը... Ուաշինկդընի մեջ տարված քաղաքական գործունեությամբ, որուն դեկավարիչ ուժն էր Ազգային Միությունը։ Ո՞ւր է ատիկա հիմա, իր նվազագույն արժեքովն անգամ բան մը կրնա դուրս դալ, և մեր պարտքն է, որ «Էջմիածին»-ի այդ հոյակապ ու հայրենասիրական խմբագրականին պատասխանենք դրական ոգով, հոն ցրրկելով թե Ազգային Միության այդ «արխիվ»-ը և թե ունէ նոր վավերաթուղթ, որ կրնա ունէ չափով գորացնել մեր դատի վավերաթղթային բաժինը։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կեդրոնական Վարչության ժողովի պաշտոնաթերթ «Միութիւն»-ը, Վեհափառ Հայրապետի, Հ. Բ. Ը. Միությանն ուղղված, Կոնդակի առթիվ թիվ 225-ում գրում է. —

«Միութիւն»-ի անցյալ թիվին և կարգ մը հայ թերթերու մեջ արդեն հրատարակվեցավ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Գեորգ Զ-ի օրհնաձիր կոնդակը՝ ուղղված Հ. Բ. Ը. Միությանն։

Կեդրոնական Վարչական Ժողովի նիստին մեջ, անկեղծ գոհունակությամբ և խորին երախտագիտությամբ կարդացվեցավ սույն կոնդակը։ Անհունորեն երջանիկ ենք, որ ազգիս երջանկահիշատակ վերջին հայրապետներեն մեր Միությանն ուղղված գնահատանքի և օրհնության պատգամներու շարքին՝ կլսենք նաև խրախուսանքի ձայնն ու հայրական մաղթանքները մեր հայրենասեր Վեհին, որուն սրտեռանդն գորովն ու հետաքրքրությունը իր ցիրուցան զավակներուն ճակատագրին հանդեպ մեզի նոր ուժ և կորով կներշնչե մեր ազգասիրական ջանքերուն համար։

Մեր ամեն կարգի ձեռնարկներուն իմաստն ու տարողությունը կորովատես ակնարկով մը վերլուծած է Վեհափառ Հայրապետը իր կոնդակին մեջ, և Կեդրոնական Վարչությունը, իր երախտագետ շնորհակալությունները հայտնելով, զինքը վստահացուց թե այդ ձեռնարկները պիտի շարունակվին միևնույն դիտակցությամբ և բարեխղճությամբ։

Ա. Ր Ի Պ Ա. Ն

էջ	Սյունակ	Տող	Տպագրված է	Պետք է լինի
13	ձախ	7-րդ ներքևից	այն	ան
21	»	8-րդ վերևից	վերամորմնցան	վերամորմնցան
29	»	15-րդ »	Հայրենադարձ	Հայրենադարձ
52	»	35-րդ »	Հափշտակիցներից	Հափշտակիչներից
56	»	4-րդ ներքևից	որազատաչնե	որդատաչնե
68	աջ	2-րդ »	Հանդիպում է	Հանդիպում էի